

ԷՋՄԻԱԾԻՆ



Գ.
2026



ՉԳ. ՏԱՒԻ




ՊԼՇՏՕՆԵԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՐԵՆԵՅՆ ՀԼՅՈՑ ԿԼԹՈՂԻԿՈՍԻԹԵԼՆ
ՄԼՅՐ ԼԹՈՒՄՅ ՄԲԻՅ ԷԶՐԻԼՏԻ

Մարտ

2026

II. ԷԶՐԻԼՏԻ






ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխավոր խմբագիր՝ **Գէորգ Մաղոյեան**


Գլխավոր խմբագրի տեղակալ՝ **Արման Մալոյեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Մկրտիչ եպս. Պռօշեան,
Տ. Յովնան եպս. Յակոբեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Ռուբէն վրդ. Չարգարեան,
Տ. Յուսիկ արքյ. Սմբատեան,
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան,
Ազատ Բոզդեան,
Վահէ Թորոսեան,
Կարէն Մարթնոսեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**
Deputy Editor-in-Chief **Arman Maloyan**
Stylistic editor **Nare Sargsyan**
Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Bishop Mkrtych Proshyan,**
Bishop Hovnan Hakobyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Ruben Zargaryan,
Rev. Fr. Husik Smbatyan,
Fr. Ararat Poghosyan,
Azat Bozoyan,
Vahe Torosyan,
Karen Matevosyan




«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**
Заместитель главного редактора **Арман Малоян**
Стилистический редактор **Наре Саргсян**
Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Епископ Мкртыч Прошян,**
Епископ Овнан Акопян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Рубен Заргарян,
Иеромонах Иусик Смбатян,
Иерей Арарат Погосян,
Азат Бозоян,
Ваге Торосян,
Карен Матевосян



**ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԱԹԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵԻՈՐ
ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՈՒՄ ՍԱՅՐ ԱԹՈՈ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՎՍՆԻ 2025 Թ.
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

(ԳՀԽ, մարտի 10–13, 2026 թ.)

*Վեհափառ Տեր, Գերաշնորհ Սրբազան Հայրեր, ԳՀԽ պատվար-
ժան անդամներ,*

*Այսու Ձեր ուշադրությանն է ներկայացվում Մայր Աթոռ Սուրբ Էջ-
միածնի 2025 թ.-ի գործունեության ամփոփ տեղեկագիրը, որը պատ-
րաստված է Մայր Աթոռի բաժինների, թեմերի, հայրապետական պատ-
վիրակությունների կողմից տրամադրված հաշվետվությունների հի-
ման վրա:*

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*Հաշվետու տարում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկո-
սը ունեցել է պաշտոնական 100-ից ավելի հանդիպումներ եկեղեցական ու
պետական բարձրաստիճան պատվիրակությունների, ազգային, հասա-
րակական եւ մշակութային գործիչների, Հայաստանի եւ Սփյուռքի տար-
բեր թեմերից ժամանած ուխտավորների եւ եկեղեցականների հետ: Մայր
Աթոռ Սուրբ Էջմիածնում Վեհափառ Հայրապետն ընդունել է Գերմանիա-
յի Դաշնային Հանրապետության նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմա-
յերին, Վրաստանի նախագահ Միխեիլ Կավելաշվիլին, Նիդեռլանդների
Թագավորության կրթության, մշակույթի եւ գիտության նախարար էպ-
պո Բրուինսի գլխավորած պատվիրակությանը, «Աղոթքի նախաճաշ» նա-
խաձեռնության առիթով Հայաստան ժամանած օտարերկրյա 50-ից ավել
հյուրերին եւ այլն: Վեհափառ Հայրապետը ներկա է գտնվել Կաթողիկ
Եկեղեցու Սրբազան Քահանայապետ երջանկահիշատակ Ֆրանցիսկոս*

Պապի վերջին հրաժեշտի եւ հուղարկավորության արարողությանը, հանդիպում ունեցել Հոռմի Սրբազան Քահանայապետ Լեւոն 14-րդ Պապի հետ, ինչպես նաեւ մասնակցել մայիսի 26–28-ը Շվեյցարիայի Բեռն քաղաքում կազմակերպված «Կրոնական Ազատություն. հայկական հոգեւոր, մշակութային եւ պատմական ժառանգության պահպանումը Արցախում/Լեւոնային Ղարաբաղում» խորագրով միջազգային համաժողովին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ, ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ, ՈՒՂԵՐՁՆԵՐ ԵՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թ. հրապարակվել է 24 Հայրապետական Կոնդակ, որոնցից 3-ով շնորհվել է «Ս. Գրիգոր Լուսավորիչ», 1-ով՝ «Սուրբ Էջմիածին» շքանշան, 17-ով՝ «Ս. Ներսես Շնորհալի», 3-ով՝ «Սբ. Սահակ - Սբ. Մեսրոպ» շքանշան:

Շնորհվել է 74 Հայրապետական օրհնության գիր եկեղեցականների, տարբեր անհատների, ազգային հաստատությունների, ի թիվս որոնց՝ 5 քահանա արժանացել է ավագության աստիճանի, 22-ը՝ ծաղկյա փլիւղն, 12-ը՝ լանջախաչ կրելու իրավունքի: Հայրապետական պատգամներ եւ ուղերձներ են հղվել ազգային եւ պետական տոների, միջեկեղեցական հանդիպումների եւ մի շարք միջոցառումների կապակցությամբ:

ԱՐՅԱԽԻ ԹԵՄԻ ԵՒ ԱՐՅԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

Դեռեւս 2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից արցախցիների բռնի տեղահանումից հետո, Գերագույն Հոգեւոր Խորհրդի կողմից որոշում էր կայացվել պահպանելու Արցախի թեմը՝ արցախահայության իրավունքների պաշտպանության նպատակով: Նախանցած՝ 2024 թվականին, Հայաստանի Հանրապետությունում գործող Արցախի թեմի առավել արդյունավետ գործունեության համար ստեղծված Արցախի թեմի մշտական գործող գրասենյակը 2025 թվականին եւս շարունակել է իր աշխատանքները:

Հայ Առաքելական Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում, պետական, կրոնական ու հանրային տարբեր հարթակներում շարունակվել են բարձրաձայնվել արցախահայության իրավունքների պաշտպանության, Արցախի պատմամշակութային ժառանգության պահպանության, Ադրբեջանի կողմից իրականացվող վանդալիզմի դրսևորումների,

Ադրբեջանի կողմից պատմության խեղաթյուրման փորձերին առնչվող խնդիրները:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության ընդհանուր թիվը 665 է, որից 56-ը արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 100-ը վարդապետ եւ աբեղա, 509-ը քահանա, 92 սարկավազ, որից 39-ը՝ Մայր Աթոռում ծառայող, 32-ը՝ Հայաստանյան թեմերում սպասավորող եւ 21-ը՝ ճեմարանական:

2025 թ.-ին տեղի է ունեցել երկու քահանայական եւ մեկ սարկավազական ձեռնադրություն՝ ձեռնադրվել են 5 կուսակրոն, 8 ամուսնացյալ քահանա եւ 12 ճեմարանական ու Քահանայից պատրաստման լսարանի շրջանավարտ սարկավազ:

2025 թ.-ին կարգալուծ են հռչակվել 1 կուսակրոն եւ 4 ամուսնացյալ քահանաներ:

Հաշվետու տարում ի Տեր ննջեց Հայ Եկեղեցու երիցագույն հոգեւորականներից Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը:

2020 թ.-ի Արցախյան 44-օրյա պատերազմի ավարտից մինչ օրս շարունակում է անհետ կորած մնալ Հոգշ. Տ. Մկրտիչ աբղ. Կարապետյանը:

Հաշվետու տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայաստանյան կառույցներում աշխատել է 1058 անձ, որոնցից 718-ը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, իսկ 340-ը՝ հայորդյաց տներում:

ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՆԵՐ

2025 թ. բնականոն ընթացքով շարունակվել են հարաբերությունները Նվիրապետական Աթոռների հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի պարբերական շփումների ընթացքում քննարկվել են ազգային, համակեղեցական եւ կարեւորագույն այլ հիմնախնդիրներ:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության հետ հաղորդակցությունը եւս շարունակվել է բնականոն ընթացքով: Պարբերական քննարկումներ են ծավալվել եւ անհրաժեշտ միջոցառումներ են ձեռնարկվել Երուսաղեմի Հայկական թաղամասի «Կովերի պարտեզ» տարածքի օտարմանն առնչվող գործարքի չեղարկման դատական գործընթացի ուղղությամբ:

Կ. Պոլսի Պատրիարքության հետ հարաբերությունների շրջանակներում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ է այցելել եւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի նիստերին (մարտի 11–14-ը) է մասնակցել Նորին Ամենապատվություն Սահակ արք. Մաշալյանը՝ կարեւոր մասնակցություն ունենալով ազգային-եկեղեցական խնդիրների քննարկմանը եւ դրանց լուծումների ուղենշմանը, այլեւ՝ օգտակար տեղեկություններ ներկայացնելով պատրիարքության եկեղեցական կյանքի կազմակերպման վերաբերյալ:

ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թվականի ընթացքին Եկեղեցու եւ ՀՀ իշխանությունների հարաբերություններում որեւէ դրական զարգացում չի նկատվել: Հայ Եկեղեցու եւ հոգեւորականության դեմ Վարչապետի եւ իշխանության կողմից մեծ գրոհով հարձակումն սկսվեց հատկապես 2025 թ. մայիս 29-ից, երբ կառավարության նիստում ՀՀ Վարչապետն ասաց, թե պաշտոնապես հայտարարում է, որ մեր եկեղեցիները «չուլանացված են»: Վարչապետի հայտարարությունն ի պատասխան՝ բազում հոգեւորականներ՝ սարկավազից մինչեւ արքեպիսկոպոս, հանդես եկան դատապարտող հայտարարություններով, շեշտելով որ մեր սրբությունների մասին այդպիսի խոսույթն ուղղակի անընդունելի է: Սակայն, ի պատասխան իշխող ուժի կողմից սկսվեց վիրավորանքների եւ հայհույալից խոսքերի տեղատարափ՝ ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսին, եպիսկոպոսներին եւ քահանաներին: Վարչապետի պաշտոնում գտնվող անձը հայտարարեց, որ Վեհարանը պետք է ազատի օրվա Հայրապետից՝ բերելով բազում տարատեսակ մտացածին պատճառներ, որոնք իրականության հետ նույնիսկ չնչին աղերս չունեն:

Հունիս 2-ին Մայր Աթոռում անմիջապես հրավիրվեց Հայաստանյան ԳՆՆ անդամների եւ հայրենիքում գտնվող Եպիսկոպոսների միացյալ ժողով, որտեղ միաձայն դատապարտվեց Վարչապետի հակաեկեղեցական ընթացքն ու Մայր Աթոռը հանդես եկավ հայտարարությամբ:

Հաջորդիվ, մոտ մեկ ամիս շարունակվող ամենօրյա գրառումներից, Եկեղեցու եւ եկեղեցականների հասցեին ուղղված անդադար վիրավորանքների առթիվ որոշեց հայտարարությամբ հանդես գալ ազգային բարերար Սամվել Կարապետյանը, որը շեշտեց, որ եթե քաղաքական

գործիչներին չհաջողվի դադարեցնել Վարչապետի հակակեղեցական ընթացքը, ապա իրենք՝ Մայր Աթոռի հավատացյալները, «իրենց ձեռով» պիտի կանգնեցնեն Վարչապետին եւ Եկեղեցու դեմ գործող «փոքրիկ խմբակին»:

Հայտարարությունից ժամեր անց՝ հունիս 18-ին, Սամվել Կարապետյանը ձերբակալվեց եւ տարվեց կալանքի:

Մեկ շաբաթ անց՝ հունիս 25-ին, ձերբակալվեց եւ հաջորդ օրը կալանավորվեց մեր Եկեղեցու սրբազաններից առաջինը՝ Գերշ. Տ. Բագրատարք. Գալստանյանը: Նրան առաջադրվեց մեղադրանք՝ ահաբեկչական գործողությունների պլանավորում, եւ նա մինչ օրս գտնվում է կալանքի տակ հենց այս եւ մի քանի այլ ամոթալի մեղադրանքներով:

Այդ դեպքերից ընդամենը 2 օր անց՝ հունիսի 27-ին, երբ Մայր Աթոռում հրավիրված էր քահանայից հավաք, ՀՀ իրավապահ կառույցները, տարատեսակ ուժայիններ Մայր Աթոռի բակում էին՝ ձերբակալելու Գերշ. Տ. Միքայել արք. Աջապահյանին, որի հետ կապված վարույթը նախաձեռնված էր դեռեւս մի քանի շաբաթ առաջ, սակայն հատուկ էր ընտրվել այդ օրը, որպեսզի միաժամանակ գրոհվի Մայր Աթոռը: Ուժայինների ձախողումից հետո Միքայել Սրբազանը ինքնակամ ներկայացավ Քննչական կոմիտե, որտեղ եւ ձերբակալվեց, իսկ հաջորդ օրը կալանավորվեց: Միքայել Սրբազանը մեղադրվում է ռազմական հեղաշրջման կոչեր անելու մեջ, ինչը միանշանակ բացակայում է Միքայելի Սրբազանի խոսքից, սակայն դատարանը որոշեց 2 տարվա ազատազրկում տալ Սրբազանին: 2026 թ. փետրվարի 6-ին դատարանի որոշմամբ Սրբազանի նկատմամբ կիրառվեց տնային կալանք եւ երկրից բացակայելու արգելք:

Արշավի հաջորդ փուլի սկիզբը Ստեփան Ասատրյանի (կարգալուծ Արամ քահանա) հայտարարությունն էր, որտեղ խոսվում էր բարձրաստիճան եկեղեցականների բացթողումների, «կարծր սիրտ» ունենալու մասին: Գրառումներն անընդհատ շարունակվում էին, եւ Մայր Աթոռի կարգապահական եւ շնորհաբաշխման հարցերի հանձնախումբը նախկին Տեր Հորը հրավիրեց զրույցի՝ հասկանալու նրա խնդիրները եւ փորձելու պատասխանել նրան հուզող հարցերին: Վերջինս հրաժարվեց ներկայանալ, իսկ հետո նույնիսկ հանրայնացրեց հանձնախմբի գործավարի հետ նամակագրությունները: Նրան իրենց բացահայտ աջակցությունը հայտնեցին Արամայիս Թախմազյանը (կարգալուծ Թադե քահանա) եւ Վարդան Հունանյանը (կարգալուծ Տարոն քահանա):

Դրանից հետո իր եւ թեմի մեկ այլ նախկին քահանայի՝ Արամայիս Թախմազյանի ցուցմունքների հիման վրա բերման ենթարկվեցին Արագածոտնի թեմի ամբողջ քահանայից դասը եւ առաջնորդարանի աշխատակիցները: Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մկրտիչ եպս. Պռոշյանը, թեմի դիվանապետ Արժ. Տ. Գարեգին քահանա Արսենյանը եւ թեմի գլխավոր հաշվապահը հոկտեմբերի 15-ին ձերբակալվեցին: Հոկտեմբերի 16-ին Մկրտիչ Սրբազանը եւ Տեր Գարեգինը կալանավորվեցին, իսկ թեմի հաշվապահի նկատմամբ կիրառվեց տնային կալանքը: Սրբազանը մեղադրվում է մարդկանց հարկադրաբար հանրահավաքների ուղարկելու մեջ: Մկրտիչ սրբազանը 2026 թ.-ի փետրվարի 12-ից գտնվում է տնային կալանքում, իսկ Տեր Գարեգին քհն. Արսենյանի տնային կալանքը վերացվել է փետրվարի 9-ից՝ սահմանվելով վարչական վերահսկողություն եւ երկրից բացակայելու արգելք:

Ստեփան Ասատրյանը կառավարության բացահայտ հովանավորչությունով, կարգալույծ հոչակվելուց հետո չազատեց Հովհաննավանքը, թեեւ այդ մասին զգուշացվել էր: Մինչ օրս էլ Հովհաննավանքը գտնվում է գերեվարված՝ ոստիկանական շուրջօրյա վերահսկողության ներքո:

Հոկտեմբերի 25-ին համացանցում են հայտնվում Գերշ. Տ. Արշակ արք. Խաչատրյանին վերագրվող ամոթալի տեսանյութեր: ԳՀԽ նույնմբերի 4-ի ժողովի ժամանակ որոշվում է ստեղծել հանձնախումբ՝ քննելու տեսանյութերի իսկությունն ու կարծիք ներկայացնելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ հետագա որոշման համար: Միաժամանակ ՀՀ Քննչական Կոմիտեում նախաձեռնվում է քրեական վարույթ՝ անձնական կյանքի գաղտնիության խախտման պատճառաբանությամբ: Դեկտեմբերի 4-ին, երբ Արշակ Սրբազանը հերթական անգամ հրավիրվում է հարցաքննության, հարցաքննությունից հետո, նրան ձերբակալում են ԱԱԾ աշխատակիցները, իսկ հաջորդ օրն արդեն նա կալանավորվում է: Սրբազանին մեղադրում են թմրանյութերի իրացման մեջ, իբր 2018 թ. «Նոր Հայաստան, Նոր Հայրապետ» շարժման օրերին, երբ շարժման մասնակիցները գրավել էին Դիվանատունը, Սրբազանի հրահանգով թմրանյութ է դրվել շարժման մասնակիցներից մեկի պալուսակում: 2026 թ. փետրվարի 3-ին Արշակ Սրբազանի խափանման միջոց կալանքը երկարաձգվեց եւս երկու ամսով, իսկ մարտի 6-ին Արշակ սրբազանն անհապաղ ազատ արձակվեց:

Մինչ Արշակ Սրբազանի կալանավորումը, տեսանյութերի հարցը քննող հանձնախումբը Սրբազանի՝ Դիվանապետի լիազորությունները

ժամանակավորապես դադարեցնելու առաջարկ է ներկայացնում Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Այս ընթացքում Գերշ. Տ. Գեւորգ եպս. Սարոյանի եւ Գերշ. Տ. Աբրահամ արք. Մկրտչյանի ներկայութեամբ Վարչապետի մասնակցութեամբ Պատարագներից զեղչվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան հիշատակությունը: Նույնմբեր 26-ին Մայր Աթոռում այդ հարցով հրավիրված Եպիսկոպոսաց եւ Թեմակալ առաջնորդների ժողովը միաձայն դատապարտում է տեղի ունեցածը:

Նույնմբերի 27-ին համացանցում է հայտնվում մի փաստաթուղթ, ըստ որի՝ 10 բարձրաստիճան հոգեւորականներ պնդում են, թե Քննչական Կոմիտեում կատարված փորձաքննությունը հաստատել է Արշակ արքեպիսկոպոսին վերագրվող տեսանյութերի իրական լինելը, եւ Վեհափառն առ ոչինչ է համարել հանձնախմբի առաջարկները, իսկ Եկեղեցին պետք է մաքրել նման հոգեւորականներից: Նույն օրը երեկոյան 8 եպիսկոպոսներ հանդիպում են Վարչապետի հետ եւ վերահաստատում իրենց եւ բացակա մյուս 2 եպիսկոպոսների՝ Գերշ. Տ. Հովնան արք. Տերտերյանի եւ Գերշ. Տ. Սիրոն արք. Ադամյանի հավատարմությունը՝ Եկեղեցին «բարենորոգելու» օրակարգին, եւ շեշտում այն միտքը, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պետք է հրաժարական տա եւ հանգստի կոչվի:

Դեկտեմբերի 17-ին 10 եպիսկոպոսները հայտարարություն են տարածում, ըստ որի, հաջորդ օրը՝ դեկտեմբերի 18-ին, երեկոյան, իրենց բոլոր աջակիցներին հրավիրում են Մայր Աթոռ՝ «ազատագրելու» Սրբություն Սրբոցը: Նույն ժամանակ նաեւ Եկեղեցուն եւ Եկեղեցականներին պաշտպանող հայորդիներ հայտարարում են, որ նրանք նույնպես կլինեն Մայր Աթոռում՝ թույլ չտալու որեւէ հակակեղեցական քայլ: Դեկտեմբերի 18-ի երեկոյան, Մայր Աթոռի բակը բազմամարդ էր՝ շրջափակված ուժայիններով: Արժանապատիվ հայորդիների կողմից այդպիսի արձագանքի չսպասելով՝ 10 եպիսկոպոսները որոշում են իրենց նշած ժամին չլինել Մայր Աթոռի բակում, այլ փոխարենը հավաքվում են Սբ. Գայանե վանքում, որտեղ նրանց են միանում նաեւ մի շարք կարգալույծ հոգեւորականներ: Ավելի ուշ, երբ Մայր Աթոռի միաբանությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորութեամբ, Մայր Տաճարում մասնակցում էր Երեկոյան ժամերգությանը, 10 եպիսկոպոսներն իրենց աջակիցների հետ ժամանում են Մայր Աթոռի բակ, որտեղ չեն ստանում իրենց ակնկալած աջակցությունը: Եկեղեցու

պաշտպանների կողմից մերժման արժանանալուց հետո, ուժայինների պաշտպանությունը կարգում են մի հայտարարության տեքստ, որից հետո, չհասնելով իրենց նպատակին, նույն ուժայինների ուղեկցությունը արագ հեռանում են:

2026 թ. հունվար 10-ին որոշ քահանաներ, ովքեր ծառայում են Արարատյան Հայրապետական, Մասյացոտնի, Արմավիրի, Կոտայքի եւ Վայոց Ձորի թեմերում, հայտարարեցին, թե միանում են իրենց առաջնորդների եւ Վարչապետի «բարենորոգման» ծրագրին: Սակայն հետագայում քահանաներից մեկը փաստեց, որ միացել է շարժմանը արտաքին ճնշումների տակ, որ հրաժարվում է իր հայտարարություններից եւ իր հավատարմությունն է հայտնում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Այդ դեպքերից հետո Մայր Աթոռ տեղեկություններ են ստացվում, որ Գեորգ Սրբազանը ճնշումներ է գործադրում իր թեմում ծառայող քահանաների վրա՝ նրանց ստիպելով միանալ հակաեկեղեցական ամոթալի արշավին: Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությանը Սրբազանն ազատվում է Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնից, իսկ առաջնորդական տեղապահ է նշանակվում Հոգշ. Տ. Ռուբեն վրդ. Զարգարյանը: 10 եպիսկոպոսները հայտարարում են, որ չեն ընդունում Վեհափառի տնօրինությունը, եւ որ Գեորգ Սրբազանը շարունակում է լինել առաջնորդ: Ուժային կառույցների օժանդակությամբ, ինչպես Հովհաննավանքի պարագային, օրինական առաջնորդական տեղապահին թույլ չի տրվում մուտք գործել առաջնորդանիստ եկեղեցի:

2026 թ. հունվար 15-ին Գեորգ եպիսկոպոսը դատական հայց է ներկայացնում Մայր Աթոռի դեմ՝ պահանջելով անվավեր ճանաչել իրեն զբաղեցրած պաշտոնից ազատելու Հայրապետական տնօրինությունը եւ վերականգնել առաջնորդի պաշտոնում: Դատարանը ժամանակավորապես, որոշակի սահմանափակումներով, բավարարում է հայցի ապահովումը՝ մինչեւ գործի առթիվ վերջնական որոշման կայացումը: Մեկ օր անց լինում է դատարանի որոշումը:

2026 թ. հունվար 27-ին կարգալույծ է հռչակվում Գերշ. Տ. Գեորգ եպս. Սարոյանը, ինչից հետո ՀՀ Քննչական Կոմիտեն քրեական վարույթ է նախաձեռնում եւ մեղադրանք առաջադրում՝ ՀՀ Քրեական Օրենսգրքի 507-րդ հոդվածի (Դատական ակտը չկատարելը կամ դրա կատարմանը խոչընդոտելը) 2-րդ մասով (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով): ԳՀՆ

անդամ եւ այդ ժողովին ներկա Գերշ. Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի, Գերշ. Տ. Հայկազուն արք. Նաջարյանի, Գերշ. Տ. Հովնան եպս. Հակոբյանի, Գերշ. Տ. Վահան եպս. Հովհաննիսյանի, Գերշ. Տ. Մուշեղ եպս. Բաբայանի, Գերշ. Տ. Մակար եպս. Հակոբյանի եւ Արժ. Տ. Մովսես քհն. Սահակյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվում երկրից բացակայելու արգելքը: Նույն մեղադրանքով փետրվարի 14-ին երկրից բացակայելու արգելք է կիրառվել նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարում եւս շարունակվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ քույր Եկեղեցիների, միջկրոնական տարբեր կազմակերպությունների միջեւ հարաբերությունները: Բարձրաստիճան հոգեւորականների եւ միջեկեղեցական ու միջկրոնական հարաբերությունների պատասխանատու պաշտոնյաների մակարդակներով փոխադարձ այցելություններ եւ հանդիպումներ են կազմակերպվել քույր Եկեղեցիների, քրիստոնեական եւ միջկրոնական կազմակերպությունների միջեւ:

2025 թ.-ի մայիսի 26–27-ին Շվեյցարիայի Բեռն քաղաքում կայացավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) եւ Շվեյցարիայի Բողոքական Եկեղեցու կողմից կազմակերպված «Կրոնական Ազատություն. հայկական հոգեւոր, մշակութային եւ պատմական ժառանգության պահպանումը Արցախում/Լեռնային Ղարաբաղում» խորագրով միջազգային համաժողովը, որի ընթացքում միջազգային հարթակից բարձրաձայնվեց Արցախի՝ Լեռնային Ղարաբաղի բռնազավթումից հետո հայ ժողովրդի առջեւ ծառայած մարտահրավերների մասին:

Նիկիայի առաջին տիեզերաժողովի 1700-ամյակի համաքրիստոնեական հիշատակման շրջանակներում քրիստոնեական Եկեղեցիների եւ միջեկեղեցական կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ սեպտեմբերի 3–7-ը Մայր Աթոռում անցկացվեց «Ապրելով Հավատամքն այսօր. Նիկիայի առաջին տիեզերաժողովի 1700-ամյակի հիշատակում» խորագրով միջեկեղեցական համաժողով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

2025 թ.-ին Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատություններում ընդհանուր թվով ուսանել են 73 սաներ, որոնցից 51-ը Սեւանի Վազգենյան դպրանոցի բակալավրիատում, 21-ը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի մագիստրատուրայում, իսկ 1-ը՝ նախապատարաստական լսարանում: Եւս 6 ասպիրանտներ իրենց ուսումն են շարունակել ԳՀՃ ասպիրանտուրայում: Հաշվետու տարում պաշտպանվել է 18 մագիստրոսական ավարտաճառ:

2025 թվականին շարունակվել է քահանաների 3 շաբաթյա վերապատրաստման ծրագիրը: Անցյալ տարի վերապատրաստվել եւ հավաստագրեր են ստացել 80 քահանա հայրեր:

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում Մայր Աթոռի կողմից կրթական-դաստիարակչական գործունեությունը իրականացվել է՝ ըստ հետևյալի.

1. Հայորդյաց տներ

Մայր Աթոռի 7 Հայորդյաց տները (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երեւանում՝ Նոր Նորք, Մալաթիա եւ Արաբկիր) եւ Մանրանկարչության արվեստի կենտրոնը նույնպես շարունակել են իրենց գործունեությունը հաշվետու տարում, որտեղ հաճախող շուրջ 2500 երեխաներ ու պատանիներ մասնակցել են բազմաբնույթ մեծ ու փոքր միջոցառումների, ցուցահանդեսների, մենահամերգների, հանդիսությունների, մրցույթների եւ այլ ծրագրերի: Հաշվետու տարում Արցախից տեղահանված ընտանիքների երեխաները շարունակել են անվճար հիմունքներով հաճախել Հայորդյաց տներ:

2. Հանրակրթական դպրոցներ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված կրթական նոր շափոթողիչներով «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան այլ առարկաների մեջ տարրալուծելու որոշմամբ պայմանավորված, փորձելով լրացնել հոգեւոր-ազգային կրթության բացը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթական

հանձնախմբի կողմից պատրաստվել է կիրականօրյա/մեկօրյա դպրոցի ծրագիրը:

3. Մայր Աթոռի հովանու ներքո գործող կրթական հաստատություններ

• «Էօրնեկեան հանրակրթական դպրոց»-ի 29 դասարաններում հաշվետու տարում ուսանել են 443 աշակերտ, որոնք ակտիվորեն մասնակցել են ներդպրոցական, քաղաքային, մարզային եւ հանրապետական օլիմպիադաներին: 43 շրջանավարտներ իրենց կրթությունն են շարունակում ՀՀ լավագույն ԲՈՒՀ-երում: «Էօրնեկեան մանկապարտեզ» են հաճախել 2,5 (երկուս ու կեսից)-5 (հինգ) տարեկան 40 երեխա՝ երկու խմբերով: «Քյուրքչյան» երեխաների աշակցության կենտրոնում հաշվետու տարում պատշաճ խնամք ու կրթություն է ստացել 13 երեխա:

• Մայր Աթոռի կառավարմանը հանձնված Երեւանի Գելորգ էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցում ուսումնական գործընթացն ընթացել է սահմանված կարգով:

• Հառիճի Թրբանճյան ընծայարանի (ավագ դպրոց) 3 դասարաններում ուսանել են 18 աշակերտներ: 2025 թվականին Ընծայարանն ավարտած 7 սաներից 4-ն ընդունվել են Սեւանի Վազգենյան դպրանոց:

• Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանում եւ Դավթյան օրիորդաց վարժարանում ուսանել են 42 հայ աշակերտներ, որոնցից 33-ը՝ Հայաստանից, 4-ը՝ ՌԴ-ից, 3-ը՝ Իրաքից, 1-ը՝ Իրանից, 1-ը՝ Մյանմարից:

ՔԱՐՈՋՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարում եւս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակել է իր քարոզչական գործունեությունը ծավալել հետեւյալ ուղղություններով.

Հրատարակություններ

Հաշվետու տարում Մայր Աթոռում տպագրվել է 17 անուն գիրք: Շարունակել են տպագրվել «Էջմիածին» ամսագիրը եւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը:

2025 թ. ընթացքում նվիրատվությունների եւ գնումների արդյունքում Սուրբ Էջմիածնի Մատենադարանը համալրվել է 1090 միավոր գրականություններով:

ՀՀ Զինված ուժերի Հոգեւոր առաջնորդություն

2025 թ.-ին Հայոց Բանակում ծառայել են 44 եկեղեցական (1 վարդապետ, 17 քահանա եւ 26 սարկավազ): Խթանելով բանակում անձնակազմի միջանձնային հարաբերությունների կարգավորմանը՝ 2025 թ. արձանագրվել է գնդերեցների ներգրավմամբ 129 միջադեպերի բարեհաջող հանգուցալուծում: 2026 թ.-ի փետրվարի 1-ից Պաշտպանության նախարարի հրամանով դադարեցվել է ՀՀ ԶՈՒ Հոգեւոր առաջնորդի եւ ՀԱՆ կողմից նշանակված գնդերեցների գործունեությունը ՊՆ համակարգում:

Քարոզչություն երիտասարդների շրջանում

Հաշվետու տարում շարունակվել է քարոզչությունը երիտասարդների շրջանում ՀԵՀԵՄ եւ թեմական երիտասարդական միությունների միջոցով: Կազմակերպվել են տարբեր դասընթացներ, քննարկումներ, հանդիպումներ, միջոցառումներ: Կայացել է ՀԵՀԵՄ 9-րդ եւ 10-րդ Ատենապետաց ժողովները, որին մասնակցել են Հայաստանի եւ Սփյուռքի հոգեւորական եւ աշխարհական պատասխանատուներ: 2025 թ. հուլիս ամսին տեղի է ունեցել ՀԵՀԵՄ 25-ամյակին նվիրված «Քրիստոնյա ընտանիքը հայ ինքնության խորհուրդ» խորագրով համահայկական ուխտագնացությունը: Շուրջ 50 արցախահայերի համար կազմակերպվել է անգլերենի դասընթաց՝ Հայաստան ժամանած ԱՄՆ Արեւմտյան թեմի երիտասարդների մասնակցությամբ:

Քրեակատարողական հիմնարկների (ՔԿՀ) հոգեւոր խնամք

2025 թ.-ին 9 ՔԿՀ-ներում սպասավորող 9 հոգեւորականների (1 վարդապետ եւ 8 քահանա) կողմից շարունակվել է հոգեւոր խնամքը ազատազրկվածներին, նրանց ընտանիքներին եւ նախկին դատապարտյալներին: Մայր Աթոռի կողմից ազատազրկվածներին տրամադրվել են

աղոթագրքեր եւ հոգեւոր գրականություն: Աշխատանքներ են տարվել նաեւ ՔԿ վարչության հիմնարկների աշխատակիցների հետ: 2025 թ.-ի մայիսի 15-ից Քրեակատարողական հիմնարկների տեսուչի պաշտոնում Հոգշ. Տ. Ռուբեն վրդ. Զարգարյանին փոխարինել է Հոգշ. Տ. Իսահակ վրդ. Պողոսյանը:

Հանրային ֆարզչություն

Մայր Աթոռի կողմից հանրային քարոզչություն իրականացվել է հեռուստահաղորդումների, համացանցային հրապարակումների միջոցով:

2026 թ.-ի հունվարի 1-ից դադարեցվել է «Շողակաթ» հեռուստաընկերության հեռարձակումը:

Մայր Աթոռի թանգարաններում այցելուները ծանոթացել են ազգային-եկեղեցական մշակույթի նմուշների հետ: Անցյալ տարի թանգարաններ են այցելել 57 375 անձ (39 606-ը՝ օտարերկրյա քաղաքացիներ, իսկ 9 296-ը՝ ՀՀ քաղաքացիներ):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թ. ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվել են դրամական, իրային եւ բժշկական աջակցության մի շարք սոցիալական ծրագրեր՝ ուղղված կարիքավորներին, հիվանդներին, սոցիալապես անապահով ընտանիքներին, արցախցիներին եւ սփյուռքյան համայնքներին:

Ընդհանուր առմամբ՝ Մայր Աթոռի եւ թեմերի կողմից հատկացվել է 177 939 668 (մեկ հարյուր յոթանասունյոթ միլիոն ինը հարյուր երեսունինը հազար վեց հարյուր վաթսունութ) ՀՀ դրամի օժանդակություն: Հայաստանյան տարբեր թեմերի միջոցով իրային աջակցություն է տրամադրվել բազմաթիվ ընտանիքների: 2025 թ.-ին Ռումին Ուղղափառ Եկեղեցու Ֆինանսավորմամբ ձեռք են բերվել վեց բնակարաններ՝ որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սեփականություն եւ անհատույց օգտագործման նպատակով տրամադրվել են Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին:

Սոցիալական աջակցության շրջանակներում իրենց գործունեությունն են շարունակել Մայր Աթոռի բարեգործական ճաշարանները՝ էջմիածնում եւ Արաբկիրում:

Իզմիրլյան ԲԿ-ն իրականացրել է կարիքավորներին բժշկական աջակցության 4 ծրագիր, որի ընթացքում օգնություն է ցուցաբերվել 44-օրյա պատերազմի մասնակիցների, Սիրիայից փախստականների, «Զինվորի տուն» բարեգործական-հասակարարական կազմակերպության զինվորական հաշմանդամների եւ Արցախից բռնի տեղահանվածների, ընդհանուր՝ 106 անձի:

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՎԱՆՔԵՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ


Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անմիջական ենթակայության ներքո են գործում Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես մատուռ-մկրտարանը, Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ, Ս. Գեղարզի, Խոր Վիրապի, Սեւանա վանքերը եւ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին: Հիշյալ եկեղեցական կառույցներում 2025 թ.-ին կատարվել են 7316 մկրտություն եւ 2009 պսակադրություն:

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործում են 35 թեմեր եւ 4 Հայրապետական Պատվիրակություններ: Թեմերում գործում են 777 եկեղեցի ու վանք, 660 ծուխ եւ ծխական առաքելություն, 287 կիրակնօրյա դպրոց, տիկնանց՝ 153, եւ 195՝ երիտասարդաց միություններ: Անցնող տարում կատարվել են 46 597 մկրտության եւ 12 190 պսակադրության արարողություններ (չհաշված Մասյացոտնի թեմը):

Հաշվետու տարում թեմերում ու եկեղեցական կառույցներում շարունակվել են իրականացվել հոգեւոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային բազմաբնույթ ծրագրեր:





Doi: 10.56 737/2953-7843-2026.03-19

ԱՍՍՏՈՒՐ ՍԱՐԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՎԱՀՐԱՄ ՂԱՀՐԱՄԱՆԵԱՆ

ՍՈՒՐԲ ՊՕՂԻԿՏՈՍ՝

Կոստանդնուպոլսի երբեմնի Մեսէ պողոտայի՝ ներկայիս քաղաքապետարանի հարեանութեամբ գտնուող զբօսայգում, պահպանուել են ակերակները մի հսկայանիստ կառուցի², որ մինչ Հագիա Սոֆիայի հիմնումը մայրաքաղաքի ամենամեծ եկեղեցին է եղել՝ կերտուած Երուսաղէմի Սողոմոնեան տաճարի նմանութեամբ³: Այս սրբավայրը վեր էր խոյացել Անիկիա Յուլիանայի նուիրատութեամբ, որ համարուում էր իր օրերի ամենահարուստ եւ ազդեցիկ կինը. նա Արեւմտահռոմէական կայսր Ուրբրիոսի եւ Պլակիդիա Կրտսերի դուստրն էր, Թէոդոսեան հարստութեան շառաւիղ, ազնուագարմ ու տոհմիկ, ի հակադրութիւն իր ժամանակակից գահակալների (Յուստինոս Ա. եւ Յուստինիանոս Ա.), որ գեղջկական ծագում ունէին: Տաճարի շինարարական արձանագրութիւնը փառաբանում էր բարեգործ տիկնոջ առատաձեռնութիւնն ու ճաշակը՝ դրանով իսկ գայթակղութիւն եւ մարտահրաւէր հանդիսանալով նոր իշխանաւորների համար: Թերեւս հէնց այս հանգամանքով տարուած՝ Յուստինիանոս կայսրը գահ բարձրանալուց քիչ անց ձեռնամուխ եղաւ Հագիա Սոֆիայի կառուցմանը: Սրա օգտին է թերեւս այն, որ ըստ ականդութեան շինարարութիւնն աւարտելով՝ Յուստինիանոսը բացականչել է. «Սողոմոնն, ես գերազանցեցի քեզ», – վստահաբար իր խօսքն ուղղելով նաեւ այս աշխարհից արդէն հեռացած Յուլիանային, որի բարի համբաւը հանգիստ չէր տալիս իրեն: Ահռելի տէ-

^{1*} Ստացուել է՝ 15.04.2026, գրախօսուել է՝ 25.05.2026: էլ. հասցէ՝ asa-saryan@yandex.ru, kagramanyan68@mail.ru:

² Շինութեան պեղումների նախնական զեկոյցը տե՛ս R. Martin Harrison, N. Firatli, Excavations at Sarachane IN Istanbul: First Preliminary Report, Washington, DC: Dumbarton Oaks, Trustees for Harvard University, 1965, էջ 232 եւ յջ.:

³ Տե՛ս <https://turkisharchaeonews.net/object/church-st-polyeuctus>:

րութեան գլուխ անցնելուն պէս կայսրը Յուլիանայից պահանջել էր ունեցուածքի զգալի մասը յանձնել արքունի գանձարան, սակայն Յուլիանան մերժելու կատարեալ ձեւ էր գտել. ի պատասխան մանրախնդիր կայսեր կեցուածի՝ մեծագնիւ տիկինը ընտանեկան ոսկեղէնից թիթեղներ էր ձուլել տուել եւ հրամայել էր դրանցով ծածկել իր ճարտարապետական գոհարի տանիքը՝ աննկարագրելի շուք եւ անհասանելի ճոխութիւն հաղորդելով տաճարին⁴, որ նուիրուած էր քրիստոնեայ աշխարհի մեծագոյն սուրբերից մէկին՝ յաղթող վկայ Պօղիկոսոս Մելիտինեցուն: «Ուղղափառ հանրագիտարանը» բերում է Զ. դարասկզբի արձանագրութեան տեղեկութիւնը. ըստ դրա սուրբի անունով առաջին տաճարը Կոստանդնուպօլսում կառուցել է Թէոդոս Բ.-ի կինը՝ Նւդոկիա կայսրուհին, Յ. դարում⁵, իսկ Անիկիա Յուլիանան շարունակել է իր մեծ մայրիկի սրբասէր ընթացքը: «Երրորդութիւնը բարձրարարելու սիրոյն Նւդոկիա կայսրուհին առաջինն այստեղ կառուցեց Աստուծոյ ծառայ Պօղիկոսոսի տաճարը⁶: Սակայն տիկինն այն չդարձրեց մեծ եւ սքանչելի, քանզի մարգարէական հոգին յուշել էր, որ իր սերունդներին է վիճակուած այդ: Ուստի օրհնեալ նախնիների փառքն ու արքայական արիւնը շորորդ սերնդեամբ ժառանգելով՝ Յուլիանան արդարացրեց ցեղի մայր կայսրուհու սպասումները, եւ ճոխացնելով բարձրացրեց կառույցը՝ փոքրիկ մատուռը հասցնելով ներկայիս չափերին ու վայելչութեանը»⁷: Առանձնակի ուշադրութեան արժանի դրուագ. վայելչութիւնը ներկայ շարակարգում հերթապահ դրուատական որոշիչ չէ. յուշարձանի հմայքն այն աստիճանի էր, որ Խաչակրաց Դ. արշաւանքի մասնակիցները թանկարժէք մետաղներ եւ ակնեղէն կողոպտելու եւ բեռնելու փոխարէն Պօղիկոսոսի տաճարի քանդակազարդ սիւներն էին աւարի վերածել ու տեղահան անելով՝ տարել Վենետիկ⁸: Նուրբ եւ մանրաքան-

⁴ Հմմտ. Anthologia Graeca, I,10: Աղանունի սրբազանի գրութեամբ. «...բարեպաշտ տիկին մը Յուստինիանոսի օրով, այդ եկեղեցւոյն ներքին կողմը ոսկեղէնով զարդարած է, իր ստացուածքը նոյն կայսրէն ազատելու համար». տես Մ. ԵՊՍ. Ա. ՂԱՍՆՈՒՆԻ, Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ, Երուսաղէմ, 1931, էջ 132:

⁵ Տես https://www.pravenc.ru/text/2_580_954.html:

⁶ Պօղիկոսոսին նուիրուած մէկ այլ եկեղեցի կանգնեցուած է եղել Կոստանդնուպօլսի տասներորդ թաղամասում՝ Պղնձե քառասեան կամ քառադարպասի (τετράπυλον) հարեւանութեամբ եւ ենթադրաբար կործանուել է 461 թ. հրդեհից. տես https://www.pravenc.ru/text/2_580_954.html:

⁷ Տես <https://www.johnsanidopoulos.com/2018/01/the-church-of-saint-polyeuktos-in.html>:

⁸ Տես <https://www.savevenice.org/project/so-called-pillars-of-acre-from-the-palace-church-of-saint-polyeuktos-in-constantinople>:

դակ պաճուճանքի վերաբերեալ պէտք է անդրադառնալ այն պնդմանը, թէ տաճարի կառուցման ընթացքին լայնօրէն կիրառուեցին Սասանեան Պարսկաստանի զարդական տարրերը, եւ «հնարաւոր է, [դրանով] սկիզբ դրուեց գմբեթաւոր բազիլիկայի նոր ճարտարապետական տեսակին, որը կատարելագործուեց աւելի ուշ շրջանում՝ Հագիա Սոֆիան կառուցելիս»⁹:

Տաճարի ճոխութեան եւ բարձրաճաշակութեան վերաբերեալ վկայութիւններին, ինչպէսեւ Մկրտիչ վարդապետ Աւգերեանի աշխատասիրած սրբախօսական երկից կարելի է տեսնել, որ նկարագրեալ ճոխութեան եւ պատուի արժանացած սուրբն առանձնակի կերպով էր սիրուած արեւմուտքում: Հայոց ծիսական հին մատեաններում եւս Պողիկտոսի յիշատակը կատարելու յատուկ օրեր նշուում են¹⁰, սակայն ներկայիս Օրացոյցում իր անունը չկայ, մինչդեռ սուրբը մարտիրոսուել է Քաղկեդոնի ժողովից շատ առաջ, այսինքն՝ ընդունուած եւ տօնելի պիտի համարուի բոլոր հին Եկեղեցիներում: Ընդ որում՝ մեր պարագային, իր անձնագոհութիւնից բացի, թերեւս պէտք է ի նկատ առնուէր նաեւ մարտիրոսի ծագումը: Ճիշտ է, հայկական աղբիւրները հնարաւորինս զուսպ են Պողիկտոսի ազգութիւնը յիշատակելիս, իսկ օտարներից ոմանք պնդում են, թէ նա յոյն ծնողների զաւակ էր¹¹, սակայն սրան հակառակ Մկրտիչ եպիսկոպոս Աղանունին ասում է. «Անմահ թատերգակն Գորնէյ, որ 1643-ին բեմադրեց Պողիկտոսը եւ պանծացուց անոր յիշատակը, հայազգի կը համարի զայն եւ իշխանական ցեղէ, եւ կ'անուանէ հայ իշխան, [որ սերում է թագաւորական արիւնից]»¹²: Սրբազանը շեշտում է նաեւ, որ սուրբի

⁹ Տէս՝ R. MARTIN HARRISON, A Temple for Byzantium: The Discovery and Excavation of Anicia Juliana's Palace-Church in Istanbul (London: Harvey Miller, 1989), 77–81, 137–144, ուր մանրամասն քննուում են տաճարի քանդակագարդ յարդարանքն ու դրա արեւելեան (մասնաւորապէս՝ Սասանեան) նախշերը: Տէս նաեւ՝ Cyril Mango, Byzantine Architecture (New York: Harry N. Abrams, 1976), 102–104, եւ ROWLAND J. MAINSTONE, Hagia Sophia: Architecture, Structure and Liturgy of Justinian's Great Church (London: Thames & Hudson, 1988), 146–152՝ գմբեթաւոր համակարգերի ձեւաւորման եւ վաղ նախակերպի ընդհանուր համապատկերի կապակցութեամբ: Տաճարի զարդական ծրագրի գաղափարական եւ գեղագիտական մեկնաբանութեան համար տես նաեւ՝ CAROLYN L. CONNOR, The Color of Ivory: Interpretations of Early Byzantine Votive Ivories (Princeton: Princeton University Press, 1998), 94–95: Ճարտարապետութեան եւ արուեստաբանութեան ասպարէզ մտնելուց խոսափելով՝ պարզապէս նկատենք, որ «Սասանեան» անուան տակ առաւել հաւանական է հայկականը պիտի ընկալուի. Հայաստանից սերող սուրբի յիշատակն անմահացուած էր իր ծննդավայրի ճարտարապետութեան եւ զարդարուեստի աւանդոյթների կիրառմամբ:

¹⁰ Տէս վկայաբանութեան վերտառութիւնը:

¹¹ Տէս օր., https://www.catholic.org/saints/saint.php?saint_id=5536:

¹² «Seigneur Arménien», տէս Մ. ԵՊՍ. Ա.ՂԱՒԻՆՈՒՆԻ, նշ. աշխ., էջ 132, հմմտ. Կորնէյի 420-րդ բանատողը. «Polyeucte a du nom, et sort du sang des rois»:

ազգութեան վերաբերեալ հայր Ղեւոնդ Ալիշանը եւս նոյն տեսակէտն ունի¹³: Մարտիրոսի կապակցութեամբ Հրաչեայ Աճառեանը գրում է. «Ս. Պողիկտոս հայազգի, Մելիտինեցի, (Գ. Հայք), հռովմէական բանակի հարիւրապետ: Արեւելքի կուսակալ Փելիքսը, շատ բարձր գնահատելով նրա արժանիքը, իր միակ աղջկան՝ Պաւլինէին ամուսնացրել էր նրա հետ...»¹⁴: Զարմանալի է, որ հետազոտողներից շատերը կամ ընդհանրապէս լռութեան են մատնում Պողիկտոսի հայ լինելու հանգամանքը, կամ նշելով հանդերձ, որ «Պողիկտոս... երեւան կուգայ Գ. դարու կիսուն (250) Ծոփաց աշխարհի կողմերը»¹⁵, աւելորդ են համարում շեշտելը, որ տուեալ ժամանակաշրջանում Գ. Հայքը հիմնականում միատարր էր, եւ անգամ Պողիկտոսից մէկ եւ կէս դար յետոյ Մելիտինէի բնակչութեան հիմնական մասը տակաւին հայեր էին՝ վկայ սուրբ Եւթիմիոսը, որին ծնողները լոյս աշխարհ էին բերել Մելիտինէի սուրբ Պողիկտոս տաճարում իրենց աղօթքներն ուղղելով քաջայաղթ վկային¹⁶: Ուշագրաւ է, որ Եւթիմիոսի ազգութեան կապակցութեամբ դարձեալ հայկական աղբիւրները մեծաւ մասամբ լուռ են¹⁷, փոխարէնն օտարները սուրբի յիշատակը տօնախմբելիս իրենց եկեղեցիներում երգում են.

Երանելի մենակեաց այր,
Երթիմիոսն սուրբ արբանայր
Ծագումով եւ ազգութեամբ հայ,
Մանկուց լցուեց սիրով անծայր:
Հաստատուելով Պաղեստինում
Օրն անձկութեամբ էր անցկացնում,
Մեզ օրինակ եղաւ կեանքում
Սովորեցրեց խոնարհութիւն,
Կինել զուարթ եւ հաստատուն¹⁸:

¹³ Այս առթիւ տես ՂԵՒՈՆԳ ԱԼԻՇԱՆ, Յուշիկք հայրենեաց Հայոց, հտ. Բ., Վենետիկ, 1869, էջ 239 եւ յջ.:

¹⁴ ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ., Երեւան, 1942, էջ 266:

¹⁵ ՏԵՍ «Տաթեւ տարեցոյց», 1928, Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ, Պողիկտոս, էջ 227:

¹⁶ ՏԵՍ Պողիկտոսի վկայաբանութիւնը:

¹⁷ ՏԵՍ «Յայսամաւորք», Կոստանդնուպօլիս, 1834, Ա., էջ 39:

¹⁸ Հմմտ. «Byzantine Monthly Menaion, Volume Five: January, Metropolitan Cantor Institute, Byzantine Catholic Seminary, Pittsburgh», Փէնսիլվանիա, էջ 64: Այս ծիսական երգում թերեւս ակնարկում է Եւթիմիոսի հիմնած անապատը Պաղեստինում. «...շինեաց վանս զայրն յորում Դաւիթ արքայն փախստական թաքեցաւ ի Սաւուղայ». տես «Յայսամաւորք», անդ: Պէտք է նկատել, որ Եւթիմիոսը ոչ միայն մշտապէս խոստովանել է իր հայ լինելու հանգամանքը, այլ նաեւ օտարութեան մէջ ըստ կարելոյն սերտ կապեր է պահել հայրենակիցների հետ՝ փորձելով ամեն կերպ աջակցել ու սատարել: Սա վկայում է իր վարքի հետեւեալ տողերով.

Մեկրտինէի սուրբ Պօղիկտոս հայկական եկեղեցուց առաջ յիշեցինք Կոստանդնուպօլսի երկու եկեղեցիները, որ ընծայուած էին սուրբ Պօղիկտոսին: Արժէ յաւելել նաեւ Ռավեննայի իր եկեղեցին, «որուն նաւակատիքը կը կատարուէր ապրիլ 9-ին»¹⁹, – ինչպէս նկատուի է Աղաւնունին ու յաւելում, որ սուրբի անունով եկեղեցի պէտք է եղած լինի նաեւ Եգիպտոսում՝ հիմնաւորելով. «Նոյն տեղը գտնուած հողէ կանթեղներէն ոմանք նուիրուած են ի յիշատակ նոյն սուրբին, ինչպէս յայտնի կ'ըլլայ Լուվրի Թանգարանը պահուած նոյն կանթեղներու արձանագրութիւններէն»²⁰:

Անշուշտ չափերով Կոստանդնուպօլսի տաճարին չի կարող զուգահրուել Պօղիկտոսի երուսաղէմեան հայկական տաճարը, որ հազար տարուց աւելի աւերուած եւ անյայտ է մնացել: Լոկ 1894-ին պատահաբար յայտնաբերուեց բաւականին լաւ պահպանուած մի մեծ խճանկար, որ իր Զ. դարի արձանագրութեամբ (Վասն յիշատակի եւ փրկութեան ամենայն Հայոց զորոց զանուանս Տէր գիտէ) վկայում էր, թէ Սաղիմի ներկայիս Դամասկեան դարպասների մօտ հայկական վանք է եղել²¹:

«Երբ մեր հայր Եւթիմիոսը նոր էր սկսել իր անապատի ձեւաւորումը, ինքը եւ իրեն յարած տաներկու եղբայրները տակաւին կարիքի մէջ էին... [Իւրաքանչիւրն իր գործն էր անում], իսկ Դոմետիանոսը տնտես էր կարգուել առաջին տարուայ համար: Եւ այնպէս պատահեց, որ շուրջ չորս հարիւր հոգուց բաղկացած հայերի մի խումբ, որ Սուրբ քաղաքից գնում էր Յորդանան, ճանապարհից շեղուելով եկաւ նորահաստատ վանքը: Եւ սա ըստ իս կանխորոշել էր վերին Նախախնամութիւնը՝ Եւթիմիոսի առաքինութիւնը եւ Աստծու պարգեւած շնորհը բացայայտելու համար: Եւ եկողներին տեսնելով՝ ծերունի Եւթիմիոսը կանչեց Դոմետիանոսին ու ասաց. «Այս մարդկանց ուտելու բան տո՛ւր»: Իսկ սա պատասխանեց. «Պատուարժան հայր, մառանում անգամ տասը հոգու կերակրելու համար անունդ չկայ, ինչպէս կարող եմ այս բազմութեանը հաց տալ»: Իսկ աստուածահաճոյ եւ մարգարէական շնորհով լեցուն այրն ասաց. «Արա՛ այնպէս, ինչպէս ասացի, քանզի Տիրոջ խօսքերն են. «Պիտի ուտեն, եւ դեռ պիտի աւելանայ» (Բ. Թագ. Դ. 44): Եւ երբ տնտեսը գնաց այն փոքրիկ խուցը, որը ոմանք մառան էին անուանում, եւ ուր ընդամենը մի քանի նկանակ հաց կար, չկարողացաւ բացել դուռը, քանզի Աստծու օրհնութիւնը մինչեւ առաստաղ լիացրել էր խուցը: Ուտի կանչելով եղբայրներից մի քանիսին՝ նա դուռը հանեց ծխնիներից, եւ հացերն սկսեցին դուրս յորդել: Նոյն օրհնութիւնը տարածուեց նաեւ զինու եւ ձէթի վրայ: Բոլորը ճաշակեցին ու կշտացան, եւ երեք ամիս շարունակ վանականները չէին կարողանում դուռն իր տեղը դնել հացի առատութեան պատճառով».*Cyril of Scythopolis, Lives of the monks of Palestine, Trans. R., M. Price, Kalamazoo, Mich. Cistercian Publications, 1991, էջ 22–23:*

¹⁹ Ա.ՂԱՒՆՈՒՆԻ, 132:

²⁰ Անդ, 133:

²¹ Մանրամասն տես Ա.ՂԱՒՆՈՒՆԻ, 133–137, հմմտ. ԷՄՄԱՆՈՒԷԼ ՎՐԳ. ԱԹԱՋԱՆԵԱՆ, Գ. ՄԱԳՅԵԱՆ, Հայ Երուսաղէմ, Երեւան, 2003, էջ 60–61, ԷՄՄԱՆՈՒԷԼ ՎՐԳ. ԱԹԱՋԱՆԵԱՆ, Գ. ՄԱԳՅԵԱՆ, Երուսաղէմի Հայոց սրբավայրերը, Երեւան, 2003, Մոսկովա, էջ 80–81, հմմտ. https://gropedia.com/page/birds_mosaic_jerusalem, նաեւ «New Studies in the

Թէ սուրբի անունով քանի՞ եկեղեցի կառուցուեց, դժուար է ասելը: Ներկայ դրութեամբ որոնողական համակարգերը կամ արհեստական բանականութիւնները գործող սուրբ Պողիկտոս չեն նշում²², այսինքն՝ քարերը չեն դիմացել դարերի փորձութեանը: Սրանց դիմաց՝ փոշի դարձած քարերին հակառակ գոյատեւել են սուրբ Պողիկտոսին ձօնուած՝ մագաղաթի կամ թղթի վրայ դրոշմուած յուշարձանները՝ իր ուղին ներկայացնող պատմութիւնները, որ յոյս, հաւատ եւ կամք են ներշնչել անթիւ-անհամար քրիստոնեաների: Պողիկտոսի վկայաբանութեան մի քանի խմբագրութիւն է պահպանուել: Ձեռագրագէտ Օբէն իր հիմնարար աշխատութեան մէջ²³ նշում է, որ սկզբնաղբիւրը սուրբին ձօնուած Ներբողեանն է՝ գրուած մօտաւորապէս 363 թուականին, որի համար հիմք հանդիսացած աւելի վաղ բնագիրը չի պահպանուել²⁴:

Վկայաբանութեան հայերէն հիմնարար տարբերակները Մխիթարեանների հրատարակութեամբ են՝ Ա) «Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց հատրնտիր քաղեալք ի Ճառընտրաց» եւ Բ) «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, որք կան ի Տօնացոյցի Եկեղեցւոյ Հայաստանեայց»²⁵: Առաջինում տպագրուածի արեւելահայերէն փոխադրութիւնը Մայր Աթոռը լոյս է ընծայել «Վարք սրբոց» քառահատոր հրատարակութեան Դ. գրքում²⁶: Ստորեւ փոխադրեալ ներկայացնում ենք բազմաթիւ աղբիւրների համադրութեան եղանակով Մկրտիչ Ազգերեանի հեղինակած վկայաբանութիւնը, որ ծանօթագրութիւնների եւ բացատրութիւնների շնորհիւ փաստօրէն վեր է ածուել մի փոքրիկ ուսումնասիրութեան: Հեղինակի բացատրութիւնները թողնելով բնագրի նմանութեամբ փակագծերի մէջ եւ շարադրանքի վերջում, մեր նշումները զետեղում ենք տողատակում:

Archaeology of Jerusalem and Its Region», Collected Papers, Vol. XIV, Amit Re'em, Ghaleb Abu Diab, Jacques Neguer, Yossi Nagar, Jerusalem 2021, Elisabetta Boaretto and Yana Tchekhanovets, New Archaeological Study of the Armenian “Birds Mosaic” Chapel in Jerusalem, էջ 119–141:

²² Երուսաղէմի սուրբ Պողիկտոսում պատարագ մատուցում է միայն սուրբի տօնին, առանց հաւատացեալների, որպէսզի խճանկարը չվնասուի:

²³ Տէս Բ. AUBÉ, Polyeuete dans l'histoire: Étude sur le martyre de Polyeuete d'après des documents inédits. Paris: Firmin-Didot, 1882:

²⁴ Անդ, էջ 38:

²⁵ Ա) Տէս հտ. Բ., Վենետիկ, 1874, էջ 239–254, եւ Բ) հտ. Ապալից, Վենետիկ, 1810, էջ 446–461:

²⁶ Ս. էջմիածին, 2010, էջ 57–71:

Սուրբ Պօղիկոսու գինաւորի վկայաբանութիւնը

Սուրբի յիշատակը հայկական եւ յունական Յայսմատուրֆներում յունուար 9-ին է, լատինների մատեաններում փետրուար 13-ին: Բողլանդեան Հենսֆենիոսը²⁷ փետրուարին է յիշատակում՝ իր Բ. հատորի 650–655 էջերում, նաեւ Սիմէոն Մետափրաստէսը²⁸, Անանունը²⁹ եւ այլք (1):

Դեկոս եւ Վաղերիանոս կայսրերի իշխանութեան ժամանակներում է ապրել Քրիստոսի քաջ զօրական սուրբ Պօղիքոսը (կամ Պօղիկոսոսը, ըստ յունական հնչողութեան՝ Բօլիէլգոս, որ նշանակում է բազմաղօթք: Նա Փոքր Հայքի Մելիտինէ քաղաքից էր, որը կոչում է նաեւ Մելտենի կամ Մալաթիա՝ Երրորդ Հայքում Խարբերդ Կարմիան, Եփրատ գետի մօտ (2):

Պօղիքոսան սկզբում հեթանոս էր, ծնունդ էլ կռապաշտ [ծնող]ներից: Եւ քանի որ երեւելի տոհմից էր, կնութեան առնելով դուստր Պաւլինէին, փեսայ դարձաւ քաղաքի իշխանին, որի անունը Փելիքս էր: Պօղիքոսոսը մեծ պատուի էր արժանացել զինուորական կարգում՝ արքունի զօրականների մէջ՝ այն գնդում, որը կոչում էր Գեռանովօլոս, այսինքն՝ Շանթահաբող կամ Կայծակնարկու (3):

Մելիտինէում կար մէկ այլ զօրական եւս՝ հաւատքով քրիստոնէայ, Նէարքոս անունով, որ մեզ մօտ Նէարխոս է ասւում: Աստուծոյ տնօրինութեամբ Պօղիքոսոսը նրա հետ յոյժ մտերմացաւ: Եւ դարձան ընկեր, սիրելի եւ մտերիմ բարեկամ, աւելի՛ քան հարազատ եղբայրներ, այնքան, որ մի հոգի էին երկու մարմնի մէջ:

²⁷ Գոդֆրիդուս Հենսֆենիոս (1601–1681) – բելգիացի Յիսուսեան պատմաբան եւ բանասէր, Բողլանդեան միաբանութեան հիմնադիրներից:

²⁸ Մետափրաստէս – Ժ. դարի բիզանդացի մատենագիր, պետական գործիչ եւ վարքագիր: Մականունն ստացել է սուրբերի հին եւ ոճապէս անհարթ վարքերը հաւաքելու եւ բարձր գրական, պաշտօնական ոճով վերաշարադրելու հանգամանքով. «Μεταφραστής» իմա՛ «վերածեւակերպող» կամ «վերաշարադրող»:

²⁹ Ակնարկը Μαρτύριον τοῦ ἁγίου Πολυεύκτου (Bibliotheca Hagiographica Graeca BHG 1568) վկայաբանութեան մասին է, որի հեղինակը տակաւին չի պարզուել:

Այս սիրոյ մտերմութեան շնորհիւ Պօղիքոսը սովորեց եւ ընտելացաւ քրիստոնէական օրէնքներին եւ ըմբռնեց կոռնապոլիսեան սնտոի պաշտամունքների ստուծիւնը: Տեսնելով իր բարեկամ Նէարխոսի համեստ ու առաքինի վարքը՝ նա ընդօրինակում էր վերջինիս առաքինութիւնները եւ առաւել առաջադիմում: Ու թէեւ դեռ չէր մկրտուել, սակայն ապրում էր որպէս կատարեալ քրիստոնեայ: Նա նման էր մի պտղալից ձիթենու, որն արժանի է տնկուելու Աստուծոյ տանը: Իսկ Նէարխոսն անդադար ջանք էր թափում, որպէսզի ընկերն իր վայրենի ծառից պատուաստուի բարի ձիթենու բնին (Հմմտ. Հռովմ. ԺԱ. 17–24):

Այն ժամանակ ինքնակալներ Դեկոսի եւ Վաղերիանոսի դաժան հրամանը քրիստոնեաների դէմ տարածուեց ամենուր (4): Եւ բոլոր քաղաքներում ընթերցում էին արքունի հրովարտակները, թէ՛ ով դառնայ կուռքերի պաշտամունքին, թո՛ղ խաղաղութիւն վայելի, իսկ ով յանձն չառնի՝ մահուամբ սպանուի, եւ նրա ամբողջ գոյքը թո՛ղ բռնագրաւուի: Հրովարտակը հասաւ նաեւ Մելիտինէ քաղաք՝ իշխան Փելիքսին, որպէսզի ինչ քրիստոնեայ գտնի՝ տանջի մինչ ի մահ:

Երբ Նէարխոսը լսեց այս հրամանը, ակնկալում էր, որ որպէս քրիստոնեայ իրեն կբռնեն ու կսպանեն, ուստի եւ պատրաստում էր մեռնել ի սէր Քրիստոսի անուան: Բայց նաեւ շափազանց տրտում ու մտահոգ էր իր սիրելի բարեկամ Պօղիքոսի համար, քանզի կարծում էր, թէ վերջինս կգրկուի անանց պսակից՝ դեռեւս մկրտուած չլինելու եւ ճշմարիտ հաւատքի մէջ հաստատուած չլինելու պատճառով: Եւ Նէարխոսի սիրտը ճմլում էր, որովհետեւ իրեն սպասում էր յաւիտեան բաժանում անսահման սիրելի ընկերոջից:

Եւ սաստիկ տրտմութեան պատճառով Նէարխոսը չէր համարձակում նայել բարեկամի երեսին. այլ հենց տեսնում էր նրան՝ ցաւագին հեծեծում էր, աղիքները գալարում էին, եւ սիրտը լցում էր: Նա առանձնակալով դառնապէս արտասուում էր եւ ուժգին պաղատանքով աղօթում էր Տիրոջն իր ընկերոջ համար:

Իսկ Պօղիքոսը, նրան այդպէս տրտում տեսնելով մէկ, երկու անգամ, հարցնում էր տրտմութեան պատճառը, բայց Նէարխոսը չէր համարձակում ասել այն, ինչ ունէր սրտում: Մինչեւ որ, Պօղիքոսի թախանձանքին ականջալուր ասաց. «Իսկ ի՞նչպէս շտրտեմ, ո՞վ սիրելի բարեկամ. քանզի ահա շատ շուտով քանդուելու է իմ եւ քո անխղիկ կարծուած ամուր բարեկամութիւնը, եւ դրանից հեղձամաղձուկ վիճակում է սիրտս»:

Այս լսելով՝ Պօղիքոսսի մտքերն ալեկոծուեցին, եւ տարակուսած կրկին հարցնում էր. «Ո՛վ իմ սիրելի բարեկամ, որտեղից ես այդպիսի տխուր բաներ գուշակում, ի՞նչ է այս անակնկալ լուրը, որ լսում եմ քեզնից: Աղաչում եմ, համարձակ ասա՛, ի՞նչ կայ քո սրտում»:

Նէարխոսն ասաց. «Մի՞թէ չլսեցիր արքունի հրովարտակի խօսքը Քրիստոսի ծառաների դէմ, որն ինձ ստիպում է մահուամբ բաժանուել քեզնից եւ քեզ թողնել հեթանոսական կորստեան վտանգաւոր վիճակում: Եւ ահա մեծապէս տխրում եմ ոչ թէ իմ ապագայի, այլ իմ սիրելի ընկերոջ համար:

Այնժամ երանելի Պօղիքոսսը ժպտաց եւ ասաց նրան. «Ո՛վ իմ սիրելի բարեկամ, թող ո՛չ մի կերպ տրտմութիւն չիջնի քեզ իմ պատճառով. քանզի ինչպէս դու ես, այնպէս եւ ես եմ Քրիստոսի հաւատարիմ ծառան, եւ ակնկալում եմ մեր Փրկիչ Քրիստոսից, որին հաւատում եմ ամենայն ճշմարտութեամբ, որ Իր ընտրեալների հետ ինձ եւս բաժին ու մասնակցութիւն կտայ, քանզի դրա առհաւատչեան արդէն կանխաւ ստացել եմ տեսիլքի միջոցով:

Եւ պատմեց նրան իր տեսիլքը. «Երազում տեսնում էի, որ Քրիստոս վրայից հանեց զինուորականի այս աղտեղուած քղամիդը եւ ուսերիս գցեց պայծառ թիկնոց, նաեւ ինձ մի թեւաւոր ձի տուեց: Եւ գիտեմ, որ իմ վրայից հանուած աղտեղի պատմուճանը հեթանոսութեան կարգի համաձայն իմ նախկին երկրաւոր զինուորութեան վիճակն էր: Իսկ պայծառ զգեստները գուշակում են, որ վկայական մահուամբ երկնաւոր զինուորութեան մէջ պիտի միանամ փառաւոր կարգերին, քանզի թեւաւոր ձին էլ ցոյց է տալիս, որ արագաթռիչ ընթացքով երկրից պիտի վերանամ դէպի երկինք: Եւ արդ, մտքով լուսաւորուեցի: Ժամանակն է, որ ես մարտիրոսանամ եւ մկրտուեմ իմ արեամբ, եթէ չհասնեմ աւագանի մկրտութեանը, առ որն շտապելու եմ այսուհետ»:

Երբ Նէարխոսը լսեց Քրիստոսի վկայի լուսաւոր խօսքերը, հոգով գուարճացաւ եւ խնդութեամբ բացականչեց. «Դու գտար քո անձի ցանկալին՝ ճշմարիտ Լոյսը, մեր Քրիստոս Աստծուն: Եւ արդ, ուրախ եմ ի Տէր, որ արժանի եմ եղել այդպիսի բարեկամ ունենալու»:

Այնժամ Պօղիքոսսը, Հոգով աւուեցուն, գնաց իր աներոջ՝ քաղաքի իշխան Փելիքսի մօտ եւ նրանից խնդրեց քրիստոնեաների դէմ ուղղուած արքունի հրովարտակը՝ իբր թէ տեսնելու համար, թէ ինչ խօսքեր են գրուած այնտեղ: Սակայն իր քրիստոնեայ լինելու մասին նրան դեռ ոչինչ չայտնեց: Բայց երբ ընթերցեց անիրաւ հրամանը, չկարողացաւ հանդուրժել հե-

Թանոսների կուրուրթիւնը, այլ հրովարտակը պատուելով՝ վայր նետեց եւ տնից դուրս ելաւ: Եւ տեսնելով հեթանոսներին, որոնք ուսամբարձ տանում էին տասներկու կաւէ կուռքեր ու զանգեր հնչեցնելով գնում էին, որպէսզի դրանք կանգնեցնեն հրապարակի զոհասեղանի վրայ, վազեց, յափշտակեց նրանց ձեռքից ու գետինն զարկեց, ոտքերով կոխոտեց եւ մանր-մանր փշրեց (5): Սակայն այդ պահին ոչ ոք չհամարձակուեց նրա դէմ խօսել, քանի որ քաղաքապետի փեսան էր:

Իսկ նրա աներ Փելիքսը, իմանալով եւ լսելով Պողիքոսի արածը, շափազանց տրտմեց. քանզի հենց ինքը պիտի վրէժխնդիր լինէր, ինչպէս որ հրաման էր ստացել թագաւորներից՝ շարշարելու քրիստոնեաներին: Ուստի սգում էր իր փեսայից զրկուելու համար: Այս իսկ պատճառով կանչեց Պողիքոսին եւ սկսեց քաղցրութեամբ խրատել, որ ետ կանգնի Քրիստոսից. «Ապա թէ ոչ,— ասում էր,— ո՛չ մարդկանցից մէկը, ո՛չ իսկ անմահ աստուածները կարող են ներել քո այդ յանդգնութիւնը, որով համարձակուեցիր փշրել աստուածներին: Եւ ի՞նչպէս ես յանձն առնում զրկուել ընտանիքիցդ ու զաւակներիցդ, իմ դստերը թողնել որպէս լքուած այրի եւ օտարանալ քաղցր կեանքից՝ ոչ թէ բնական մահով, այլ շարագործի պէս՝ մահապարտների նման:

Սուրբը պատասխան տուեց ու ասաց. «Այսուհետեւ ո՛չ զաւակի ու կնոջ մասին եմ հոգում, եւ ո՛չ առաւել եւս երկրաւոր բաների մասին, այլ փափագում եմ երկնաւոր, անանց վայելչութիւնը եւ անթառամ պսակները»:

Այնժամ մօտեցաւ Պողիքոսի կինը՝ Պաւլինէն, լացակումած կոծում էր ու ողբում, եւ բազում աղաչանքներով յորդորում էր ամուսնուն՝ հեռանալ Քրիստոսից, ոչ թէ կուռքերից (6):

Նոյնն էին աղաչում նաեւ նրա բոլոր ծանօթներն ու բարեկամները՝ արտասուելով աղերսում էին: Իսկ երանելին ամենեւին շլտեց բարեկամների թախանձանքը եւ կնոջ ողբը, այլ ինքն էր ջանում, որ եթէ հնարաւոր լինի, Տիրոջ խօսքը [քարոզել]ով նրանց ձգի դէպի ճշմարտութեան ճանապարհը:

Այնժամ դատաւորը (Փելիքսը), իր քաղցրութիւնը դառնութեան փոխելով, հրամայեց դահիճներին հարուածել Պողիքոսի բերանին՝ սպառնալով նրան կեանքից զրկել ծանր շարշարանքներով: Իսկ սուրբ վկան, զուարթութեամբ ընդունելով հարուածները, հոգով եռում էր՝ հասնելու վկայական արեան հանդէսին:

«Պատրաստ եմ,— ասում էր,— մեռնելու Տիրոջ անուան համար՝ պէս-պէս տանջանքներով ու դառն կտտանքներով. քանզի ինձ համար Քրիստոսն է կեանքը, եւ մեռնելն է շահ: Եւ փառք եմ համարում զինուորագրուել ան-

մահ Արքային, որն ինձ խաւարից դէպի լոյս կանչեց: Եւ տեսնում եմ իմ Փրկչին, որ կանգնած է իմ կողքին եւ զօրացնում է ինձ»:

Եւ դարձեալ նրա կին Պաւլինէն արտասուքով թախանձում էր Պօղիքտոսին, որ խնայէր իրեն ու իր ընտանիքը եւ դառն մահուան տարաժամ չհանդիպէր: Իսկ առաքինի նահատակը, արհամարհելով պատրանքները Չարի, որը կնոջ միջոցով եւ ընտանեկան գորովով խորհում էր դաւել իրեն, սկսեց կշտամբել կնոջն ու ասաց.

«Մի ողբայ ինձ, այլ լացիր քո անձի եւ հօրդ տան համար, որ պաշտում էք մունջ կուռքերին եւ ահեղ Արարչի արդար դատաստաններով ձեր ու ձեր որդիների համար մշտնջենաւոր գեհնն էք ժառանգում: Մինչդեռ եթէ ինձ լսէք՝ կեանքի խորհրդակից կլինեմ ձեզ. թողէք պատիր բաների սնոտիութիւնը եւ ճանաչէք ձեր Ստեղծողին՝ ճշմարիտ Աստծուն: Եւ ինչպէս չէք ըմբռնում ձեր աստուածների ստույթիւնը, չէ՞ որ ես՝ մի մահկանացու մարդ, ոտքի տակ տուեցի ու փշրեցի նրանց, եւ ահա դուք աստուածների կարօտ մնացիք: Յառա՛ջ, ականջալուր եղէք ինձ, թշուառականներ, եւ երանելի կլինէք, քանզի կծանօթացնեմ ձեզ ճշմարիտ եւ անմահ Աստծուն, որ իր սիրելիներին պարգեւում է յաւիտենական կեանք եւ անմահութիւն»:

Այս եւ սրանից աւելին քարոզելով՝ սուրբը շատ կռապաշտների ձգեց դէպի ճշմարտութիւն, եւ նրանք դարձի եկան առ Տէրն ամենքի: Այս պատճառով ամբոխը սրտմտած աղաղակով դիմեց իշխանին, որ փութով կորստեան մատնի այդ մարդուն. «Որպէսզի,– ասում էին,– իր խօսքերի կախարդանքով չմոլորեցնի բոլորին»:

Եւ դատաւորը նրա վրայ գլխատման վճիռ կայացրեց:

Եւ երբ երանելին մեծամբոխ ժողովրդի հետ խնդութեամբ գնում էր դէպի նահատակութեան վայրը, նրան ընդառաջ ելաւ իր հոգեկից, սիրելի ընկերն ու բարեկամը՝ Նէարխոսը, եւ խնդութեան ողջոյն տուեց սուրբին, իսկ Պօղիքտոսը, նայելով նրան, ասաց.

«Ո՛վ իմ ընկեր սիրելի, ահա հասաւ ժամը, որ ես վայելեմ քո արդիւնաբեր բարեկամութեան եւ խօսքերի պտուղը եւ ի սէր Քրիստոսի հրաժարուեմ այս անցաւոր կեանքից՝ ընդունելով անանցը: Տեսնում եմ նաեւ մի լուսատեսիլ երիտասարդի, որն ինձ շտապեցնում է վկայական նահատակութեան ընթացքի մէջ՝ իմ արեամբ մկրտուելու համար: Եւ սրա համար մի՛ տրտմիր, որ քեզնից առաջ անցայ դէպի պսակն ընթանալիս, քանզի մեր Բարերարի տուրքերն առատ են: Եւ արդ, եղբայր իմ Նէարխոս, մի՛ մոռացիր բարեկամութիւնն անխզելի»:

Իսկ դահիճները զայրանում էին սուրբի խօսքերի վրայ եւ ստիպում էին շտապել դէպի գլխատման վայրը, ուր եւ նրան տանելով՝ հատեցին քաջ զինաւորի գլուխը: Եւ այսպէս Քրիստոսով վախճանուեց երանելի Պօղիքտոսը Տիրոջ 249 կամ 259 թուականին:

Այնժամ Նէարխոսը, միաբանուելով այլ բարեպաշտների հետ, համոզեց դահիճներին եւ վերցրեց սուրբի մարմինն ու պատուով ամփոփեց մի արժանաւոր տեղում, ուր եւ յետոյ նրա տապանի վրայ մատուռ կառուցուեց, եւ բժշկութիւնների երեւելի հրաշքներով այն դարձաւ հաւատացեալների ուխտատեղի:

Ասուում է նաեւ երանելի Նէարխոսի մասին, թէ նա վայելուչ կտաւներ վերցնելով՝ հաւատքով թաթաւեց սուրբ Պօղիքտոսի արեամբ եւ տարաւ իր Կանանէոտոն³⁰ (7) քաղաքը, ուր մի քանի օր անց նահատակուեց նաեւ ինքը, ինչպէս ասում են՝ հրոյ ճարակ դառնալով: Սակայն նրա մասին յատուկ վկայաբանութիւն չկայ: Յոյները նրան առանձին են յիշատակում, սակայն Պօղիքտոսի անունն առաւել հռչակուեց ոչ միայն Հայոց աշխարհում, այլեւ յոյների մէջ եւ Արեւմուտքում:

Սուրբ Սաբաս աբբայի աշակերտը՝ Կիրեղ միայնակեացը, սուրբ Եւթիմիոսի վարքում պատմում է, որ վերջինիս ծնողները՝ Պօղոսը եւ Դիոնեսիան, սուրբ Պօղիքտոսի նահատակութիւնից շուրջ հարիւր տարի անց նրա քաղաքակիցներն էին՝ բնակւում էին Մելիտինէում: Եւ քանի որ նրանք զաւակ չունէին, որովհետեւ Դիոնեսիան ամուլ էր, հաւատքով գնացին սուրբ Պօղիքտոսի մատուռը եւ բազում օրեր ջերմեռանդ աղօթքներով խնդրում էին, որ իրենց որովայնի պտուղ շնորհուի:

Եւ մի գիշեր նրանց տեսիլք երեւաց, ու մի ձայն լսեցին, որն ասում էր. «Քաջալերուեցէք եւ խաղաղ թող լինեն ձեր հոգիները, քանզի Աստուած ձեզ մի արու զաւակ է պարգեւելու, որն իր անունը պիտի ստանայ բարի ու անդորր ոգուց եւ իր գործերով պիտի արդիւնաւորի այդ անունը, եւ նրա ծնուելով Տէրը Եկեղեցուն անդորր պիտի շնորհի:

Եւ այդպէս էլ եղաւ. քանզի նրանց մի որդի ծնուեց, որի անունը դրուեց

³⁰ Այս անունով կամ անգամ դրա աղաւաղուած տարբերակով քաղաք յայտնի չէ: Աւգերեանի (7) ծանօթագրութեան մէջ Կանանէոփտաց տարընթեցուածն է: Ենթադրելի է, որ ճանճապանութեան համար նպաստաւոր բնութիւն ունեցող հայկական քաղաքը իր անունն ստացել հէնց այդ հանգամանքի բերումով եւ հայերէն Մեղրիտունը, դարձել է յուն. Μελιτηνή, լատ. Melitene, որ հնդեւրոպ. նոյն մեղ-մել (ղ=լ) արմատից կազմուած լինելով գուցէ լատին գրիչին ստիպել են կաթ ու մեղր հոսեցնող երկրի՝ Քանաանի հետ կապել (հմտ. Եւք Գ. 8):

Եւթիմիոս, ինչը թարգմանում է որպէս բարեհոգի կամ անդորրասիրտ եւ գուարթամիտ: Եւ շուրջ հինգ ամիս անց՝ Տիրոջ 378 թուականին, ասպարէզից վերացաւ արիանոսական Վաղէս կայսրը, եւ եկեղեցին խաղաղութիւն ու անդորր գտաւ:

Իսկ մանուկ Եւթիմիոսը, սրբութեամբ մեծանալով, քահանայ դարձաւ եւ վերակացու կարգուեց Մելիտինէի սահմաններում գտնուող վանքերի ու մենաստանների վրայ: Նա յաճախակի էր այցելում սուրբ Պօղիքոսի տաճարը եւ երբեմն երկար ժամանակով այնտեղ առանձնանում էր: Սուրբ Եւթիմիոսի յիշատակը մենք նշում ենք յունուար ամսի 20-ին:

Յանուն սուրբ Պօղիքոսի նաեւ Կոստանդնուպօլսում կառուցուեց Եկեղեցի, որի խորանի ծածկը Յուստինիանոս կայսեր օրօք մաքուր սուկով պատեց Յուլիանէ անունով մի բարեպաշտ տիկին: Սրա մասին երկարօրէն գրում է սուրբ Գրիգոր Տուրովնեցին (Գրիգոր Տուրացի) իր «Հրաշքների գրքում» (Գիրք Ա., գլուխ 103), ուր եւ յայտնում է հետեւեալը. «Կոստանդնուպօլսում Պօղիքոսս վկան մեծարում է մեծ պատուով ու պաշտամունքով, մանաւանդ այն պատճառով, որ թէպէտ նա փայլում է նաեւ այլ մեծամեծ զօրութիւններով ու հրաշքներով, սակայն յատկապէս ընդունուած է իբրեւ սուտ երդուողների դէմ մօտալուտ վրէժխնդիր, որովհետեւ երբ որեւէ ծպտեալ յանցագործի կասկածելով բերում են նրա տաճարը՝ շարագործը կամ իսկոյն խոստովանում է իր արածը՝ սարսափելով սուրբ վկայի զօրութիւնից, կամ, եթէ սուտ երդում է ուտում, իսկոյն եւ եթ աստուածային վրէժխնդրութեան հարուած է ստանում:

Սուրբ Պօղիքոսսի այս զօրութիւնը մեծապէս հուշակուեց նաեւ նախնի փռանկ ժողովրդի, այսինքն՝ հետագայի Ֆրանսիական ազգի մէջ: Այդ իսկ պատճառով նոյն ինքը՝ Տուրովնեցին (Գրիգոր Տուրացի), Ֆրանկների պատմութեան է. գրքի 6-րդ գլխում գրում է, թէ Քլօտար Ա. որդին՝ Մերովինգների արքայատոհմի շառաւիղ, Բուրգունդիայի արքայ սուրբ Գօնթրամնոսը (532–592), իր եղբօր՝ Փարիզի Խարիբերտ (թագաւորել է 561–567 թթ.) արքայի մահից յետոյ, այսպէս էր ասում իւրայիններին.

«Ահա ուխտի դաշինքը, որ եղաւ մեր միջեւ. այն է՝ ով առանց իր եղբօր հաւանութեան մտնի Փարիզ քաղաք, թող կորցնի իր ժառանգութեան բաժինը: Եւ թող սուրբ Պօղիքոսս վկան՝ սուրբ Հիլարիոսի եւ Մարտինոսի հետ մէկտեղ, լինի նրա դատաւորն ու հատուցողը»:

Ապա շարունակում է. «Սակայն դրանից յետոյ իմ՝ [Գրիգոր Տուրացու] հարազատ Սիզիբերտոսը մտաւ այնտեղ, եւ աստուածային դատաստա-

նով մատնուելով կորստեան՝ կորցրեց իր բաժինը. նոյնը պատահեց նաեւ Շիլպերիկոսին» եւ այլն (8):

Սուրբ Պողիբտոս վկան անուանի էր հին հաւատացեալների համար՝ որպէս Եկեղեցու դէմ նախավկանների բոյլի ներկայացուցիչ: Այդ պատճառով մեր Յայսմատուրքներում եւ հին յոյն հեղինակի՝ Անոնիմոսի, այսինքն՝ Անանունի վկայագրերում միաբան գրուում է, թէ առաջին հալածանքի ժամանակ Երուսաղէմում նախ վկայեց սուրբ Ստեփանոսը, երկրորդ հալածանքի ժամանակ Աղեքսանդրիայում նահատակուեց սուրբ Փիլիմոնը (կամ Փիլորոմոսը), իսկ երրորդի ժամանակ՝ աստուածային Պողիբտոսը Հայոց Մելիտինէում: Սրա համար էլ յոյները ժամագրքում ասուում է. «Նա առաջինն էր, որ այդ գաւառում վկայեց Քրիստոսի համար»:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

(1) Թէպէտեւ առայժմ ձեռքներին չունենք սուրբ Պողիբտոսի մասին մեր փափագած «Ճառքնախի» վկայաբանութիւնը, բայց այդ բացը լրացնում են բոլոր ազգերի Յայսմատուրքները, որոնք համահունչ են հայկականին: Դա հաստատում է նաեւ Բողանդեանների առաջ բերած յոյն նոխաբան հեղինակ Անանունը: Նոյնն են կրկնում նաեւ Սուրիոսը եւ Կպոմմանոսը: Կայ նաեւ Անանուն հեղինակի մէկ այլ լատիներէն գործ, որը յիշեալների համառոտութիւնն է: Այդ իսկ պատճառով մենք, պահպանելով մեր Յայսմատուրքների ոճը, դրան յարմարեցրինք նաեւ այլոց գրուածքների որոշ հատուածներ:

(2) Բողանդեան Հենսֆենիոսն այստեղ (650-րդ էջում) տալիս է հետեւեալ աշխարհագրական տեղեկութիւնը. «Մելիտինէն (ասում է նա) Փոքր Հայքի ֆաղաֆ է՝ համանուն գաւառի կենտրոնը, Եփրատ գետից ոչ հեռու՝ նրա աջ կողմում: Հին ժամանակներում փոքր ւան էր. Տրայանոս կայսեր (98 – 117) հրամանով ֆաղաֆ դարձաւ³¹ եւ աստիճանաբար ընդարձակուելով՝ հոյակապ տեսք ստացաւ տանարներով, վանառանոցներով, զով հանգստավայրերով, բաղնիքներով ու պարսպից դուրս գտնուող թատրոններով: Եւ նոր պարսպով պատեց Յուստինիանոսը, ինչպէս ասացինք յունուարի 10-ի (յիշատակին)՝ Մելիտինէի Դոմետիանոս եպիսկոպոսի վարժում, որ փայլեց Զ. դարի վերջին:

³¹ Նկատենք, որ իբրեւ քաղաք Մելիտենեն յիշատակուում է դեռեւս Սալմանասար Գ. (Ք. ա. 859–824) սեպագրերում. տե՛ս «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան», Երեւան, հտ. 3, 1986, էջ 761:

Իսկ մենք աշխարհագրական տեղեկությունների համար ընթերցողին ուղղորդում ենք դէպի հայերէնով հրատարակուած աշխարհագրութեան գրքերը:

(3) Ըստ հեթանոսական առասպելների՝ կարելի էր ասել, թէ հռոմէական զօրքի մի գունդ Արամազդեան կամ Դիոսեան (Իւպիտերեան) է կոչուել, եւ քանի որ Արամազդը (Իւպիտերը) համարուած ու նկարուած էր որպէս շանթառափ (կայծակնացայտ), նոյն շքեղ անունը տրուել էր նաեւ գնդին: Սակայն յոյն Անոնիմոսը բերում է գիտութեան համար կարեւոր մէկ այլ պատճառ: Նա ասում է, թէ երբ Մարկոս (Արելիոս Անտոնինոս) ինքնակալը պատերազմի ելաւ բարբարոսների դէմ, հռոմէական զօրքերը նեղուեցին ծարաւից. եւ կայսրը վարանում ու տագնապում էր, քանի որ թշնամիները զօրանում էին իր դէմ: Կայսերական զօրքի մէջ կար ֆրիստոնեաների մի գունդ (որը հետագայում դարձաւ ֆրիստոնեաների ու հեթանոսների խառնուրդ): Այդ նոյն գնդում էին զինուորագրուած Պօղիփոսն ու Նէարխոսը: Նրանք գնացին մի առանձին վայր, աղօթքի կանգնեցին եւ Աստծուց անձեռեւ խնդրեցին ծարաւի դէմ: Եւ ահա յանկարծակի ամպերը պատեցին երկինքը, եղան ահեղ որոտներ ու կայծակներ, եւ յորդ անձեռեւ տեղաց: Անձեռեւից ֆրիստոնեաները զովացան, իսկ կայծակների շանթերից բազում բարբարոսներ կործանուեցին: Դրանից յետոյ գնդի անունը մնաց ֆոլմինատորոս, այսինքն՝ շանթառափ: Այս հրաշալի անձեռեւ, որ եղաւ Տիրոջ 174 թուականին ֆրիստոնեաների աղօթքով, յիշատակում են նաեւ հին ու անուանի հայերը՝ սուրբ Յուստինոս վկան, Տերտուլիանոսը, Եւսեբիոսը, Որիգինէսը եւ նրանցից յետոյ եկածները:

(4) Բոլոր վկայաբանների սովորութիւնն է՝ ինչպէս այստեղ՝ սուրբ Պօղիփոսի վարժում, այնպէս եւ իր ժամանակակից այլ սուրբերի պատմութեան մէջ, միասին յիշատակել երկու կայսրերի՝ Դեկոսի եւ Վաղերիանոսի թագաւորութիւնն ու հալածանքները: Դրա համար Հենսֆենիոսը կայսերական պատմութիւնից տալիս է հետեւեալ ծանօթութիւնը. «Դեկոսը թագաւորել սկսեց Տիրոջ 249 թուականին եւ իսկոյն ֆրիստոնեաների դէմ հալածանքներ յարուցեց. դրանք հալածանքների կարգում եօթներորդն են... Դեկոսի եւ իր որդու կործանումից յետոյ յաջորդեց Գաղոս Ոստիղիոսը, որն իր որդի Վօլուսիանոսին գահակից դարձրեց եւ շարունակեց Դեկոսի սկսած հալածանքները: Սակայն երբ սուրբերն սպանուեցին, զօրքի համաձայնութեամբ էմիլիանոսը հասաւ իշխանութեան. եւ երեք ամիս անց նրա ասպարէզից վերանալուց յետոյ՝ Տիրոջ 254 թուականին, տիրեց Վաղերիանոսը՝ իր որդի Գաղենոսի հետ, եւ սաստիկ հալածանք յարուցեց ֆրիստոնեաների դէմ, որն ութերորդն է: Հիմնուելով «Ծա-

ղիկ վարուց սրբոց»³² ձեռագրի վրայ՝ ասում է, թէ այդ ժամանակ՝ 259 թուականին, Վաղերիանոս եւ Գաղենոս կայսրերի օրօք է նահատակուել սուրբ Պօղիֆոսը: Արդ, ըստ այդմ, նոյն կարծիքին է յայտնում նաեւ Հենսֆենիոսը, հնարատր համարելով, որ Պօղիֆոսը Նէարխոսի հետ զինուորագրուած լինի Դեկոսի ժամանակներից, իսկ ապա նահատակուած լինի Վաղերիանոսի եւ Գաղենոսի օրօք: Եւ դա թերեւս այն նոյն ժամանակն էր, երբ Վաղերիանոսը պատերազմ էր մղում պարսիկների դէմ, որոնցից յաղթուելով 260 թուականին՝ յետոյ շարաշար սպանուեց (խողխողուեց):

Կարելի է նաեւ ասել, թէ այս կայսրերը նորոգել են քրիստոնէականների դէմ Դեկոսի նախապէս հանած հրովարտակը՝ անելացնելով իստագոյն սպանալիքներ. եւ այս պատճառով Դեկոսի հալածանքները համարուել են անընդհատ տեսած մինչեւ այդ ժամանակները:

Բարոնիոսը³³ սրա մարտիրոսութիւնը վերագրում է Դեկոսի թագաւորութեան Բ. տարուն, որն ըստ նրա՝ Տիրոջ 254 թուականն է, սակայն նրա այս հաշիւը մենք բազում անգամ ուղղել ենք: Այս տարեթիւր (254-ը), թէպէտեւ ընդունելի է մեզ համար, սակայն անտեղեակ չենք, որ այսպիսի ֆննութիւնների մէջ ամենի համար էլ հեշտ է սխալուելը:

(5) Յ(ովհաննէս Դ) Բասիլն ասում է. «Կոստուն մտնելով՝ բոլոր կոտմերը փշրեց»: Սակայն մենք [բնագիրը] ճշգրտեցինք՝ հիմնուելով հայկական եւ այլ վկայաբանների միաբան գրուածքների վրայ, որոնցից ոմանք նշում են, թէ /կոտմերի/ թիւը տասներկուս էր:

(6) Յ(ովհաննէս Դ) Բասիլը դարձեալ հեռանում է վկայաբաններից՝ ասելով. «Եւ նրա կիմն աղաչում էր սուրբին հաստատուն մնալ Քրիստոսի հաւատփի մէջ»: Մինչդեռ մնացած բոլոր հեղինակները գրում են ճիշտ հակառակը, թէ նա (Պաւլինէն) արտաստմով թախանձում էր ամուսնուն ուրանալ Քրիստոսի հաւատփը, որը նա նոր էր ընդունել:

(7) Նէարխոսի այս գործը, ինչպէս նաեւ նրա ֆաղափի անունը, մենք գտնում ենք մեր Յայսմատուրֆեան օրինակներում: Դա հաստատում է նաեւ Բոլանդեանների յիշատակած յոյն Անանուն հեղինակը՝ խօսքը շարադրելով այսպէս.

«Բարեպաշտ եղբայրներից ոմանք ամփոփեցին նրա սուրբ մարմինը Հայոց Մելիտինէ ֆաղափում՝ իրենց համար յափտենական ժառանգութիւն ստա-

³² *Իմա՛* Flores Sanctorum:

³³ Չեզարէ Բարոնիօ (1538–1607) – *կարդինալ, աստուածաբան, պատմաբան, որ արժանացել է Կաթոլիկ եկեղեցու պատմաճայր կոչմանը:*

նալով: Եւ չորրորդ օրն էր, որ եղաւ Պօղիփոսի վախճանն ու մարմնի ամփոփումը: Սրան գործակից եղաւ նաեւ Նէարխոսը: Նա վերցնելով իր բարեկամ վկայի արիւնը եւ մաքուր կտաների մէջ փաթաթելով [մասունքները]՝ տարաւ Կանանէովտաց ֆաղաքը՝ նրանց ընծայելով փրկութեան զէնք եւ երանելի ստացուածք»:

Այստեղ Հենսֆենիոսը «չորրորդ օրը» հասկանում է որպէս սուրբի՝ դէպի Քրիստոս դառնալուց յետոյ ընկած ժամանակը, որը եւ հաւանական է՝ հաշուի առնելով նրա մաքի վերջին յայտնութիւնը (դարձը): Իսկ ֆաղաքի մասին Հենսֆենիոսն այստեղ դարձեալ իրաւացիօրէն գրում է. «Թէ ո՛ր ֆաղաքն է դա, մեզ անյայտ է»: Ապրիլի 22-ին, ուր նա համառօտ կերպով կրկնում է Պօղիփոսի եւ Նէարխոսի վարքը, նշում է. «Մինչեւ այժմ մեզ անյայտ է [այդ վայրը]. բայց հաւանական է թոււմ, որ այն Հայոց աշխարհում է, եւ գուցէ հէնց այնտեղ էլ մարտիրոսութեամբ վախճանուել է Նէարխոսը»: Դրա համար էլ նա վերնագիրը դնում է բացարձակ հաստատուն. «Հայաստանում վկայած սուրբ Նէարխոս վկայի մասին»: Սակայն (Հենսֆենիոսը) որեւէ [ընդարձակ] վկայաբանութիւն մէջ չի բերում, այլ միայն տեղեկացնում է, թէ յոյների մօտ ապրիլի 22-ի տակ գրուած է. «Այսօր սուրբ վկայ Նէարխոսը կրակով նահատակուեց»: Իսկ նրանց ժամագրքում երգում է. «Առ քեզ՝ Փրկչիդ ունեցած աստուածային բոցավառ տենչանքի պատճառով, Նէարխոսն ասում էր. «Կրակն անգամ ինձ Քեզնից չի բաժանի»:

Իսկ մեր Յայսմատուրբի մէջ՝ միայն այստեղ՝ Արաց ամսի Բ.-ին, որն ըստ անշարժ տոմարի յունուարի 9-ն է, վերնագիրը երկուսի համար այսպէս է դնում. «Սուրբ Պօղիփոսի եւ Նէարխոսի վկայաբանութիւնը», – սակայն յաջորդիւ շարադրում է միայն առաջինի (Պօղիփոսի) նահատակութիւնը, եւ ոչ թէ երկուսինը: Նէարխոս (կամ ըստ յունաց՝ Նէարխոս). մեզանում յունարէն հայցական հոլովի վերջաւորութեամբ դարձել է Նէարխոն, Ուրտեղ «Նէարխոս» նշանակում է Նաւապետ, իսկ «Նէարխոս» կարող է թարգմանուել նաեւ որպէս Նոր իշխան:

(8) Գրիգոր Տուրօնացու մանրապատում գրուածքների մէջ գտնում են այնպիսի հանգամանքներ (պատմութիւններ), որոնք Բոլլանդեանները հաստատ չէին հանդուրժի, եթէ մատենագիրը լինէր արեւելցի կամ աննշան մէկը, այլեւ բազմապատիկ առարկութիւններով կծաղրէին ու անխնայ կմերժէին:

Սակայն ուրախ ենք, որ Հենսֆենիոսը, ակնածանք ունենալով Տուրօնացու հանդէպ, նրա խօսքերը մէջբերում է առանց նախատիւնի, բայց յիշատա-

կելով Ներոն կայսեր գմրուխտը³⁴: Եւ իր դիտարկումները մեզ պիտանի կլինեն այլ տեղերում՝ ընդդէմ նոր մատենագիրների անհիմն ֆննադատութիւնների կապակցութեամբ:

(9) Եւ վերջում ասեմ-իմացի՛ր, որ սուրբ Պօղիփոսի անունը լատին գրիչները բազմաթիւ տարբերակներով են գրում՝ Բօլիէւդոս, Բօլիօդոս, Բօլիֆոդոս, Բօլիօդոս եւ այլն: Այլեւ չենք խօսում, թէ որոշ տպագրութիւնների մէջ դրել են Բօլիֆրադէս, ինչպէս նաեւ Մելիտինէի փոխառէն՝ Մարիդանիա, որը յետին վրիպակ է:

Իսկ թէ ինչպէս է, որ սուրբի նահատակութեան օրը Յայսմաւորֆներում դրուած է յունուարի 9, մինչդեռ լատինների մօտ մեծ տարբերութեամբ դրում է փետրուարի 13, այս խնդիրը ոչ ոք չի լուծում: Լատինական որոշ աղբիւրներում դրում է յունուարի 10 (ինչպէս եւ մեզանում՝ մեր հին Ճաշոցներից մէկի մէջ): Այս կապակցութեամբ Հենսֆենիոսն ներկայ հնարաւոր պատճառն է բերում. «Օրերի նշանակման այս տարբերութիւնը հաւաքանաբար ծագել է սուրբի յունական վարֆից կամ դրա յաւելուածից, ուր վկայութեան օրը բացատրուում է այսպէս. պոռօէսսարօն իդօն իանուարիօն³⁵՝ ըստ հնչման՝ յունուարի իդոսների³⁶ նախաֆառորդին: Դրանով լատինները կարծում են, թէ նշանակում է յունուարի իդոսների չորրորդ օրը, որ է ամսուայ տասներորդ օրը (ինչպէս եւ Հերվետոսն³⁷ է թարգմանում): Իսկ յոյները վերցրին դրան նախորդող օրը, այսինքն՝ յունուարի իմնը, որպէս թէ դա լինի յունուարի իդոսների չորրորդ օրից մէկ օր առաջ»:

Սակայն լատին միջավայրում սուրբի սովորական յիշատակի օրը փետրուարի իդոսն է, այսինքն՝ փետրուարի 13-ը: Տե՛ս նաեւ վերելի (7) ծանօթագրութեան մէջ նշուած այն «չորրորդ օրը», որը գուցէ այս իմաստով պէտք է հասկանալ, եւ ոչ թէ այնպէս, ինչպէս այնտեղ ասաց Հենսֆենիոսը:

³⁴ Կայսրը վատ տեսողութեան կամ որեւէ այլ պատճառով այս քարը երբեմն օգտագործում էր հեռուն կամ մահուան ասպարէզ ելած բռնամարտիկների կռիւները նայելիս: Սրանից առաջացել է Ներոնեան զմրուխտ՝ աշխարհին նայել սեփական դիտակով իմաստն արտայայտող կապակցութիւնը:

³⁵ Լատ. pro tessaron idon ianuariion:

³⁶ Իդոսը (Idus) հռոմէական օրացոյցի հիմնական հանգուցային օրերից էր՝ Կալենդների եւ Նօնների հետ միասին: Սկզբնապէս այն կապուած էր լիալուսնի հետ: Բառի ստուգաբանութիւնը վերջնականապէս յստակ չէ, սակայն այն աղերսակցում են «բաժանել» իմաստն արտայայտող արմատի հետ: Մարտ, Մայիս, Յուլիս եւ Հոկտեմբեր ամիսներին՝ Իդոսը ամսուայ 15-ին էր, իսկ մնացած ամիսներին՝ 13-ին:

³⁷ Հերվետոս (լատ.՝ Hervetus, Ֆրանս.՝ Gentian Hervet) – ֆրանսիացի նշանաւոր աստուածաբան, կանոնագէտ եւ թարգմանիչ (1499–1584):

Հենաֆենիոսը յաւելում է նաեւ, թէ լատիներէ մատենադարաններում պահուում են վկայաբանութեան հին ձեռագրեր, որոնց մէջ սուրբ Պօղիփոսի կատարումը կամ յիշատակը դրում է յունուարի 7-ին: «Այսպէս է դնում,– ասում է նա,– հին հռոմէականը, որը կոչում ենք սուրբ Հերոնիմոսի անուամբ վկայաբանութիւն, նոյնպէս եւ սուրբ Կիրակոսի վանքի մատեանը, որից յաճախ օգտուել է Բարոնիոսը: Նոյնպէս եւ հոիմովացիների ու հոիշենովացիների ձեռագրերը»: Այս ամենը մեզ համար նպաստաւոր փաստարկ է:

Կայ նաեւ մէկ այլ համանուն վկայ՝ Պօղիփոսու Կեսարացի³⁸, որի մասին պիտի խօսենք ըստ Յայսմատուրհների յիշատակուող սուրբերի հերթականութեան: Նրա տօնը հայկականում դեկտեմբերի 24-ին է, յունականում՝ դեկտեմբերի 19-ին, իսկ լատիներէ մօտ՝ մայիսի 21-ին:

Հ Ի Մ Ն Ա Բ Ա Ռ Ե Ր

Սրբախոսություն, վկայաբանություն, Սուրբ Պողիկոսու, Մելիտինէ:

РЕЗЮМЕ

В статье представлено комплексное историко-филологическое и источниковедческое исследование агиографической традиции, исторического контекста и архитектурного наследия, связанных с именем святого Полиевкта Мелитинского — одного из известных раннехристианских мучеников, почитание которого восходит к эпохе гонений III века. На основе сравнительного анализа письменных источников рассматривается вопрос армянского происхождения и знатного социального статуса святого в контексте историко-культурной среды Малой Армении.

Особое внимание уделено константинопольскому храму Святого Полиевкта, возведённому по инициативе Аниции Юлианы в начале VI века. В работе раскрываются историческое, идеологическое и архитектурное значение данного памятника, занимавшего видное место среди церковных сооружений столицы до строительства Святой Софии. Рассматриваются библейская символика храма и его концептуальная связь с традициями, восходящими к Храму Соломона. Отдельно анализируется интеграция сасанидско-персидских декоративных мотивов в византийскую архитектурную традицию и их роль в развитии

³⁸ Իմա՛ Բանտապետ Պօղիփոսուր. տէն «Յայմատուրք», 1834, Բ. 72:

купольной базилики как одного из ведущих типов церковного зодчества поздней античности. В статье также прослеживается распространение культа святого Полиевкта за пределами Малой Армении на основании материалов из Равенны, Египта и Иерусалима, включая критический анализ армянской мозаичной надписи VI века, обнаруженной вблизи Дамасских ворот. В заключение систематизируются основные редакции мученичества святого, включая критические издания Конгрегации мхитаристов, что позволяет уточнить ряд аспектов раннехристианской агиографии и межкультурных контактов на Ближнем Востоке.

SUMMARY

This article presents a comprehensive historical-philological and source-critical study of the hagiographical tradition, historical background, and architectural legacy associated with Saint Polyeuctus of Melitene, one of the prominent early Christian martyrs traditionally linked to the persecutions of the third century. Employing a comparative analysis of Armenian and Byzantine textual traditions, the study re-examines the available evidence concerning the saint's Armenian origin and noble status, situating his life and martyrdom within the socio-cultural environment of Lesser Armenia. Particular attention is devoted to the Church of St. Polyeuctus in Constantinople, commissioned by Anicia Juliana in the early sixth century. The article explores the historical, ideological, and architectural significance of this monument, which occupied a distinguished place among the ecclesiastical foundations of the imperial capital prior to the construction of Hagia Sophia. Special emphasis is placed on the sanctuary's biblical symbolism and its architectural dialogue with traditions associated with Solomon's Temple. The study further examines the incorporation of Sasanian-Persian decorative elements into Byzantine architectural practice and evaluates their contribution to the development of domed basilica forms in Late Antiquity.

The geographical diffusion of the cult of Saint Polyeuctus is also investigated through evidence from Ravenna, Egypt, and Jerusalem, including a critical assessment of the sixth-century Armenian mosaic inscription discovered near the Damascus Gate. The article concludes with a systematic review of the principal textual recensions of the saint's martyrdom, including the critical editions published by the Mechitarist Congregation, thereby contributing to a broader understanding of early Christian hagiography and cultural interaction in the Near East.



ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՔԱՐՈՉԸ «ՍՈՒՏ ՍԱՐԳԱՐԵՆԵՐ ԴԻՏԻ ԵԼԼԵՆ
ԵՒ ԿԱՏԱՐԵՆ ԸՆՇԱՆՆԵՐ ՈՒ ՉԱՐՄԱՆԱԼԻ ԳՈՐԾԵՐ ՍՈԼՈՐԵՑՆԵԼՈՒ
ՂԱՍԱՐ, ԵԹԵ ԿԱՐԵՆԱՆ ՆՈՅՆԻՍԿ ԸՆՏՐԵԱԼՆԵՐՆ ԱԼԼ»¹

Գիտելի է, թէ ստույթիւնը բազմաթիւ հոմանիշներ ունի, որ նախ իմա-
նալի է անոնց՝ որոնց կը յատկացուի ստույթիւնը, որովհետեւ «դատարկ»
կը կոչենք, ինչպէս կ'ըսէ Տէրը. «Խաբանչիւր դատարկ խօսքի համար հա-
շի պիտի տամ»²:

«Ունայն» կը կոչենք, ինչպէս Սողոմոն կ'ըսէ. «Ունայնութիւն ունայնու-
թեանց»³:

«Ձրի» կը կոչենք, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Դո՛ւք ձրի վաճառուեցաք
եւ արծաթով պիտի շփրկուիք»⁴:

«Ոչինչ» կը կոչենք, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Բոլորը ոչինչ համարուե-
ցան անոր»⁵:

«Առասպել» կը կոչենք, եւ ասիկա գիւղացիներէն կը լսուի:

«Նանիր» կը կոչենք, ինչպէս Մարգարէն կ'ըսէ⁶:

«Չար» կը կոչենք, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Չարութիւն գործեցի առ-
ջեպ»⁷:

Արդ, իմանանք, թէ ինչպէ՛ս կը զանազանուին ասոնք:

«Դատարկ» կը կոչենք զայն, որու մէջ ոչինչ կայ, ինչպէս դատարկ տան
եւ դատարկ սափորին մէջ: Տակաւին, խօսքը «դատարկ» կը կոչենք, որով-
հետեւ խօսքը պէտք է շահի մը համար ըլլայ՝ կամ հոգիի եւ կամ մարմի-
նի: Իսկ դատարկ խօսքը անպիտան է, որովհետեւ անոր մէջ շահ չկայ:

«Ունայն» կը կոչենք զայն, որոնք պտուղ չունին: Ինչպէս անպ-
տուղ ծառեր ունայն կը կոչուին՝ միայն տերեւ ունենալով, եւ կամ այ-

¹ Հմմտ. Մարկ. ԺԳ. 22:

² Տէս Մատթ. ԺԲ. 36:

³ Ժող. Ա. 2:

⁴ Ես ԾԲ. 3:

⁵ Տէս Ես Խ. 17:

⁶ Տէս Սաղմ. ՃԽԳ. 4:

⁷ Սաղմ. Ծ. 6:

գին, որու մէջ ճիւղ⁸ չի գտնուիր, որ Աստուած Մովսէսին կ'ըսէր. «Ունայնաձեռն թող չ'երեւնան անոնք, որոնք միայն անունը ունին»⁹, այդպէս ալ խօսքը ունայն կը կոչուի, երբ միայն ականջները կը զարդարէ, ինչպէս տերեւը եւ աշքերը, սակայն, ուրախութիւն կամ հոգեւոր կերակուր չի գտնուիր անոնց մէջ:

«Ջրի» կը կոչենք զայն, որ առանց գինի է եւ ասիկա ուրիշ լեզուներու մէջ «ոայ եկական»¹⁰ կը կոչուի, որ իւրաքանչիւր ոք կը գտնէ, ինչպէս խոտ, փայտ, եղէք, հող, ջուր, որոնց համար շատ աշխատանք պէտք չէ, այդպէս ալ խօսքերը «ձրի» կը կոչուին, քանի որ իւրաքանչիւր ոք կրնայ բարբաջել, ինչպէս է դիւական ճարտարութիւնը, եւ այն՝ որ շատ աւելի վատթար գործերով շատցած է: Իսկ աստուածայինները, որովհետեւ դժուարութեամբ կը գտնուի, ինչպէս ոսկի եւ արծաթ, ատոր համար բազում մաքրութիւն պէտք է, որպէսզի արժանաւոր ըլլան:

«Ոչինչ» կը կոչենք զայն, որ ո՛չ մէջտեղն է եւ ո՛չ ալ եղած է: Եւ այսպիսի բառ բազմաթիւ անգամներ [կը գործածենք] մեր խորհուրդը թաքցնելով, երբ ուրիշ մը կը հարցնէ, թէ՛ ի՞նչ ըսիր, կ'ըսեն՝ «ո՛չ ի՞նչ», իբր թէ՛ այս խօսքին մէջ մտնելու պէտք չունիս, իսկ սուտ խօսքերը ոչինչ կը կոչուին, որովհետեւ Աստուծմէ ստեղծուած չեն եւ Աստուած այդ խօսքերէն բաժին չունի, ինչպէս կ'ըսէ Աւետարանիչը. «Առանց Անոր ոչինչ եղաւ»¹¹, այսինքն՝ մեղքն ու սուտը:

«Առասպել» կը կոչենք զայն, որ մարդու միտքէն կը յառաջանայ՝ առանց աստուածային շնորհին, որով աշխարհականները կը ճոխանան: Այլազգիներուն մէջ այսպիսիներ շատ կան, որովհետեւ ինչպէս անոնց կեանքը այս աշխարհի վրայ է, անոնց խօսքն ալ պէտք է այս աշխարհէն ըլլայ, այսինքն՝ այնպէս կորստական, ինչպէս իրենք են: Իսկ աստուածապաշտներուն խօսքերը պէտք է Աստուծմէ ըլլան, որպէսզի յայտնի դառնայ, թէ իրենց քաղաքացիութիւնը երկինքն է, Առաքելին ըսածին համաձայն¹²:

⁸ Խաղողի սակաւհատիկ ողկոյզ, (Բաղդիբ Հայերէն լեզուի. Անդրանիկ Վրդ. Կոստեան, Պէյրութ, 1998, էջ 277). (Մանօրագրութիւնը թարգմանողինն է):

⁹ Հմմտ. Բ Օր. ԺԶ, 16:

¹⁰ Ռայէգական: «Ռան» պիտոյք (Միջին հայերէնի բառարան, հտ. Բ., 1992, էջ 301). (Մանօթագրութիւնը Խաղ Քահանայ Դազարեանինն է):

¹¹ Յովհ. Ա. 3:

¹² Տես Եփես. Բ 19:

«Նամիր» կը կոչենք զայն, որ սիրտին մէջ եղածը ուրիշ է եւ լեզուին վրայ եղածը՝ ուրիշ, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Մարդը իր շրթունքներով նամիրութիւն խօսեցաւ իր ընկերոջ դէմ...»¹³: Իսկ իմաստասէրը ասիկա ատելի կ'անուանէ եւ կ'ըսէ. «Ինծի համար ատելի է այն մարդը, որ իր սիրտին մէջ ուրիշ է եւ ուրիշ՝ իր լեզուին վրայ»¹⁴:

«Զար» կը կոչենք այն բանը, որ ըսողին չի պատշաճիր, որովհետեւ այսպէս կը ստուգաբանուի՝ չէ ի յար [այսինքն՝ պատշաճ չէ], ինչպէս օրինակ թագաւոր մը անպատշաճ կերպով կը խօսի, կամ եկեղեցականները եւ կամ պատուաւոր ծեր մարդիկ:

Իսկ «սուտը» այս բոլորէն տարբեր է, ճշմարտութեան պակասութիւնն է, ինչպէս խաւարը՝ լոյսի պակասութիւնն է, որովհետեւ ուր որ աստուածային Հոգին չկայ, այնտեղ՝ ստույգութեան հոգին է, ատոր համար Տէրը կ'ըսէ. «Սուտ մարգարէներ պիտի ելլեն եւ նշաններ պիտի կատարեն»¹⁵, քանի որ ճշմարտութեան Հոգին վերցուեցաւ մեր մէջէն՝ մեր մեղքերուն պատճառով, ատոր համար ալ սուտը թագաւորեց անոր փոխարէն, ինչպէս որ երբ արեգակը երթայ՝ գիշերը կու գայ, այսինքն՝ ասոնց վրայ:

Իսկ «սուտ» բազմաթիւ իրողութիւններու կ'ըսուի. Սուրբ Գիրքէն պիտի տեսնենք:

Նախ, «սուտ» կը կոչուի ուրիշներու վրայ զուր տեղ խօսիլը, ինչպէս այլազգիները «բուխտան»¹⁶ կը կոչեն այս երեւոյթը, ատոր համար Մարգարէն կ'ըսէ. «Դուն կը կործանես բոլոր ստախօսները»¹⁷:

Երկրորդ՝ «սուտ» կը կոչուի սուտ վկայութիւն տալը, այսինքն՝ այն խօսքը հաստատել, որ չեն գիտեր, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Իմ դէմս չար [սուտ] վկաներ յարուցին»¹⁸: Իսկ Օրէնքը [կ'ըսէ]՝ «սուտ վկայութիւն մի՛ ըներ»¹⁹, իսկ Տէրը՝ «Երանի՛ ձեզի, երբ նախատեն ձեզ ու ձեր մասին չար [սուտ] բաներ ըսեն, ցնծացէք»²⁰:

Երրորդ՝ «սուտ» կը կոչուին կնոջ աշխարհական ցանկութիւնները՝

¹³ [Հմմտ] Երեմ. Թ. 5:

¹⁴ [Հոմերոս]:

¹⁵ Մարկ. ԺԳ. 22:

¹⁶ Պարսկերէն, buhtān, չարախօսութիւն, զրպարտութիւն (Մանօրագրութիւնը թարգմանողինն է):

¹⁷ Տէս Սաղմ. Ե. 7:

¹⁸ Տէս Սաղմ. ԼԳ. 11:

¹⁹ Հմմտ. Բ. Օր. Ե. 20:

²⁰ Տէս Մատթ. Ե. 11:

ուտել եւ խմել, որովհետեւ մէկ օր իսկ չի կրնար դիմանալ, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Ան ունայնութեան շնայեցաւ», այսինքն՝ համբերողներուն, «եւ ո՛չ ալ սուտ մոլութեան»²¹:

Չորրորդ՝ «սուտ» կը կոչուին վաճառողներուն խաբէութիւնները, որոնք գողերու նման բակերու մէջ կը մեկուսանան, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Սուտ են մարդոց կշիռները»²²:

Հինգերորդ՝ «սուտ» կը կոչուի մարդուն մահկանացութիւնը, քանի որ իսկապէս ողջ չէ՝ ըստ այնմ. «Զարմանքիս մէջ ըսի. «Ամէն մարդ սուտ է»»²³, որովհետեւ համեմատելով աստուածային կեանքին հետ՝ ասիկա սուտ կեանք կը կոչուի:

Վեցերորդ՝ «սուտ» կը կոչուի նաեւ մարդահաճութիւնը, ինչպէս կ'ըսէ Սողոմոն. «Քու մէջդ կանացի կեղծ բարեհաճութիւն չկայ»²⁴: Իսկ Մարգարէն կ'ըսէ. «Տէրը մարդահաճեալուն ոսկորները պիտի ցրուէ»²⁵:

Եօթներորդ՝ «սուտ» կը կոչուի նաեւ սատանան, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Ինքն իրմէ կը խօսի, որովհետեւ ստախօս է եւ անոր հայրը՝ սատանան է»²⁶, որովհետեւ միշտ կ'ուզէ աստուածային խօսքը հանել եւ իրը դնել:

Ութերորդ՝ «սուտ» կը կոչուի կեղծաւոր սէրը, ինչպէս Առաքեալը կ'ըսէ. «Եթէ մէկը ըսէ, թէ՛ «գԱստուած կը սիրեմ», բայց իր եղբայրը կ'ատէ՛ կը ստէ, եւ անոր մէջ ճշմարտութիւն չկայ»²⁷:

Իններորդ՝ «սուտ» կը կոչուի այս աշխարհը, ինչպէս Սողոմոնը կ'ըսէ. «Ամէն ինչ ունայն է, ունայնութիւն ունայնութեանց», կ'ըսէ Ժողովողը²⁸: Իսկ եթէ մէկը ըսէ, ինչպէ՛ս ունայն է, քանի որ Աստուծոմէ ստեղծուած է, ապա, վերը հաստատուեցաւ անոր սուտ ըլլալը, որ առանց Աստուծոյ կ'ըլլայ: Ասոր մասին կ'ըսենք, թէ թէեւ Աստուծոմէ ստեղծուած է, սակայն, որովհետեւ Աստուած աշխարհը մերեց մարդուն մեղքին պատճառով, ատոր համար ունայն է, ինչպէս կ'ըսէ. «Անիծեալ թող ըլլայ երկիրը ըրածիդ պատճառով»²⁹:

²¹ Հմմտ. Սաղմ. ԻԳ. 4:

²² Տէս Սաղմ. ԿԱ. 10:

²³ Սաղմ. ՃԺԵ. 11:

²⁴ Առակ. ԼԱ. 30:

²⁵ Սաղմ. ԾԲ. 6:

²⁶ Հմմտ. Յովհ. Ը. 44:

²⁷ Ա. Յովհ. Բ. 9:

²⁸ Ժող. Ա. 2:

²⁹ Մննդ. Գ. 17:

Տասներորդ` «սուտ» կը կոչուին նաեւ խաբողները, որոնք աշխարհի մէջ բոլոր ժամանակներու ընթացքին կ'երեւին, ինչպէս Թեւդասը եւ Յուդա Գալիլիացիները³⁰ [անցեալին] եւ մեր ժամանակներուն ալ [ուրիշ խաբողներ], ատոր համար Տէրը հիմա կ'ըսէ. «Սուտ մարգարէներ պիտի ելլեն եւ նշաններ [ու զարմանլի գործեր] պիտի տան»³¹:

Արդարեւ, Մահմէտը [Մուհամմէտը] անոնցմէ մէկն է, որոնց մասին Տէրը կ'ըսէ: Ասիկա ստութեան բոլոր կերպերը ինքն իր վրայ բերած է: Որովհետեւ, ինչպէս յայտնի է իր գիրքին մէջ, բազմաթիւ զուր բաներ խօսած է մարգարէներուն մասին` Մովսէսի եւ միւսներուն, որոնք երբեք այդպիսի բաներ չեն ըրած: Տակաւին, Աստուծոյ մասին եւս, քանի որ սուտը կ'ըսէ ու կը հաշէ, թէ Աստուած խօսեցաւ: Աւելին, շարութեան վկայ կ'ըլլայ՝ շարերուն յոյս տալով շարութիւն գործել եւ հանգչիլ Արքայութեան մէջ: Տակաւին, աշխարհի նկատմամբ սէր կը քարոզէ՝ ուտել, խմել եւ պճնուիլ: Կ'արտօնէ խաբել վաճառքի մէջ՝ ինչքան որ իր ճարտարութիւնը կը ներէ, այդ պատճառով աղուէսին պոչը կապուած է անոնց առաջնորդին ձեռքը: Աւելին, ան սուտ է, որովհետեւ անգտնելիօրէն կորսուեցաւ, ատոր համար ուղտ մը կը սպաննեն, հարցնելով թէ ո՞ւր է ան: Տակաւին, մարդահաճոյ է, քանի որ կը սիրէ հրապարակներու վրայ յարգալից ողջոյններ ստանալ, ընթրիքներու ժամանակ սեղանի զլուխին նստիլ, բոլորին առջեւ երեւնալ [ինքզինք ցոյց տալ] եւ մարդոց առջեւ շարութիւնը կը մերժէ: Աւելին, զարմանալի ստութեամբ լեցուց աշխարհը, այնքան բազամթիւ սուտեր խօսեցաւ, որ սատանային խօսածներէն իսկ աւելի են, քանի որ հարազատ որդին իր հօր նմանութիւնն է: Տակաւին, կեղծաւորութիւն կ'ընէ, թէ զԱստուած կը սիրէ, որով շատեր մերկ եւ բոկոտն կը շրջին, ժլատութիւն ընելով քիչ կ'ուտեն ու սեւ կը հագնին: Իսկ քրիստոնեաներուն եւ զիրար՝ միշտ կ'ատեն: Աւելին, անոնցմէ շատեր աշխարհէն ճոխ մահուամբ՝ սուրով կ'ելլեն: Տակաւին, ամբողջ աշխարհը խաբեց՝ իւրաքանչիւր անձի ճամբան դիւրացնելով: Այդ պատճառով Տէրը կ'ըսէ. «Սուտ մարգարէներ պիտի ելլեն»³²:

³⁰ Թեւդաս եւ Յուդա Գալիլիացիներ «Նախանձայոյզներ»ու կուսակցութեան պարագլուխներ, որոնք կը պայքարէին հռոմէական գերիշխանութիւնը վերացնելու համար Հրէաստանէն (տե՛ս ՅՈՎՍԷՊՈՍ ՓԼԱՒՈՍՍ, Հրէական հնութիւններ, XIV 9, 2). (Մանօթագրութիւնը ԽաղՔահանայ Դազարեանինն է):

³¹ Տէն Մարկ. ԺԳ. 22:

³² Մարկ. ԺԳ. 22:

Հարցում. *ինչո՞ւ համար ասիկա կ'ըլլայ, որովհետեւ ո՛չ միայն ներկայ ժամանակին եղաւ, այլ՝ բոլոր ժամանակներուն. Մովսէսի օրով՝ Կորինս ու Դադանը եւ Աբիրոնի բանակը³³, Եղիայի օրով՝ Բահաղին մարգարէները³⁴: Իսկ առաքեալներուն օրով՝ սուտ առաքեալները:*

Պատասխան. *Աստուած թոյլ կու տայ, որ այս բաները պատահին շահի ու օգուտի համար:*

Բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ եթէ խաբողներ չըլլային, ճշմարտներուն առաքինութիւնը չէր երեւնար, ինչպէս նաեւ չէինք գիտնար լոյսին պայծառութիւնը, եթէ խաւարը չըլլար:

Երկրորդ՝ որպէսզի ճշմարտութիւնը սիրելի ըլլայ, քանի որ տեսնելով թէ ինչպէս կ'անարգուին խաբողները եւ տեղէ տեղ կը վռնտուին՝ առաքինութեան կը հնազանդինք:

Երրորդ՝ որպէսզի ճշմարտութիւնը գովելի ըլլայ՝ նախատինքները իմանալով, որ անոնց վատթար գործերուն պատճառով ճշմարտութիւնը կը գովեն, ինչպէս կ'ըսէ Իմաստասէրը. «Գեղեցիկները գովելի են, իսկ գարշելիները՝ պարսաւելի»: Իսկ Մարգարէն կ'ըսէ. «Քու իրաւունքներդ գովելի են ինձի համար»³⁵:

Չորրորդ՝ որպէսզի ճշմարտութիւնը ամբողջ երկրին մէջ հռչակուի, ինչպէս Նաբուգոդոնոսորը Դանիէլին համար գրեց իր տէրութեան ամբողջ վայրերուն:

Հինգերորդ՝ որպէսզի եթէ պատահի որ այդ սուտը մեր միտքին մէջ իյնայ, չընենք զայն չարիքներու վատթարութեան համար, ինչպէս կ'ըսէ Մարգարէն. «Ձարեուն մի՛ նախանձիր, որովհետեւ չարերը շուտով պիտի սատկին»³⁶:

Վեցերորդ՝ որովհետեւ ամօթով կը հանէ չարասէրները չարերուն օրինակով, որոնք կորուստի մատնուեցան, ինչպէս կ'ըսէ Տէրը. «Կը կարծէ՛ք այդ գալիլիացիները անլի մեղաւոր էին. եթէ չապաշխարէ՛ք, դուք եւս պիտի կորսուիք»³⁷:

Եօթներորդ՝ որպէսզի գոռոզութիւնն ու ամբարտաւանութիւնը արհա-

³³ Տէս Թիւք ԺԶ.:

³⁴ Տէս Գ. Թագ. ԺԷ. 20–40:

³⁵ Տէս Սաղմ. ՃԺԷ. 54:

³⁶ Սաղմ. ԼԶ. 8–9:

³⁷ Ղուկ. ԺԳ. 2–3:

մարհենք, քանի որ սկզբնաչափը հպարտանալով երկիր ինկալ, իմացեք, թէ ով որ նոյն բանի մասին կը մտածէ, անոր կը կցորդուի:

Ութերորդ՝ թոյլ կու տայ, որ սուտ մարգարէներ, սուտ քրիստոսներ ըլլան, որպէսզի առանց պատասխանի ձգէ անհաւատները, որովհետեւ Միածին Որդին եկաւ, սակայն չհաւատացին Անոր մարմին առած ըլլալուն պատճառով: Ատոր համար, թոյլ տուաւ հաւատալ սուտ մարգարէներուն, որով դատաստանի ժամանակ պիտի յանդիմանուին, թէ կամաւորաբար անարգեցին Աստուծոյ Որդին, ինչպէս Առաքեալը կ'ըսէ. «Որովհետեւ ճշմարտութեան չհաւատացին, ատոր փոխարէն անոնց մոլորութեան հոգին դրկեց»³⁸:

Իններորդ՝ թոյլ կու տայ խաբողներ ըլլան, որպէսզի անոնք չարչարեն հաւատացեալները, իսկ ասոնք համբերեն եւ ապա հարիւրապատիկ վարձատրութիւն ստանան, ինչպէս կ'ըսէ Տէրը³⁹:

Տասներորդ՝ որպէսզի ընտրեալները փորձուին, որովհետեւ մոլորութեան միջոցով յայտնի կ'ըլլան, ինչպէս կրակէն անցնելէ ետք ոսկին ու արծաթը, խոտն ու երկաթը, ատոր համար Առաքեալը կը պատուիրէ. «Զգուշացէ՛ք չար մշակներէն»⁴⁰, իսկ Տէրը կ'ըսէ. «Եթէ կարենան նոյնիսկ ընտրեալները պիտի մոլորեցնեն»⁴¹:

Թերահաւատներէն ոմանք կ'ըսեն, թէ Աստուած այդքան մարդիկ կորուստի չի մատներ, որոնք հիմա տաճիկ են, քանի որ Անոր մարդասիրութիւնը անչափ է:

Կ'ըսեմ, թէ Սուրբ Գիրքէն ցոյց կու տամ, թէ Աստուած բոլոր տաճիկներն ու անօրէնները կորուստի կը մատնէ, եւ զանոնք երբեք չի խնայեր:

Նախ՝ որովհետեւ Առակացին մէջ կ'ըսէ, թէ՛ «անոնք որոնք զԻս կը սիրեն՝ կը սիրեմ զանոնք»⁴², ապա ուրեմն, անոնք որոնք զԻնք ու Անոր պատուիրանները կ'ատեն, Տէրը կ'ըսէ. «Ով որ ամօթ նկատէ զԻս եւ Իմ խօսքս, այդպիսիին Մարդու Որդին ալ ամօթով պիտի հանէ, երբ գայ»⁴³:

Երկրորդ՝ քանի որ աստուածապաշտներուն համար Մարգարէն կ'ըսէ. «Անոնց Իմ գերանէ յարկերուն մէջ անուանի տեղ պիտի տամ»⁴⁴: Իսկ անօ-

³⁸ Հմմտ. Բ. Թեսաղ. Բ. 10:

³⁹ Տէս Մատթ. ԺԹ. 29:

⁴⁰ Փիլիպ. Գ. 2:

⁴¹ Մարկ. ԺԳ. 22:

⁴² Առակ. Ը. 17:

⁴³ Հմմտ. Մարկ. Ը. 38:

⁴⁴ Հմմտ. Գ. Թագ. Զ. 2:

րէններուն համար կ'ըսէ. «Բոլոր հեթանոսները դոյլի մէկ կաթիլին պէս ես, նոյնն են, ինչ փոշեհատիկը՝ կշիռփին վրայ, ու բոլորը անոր համար ոչինչ համարուեցան»⁴⁵:

Երրորդ՝ որովհետեւ Առաքեալը աստուածապաշտներուն համար կ'ըսէ. «Գիտէ՛՛ Տէրը աստուածապաշտները փրկել իրենց փորձութիւններէն»⁴⁶, այսինքն՝ տանջանքներէն: Իսկ անօրէններուն համար կ'ըսէ. «Իսկ անիրաւները կը պահէ յալիտենական դատաստանի տանջանքներուն»⁴⁷:

Չորրորդ՝ քանի որ Մկրտիչը հաւատացեալներուն համար կ'ըսէ. «Ով որ Որդիին հաւատայ, կեանքը կը տեսնէ»⁴⁸: Իսկ անհաւատներուն համար կ'ըսէ. «Ով որ չի հաւատար [Որդիին], կեանքը չի՛ տեսնէր, այլ՝ Աստուծոյ բարկութիւնը կը մնայ անոր վրայ»⁴⁹, այսինքն՝ «հեռացէ՛ք Ինձմէ, անիծեալներ, դէպի կրակը»⁵⁰:

Հինգերորդ՝ Տէրը բոլոր բարեգործներուն համար կ'ըսէ. «Խրաքանչիւր ուր, որ Իմ վրաս է ու պտուղ կու տայ, յօտելով կը մաքրէ զայն, որպէսզի ան-լի պտղաբեր ըլլայ»⁵¹: Իսկ անօրէններուն համար կ'ըսէ. «Եթէ մէկը հաւատ-ֆով Իմ վրաս հաստատուած չէ, իբրեւ որով դուրս կ'ելլէ եւ զայն կը հաւաքեն կրակի համար ու յալիտենապէս կ'այրի»⁵²:

Վեցերորդ՝ որովհետեւ Մարգարէն անծէք կը կարգայ անօրէններուն համար, ըսելով. «Անիծեալ՛ ըլլան անոնք, որոնք Աստուծոյ պատուիրաններէն խտտորեցան»⁵³: Իսկ օրէնքը կատարողները կ'երանացնէ. «Երանի՛ր անոնք, որոնք իրաւունքը կը պահեն»⁵⁴: Եւ՝ «Երանեալ են անբիծները»⁵⁵:

Եօթներորդ՝ քանի որ Տէրը կ'ըսէ. «Ով որ զԻս մարդոց առջեւ խոստովա-նի, Հօր առջեւ պիտի խոստովանուի. իսկ ով որ ուրանայ, Հօր առջեւ թող ուրա-ցուի»⁵⁶, այն է, որ կ'ըսէ. «Չե՛մ հանչնար ձեզ»⁵⁷:

Ութերորդ՝ որովհետեւ դատաստանի օրը Տէրը ուռկան պիտի նետէ,

⁴⁵ Տէս Ես. Խ. 15:

⁴⁶ Բ. Պետ. Բ. 9:

⁴⁷ Բ. Պետ. Բ. 9:

⁴⁸ Հմմտ. Յովհ. Գ. 36:

⁴⁹ Հմմտ. Յովհ. Գ. 36:

⁵⁰ Տէս Մատթ. ԻԵ. 41:

⁵¹ Տէս Յովհ. ԺԵ. 2:

⁵² Հմմտ. Մատթ. ԺԳ. 40:

⁵³ Սաղմ. ՃԺԸ. 21:

⁵⁴ Սաղմ. ՃԵ. 3:

⁵⁵ Սաղմ. ՃԺԸ. 1:

⁵⁶ Հմմտ. Մատթ. Ժ. 32–33:

⁵⁷ Մատթ. ԻԵ. 12:

բոլոր ազգերէն հաւաքելու հոգիները՝ մարմինի ծովէն: Երբ ցամաք հանուին՝ անմեղ աշխարհը, բարին բարի ամանի՝ Արքայութեան մէջ պիտի լեցնեն, իսկ խոտանները, այսինքն՝ մեղաւորներն ու անհաւատները, մէկ կողմ պիտի նետուին, այսինքն՝ դժոխք:

Իններորդ քանի որ այս աշխարհի մէջ ալ անօրէնները հանգիստ չունին, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Անօրէնները ծովուն պէս կը ծփան եւ հանգիստ պիտի չգտնեն»⁵⁸, իսկ արդարները երկիրը պիտի ժառանգեն եւ յաւիտեանս յաւիտենից այնտեղ պիտի բնակին:

Տասներորդ՝ որովհետեւ արդարները օրհնութիւնը պիտի լսեն, թէ՛ «եկէ՛ք, Հօրս կողմէ օրհնեալներ»⁵⁹: Իսկ անօրէնները՝ «հեռացէ՛ք Ինձմէ, անիծեալներ, դէպի կրակը»⁶⁰:

Տասնմէկերորդ՝ անոնք որոնք մարմնաւոր վաստակի մէջ կ'աշխատին, անոնք կը շահին, այդպէս ալ [անոնք որոնք] հոգեւորապէս կը ճգնին, անոնք յաւիտենական պսակը կ'առնեն:

Տասներկրորդ՝ ոմանք կ'ըսեն, թէ տաճիկ ազգը ինչպէ՛ս այդքան երկարեցաւ: Դիտցիր, ո՛վ եղբայր, թէ ասիկա աւելի շատ չէ քան կոապաշտութիւնը, որ ցամաքին վրայ պիտի տեւէ, մինչեւ Քրիստոսի գալուստը. այդպէս ալ ասիկա պիտի չբակուի, եթէ ոչ՝ Քրիստոսի գալուստով:

Եւ որովհետեւ անոնք աստուածային խօսքերուն չեն հաւատար, այդ պատճառով բնական քննութեամբ ցոյց տամ անոնց օրինակներուն ստութիւնը եւ անոնց առաջնորդին կեղծաւոր ամբարշտութիւնը:

Նախ՝ այսպէս, քանի որ իմաստասէրները կ'ըսեն, թէ սուտ է, ով որ կ'ըսէ թէ գործը չի՛ համապատասխաներ ձայնին, կարծէք ըսուի՞ ոսկին՝ քարին, այդպէս ալ ասիկա, որովհետեւ անոնց՝ մուսուլման օրէնքներուն ըսելով, այսինքն՝ «Սրպիկ հաւաքը»⁶¹, չի՛ համաձայնիր անոնց գործին, քանի որ միայն անուամբ են եւ ո՛չ գործով, ինչպէս կրաջուրով ձեփուած պատը:

Երկրորդ քանի որ ան ի՛նչ գործ որ կատարէ, նոյն բանը արժանի է, որ միւսներուն ուսուցանէ. ասոր մասին Տէրն ալ կը վկայէ. «Ով որ կը գոր-

⁵⁸ Ես. Ծէ. 20:

⁵⁹ Մատթ. ԻՅ. 34:

⁶⁰ Մատթ. ԻՅ. 41:

⁶¹ Սրպիկ-մաքուր (տե՛ս Միշին հայերէնի բառարան, Երեւան, 1992, էջ 344). (Մանօթագրութիւնը նադ Քահանայ Ղազարեանինն է):

ծաղրէ ու կ'ուսուցանէ»⁶². Իսկ այդ բոլոր ազգը միաբան կը գովեն արդարութիւնն ու խաղաղութիւնը, սակայն, ո՛չ ոք կը կամենայ գործել, անոնցմէ մէկը մասամբ չար է, իսկ միւսները ամբողջը [չարութիւն] ունին, եւ անոնցմէ ո՛չ ոք մերժուեցաւ իրենց ազգէն:

Երրորդ՝ որովհետեւ երբեք խաւարէն լոյս եւ շարէն՝ բարի կ'ըլլայ: Արդ, անոնք կ'ըսեն, եթէ մէկը քրիստոնեայ մը կողոպտէ կամ սպաննէ, ի՞րն է արքայութիւնը: Քանի որ նախապէս կուսապաշտները այդքան ծայրայեղութեամբ չէին ըսեր, ըստ այնմ. «Եւ ոմանք ուրիշներուն եղածը չէին ուտեր, ըսելով թէ հարամ է [պիղծ]», որ շատ խիստ հակառակ կ'երեւի միւսին:

Չորրորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք զայն Աստուած կը պաշտէ, որու անունով երգում կ'ընեն, եւ օրէնքին մէջ ալ գրուած է. «Ճշմարիտ Աստուծով երգում կ'ընեն»⁶³: Իսկ այդ ազգը կնոջ կանանոցը որպէս աստուած կը պաշտեն, յայտնի է անոնց երգումը, որ «թալեդ»⁶⁴ կը կոչեն անոնք, եւ ատիկա անոնց համաձայն անքակտելի է: Արդարեւ, քրիստոնեաները երգումը՝ որ առ ճշմարիտ Աստուածն է, այդպէս չեն պահեր, ինչպէս անոնք կը պահեն:

Հինգերորդ՝ որովհետեւ իւրաքանչիւր ոք իր Աստուածը կը պաշտէ ու Անոր կ'երկրպագէ, ինչպէս որ կուսապաշտներն ալ կ'երկրպագէին: Աստուածաշունչէն յայտնի է, թէ այդ ազգը այն ինչ որ կը պաշտեն, մնայուն կերպով կը պղծեն՝ շարութիւն ընելով անոնց հետ⁶⁵:

Վեցերորդ՝ քանի որ Պղատոնական քաղաքական օրէնքներուն մէջ հրամայուած է, որ պոռնիկներն ու շուները [շնացողները] յայտնի փողոցներուն ու հրապարակներուն վրայ նստին, որպէսզի միւսները հեռանան, բաժնուին այդպիսիներէն եւ գարշին շարութենէ: Իսկ այդ ազգին օրէնքներուն մէջ դրուած են ու գովուած, եթէ ոեւէ մէկը տասը անգամէն աւելի այդ ճանապարհով երթայ՝ կը պատուուի, ինչպէս նաեւ իրենց «զփեղամբարն»⁶⁶ կը գովեն, թէ մէկ գիշերուան մէջ այդքան կիներու մօտ գնաց:

Եօթներորդ՝ որովհետեւ ամբողջ օրէնքները այն բանին համար գրուեցան, որպէսզի մարդիկ անյագ ցանկութիւններէն պարկեշտանան [հրաժա-

⁶² Մատթ. Ե.19:

⁶³ Հմմտ. Ես. 46. 16:

⁶⁴ Թալեդ, դալեհ (արաբ.), բախտ, ճակատագիր (տե՛ս Միշին հայերէնի բառարան, էջ 163). (Մանօթագրութիւնը Խաղ Քահանայ Ղազարեանինն է):

⁶⁵ Հմմտ. Եզեկ. 1է 23:

⁶⁶ Փեղամբար – մարգարէ: Սովորաբար իսլամական կրօնի հիմնադիր՝ Մուհամմէտին մասին խօսուած ատեն կը գործածուի. (Մանօթագրութիւնը Խաղ Քահանայ Ղազարեանինն է):

րին, ետ կենան]: Յայտնի է, թէ երբ օրէնքները չկային, պարկեշտութեան ջուրով կորսուեցան, ինչպէս կ'ըսէ. «Կ'ուտէին, կը խմէին եւ կ'ինքն լկ'առնէին»⁶⁷: Իսկ այդ ազգը, եթէ մէկը շատ ուտէ, քաջ է կ'ըսեն եւ «հոռոք»⁶⁸ կու տան, եւ հրապարակաւ շարութիւններ գործելով՝ Աստուծոյ ընտանի են, կ'ըսեն:

Ութերորդ՝ քանի որ իմաստասէրը կ'ըսէ, թէ մարդուն յոյսը պէտք է այն բանին ըլլայ, որ իրմէ գերագոյն կ'ըլլայ, այդ պատճառով աղքատները թագաւորներուն կը յուսան: Իսկ այդ ազգը, այնպէս կը յուսան Մուհամմէտին, կարծէք ան է Արքայութեան դռները: Եւ յայտնի է, թէ բազմաթիւ անգամներ զԱստուած յիշելով չեն երկրպագեր, իսկ երբ Մուհամմէտը կը յիշեն, իրենց երեսներուն վրայ դէպի գետին կը խոնարհին:

Իններորդ՝ որովհետեւ կը յայտարարեն, թէ Մուհամմէտը նոր օրէնքներ գրած է, սակայն, այստեղ ալ չափազանցուած կերպով կը ստեն, քանի որ անոնց թլփատութիւնը, լուսցումն ու աղօթքը Մովսէսի օրէնքներէն է, ինչպէս իսրայէլացիները ամէն ինչի համար Երուսաղէմ կը դիմէին, իսկ անոնք հաճեցին⁶⁹ եւ մահրին⁷⁰ եւ մէկ դէմքով Աստուծոյ դիմելուն մէջ, հետեւաբար անոնք հրեայ են. բայց այս բանին մէջ կ'երեւի անոնց զանազանութիւնը, քանի որ անոնք Մուհամմէտը մարգարէ կը կոչեն, իսկ անոնք՝ ոչ, նաեւ՝ անոնք շարագործ են, իսկ հրեաները՝ ո՛չ:

Տասներորդ՝ այս բոլորին վրայ անոնց օրէնքներուն ստութիւնը կ'երեւի, որովհետեւ Աստուծոյ Արքայութիւնը ուտելի ու ըմպելի կը քարոզեն եւ կը հաջեն ըսելով, թէ իրենցմէ իւրաքանչիւրը եօթանասուն կին պիտի առնէ, ինչը այստեղ՝ երկրի վրայ իսկ անկարելի է, քանի որ եթէ յիսուն այսքան մարդիկ, որոնք այս աշխարհի մէջ եղած են, այնտեղ կ'ին եթէ ըլլայ, չեն բաւեր Ադամի որդիներուն համար: Ասիկա բոլոր ազգերը կը խոստովանին, որովհետեւ անոնք որ կը մեռնին, նոյններն ալ շարութիւն կ'առնեն: Արդ, բազմաթիւ մարդիկ կան այս աշխարհէն, որոնք մեռան եւ կ'ին շունէին, անոնց համար ո՛րեւէ կ'ին պիտի ըլլայ: Տակաւին, այս ալ կը խոս-

⁶⁷ Մատթ. ԻԳ. 38:

⁶⁸ Հոռոք – ոռճիկ, դրամական վճար ստացող. (Մանօթագրութիւնը Խաղ Քահանայ Ղազարեանինն է):

⁶⁹ Հաճեց ռիստագնացութիւն մըն է դէպի Մեքքա քաղաքը (Ալուտական Արաբիա), ուր կը գտնուի իսլամի սրբազոյն տաճարը՝ Քաապան: Այս ուխտագնացութիւնը կը կատարուի իսլամական օրացոյցի 12-րդ ամսուան՝ Զուլ-Հիճճայի ընթացքին (Մանօթագրութիւնը թարգմանողինն է):

⁷⁰ Մահր – ամուսնական նուէր՝ ընծայ, որ փեսացուն հարսին կու տայ (Միջին հայերէնի բառարան, էջ 120). (Մանօթագրութիւնը Խաղ Քահանայ Ղազարեանինն է):

տովանին, թէ այնտեղ մարդկային բնութիւն չ'աճիր, հետեւաբար, սուտ է կին առնելը այնտեղ, քանի որ կինը զաւակ ունենալու համար կ'ըլլայ, հետեւաբար, անոնց օրէնքը սո՛ւտ է:

Իսկ այն, որ Մուհամմէտը ինքզինք մարգարէ կը կարծէ, ցոյց պիտի տանք, որ այս եւս սուտ է, բազմաթիւ կերպերով:

Նախ՝ մարգարէութեան սահմանումէն յայտնենք, քանի որ մարգարէութիւն է գիտնալ անցեալը, պատմել ապագան, ճարտարաբար խօսիլ ներկայի մասին: Իսկ Մուհամմէտ անցեալը չի՛ գիտեր եւ յայտնի է անոր սուտ պատմութենէն, որ Աբրահամի մասին է, ապա ուրեմն, ապագայի մասին ալ սուտ է, եթէ ըսէ, եւ ապագային մասին ոչինչ կ'ըսէ:

Երկրորդ՝ քանի որ մարգարէ կ'ըլլայ ուրիշ մէկու մը համար եւ ո՛չ թէ ինքն իրեն համար, ինչպէս յայտնի է Մովսէսէն եւ ուրիշներէն, որովհետեւ ուրիշի մը մասին մարգարէացան: Իսկ Մուհամմէտը ինչ որ բարբաջած է, ինքն իրեն համար կը զօղանջէ՝ ըսելով. «Աստուած աշխարհը ինձի համար ստեղծեց», հետեւաբար, մարգարէ չէ:

Երրորդ՝ քանի որ մարգարէները հրաշագործութիւններու եւ սքանչելիքներու միջոցով յայտնի դարձան, ինչպէս յայտնի է Մովսէսէն՝ Եգիպտոսի մէջ, եւ Եղիայէն: Իսկ Մուհամմէտը՝ ապառնալիքներով ու մահով, ինչպէս մեր ժամանակներուն եւս այս կաղը, որ Թամուր⁷¹ կը կոչուի, որ ո՛չ միայն ինքզինք մարգարէ ըսել կու տայ, այլ՝ որպէս աստուած պաշտել [կը հրամայէ], եւ յայտնի է, որովհետեւ բոլորին գլուխին վրայ նշան դրուած է:

⁷¹ Թէմուր, Լէնկթեմուր – Միջինասիական զօրապետ, ամիրա (1336–1405): Պատերազմի մէջ վիրաւորուելով ստացած է «Լէնկ» (կաղ) մականունը: 1386-ի գարնան, Թէմուրը առաջին անգամ Հայաստան արշաւած է, գրաւած է Նախճավանը, պաշարած է բերդը, ասպատակած է Այրարատը՝ մինչեւ Կարբի, Բջնի, Սուրմարի եւ Կողբ, գրաւած է Տփլեաններու շտաբի շահան Մարեցիի ամրոցները, կոտորած է Երեւան գիւղաքաղաքի բնակիչները: Թէմուրին դիմադրած են կողբացիները, Պոռշեաններու իշխանանիստ Շահապիվանը, Սուրմարի բերդաքաղաքը: 1387-ի գարնան Թէմուր արշաւած է Հարաւային Հայաստան, բայց թուրքերէն պարտութիւն կրած է. Կարա-Կոյունլու ցեղէն: Վանը 20 օր դիմադրած է Թէմուրի հրոսակներուն, սակայն, ամբողջ բնակչութիւնը կոտորուած է կամ գերեվարուած: 1394-ին, Թէմուրը երկրորդ անգամ Առաջաւոր Ասիա արշաւած է ու Միջագետքը գրաւելէ ետք, թափանցած է Արեւմտեան Հայաստան, գրաւած է Երզնկան, Բասէնը, Կարսը, Սուրմարին, Բագարանը, Արճէշը, եւ այլն: 1399-ի աշնան, Հայաստան կատարած երրորդ արշաւանքի ժամանակ անբնակ դարձած են Վրաստանի եւ Հայաստանի հիւսիս-արեւելեան գաւառները: 1400-ին Սեբաստիան ակերած է: Թէմուրի օրով Հայաստանի բնակչութեան հոծ զանգուածներ գերի տարուած են Միջին Ասիա, իսկ Հայաստանի մէջ քոչուոր ցեղեր բնակեցուած են. (Ծանօթագրութիւնը ինչ ֆահանայ Ղազարեանինն է):

Զորրորդ՝ որովհետեւ իւրաքանչիւր մարգարէ այն կը խօսի, որ ուրիշ ոչ ոք խօսած է, ինչպէս յայտնի է մարգարէներու գիրքերէն: Իսկ Մուհամմէտ բաժին մը Մովսէսէն առած է, բաժին մըն ալ ուրիշ գիրքերէ եւ իր անունը գրած է. այս մէկը բոլորն ալ շատ դիւրութեամբ՝ նոյնիսկ յետոյ եկողները կրնան ընել, հետեւաբար գող է եւ ո՛չ թէ մարգարէ:

Հինգերորդ՝ քանի որ չի՝ կրնար ինքն իրեն հակառակ խօսիլ կամ գործել: Իսկ Մուհամմէտը ինքն իրեն հակառակ կը խօսի, որովհետեւ չէ գրած թէ մարդ որեւէ մէկ մեղք ունի, այլ՝ կըսէ [կ'արտօնէ] ամէն ինչ ընել, ինչ որ կրնայ, քանի որ այդ բանին համար Աստուած ստեղծեց մարդը, կ'ըսէ. ասոր մէջ ալ կը ստէ՝ ըսելով թէ Աստուած չարիքներու պատճառն է, եւ այս բոլորին վրայ, կըսէ՝, թէ դատաստան եւ հատուցում պիտի ըլլայ: Արդ, եթէ մարդուն մէջ մեղք չկայ, Աստուած ի՞նչ պիտի հատուցէ, հետեւաբար սուտ մարգարէ է:

Վեցերորդ՝ որովհետեւ ոչ մէկ մարգարէ մեղք կը սորվեցնէ, ինչպէս յայտնի է մարգարէներու գիրքերէն, քանի որ բոլորն ալ զղջում եւ ապաշխարութիւն կ'ուսուցանեն: Իսկ Մուհամմէտ մեզի մեղք կ'ուսուցանէ, այն՝ որ Աստուած արգիլած է. «Մի՛ շնար»⁷², իսկ ան կը հրամայէ շատերու հետ խառնակիլ, հետեւաբար մարգարէ չէ:

Եօթներորդ՝ որովհետեւ ո՛չ ոք մեղքով Աստուծոյ կը հաճոյանայ, այս մէկը անոնք ալ կ'ըսեն, իսկ Առաքեալը կ'ըսէ. «Մի՛ խաբուիք. ո՛չ շուները [շնացողները], ո՛չ պոռնիկները եւ ուրիշներ, Աստուծոյ Արքայութիւնը պիտի ժառանգեն»⁷³: Իսկ Մուհամմէտը աշխարհի մէջ չարիք չմնաց, որ իր անձով չգործեց, ինչպէս իրենց ազգն ալ կը վկայէ, թէ այսչափ կին ունէր եւ այսքան ալ ամուսնութենէ դուրս կիներու մօտ կ'երթար, ուրեմն չարագործ է եւ ո՛չ թէ մարգարէ:

Ութերորդ՝ որովհետեւ իւրաքանչիւր ոք, որ քաղաք տանող ճամբայէն դուրս կ'ելլէ, իր դիտաւորութեան աւարտին չի՛ հասնիր. այդպէս ալ, ով որ Աստուծոյ կամքէն դուրս կը գործէ, չի՛ հասնիր Անոր: Իսկ Մուհամմէտը ասոնց մասին շխորհեցաւ, այլ՝ իր կամքին համաձայն շրջեցաւ, եւ յայտնի է իր ժողովուրդէն:

Իններորդ՝ քանի որ անասունները Աստուծոյ պատկերը չեն, որովհետեւ անբաններ են եւ ոչ իմաստուններ, նմանապէս անոնք որոնք անաս-

⁷² Բ. Օր. Ե. 17:

⁷³ Ա. Կորնթ. Զ. 9:

նաբար կը վարուին: Իսկ Մուհամմէտը անասունէն աւելի վատթար է՝ կրկնակի պատճառով: Նախ՝ քանի որ անոնք տարուան մէջ մէկ անգամ [կը զուգուին], իսկ ան՝ ամբողջ տարին: Եւ ապա՝ որովհետեւ անոնք ըստ բնութեան կը կարգուին, իսկ ան՝ արտաքոյ բնութեան:

Տասներորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք իր նմանը կը սիրէ, ինչպէս անասունը անասունին կը սիրէ, եւ մարդը՝ իր ընկերը, իսկ Աստուած ո՛չ ոք կը սիրէ, բացի Իրեն նմանողներէն: Իսկ Մուհամմէտ Աստուծոյ նմանակցութենէն այնքան հեռու է, ինչքան Աստուած մարդը կը ճանչնայ, ապա ուրեմն, Մուհամմէտը չի՝ ճանչնար զԱստուած, հետեւաբար մարգարէ չէ՛:

Եւ որովհետեւ վայել չէ, որ թագաւորը տառապածէ մը որեւէ մէկ բան խնդրէ, եւ թէեւ ասիկա սիրոյ եւ խոնարհութեան գործ է, սակայն, մեզի չի վայելեր. բայց, որովհետեւ թագաւորները չքաւորներէն այրելու նիւթ կ'առնեն, որ աշխատանքով կը հաւաքեն, այդպէս ալ Հայր մեր, ընդունիր այս խօսքերուն պատճառը եւ աստուածային շնորհներուդ իմաստութեամբ, որ Քու մէջդ ամբարուած է, այրէ անուղղաները, անոնց գործերն ու օրէնքները:

Տիրոջմով ո՛ղջ եղիր: Ամէն:

Գրաբարէ Արեւմտահայերէնի վերածեց՝
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ



ՇԱՀԵ Ա. ԱՆԱՆՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու

ԼԵԻՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ՔԵԿԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ
«ՄՈՌԱՑՎԱԾ» ՄԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայոց Ծայրագույն պատրիարքի իրավական կարգավիճակը.
Տեսական-իրավական համառոտ ակնարկ

Սկիզբը՝ թիվ Բ.

Գ. ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Իրավունքների պարագայում անհրաժեշտ է երկու հիմնական կատեգորիա տարբերակել:

Առաջին, քահանայապետական կարգի իրավունք (jura ordinis):

Երկրորդ, վարչական իրավունք (jura jurisdictionis):

1. Քահանայապետական կարգի իրավունք

Ի բաց առյալ Հայոց Ծայրագույն պատրիարքի այն իրավունքները, որոնք բնորոշ են նաեւ եկեղեցու նվիրապետության մյուս անդամներին (jura ordinis communa)՝ դիտարկենք նրա կաթողիկոսական կարգին վերաբերող երկու լիազորություն՝ մյուսոնօրհնություն եւ եպիսկոպոսական ձեռնադրություն:

-Մյուսոնօրհնություն-

Մյուսոնօրհնությունը կաթողիկոսի բացառիկ իրավունքն է (հմմտ. հոդ. 1130): Հայոց եկեղեցու ավանդության համաձայն՝ մյուսոնօրհնեքը կազմակերպվում է յոթ տարին մեկ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Մյուսոնօրհնության իրավունք ունեն նաեւ Սսի ու Աղթամարի կաթողիկոսները, բայց միայն՝ իրենց ենթակա թեմերի համար: Այնպես որ «մյուսոնօրհնությունը կաթողիկոսի բացառիկ իրավունքն է» արտահայտությունն այդ

առումով պետք է հասկանալ բացարձակ իրավունքի համատեքստում¹: «Սուրբ Մյուռոնը բաշխվում է Պատրիարքի կամ նրա կողմից նվիրակված հոգեւորականների ձեռամբ՝ ձրի եւ առանց պարգեւավճարի» (հոդ. 1130, ծանոթ.): Ընդ որում, էջմիածնի Սինոդն է «Պատրիարքին ներկայացնում այն անձանց ցանկը, որոնց Պատրիարքը նվիրակելու է Մյուռոնի բաշխման համար» (§ 11, հոդ. 1141):

-Եպիսկոպոսական ձեռնադրություն-

Ինչպես մյուռոնօրհնությունը, եպիսկոպոսական ձեռնադրությունը նույնպես կաթողիկոսի բացառիկ իրավունքն է (հմմտ. հոդ. 1131): Ձեռնադրության համար անհրաժեշտ պայման է օրհնության բաշխումը Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջ-մասունքով, որը խորհրդանշում է Հայոց Եկեղեցու առաջին պատրիարք Սուրբ Գրիգոր Լուսավորչից՝ ձեռնադրվող եպիսկոպոսին տրվող օրհնությունը: Եպիսկոպոս ձեռնադրելու իրավունք ունեն նաեւ Սսի ու Աղթամարի կաթողիկոսները, բայց կրկին միայն իրենց ենթակա թեմերի կանոնական տարածքներում: Դրանցից դուրս կատարված ցանկացած եպիսկոպոսական ձեռնադրություն համարվում է անվավեր, այսպես կոչված՝ կիսաեպիսկոպոսություն, չնայած, իհարկե, այդ կիսաեպիսկոպոսները միշտ էլ կարող են վավերական ու օրինական իշխանություն ստանալ: Բավական է ստորագրել ուխտագիր եւ հավատարմագիր Մայր Աթոռ Սուրբ էջմիածնին եւ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ դառնալ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի միաբան: Համենայն դեպս, կասկածի տակ չի կարող դրվել այն փաստը, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ եպիսկոպոս ձեռնադրելու իշխանությունը նույնպես պետք է դիտարկել բացարձակ իրավունքի համատեքստում:

Հայոց Եկեղեցու կանոնադրության համաձայն՝ եպիսկոպոսն ընկալվում է որպես իր թեմի հետ փեսայացած մեկը: Դրա խորհրդանիշն է աջ ձեռքին առկա եպիսկոպոսական մատանին: Հայոց Եկեղեցում անկարելի է պատկերացնել եպիսկոպոսին առանց թեմի: Միայն ավելի ուշ ժամանակաշրջանում ի հայտ եկան անաթոռ, թեմական պարտականություններ չունեցող եպիսկոպոսներ: Այս առումով ռուսաց օրենսդրությունն

¹ Այսինքն՝ ինքնին կաթողիկոսի նվիրապետական կարգին է պատկանում մյուռոնօրհնություն եւ եպիսկոպոսական ձեռնադրության իրավունքը՝ անկախ ինքնիշխան կամ ինքնավար Եկեղեցու գլուխ լինելու հանգամանքից:

առաջ է քաշում պայման. «Թեմեր շունեցող եպիսկոպոսների թիվը չի կարող գերազանցել ակնհայտ անհրաժեշտությանը պայմանավորված քանակը» (հոդ. 1131): Ընդ որում, անհրաժեշտ է ունենալ էջմիածնի Սինոդի կարծիքը, «երբ Պատրիարքը եպիսկոպոսական աստիճանի է բարձրացնում թեմական հստակ պարտավորություններ շունեցող հոգեւորականների» (§10, հոդ. 1141):

Սակայն ցանկության դեպքում Ծայրագույն Պատրիարքը կարող է շրջանցել վերոնշյալ պայմանը: Հոդ. 1139-ի համաձայն՝ Սինոդի անդամների թիվը պետք է լինի ութ, որից չորսը՝ եպիսկոպոս, չորսը՝ վարդապետ: Մեկ կամ երկու եպիսկոպոսների անդամակցության դադարեցման պարագայում Ծայրագույն Պատրիարքը միշտ էլ կարող է նրանց փոխարեն նշանակել վարդապետների, որոնք, կայսերական բարձրագույն իշխանության հաստատմամբ եւ նույն հոդվածի տրամաբանությամբ, պետք է բարձրացվեն եպիսկոպոսական աստիճանի ու կարգի: Այդպիսով հստակ է, որ Ծայրագույն Պատրիարքն ազատ է, ինչպես վկայում են արդեն առկա նախադեպերը, իր բարեհաճությունը վայելող ցանկացած վարդապետի ձեռնադրել եպիսկոպոս:

2. Վարչական իրավունք

Մեր կարծիքով՝ ի դեմս Հայոց Ծայրագույն պատրիարքի, առկա են հետեւյալ չորս անկախ գործառույթները՝ Ամենայն Հայոց կաթողիկոս, էջմիածնի պատրիարք կամ Մայր Աթոռի միաբանության վանահայր, էջմիածնի Սինոդի նախագահ եւ Երեւանի հայրապետական թեմի առաջնորդ: Իրենց բնույթով տարբեր այս գործառույթների լույսի ներքո էլ այժմ դիտարկենք Ծայրագույն Պատրիարքի վարչական իրավունքը (jura jurisdictionis):

-Ծայրագույն Պատրիարքի գործառույթները
որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս-

Ա. Զուտ հոգեւոր բնույթի գործեր (causae mere spirituales): Ըստ օրենքի՝ Ծայրագույն Պատրիարքին է պատկանում «զուտ հոգեւոր բնույթի գործերում (դավանական հարցեր, աստվածաշտություն եւ նմանատիպ խնդիրներ) վերջնական որոշում կայացնելու իրավունքը» (հոդ. 1132): Սակայն մնում է անհասկանալի՝ ի՞նչ է նշանակում «նմանատիպ խնդիրներ» արտահայտությունը: Անկասկած, պատասխանը պետք է փնտրել օրեն-

քի մեկ այլ գրույթում, որտեղ նույնպես նշվում է զուտ հոգեւոր բնույթի գործերի մասին հետեւյալ ձեւակերպմամբ. «Իավանական եւ հավատին առնչվող, աստվածաշտույթյանը եւ եկեղեցական կարգերին վերաբերող հարցեր, ամուսնական խնդիրներ ու հոգեւոր բնույթի հանցագործություններ, որոնք ենթակա չեն աշխարհիկ դատարանների քննությանը» (հոդ. 1143): Երկու հոդվածների համագրույթամբ հեշտույթամբ կարելի է եզրակացնել, որ «նմանատիպ խնդիրներ» արտահայտությունն անհրաժեշտաբար նկատի ունի «եկեղեցական կարգերին, ամուսնություններին եւ աշխարհիկ դատարանների քննության ոչ ենթակա հարցերի» քննությունը:

Բայց մյուս կողմից, հստակեցնելով «նմանատիպ խնդիրներ» արտահայտության սահմանումը, որոնք, ըստ հոդ. 1143-ի, ենթակա են Ծայրագույն Պատրիարքի վերջնական որոշմանը, դժվարություններ է հասկացվում վերոնշյալի եւ հոդ. 1132-ի միջեւ առկա հակասությունը: 1143-ի համաձայն՝ այդ հարցերի վերջնական քննությունն իրականացնում է «Ծայրագույն Պատրիարքի անմիջական վերահսկողության տակ գտնվող» էջմիածնի Սինոդը (հմմտ. հոդ. 1142): Այսպիսով, Պատրիարքի, թե՛ Սինոդի վերջնական քննության են ենթակա այդ հարցերը: Կա՞ արդյոք հակասություն այդ երկու հոդվածների միջեւ: Օրենքի տրամաբանության վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս՝ լուծելու թվացյալ հակասությունը եւ հասկանալու օրենսդիր իրական նպատակը:

Այսպես, նախեւառաջ անհրաժեշտ է տարբերակել «նախագահելը» «վերահսկելուց»: Ժողովական բնույթ ունեցող Սինոդում Ծայրագույն Պատրիարքը նախագահում է միայն ոչ հոգեւոր բնույթի գործերի քննության ժամանակ, որոնց դեպքում նրա ձայնը որոշիչ չէ: Մինչդեռ զուտ հոգեւոր բնույթի գործերի քննության ժամանակ նա չի նախագահում նիստը, այլ վերահսկում է:

Երկրորդ, վերահսկողությունն այստեղ պետք է նկատի ունենալ Սինոդի կողմից նրան ներկայացված օրագրությունների (իմա՝ արձանագրություններ, — թրգմն.) դիտարկումը (հոդ. 1147)՝ «առաջնորդվելով Եկեղեցու հնագույն կանոններով» (հոդ. 1132) եւ «համապատասխան որոշումներ կայացնելով» (հոդ. 1147): Հենց այս իմաստով է ամբողջությամբ արտահայտվում կաթողիկոսի՝ վեստյի եւ արգելանքի իրավունքը, այսինքն՝ Սինոդի օրագրություններին տալ ցանկացած որոշում, որոնք այլեւս ենթակա չեն բողոքարկման: Իսկ պատրիարքի լիազորություններն իբրեւ թե սահմանափակող արտահայտությունները՝ «առաջնորդվելով Եկեղեցու

հնագույն կանոններով» եւ «կրկին խորհրդակցելով Սինոդի հետ» (հոդ. 1132), այնքան անորոշ են, որ նրան օժտում են որոշումներ կայացնելու մեծ հնարավորութիւններով եւ ինքնակամութեան լայն դաշտով:

Թրքահայոց կյանքում զուտ հոգեւոր բնույթի հարցերի քննութեան որոշումը կայացնում է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը, որը վերջնական վճռի համար դրանք ներկայացնում է Մայրագույն Պատրիարքին:

Բ. Պարզեւներ, պատիժներ եւ ներում: Հայոց Եկեղեցու ընկալյալ կարգի համաձայն՝ Մայրագույն Պատրիարք-Կաթողիկոսը կարող է «բարեսերու նվիրյալ եկեղեցականներին պարգեւատրել լանջախաչերով, ծաղկյա եւ մանուշակագույն թասակ կրելու հատուկ իրավունքով» (հոդ. 1133): Կաթողիկոսի բացառիկ իրավունքն է եպիսկոպոսական պանակեների, վարդապետական ականակուռ լանջախաչերի, ծաղկյա եւ մանուշակագույն փիլոնների, գավազանների շնորհումը, օրհնութեան եւ շնորհակալութեան արտահայտումը կոնդակների միջոցով եւ այլն: Կաթողիկոսի հայեցողութեամբ է նաեւ եպիսկոպոսներին շնորհվում արքութեան պատիվը, բացի այն դեպքերից, երբ դա է պահանջում եկեղեցականի ի պաշտոնե ունեցած (ipso jure) հանգամանքը (օրինակ, երբ նրան ենթակա եպիսկոպոսը կամ վարդապետը ընտրվում է պատրիարքական աթոռներից մեկի գահակալ):

Մայրագույն Պատրիարքի իրավասութեան ներքո է նաեւ համապատասխան պատժամիջոցի սահմանումն այն անձանց համար, ովքեր հոգեւոր, աշխարհիկ դատարանների քննութեանը ոչ ենթակա հանցանք են գործել: Այդ պատժամիջոցները տարբեր են՝ կարգալուծութիւն, որեւէ վանքում առանց խորհուրդներ եւ ծեսեր կատարելու իրավունքի ապաշխարութեան շրջանի սահմանում, խորհրդակատարութեան ժամանակավոր արգելանք, պաշտոնազրկում եւ այլն: Ընդ որում, հոդ. 1144-ի արտահայտած իմաստի համաձայն՝ Ռուսաց կայսրութեան հայկական թեմերի առաջնորդների եւ Սինոդի անդամների նկատմամբ սահմանված պատիժները կարող են գործադրվել «միայն Նորին Կայսերական Մեծութեան ներքին գործոց նախարարութեան պաշտոնական հայտարարութիւնից հետո»: Մայրագույն Պատրիարքի բացառիկ իրավունքն է նաեւ ներում շնորհելը:

Գ. Վարչակազմ: Մայրագույն Պատրիարքի անմիջական խնամքի տակ է նաեւ թափուր պաշտոններում համապատասխան անձանց նշանակումը: Թեմակալ առաջնորդներին եւ թեմակալ առաջնորդի փոխանորդներին նշանակելու դեպքում Մայրագույն Պատրիարքն է բարձրագույն կայսերական իշխանութեանը ներկայացնում երկու թեկնածուների՝ առ ի

հաստատումն, իրեն ենթակա թեմերից ներս նշանակում թեմական գործակալների ու ղեկավարների: Կովկասյան փոխարքայության սահմաններից ներս Նորին Կայսերական Մեծության փոխարքային, իսկ փոխարքայության սահմաններից դուրս՝ ներքին գործոց նախարարին են ներկայացվում համապատասխան թեկնածուները՝ առ ի հաստատումն (հավելված հոդ. 1194, 1906-ի խմբագրության մաս): Հոդ. 1200-ի համաձայն՝ տեղի նահանգապետի համաձայնության մասին Մայրագույն Պատրիարքը նշանակում է վանքերի վանահայրերին ու մայրապետներին (հոդ. 1194-ի ծանոթ., 1906-ի խմբագրության մաս), ինչպես նաև՝ ճեմարանի տեսչին եւ հոգաբարձուներին: Հստ հոդ. 1137-ի՝ կաթողիկոսը կարող է հարկադիր արձակուրդի ուղարկել թեմական ղեկավարներին եւ Ռուսաց կայսրության տարածքից ներս գտնվող բոլոր թեմերի եպիսկոպոսներին ոչ ավելի, քան չորս ամսով, իսկ «ավելի երկար ժամանակով արձակուրդի կամ արտասահման Մայրագույն Պատրիարքը նրանց կարող է ուղարկել միայն բարձրագույն կայսերական իշխանության թողտվության մասին» (հոդ. 1137): Կաթողիկոսի օրհնության մասին թույլտվության մասին է նաև կատարվում վարդապետական տվյալները:

Վերոնշյալ վարչական բոլոր իրավունքները չեն տարածվում թրքահայոց վրա, քանի որ վարչական առումով նրանք բոլորովին անկախ են Մայրագույն Պատրիարքի իշխանությունից: Եւ ոչ միայն ինքնավար կաթողիկոսներն ու պատրիարքները, որոնք բոլորն էլ Օսմանյան կայսրության տարածքում են գտնվում, այլ նաև նրանց ենթակա թեմակալ առաջնորդներն ու թեմական ղեկավար անձինք են ենթակա Բարձր Դռան հաստատմանը՝ առանց Մայրագույն Պատրիարքի որեւիցե միջամտության:

Դ. Հայրապետական կոնդակներ ու շրջաբերականներ: Հոդ. 1134-ի համաձայն՝ Հայոց Մայրագույն պատրիարքը «ժամանակ առ ժամանակ բոլոր երկրներում եւ հանգամանքներում գտնվող իր հոտի զավակներին հովվապետական կոնդակներով է դիմում՝ հորդորելով խաղաղ համակեցության ու հավատավոր կյանքի եւ հնազանդության օրինական իշխանություններին՝ ըստ Ավետարանական սկզբունքների»: Այդպիսիք են, օրինակ, պատրիարքի գահակալության կամ այլ հանդիսավոր առիթներով հրատարակվող կոնդակները:

Ամենայն Հայոց կաթողիկոսի գործառույթներին առնչվող աշխատանքը կազմակերպելու նպատակով ընդ իշխանության կաթողիկոսի գործում է «Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվանատունը», որի պատասխանատուն է

Սուրբ Էջմիածնի միաբան հայրերից մեկը՝ իբրեւ կաթողիկոսական գրասենյակի տնօրեն եւ դիվանապետ՝ իրականացնելով նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսի քարտուղարի գործառույթները: Դիվանապետի նշանակման եւ արձակման իրավունքը բացառապես կաթողիկոսինն է: Կաթողիկոսական գահի թափուր եղած ժամանակ դիվանատունը փակվում է, իսկ դիվանապետը՝ ազատ կացուցվում իր պարտականություններից:

-Մայրագույն Պատրիարքի գործառույթները որպես

Էջմիածնի պատրիարք կամ Մայր Աթոռի միաբանության վանահայր-

Ա. Վանքի կառավարում: Հոդ. 138-ում գրված է. «Պատրիարք-Կաթողիկոսը, որպես Էջմիածնի վանքի անմիջական ղեկավար, ընթացիկ գործերը վարում է սեփական հայեցողությամբ՝ ըստ եկեղեցական կանոնների սահմանած կարգի»: Վանքի կառավարումն իրականացվում է տարբեր անձանց ու հաստատությունների միջոցով՝ վանական խորհուրդ, հրատարակչական խորհուրդ, կաթողիկոսական պաշտոնական ամսագրի՝ «Արարատի» խմբագրություն, վանքի տնտես, հյուրատան պատասխանատու, վեհարանի պարետ, գրադարանավար, լուսարարապետ, արխիվի եւ թանգարանի պատասխանատու եւ այլն:

Բ. Հոգեւոր նեմարանի վերատեսչություն. Հոդ. 1207-ի համաձայն՝ «Էջմիածնի Հայոց հոգեւոր ճեմարանը գտնվում է Մայրագույն Պատրիարքի եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի անմիջական վերահսկողության եւ վերատեսչության ներքո»: Ճեմարանի կառավարումը վստահված է տեսչին եւ գիտխորհրդին, որոնց, Երեւանի նահանգապետի համաձայնությամբ (հոդ. 1194, 1906-ի խմբագրությամբ), նշանակում է կաթողիկոսը:

Ինչ վերաբերում է վանքի գույքի կառավարմանը, այստեղ կաթողիկոսը վարչական որեւէ լիազորություն չունի, եւ այն ամբողջությամբ հավասար հիմունքներով իրականացնում է Էջմիածնի Սինոդը (հմմտ. հոդ. 1153-ի ծանոթ.):

-Մայրագույն Պատրիարքի գործառույթները իբրեւ Սինոդի նախագահ-

Հայոց Մայրագույն պատրիարքը Սինոդի նիստերը նախագահում է միայն ոչ հոգեւոր բնույթի գործերի քննության ժամանակ (հոդ. 1147): Ընդ որում, այդտեղ արդեն նա չունի որոշիչ ձայնի իրավունք, քանի որ Սինոդն այդ պարագայում գործում է կոլեգիալ, ժողովական սկզբունքով,

եւ հետեւաբար, միայն ձայների հավասարության դեպքում է նրա քվեն դառնում որոշիչ: Բնականաբար, եթե նրա քվեն փոքրամասնությունն է, որոշիչ է դառնում անդամների մեծամասնության ձայնը: Բոլորովին այլ է սկզբունքը զուտ հոգեւոր գործերի քննության դեպքում, երբ Պատրիարքն ունի որոշիչ ձայնի իրավունք: Այդ ժամանակ «նա չի նախագահում Սինոդի նիստը, այլ, քննելով Սինոդի օրագրության մեջ ներկայացված եզրակացությունը, կայացնում է համապատասխան որոշում» (հոդ. 1147):

Որպես Սինոդի նախագահ՝ Պատրիարքն է կայսերական բարձրագույն իշխանության հաստատմանը ներկայացնում Սինոդի յուրաքանչյուր անդամի տեղի համար երկուական թեկնածուների (հոդ. 1140): Հոդ. 1137-ի համաձայն՝ Պատրիարքն իրավունք ունի նաեւ Սինոդի անդամներին շորս ամսով հարկադիր արձակուրդի ուղարկելու, իսկ «երկարատեւ արձակուրդի եւ արտասահման ուղարկելու պարագայում անհրաժեշտ է կայսերական բարձրագույն իշխանության թույլատվությունը» (հոդ. 1137): Ընդ որում, նույն հոդվածի համաձայն՝ միաժամանակ հարկադիր արձակուրդի կարող են ուղարկվել Սինոդի ոչ ավելի, քան երկու անդամներ: Ըստ հոդ. 1143-ի արտահայտած իմաստի՝ ոչ հոգեւոր գործերի առումով էջմիածնի Սինոդը հաշվետու է կառավարական Սենատին ու ներքին գործոց նախարարությանը, որով Ծայրագույն Պատրիարքը, իբրեւ Սինոդի նախագահ, ուղղակիորեն ենթակա է ռուսաց կայսերական բարձրագույն իշխանությանը:

-Ծայրագույն Պատրիարքի գործառույթները
որպես Երեւանի հայրապետական թեմի առաջնորդ-

Երեւանի հայրապետական թեմը ներառում է «Երեւանի, Նախիջեւանի եւ Օրդուբադի նախկին գավառների, նախկին Շուրագելի հատուկ շրջանի եւ Կարսի մարզի եկեղեցիները, ինչպես նաեւ՝ Ղարաբաղի թեմից Տաթեւի մետրոպոլիտոնությունն իր հավատավոր հոտով» (հոդ. 1165): Երեւանի հայրապետական թեմի անմիջական ղեկավարումն իրականացնում է ոչ թե անձամբ Պատրիարքը՝ «սույն թեմի ղեկավարը» (հոդ. 1165), այլ՝ նրա փոխանորդները, որոնք, հոդ. 1165-ի համաձայն, նստում են Երեւանում, Նախիջեւանում, Շուրագելում (Ալեքսանդրապոլ), Տաթեւում եւ Կարսում: Կոնսիստորիայի (թեմի) խորհուրդը գտնվում է Երեւանում, որի նախագահը, նվիրակման հիմունքով, Երեւանի փոխանորդն է՝ իբրեւ այդպիսով

մնացած փոխանորդների մեջ ավագագույնը: Նա է նաեւ թեմի de facto ղեկավարը, չնայած կրում է «առաջնորդական փոխանորդ» կամ «կառավարիչ» տիտղոսը: Ինչպես մնացած փոխանորդների դեպքում, նա նույնպես հաստատվում է Նորին Կայսերական Մեծության Կովկասի փոխարքայի կողմից՝ Ծայրագույն Պատրիարքի ներկայացմամբ:

Ահա կարծես այն ամենը, ինչ կարելի էր ասել Ծայրագույն Պատրիարքի իրավունքների վերաբերյալ՝ նրա ունեցած զանազան գործառույթների համաձայն:

Մի քանի խոսք էլ Ծայրագույն Պատրիարքի այն իրավունքների մասին, որոնք հնարավոր չէ քննարկել վերոնշյալ ենթավերնագրերի համաձայն:

Օրինակ, Ծայրագույն Պատրիարքն իրավունք ունի «Համայն Ռուսիո կայսեր՝ ժառանգական գահին բարձրանալու ժամանակ» ուղարկել Հայոց Եկեղեցու պատվականագույն եկեղեցականներից մեկին՝ «Կայսերական Մեծությանն ամենախոնարհ շնորհավորանքներ փոխանցելու եւ հայցելու Նորին Մեծության բարեհաճությունը՝ անձամբ կամ, անհնարինության դեպքում, պաշտոնական ներկայացուցչի միջոցով ներկա գտնվել թագադրման արարողությանը» (հոդ. 1135):

Նշենք նաեւ, որ Ծայրագույն Պատրիարքի մշտական կեցավայրն է էջմիածնի Մայրավանքը (հոդ. 1136): Ընդ որում, «եթե նա հարկ է համարում բացակայել վանքից ավելի, քան շորս ամիս, ներքին գործոց նախարարության միջոցով թույլտվություն է ստանում կայսերական բարձրագույն իշխանությունից» (անդ): Հակառակ դեպքում, Ծայրագույն Պատրիարքն ազատ է ցանկացած տեղ ցանկացած ժամանակ այցելելու եւ գնալու: «Կառավարական իշխանությանց հետ էջմիածնի Ծայրագույն Պատրիարքի բոլոր հարաբերությունները, որոնք կապված են նրա վարչարարության հետ, կազմակերպվում են անմիջական ու անմիջնորդ կերպով» (հոդ. 23, Учр. Упр. Кавк. Края, 1906-ի խմբագրությունը)²:

Ի վերջո նշենք, որ Ծայրագույն Պատրիարքը կարող է ունենալ շարժական գույք եւ այն օգտագործել սեփական հայեցողությամբ, իսկ կտակել իրավունք ունի միայն աստվածահաճո հաստատությանց օգտին (հոդ. 1218): Հատուկ կտակի բացակայության դեպքում նրա ողջ շարժական

² Учреждение управления Кавказского края, Иллюстрация к уставу оренбургской епархии, 13 վարչական տարածքները՝ Բաքվի, Ելիզավետպոլի, Քուսթայի, Թիֆլիսի, Սեւծովյան, Երեւանի նահանգները, Բաթումի, Դաղստանի, Կարսի, Կուբանի եւ Թերեքի մարզերը եւ Սուլուսի ու Ջաբաթալայի օկրուգները:

ունեցվածքը ճանաչվում է էջմիածնի Մայրավանքի սեփականություն (հոդ. 1218, հմմտ. նաեւ հոդ. 1219): էջմիածնի Սինոդի սահմանամամբ՝ եկեղեցապատկան գումարներից Մայրագույն Պատրիարքի համար նշանակվում է հատուկ ոռճիկ:

3. Իրավունքների սահմանափակում

Ինչքան էլ լայն թվան Հայոց Մայրագույն պատրիարքի իրավասությունները, այնուամենայնիվ, դրանք նաեւ տարբեր սահմանափակումների են ենթակա եկեղեցական որոշ մարմինների կողմից: Դրանք մեծավ մասամբ վերաբերում են ինքնավար կաթողիկոսությունների, Կոստանդնուպոլսի Հայոց Ազգային ժողովի եւ Պատրիարքարանի ու էջմիածնի Սինոդի հետ առնչվող հարցերին: Նախեւառաջ, ո՛չ քահանայագործության, ո՛չ էլ վարչարարության առումներով Մայրագույն Պատրիարքն իրավունք չունի միջամտելու ինքնավար կաթողիկոսությունների ներքին կյանքին: Այս կաթողիկոսությունները de facto անկախ են, եւ միայն de jure են ճանաչում Մայրագույն Պատրիարքի նախամեծարությունը՝ իբրեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ սահմանափակվելով լոկ պաշտոնապես (բայց ոչ պարտադիր) Սուրբ Պատարագի քարոզների եւ աղոթքների ժամանակ նրա անունը հիշատակելով: Ավելին, Թուրքիայի հայոց վարչական-դատական ողջ գործունեությունը կենտրոնացած է Ազգային ժողովի եւ պատրիարքարանի ձեռքում, նույնիսկ թեմակալ առաջնորդների ընտրությունը հաստատում է ոչ թե Ամենայն Հայոց կաթողիկոսը, այլ Պոլսի հայոց պատրիարքը: Զարմանալիորեն Ամենայն Հայոց կաթողիկոսի հաստատմանը ենթակա չեն նաեւ Կոստանդնուպոլսի եւ Երուսաղեմի պատրիարքների, ինչպես նաեւ ինքնավար կաթողիկոսությունների գահակալների ընտրությունները: Ի վերջո, Մայրագույն Պատրիարքի իրավունքներն զգալիորեն սահմանափակվում են էջմիածնի Սինոդով, որն ըստ էության հոգեւոր հարցերում ուսահայոց բարձրագույն գործադիր-դատական մարմինն է: Գործադիր եւ վարչական առումներով Սինոդի լիազորությունները սահմանված են 1141 եւ 1142 հոդվածներում, ուստի ավելորդ ենք համարում այստեղ եւս մեկ անգամ անդրադառնալու դրանց: Կարելու է, սակայն, նշել, որ ուսահայոց թեմերի առաջնորդներն «իրենց թեմերի ընդարձակ, ինչպես նաեւ համառոտ հաշվետվությունները» ներկայացնում են ոչ թե Մայրագույն Պատրիարքին, այլ Սինոդին (հոդ. 1181 եւ 1182): Սինոդի առկայու-

թյամբ Ծայրագույն Պատրիարքի իրավասությունների սահմանափակման ֆոնին զգալիորեն աճում է Սինոդի պրոկուրորի դերը, որը «նշանակվում է կայսերական բարձրագույն հրովարտակով՝ արդարադատության նախարարության ներկայացմամբ եւ ներքին գործոց նախարարության ու Կովկասում Նորին Կայսերական Մեծության փոխարքայի հետ համախորհուրդ» (հոդ. 1151, 1906-ի խմբագրության մեջ): Պրոկուրորը կառավարության կողմից Սինոդում նշանակված վերստուգիչն ու վերահսկողն է եւ, հոդ. 1152-ի համաձայն, ունի դատական ու գործադիր հարցերը, ինչպես նաեւ գրագրությունը վերահսկելու իրավասություն:

Դ. Հայոց Ծայրագույն պատրիարքի արտոնությունները

«Արտոնություններ» արտահայտության մեջ պետք է հասկանալ այն բոլոր արտաքին յուրահատկություններն ու հանգամանքները, որոնք բնորոշ են բացառապես Ծայրագույն Պատրիարքին՝ որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի:

1. Տիտղոսը, որը «հնուց անտի օգտագործվում է Ծայրագույն Պատրիարքների կողմից» (հոդ. 1127)՝ մի կողմից՝ «Նորին Սրբություն», «Նորին Սուրբ Օծություն» եւ «Նորին Վեհափառություն», մյուս կողմից՝ «Կաթողիկոս Ամենայն Հայոց», «Վեհափառ Կաթողիկոս ազգին Հայկազյան», «Սրբազնագույն Պատրիարք», «Ծայրագույն Պատրիարք», «Եպիսկոպոսապետ», «Հայրապետ», «Հովվապետ», «Վեհափառ» եւ «Օծյալ»: Ծայրագույն Պատրիարքի ամբողջական տիտղոսն է՝ «(Այս անուն) ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագույն Պատրիարք համազգական նախամեծար աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի»: Ծայրագույն Պատրիարքը միշտ դիմում է «մենք» դերանունով:

2. Կաթողիկոսական գինանշան՝ Սուրբ Գեղարդով, անձեռակերտ Տերունական Պատկերով, Սուրբ էջմիածնի Մայր Տաճարի մանրակերտով, Արարատ լեռով եւ Նոյեան տապանով եւ «Գառն Աստուծոյ» հաղթական նշանի պատկերով:

3. Կնիք, որը պատկերում է «Գառն Աստուծոյ»-ին, իսկ պատկերի շուրջը լորը՝ Ծայրագույն Պատրիարքի անունը: Դրվում է հայրապետական կոնդակների վրա, այնտեղ, որտեղ սովորաբար կարմիր թանաքով ստորագրում է Ծայրագույն Պատրիարքը:

4. Մուգ գույնի կտորից պատրաստված եւ «Գառն Աստուծոյ» պատկերով քող, որը սովորաբար օգտագործվում է հայրապետական հանդիսավոր թափորների ժամանակ: Անձամբ Պատրիարքի համար այն միայն երկիցս է կիրառելի՝ կաթողիկոսական օժման եւ թաղման հանդիսավոր արարողութեան ժամանակ, երբ դրանով ծածկվում է հայրապետի աճյունը: Քողն ընդհանրապես խորհրդանշում է հրաժարումն այս աշխարհից:

5. Խաչվառ-տարբերանշան՝ մետաքսե կարմիր կտորով, որի վրա պատկերված է Ծայրագույն Պատրիարքի զինանշանը: Խաչվառ-տարբերանշանը նույնպես օգտագործվում է հայրապետական թափորների ժամանակ՝ խորհրդանշելով միութեան եւ հավատավոր հոտի միասնութեան գաղափարը:

6. Գավազան, մեծ եւ փոքր: Մեծն արծաթյա ծաղկյալ գավազան է՝ Ահարոնի գավազանի օրինակով, որը ծածկված է թավշյա մանուշակագույն կտորով, վրան՝ երկգլխանի արծիվ, ճանկերի մեջ՝ Ավետարանի եւ Խաչի պատկերներով: Փոքրը փայտե գավազան է՝ ոսկե գլխով ու ադամանդյա խաչով: Մեծ գավազանը կիրառելի է միայն ծիսակատարությունների ժամանակ, իսկ փոքրը նախատեսված է ամենօրյա գործածութեան համար: Գավազանն ընդհանրապես իշխանութեան խորհրդանիշն է:

7. Կոնքեո՝ քառանկյուն եւ քառակուսիակերպ, խաչի պատկերով կտոր, որը կախվում է կաթողիկոսի գոտկատեղի ձախ կողմից եւ օգտագործվում ծիսակատարութեան ժամանակ: Այն բնորոշ է միայն կաթողիկոսին՝ որպէս հոգեւոր սրի խորհրդանիշ, որով պէտք է զինված լինի եկեղեցու նվիրապետը:

8. Էջմիածնի Մայր Տաճարում՝ Փրկչի Իշման Սուրբ Սեղանի ձախ կողմում է հայրապետական գահը: Մեկ այլ նմանատիպ գահ էլ կա վեհարանի հանդիսությունների սրահում: Գահը խորհրդանշում է հայրապետական իշխանութեան աստվածային ծագումը:

9. Շաթիրներ՝ Ծայրագույն Պատրիարքի հանդիսավոր թիկնապահներ, կարմիր զգեստներով ու հատուկ երկաթապատ գավազաններով, որոնք խորհրդանշում են երկրի վրա ունեցած իշխանությունը: Շաթիրներին ընդհանրապես ընտրում են «էջմիածնի վանքապատկան հայեփից» (հոդ. 1129): Նրանք Ծայրագույն Պատրիարքին ուղեկցում են միշտ եւ ամենուր:

10. Յեղեկներ³ շքեղորեն զարդարված երկու նժույզներ, որոնց սովորաբար տանում են սանձերից բռնած, հայրապետական թափորի ժամանակ՝ անմիջապես Ծայրագույն Պատրիարքի ետեւից: Ինչպես այս նժույզների, այնպես էլ շաթիրների իրավունքը կաթողիկոսին շնորհել են պարսից շահերը:

11. Թափոր, մի քանի եկեղեցականներից բաղկացած խումբ եւ երկու հատուկ սպասավորներ, որոնցից մեկը կրում է հայրապետական գավազանը, մյուսը՝ խաչվառ-տարբերանշանը (հոդ. 1129):

12. Ի վերջո, Հայոց Ծայրագույն պատրիարքի ամենակարեւոր արտոնությունն այն է, որ նրա անունը Սուրբ Պատարագի ժամանակ հիշատակվում է աշխարհի բոլոր հայկական եկեղեցիներում: Ընդ որում, Ռուսաստանում «կաթողիկոս-պատրիարքի անունը հիշատակվում է Համայն Ռուսիո Կայսեր եւ նրա օգոստոսափառ ընտանյաց անունից անմիջապես հետո» (հոդ. 1128):

Ծայրագույն Պատրիարքի զգեստները բոլորովին չեն տարբերվում եպիսկոպոսական հանդերձներից՝ նույն խույրը, նույն շուրջառն ու եմփորոնը. բացառություն է միայն կոնքեռը: Բացի դրանից Ծայրագույն Պատրիարքը նաեւ աջ ձեռքին կրում է ոսկյա խաչանիշ եւ ադամանդակուռ հատուկ մատանի եւ պանակե: Ինչ վերաբերում է նրա վեղարի ադամանդակուռ խաչին, դա Ծայրագույն Պատրիարքի բացառիկ իրավունք չի կարող համարվել, որովհետեւ Ծայրագույն Պատրիարքն այն ստանում է միապետից՝ միայն անձնական գործածության համար:

Ե. ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՏԵՂԱՊԱՀԸ

Հոդ. 1119-ի համաձայն՝ նոր կաթողիկոսի ընտրություններն անցկացվում են գահը թափուր մնալուց մեկ տարի անց: Այնուհետեւ հաստատվում է ընտրությունը, տեղի ունենում օծումը, եւ նոր կաթողիկոսն սկսում է իր գահակալությունը: Սովորաբար գահի թափուր մնալուց մինչեւ նոր կաթողիկոսի գահակալություն տեւում է երկու տարի, ինչն այդքան էլ կարճ ժամանակամիջոց չէ: Ո՛վ է ուրեմն դառնում Հայոց Եկեղեցու ղեկավարն այդ ընթացքում: Այս պաշտոնը վստահվում է Սինոդի ավագագույն անդամին, որին Սինոդը հայտարարում է որպես նախագահ եւ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ:

³ Թուրքերեն yedek, որն իր հնագույն իմաստով նշանակում էր «կցիչ, կցապարան»:

Կաթողիկոսական տեղապահի իրավասուլթյունների մասին պետք է նշել, որ նա ոչ մի դեպքում չի կարող հավակնել Մայրագույն Պատրիարքի ամբողջական իրավասուլթյուններին: Այսպես, օրինակ, տեղապահը զրկված է մյուսոն օրհնելու եւ եպիսկոպոս ձեռնադրելու քահանայապետական իրավունքից (potestas ordinis), վարչական իրավունքի առումով (potestas jurisdictionis) չի կարող որոշումներ կայացնել զուտ հոգեւոր գործերի հարցում (causae mere spirituales): Հոդ. 1148-ը կտրականապես հայտարարում է. «Զուտ հոգեւոր բնույթի հարցերը, որոնց դեպքում Մայրագույն Պատրիարքն ունի որոշիչ ձայն, ոչ մի կերպ չեն կարող լուծվել առանց Պատրիարքի՝ գահի թափուր լինելու ժամանակ: Նմանատիպ հարցերի որոշումը հետաձգվում է մինչեւ նոր Պատրիարքի ընտրուլթյուն»: Տեղապահն իրավունք չունի նաեւ պարգեւաբաշխումներ, պատիժներ ու ներումներ շնորհել հոգեւորականներին, կոնդակներ հրապարակել, ի վերջո, չի կարող նաեւ օգտվել Մայրագույն Պատրիարքին բնորոշ արտոնուլթյուններից: Կարճ ասած, Հայոց Մայրագույն պատրիարքի կարգին բնորոշ իշխանուլթյունը, իրավասուլթյուններն ու գույքը չեն կարող փոխանցվել Սինոդին, «ոչ էլ որեւէ այլ անձի կամ հաստատուլթյան» (հոդ. 1117), հետեւաբար եւ՝ տեղապահին: Այսպիսով պարզ է, որ տեղապահի իրավասուլթյունները բավական համեստ են ու սահմանափակ: Նա կարող է Մայրագույն Պատրիարքին բնորոշ իրավասուլթյուններն ամբողջուլթյամբ իրացնել միայն Սինոդի նիստերին նախագահելով, էջմիածնի Մայրավանքը կառավարելով եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի վարչարարական գործերն ստանձնելով: Նրա պարտականուլթյունների մեջ է նաեւ կաթողիկոսի ընտրուլթյան համար հավաքված Ազգային եկեղեցական ժողովի գումարման ժամանակ ատենապետուլթյունը:

Նույն այս տեղապահը, Սինոդի ավագագույն անդամ լինելու իր նախընթաց հանգամանքով, Մայրագույն Պատրիարքի կենդանուլթյան օրոք իսկ լիիրավ կերպով նախագահում է Սինոդի նիստերին, եթե Մայրագույն Պատրիարքն էջմիածնից բացակայում է ծանր հիվանդուլթյան կամ ճամփորդուլթյան պատճառով (հոդ. 1148):

* * *

Սույն ուսումնասիրուլթյան համար օգտագործված հիմնական աղբյուրներն են՝ Уставы духовных дел иностранных исповеданий (I, т. XI, Св. Зак.), 1896, 1906 (Продолжения), ինչպես նաեւ եկեղեցական ու պե-

տական բնույթի տարբեր իրավական ուղենիշներ: Մասամբ նկատի ենք ունեցել հետևյալ հրատարակությունները՝

1. *Mgr. Malachia Ormanian, L'Eglise arménienne, Paris, 1910:*

2. *Армянские патриархи, «Правительственный вестникъ», № 125, 3, 1895:*

3. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեան, *Հայոց եկեղեցական իրաւունքը, գիրք Բ., Շուշի, 1905–1907:*


4. Գարեգին վարդապետ Յովսէփեան, «Կաթողիկոսական ընտրութիւն եւ օծումն», Ազգագրական հանդէս 1 (1910), էջ 189–200:

Որոշ տեղեկություններ մեզ տրամադրել է Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը՝ 2/15 հոկտեմբերի, 1911 թվակիր նամակով:

Հմտ.՝ Уст. = *Уставы духовных дел иностранных исповеданий* (I, т. XI, Св. Зак.), 1896:

Լեւոն Մելիքսեթ-Բեկով
Օդեսա, 15. XI. 1911





**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԸ.
ԼԵԶՈՒ ԵՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ¹**

Նայ գեղարվեստական վավերագրության արմատները ձգվում են դարերի խորքը: Հնագույն ժամանակներից գեղարվեստական գրականությունը եւ մանավանդ բանահյուսությունը հայտնի է ուղեգրությունն իբրեւ գրական հնարանք: Ճամփորդական նոթերն առավելապես գրառվել են պատմողական բնույթի աշխատություններում եւ նամակներում: Ալեքսանդր Մեծը նամակների ձեւով էր պատմում իր ճամփորդության մասին:

Միջնադարյան, Վերածնունդի եւ հաջորդ ժամանակների հեղինակները, օգտվելով ընձեռած հնարավորություններից, գրել են գեղարվեստական վավերագրության բազմաթիվ էջեր:

Դեռեւս վաղ միջնադարում ստեղծվել է հիշատակարանային գրականություն, որի հեղինակները մի կողմից՝ եղել են իրադարձությունների ականատես, մյուս կողմից՝ ըստ կարելվույն գրի են առել այդ ամենը: Մեզանում հուշագրության սկիզբը համարվում է Եղիշեի պատմությունը: Վարդանանց պատերազմի տարեգրությունը գրական նոր ժանրի՝ պատմական հուշագրության նախօրինակ է՝ իբրեւ ականատեսի գրառում:

Առանձնանալով պատմագրությունից՝ գեղարվեստական վավերագրությունը՝ իբրեւ ինքնուրույն ժանր, անցել է զարգացման երկար ճանապարհ՝ անընդհատ հարստանալով եւ ծավալվելով:

13-րդ դարում Հեթում պատմիչը, լինելով Կիլիկյան Հայաստանի դեսպանը եւ հայկական զորքերի հրամանատարը, իր տեսած 14 երկրների մասին գրել է «Պատմութիւն թաթարաց» տեղեկատու բնույթի երկը: Հատ-

¹* Ստացվել է՝ 18.03.2026, գրախոսվել է՝ 31.03.2026: էլ. հասցե՝ galstyanashot42@aspu.am:

կապես 15–17-րդ դարերում որպես հուշագրություն տեսականներ մեծ տարածում ստացան ուղեգրությունները եւ օրագրությունները²: Ընդ որում, հայ միջնադարյան ուղեգրություններն ունեցել են ճանաչողական նշանակություն, աչքի են ընկել հեղինակների պատմելաոճի որոշակի յուրահատկություններով՝ կապված պատումի հավաստիության, երեւույթի իրական գնահատման հետ եւ այլն:

Այս ժանրի բուն պատմությունը՝ լեզվակառուցման ինքնատիպությամբ, ձեւավորվում եւ արմատանում է 17–18-րդ դդ., երբ երեւան են գալիս Զաքարիա Ազուլեցու, Երեմիա Չելեպի Քյումյուրճյանի, Մինաս պատրիարք Ամադեցու օրագրությունները. հետագայում, բուն պատմագրությունից առանձնացած, գրվում են Սիմեոն կաթողիկոս Երեւանցու եւ Գրիգոր պատրիարք Պասմաջյանի հիշատակարանները, որոնցում տեղ են գտել թե՛ եկեղեցական վավերագրերը, թե՛ հոգեւոր հայրերի թղթերը, կոնդակները, նամակները:

19-րդ դարում հիշատակարանն արդեն ունենում է հիմնավոր եւ հետեւողական առաջընթաց եւ ըստ այդմ ըմբռնվում է որպես առանձին՝ հուշագրության նմուշ (օրինակ՝ Գաբրիել Պատկանյանի «Հիշատակարան», Գեւորգ Զմշկյանի «Իմ հիշատակարանը» գործերը): Նույն արեւելահայ գեղարվեստական վավերագրության լավագույն հուշարձաններից է Խ. Աբովյանի «Դորպատյան օրագրերը», որը գրվել է 1830–1835 թթ.: Անմահ Աբովյանի գրական գործունեության առաջին քայլերում իսկ նկատվում են հիշատակության արժանի իրադարձությունների ներկայացման համարձակ ու հաղթական շեշտեր, որոնցով հեղինակն այս բնագավառում բերում է գրական ուղղության նորություն, վավերագրման նոր ոճ:

Զգալի փոփոխություններ են արձանագրվում նաեւ ժանրի լեզվաոճական եւ պատկերային համակարգերում: Այսպես է նկատում Կ. Դանիելյանը. «Դորպատյան օրագրերում է Աբովյանն առաջին անգամ ստեղծել կյանքի՝ գեղարվեստական մեծ արժեք ունեցող պատկերներ, տվել բնության տպավորիչ նկարագրություններ եւ հոգեբանական սքանչելի վավերացումներ»³:

² Նկատի ունենք Մարտիրոս Երզնկացու, Սարգիս Աբեղայի, Սիմեոն դպիր Լեհացու ընդհանուր՝ «Ուղեգրություն» վերնագրով գործերը եւ Զաքարիա Ազուլեցու «Օրագրություն» երկը:

³ Կ. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Ե., 1961, էջ 205:

Միանգամայն յուրօրինակ ձեւով են կառուցված Խ. Աբովյանի ճամփորդական խորհրդածուխնունները (նոթերը) «Ուղեւորութուն դեպի Անիի ավերակները» գրքում (գրված ռուսերեն), որտեղ հեղինակը վավերագրման նոր՝ փիլիսոփայական դիտանկյունից է մոտենում հայ ժողովրդի պատմության հիմնահարցերին: Անին եղել է հայության հոգեւոր եւ մշակութային զարգացման նշանավոր օրրաններից: Աբովյանը նկարագրում է Անի տանող ճանապարհին ընկած բնակավայրերը, աշխարհագրական տարածքները՝ իմաստավորված ծավալուն մեկնաբանություններով⁴: Վավերագրողը զուգահեռներ է անցկացնում Անիի եւ հին աշխարհի նշանավոր քաղաքների միջև՝ նրա շքեղությունը համեմատելով Շահրազադայի «Հազար ու մի գիշերների» հրաշալիքների հետ: Բացառիկ են նաեւ այն արժեւորումները, որոնք մեծ լուսավորիչը տալիս է Սուրբ Էջմիածնին, որը «հրաշքի նման փրկեց ու պահպանեց հայ ժողովրդին»:

Հայ դասական գրողներից Մ. Թաղիադյանը, Մ. Նալբանդյանը, Պ. Պոռչյանը, Դ. Աղայանը, Բաֆֆին, Շիրվանզադեն շարունակեցին արեւելահայ գեղարվեստական վավերագրության ուղին՝ իրենց հուշագրական երկերում եւ օրագրություններում ներկայացնելով ժամանակի ամբողջական համապատկերը: Հետագա տարիներին Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Ս. Զորյանը, Գ. Մահարին եւ ուրիշներ արվեստագետի լայն չափանիշներով, հեղինակային ինքնօրինակ մոտեցումներով ընդլայնեցին այս ժանրի սահմանները, հանդես եկան ոչ միայն որպես դեպքերի, վճռորոշ անցքերի ու իրադարձությունների ակնատես-վկայողներ, այլեւ գնահատողներ ու մեկնաբանողներ: Վավերագրումը դառնում է ժամանակի իրականության՝ անձնական օրագրության միջոցով արտահայտման փաստ: Դասական հեղինակների՝ այդ ժանրի ստեղծագործությունները նրանց ապրած ժամանակաշրջանի լավագույն վկայություն են, որովհետեւ ամեն մի ճշմարիտ ստեղծագործություն իր ժամանակի համարժեք արտացոլանքն է: Երբեմն հուշագիրները բառացի մեջբերում են ականատեսների նկարագրությունները՝ որպես փաստագրական անփոխարինելի վկայություն. «Ակնատեսներն այսպես են նկարագրում զորավար Անդրանիկի վերջին օրերը, «Հաճախ կխոսեր հայրենիքի մասին, անվերապահ լավատես էր Հայաստանի ապագայի նկատմամբ եւ հաճախ կպատկերացներ

⁴ Աբովյանի եւ իր ուղեկիցների ճամփորդությունը դեպի Անի տեղի է ունեցել 1847 թ. հոկտեմբերի վերջին տասնօրյակին:

դեպի Հայաստան իր վերադարձը, խանդավառված, երջանիկ ու կարոտալիր արտահայտություններ մը կնկարագրեր Հայաստանի լեռներն ու ձորերը, թե որ քաղաքները պիտի երթար, որքան պիտի մնար էջմիածին: Անվերջ ու անվերջ նկարագրություններ ու փափագներ»⁵:

Վ. Պետրոսյանն իրավամբ նկատում է, որ համաշխարհային գրականության «ամենակենսական երակներից մեկը վավերական ուղղությունն է, եւ թող ոչ ոք չկարծի, թե սա երկրորդ կարգի գրականություն է»⁶:

Գիտական գրականության մեջ գեղարվեստական վավերագրության, ինչպես ընդունված է ասել, մետաժանրը հաճախ անվանում են մեմուարային գրականություն, որի մեջ մտնում են հիշատակարանը, հուշագրությունը, ուղեգրությունը եւ օրագրությունը: 20-րդ դարում արեւելահայ գեղարվեստական վավերագրության մեջ բուռն զարգացում է ունենում նաեւ էսսեն:

Հայտնի է, որ հուշագրությունը (Ֆրանս. memoires) ըստ հեղինակի հայեցողության, անցյալի՝ հետաքրքրություն ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողությունն է, որ ունի ժանրային առանձնահատկություն առաջին հերթին գրավոր խոսքի դրսեւորման առումով:

Այդ ժանրը հանդես է բերում տեսակային բազմազանություն՝ ժամանակակիցների հուշային դիմանկարներ, հեղինակի ինքնակենսագրություն, մեծ մարդկանց զավակների, հարազատների պատմածներ, նամակներ եւ այլն:

Թեմատիկ առումով եւս կա տարբերություն. հայտնի են անձնական⁷, թատերական, ֆաղափական, պատրիարխական⁸ հուշեր եւ այլն:

Շատ երեւելիների մասին են գրվել հուշագրական էջեր՝ Ղ. Ալիշան, Խրիմյան Հայրիկ, Կոմիտաս, Հ. Թումանյան, Վ. Տերյան, Ա. Սպենդիարյան, Վազգեն Առաջին կաթողիկոս եւ այլք:

Պ. Սեւակն անդրադարձել է «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» ժողովածուին՝ այն համարելով ավելի քան շնորհակալ գործ: Կոմիտասին

⁵ Ս. ԿԱՊՈՒՏԻՎՅԱՆ, Խճանկար հոգու եւ քարտեզի գույներից, Ե., 1985, էջ 275:

⁶ Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հավասարում բազմաթիվ անհայտներով: Հրապարակախոսություն, վավերագրական արձակ, Ե., 1977, էջ 412:

⁷ ՏԵՆ Զ. ԵՍԱՅԱՆ, Անձնական հուշեր Հովհաննես Թումանյանի մասին («Թումանյանը ժամանակակիցների հուշերում»), Ե., 1969, էջ 150–169:

⁸ ՏԵՆ ԶԱԻՆ ԱՐՔԵՊՍ., Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայություններ, Գահիրէ, 1947:

Ժամանակակիցները պատկերել են նաեւ գրչով, եւ շատերին դա հաջողվել է ոչ պակաս, քան այդ արվել է վրձնով: Հուշագիրները հնարավորութիւն են ունեցել իրենց ըմբռնած-զգացածի թարգմանը լինելու: «Հուշագրութիւնների հեղինակները,-գրում է Պ. Սեւակը,- սրտի թելադրանքով են խոսում իրենց ընկերոջ կամ ուսուցչի մասին: Խոսում են իրենց տեսածից եւ պատմում զգացածն իրենց»: Այս հուշերը համարելով իբրեւ իրական փաստագրութիւն՝ Պ. Սեւակն ընդգծում է, որ Կոմիտասի դիմաքանդակի վրա շարունակում է աշխատել ժամանակը⁹:

«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուում մենք Հ. Թումանյանին տեսնում ենք Թիֆլիսում, էջմիածնում, Դսեղում, Վանում եւ այլուր:

Վանից տեղահան եղած երեխաների մեջ է եղել նաեւ հայտնի դերասանուհի Մայրանուշ Պարոնիկյանը, որի հիշողութիւնները վկայում են «հայոց որբերի հայրիկի» հոգատարութիւնը երեխաների հանդեպ: Անհայր մնացած¹⁰ աղջնակը, տասնհինգ օր շարունակ քայլելով, հասել էր Վաղարշապատ: Ճաքճքած ու վերքերով լի ոտքերով ամեն օր աղբջուրի մոտ ջրի հերթ էր կանգնում: «Մի մարդ մոտեցավ,- հիշում է դերասանուհին,- նայեց... վերքոտ ոտքերիս... Ասացի՝ կոշիկ չունեմ»:

– Մայրիկ ունե՞ս, անուշիկս:

– Ունեմ:

Հետո ինձ թղթե դրամ տվեց ու ասաց.

– Մորդ կասես, որ սրանով քեզ համար չստեր առնի: Վազեցի մերոնց մոտ... Հարցրին ո՞վ էր: Ցույց տվեցի»¹¹: Փոքրիկ Մայրանուշը իհարկե չէր կարող իմանալ, թե ով է այդ մարմնացյալ Բարութիւնը: Իմացավ հետո եւ սրտի խորքում պահեց Հ. Թումանյանի լուսե պատկերը:

Գեղարվեստական վավերագրութիւնը արդեն տեղի ունեցածի գեղարվեստական նկարագրութիւն է այն չափով, ինչ չափով ընկալել է ստեղծագործողը. «Մի տարի՝ աշնանը, Սուրբ Խաչի տոնին, ծնողներս գնացին էջմիածին՝ ուխտի: Վերադարձին, երբ նրանք պատմում էին իրենց տեսածները, երեւաց, որ նրանց վրա մեծ տպավորութիւն էին թողել երեք

⁹ Պ. ՍԵՒԱԿ, Երկեր երեք հատորով, հ. 3, Ե., 1983, էջ 91:

¹⁰ Հորը գրեթե չի հիշում: Արհավիրքի առաջին ժամերին նրան սպանել են բարբարոսները իրենց տան շեմին:

¹¹ Գ. ԱՔԱՋՅԱՆ, ՄԱՅՐԱՆՈՒՇ ՊԱՐՈՆԻԿՅԱՆ, Ե., 2001, էջ 5:

բան՝ էջմիածնի հնագույն վանքը, Ներսիսյան լիճը եւ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը»¹²:

Քաղաքերված օրինակներից նկատելի է, որ գեղարվեստական վավերագրության լեզվատիրույթում ընդամին զուգահեռվում եւ խաչածեւվում են հասարակական միջավայրը, սոցիալական հարաբերությունները, իրական եւ փրիսոփայական ժամանակը:

Քրոնոտոպը՝ իբրեւ տարածաժամանակային միաձուլ չափումների կատեգորիա, զգալիորեն ազդում է մարդու կերպարի ձեւավորման վրա:

Հոգելեզվաբանների կողմից դեռեւս քննարկման նյութ է գեղարվեստական վավերագրության ընդունելի սահմանումը կամ բնորոշումը, այդուհանդերձ վավերագիրներն ընդունում են, որ այս ժանրի էական հատկանիշը ոչ թե մեխանիկորեն տեղափոխվելն է դեպի անցյալ, այլ անցյալը բերել ներկա՝ ապահովելով գիտական ժառանգությունը եւ մշակութային բազմակերպ արժեքների պահպանումը: Ինչպես նշում է Պ. Սեւակը, «վերհիշել անցյալը չի նշանակում տեղափոխվել անցյալ, այլ անցյալը տեղափոխել ներկա»¹³:

Եթե գեղարվեստական ստեղծագործության մեջ հեղինակը դեպքերի ընթացքն ինքն է կառուցում նախապես ուրվագծված ձեւով, ապա հուշագիրը եղած հիշարժան փաստերից է խոսք կառուցում:

Վավերագրության հեղինակները գեղարվեստական իմաստով կերպար չեն ստեղծում, կերտում են դիմանկարներ, որոնք հանդես են գալիս տարբեր երեւույթների, կարեւոր իրողությունների անմիջական կրողներ:

Հայտնի է, որ հուշագրության լեզվատիրույթում դիմանկարն անընդհատ փոփոխվող վիճակների ամբողջություն է՝ կառուցված հեղինակային խոսքի բազմազան շերտերից: Բնորոշների դիմանկարը գեղարվեստական վավերագրության հեղինակները կերտում են նուրբ դիտողականությամբ եւ յուրահատուկ մեթոդով: Ինչպես հայտնի է, «հերոսների (տվյալ դեպքում բնորոշների.— Ս. Գ.) անհատականցումը... սկսվում է նրանց արտաքինի նկարագրությամբ, երբ հեղինակը, օգտագործելով յուրաքանչյուր հերոսի համար յուրահատուկ մակդիրներ ու համեմատություններ, ստեղծում է նրանց դիմանկարը եւ ապա դրան համապատասխան բացահայ-

¹² Ս. ԶՈՐՅԱՆ, Հուշերի գիրք, Ե., 1991, էջ 74:

¹³ Պ. ՍԵՒԱԿ, Անցյալը ներկայացած // «Սովետական գրականություն» ամսագիր, Ե., 1989, 1, էջ 129–133:

տում նրանց ներքինը, որի հետ եւ կապվում են այդ հերոսների վարքագիծը, հոգեբանությունը եւ հետագա գործողությունները»¹⁴։

Գեղարվեստական վավերագրության ժանրում դիմանկարն ամբողջանում է մի քանի սկզբունքներով, որոնցից էականը թերեւս հուշագրի առաջին տպավորությունն է բնորդի հետ. «Առաջին հանդիպումով շատ հաճելի տպավորություն ստացա Թումանյանից... Նրա դեմքը ողողված էր կարծես մի ներքին լույսով։ Փարթամ մազերով, աչքերը խոր ու խոհուն։ Ժպիտը միշտ ներկա էր դեմքին» (Ա. Իսահակյան)¹⁵։

Այս առումով նկատելի են ուշագրավ փաստեր. հուշագիրների մեծ մասը իբրեւ սկիզբ արձանագրում է բնորդի հետ առաջին հանդիպումը, ինչը, որպես կարգ, անմոռանալի տպավորություն է թողնում¹⁶։ Հեղինակների հիշողության հոսքերում բնորդները նախեւառաջ ուրվագծվում է իրենց արտաքին նկարագրով։ «Աբեղյանին առաջին անգամ ի մոտո ծանոթացա եղբորս՝ Արամի տանը... Արտաքինն իսկ այդ պատկառելի գիտնականի պարզ կացուցանում էր, որ անկոտրում կամքի տեր, սկզբունքային մարդ էր»¹⁷։

Դիմանկարներից շատերում գծագրվում է բնորդի դիմապատկերը (պորտրե՝ մարդու պատկերը ուսից վերեւ). «Միջահասակ, հաղթամարմին. հաստատուն ուսերի վրա կրում էր իմաստուն գլուխը։ Լայներես, օվալաձեւ դեմքով, հոռոմեական էր հիշեցնում համառ ծնոտը, իսկ արքեւի ճակատը պատած էր խոր ակոսված կնճիռներով...»¹⁸։

Գրող-գեղագետը ազատ է կերպարների ընտրության հարցում. նա կարող է անհրաժեշտության դեպքում իր ստեղծագործության մեջ ներառել հերոսներ՝ ստեղծելով իրականության առանձին պատկերներ, իսկ գեղարվեստական վավերագրության հեղինակը ազատ չէ այդ ընտրության մեջ։ Նա հնարավորություն ունի կերպարագծելու միայն իր հետ առնչու-

¹⁴ Լ. ԵԶԵՎՅԱՆ, Բաֆֆու ստեղծագործությունների լեզուն եւ ոճը (ըստ պատմավեպերի նյութերի), Ե., 1975, էջ 106։

¹⁵ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1967, էջ 7։

¹⁶ Ա. Ծառուկյանը «Հին երազներ, հին ճամբաներ» հուշագրության մեջ հետեւյալ կերպ է բանաձեւում առաջին հանդիպման տպավորությունը. «Առաջին հանդիպումը կը նմանի նկարիչի մը առաջին գիծերուն։ Գոյները, երանգները, արտայայտութեան նրբութիւնները եւ յատկանշական բոլոր մանրամասնութիւնները կու գան լետոյ, ամբողջացնելու համար դէմք մը, բայց հիմնականը, էականը՝ մատիտի առաջին հարուածներն են, որով կ'ուրուագծուի պատկերը» (էջ 56)։

¹⁷ Հ. ՂԱՆԱԼՅԱՆ, Հուշ-դիմանկարներ, Անմարելի անուններ, Ե., 1987, էջ 17։

¹⁸ Նույն տեղում։

թյուն ունեցած մարդկանց դիմանկարները, այն չափով, ինչքան հեղինակը տեսել, լսել կամ տպավորվել է:

Ինչ վերաբերում է դեպքերի եւ իրադարձությունների օբյեկտիվ եւ սուբյեկտիվ կողմերի համադրմանը կամ որեւէ կողմին նախապավուծյուն տալը, ապա դա երեւում է հայ դասական գրող Ս. Զորյանի հետեւյալ գրառման մեջ. «Հուշերի մեջ բացարձակ օբյեկտիվություն չկա, եւ սուբյեկտիվ մոտեցումը անկասկած զգալի տեղ է բռնում»¹⁹: Այս դեպքում հեղինակը բնորդին տեսնում է իր սուբյեկտիվ ընկալումներով: Համամիտ ենք Վ. Սարոյանի դիտարկմանը, որ հուշագիրը տվյալ պահին ինչ-որ հիշում, զգում է կամ կարող է երեւակայություն նյութ դարձնել ինչ-որ դրվագի հետ կապված, նույնությունամբ չի կարող համադրել իրական դեպքի կամ իրադարձության հետ, քանի որ բազում անտեսանելի դրվագներ ոչ միայն մատչելի են զգայական իմացություն համար, այլեւ տվյալ պահին չեն վերածվում հուզական վիճակների՝ ուրախության, կարեկցանքի, վշտի եւ այլն²⁰:

Հուշագրողը երեւոյթներին նայում է անձնական կյանքի պատուհանից: Նա չի կարող բնագրում ընդգրկել իրադարձությունների եւ երեւոյթների բազմահանգույց շղթաներ: Կարելոր է, թե հեղինակը իրականության ո՞ր կողմն է նկատում, ինչպէս է մշակում եղած փաստերը եւ ինչպէս է գնահատում արժեքների բազմակերպությունը՝ հիմք ընդունելով սեփական աշխարհայացքը եւ համոզմունքների ներդաշնակությունը:

Հուշագրության գիտական պրոբլեմի մշակման ուղղությունները բազմազան են:

Ժամանակակից լեզվաբանական ուղղությունների մեջ առաջնային նշանակություն ունի գեղարվեստական վավերագրության բնագրերի հոգելեզվաբանական հիմքերի ուսումնասիրումը, որովհետեւ հետազոտության կիզակետում մարդ-անհատականության լեզվական իրացումն է: Լեզվաբանական գրականության մեջ առաջադիր խնդրի որոշ տեսակներ (հուշագրական եւ ինքնակենսագրական արձակ) երբեմն անվանում են լեզվաբանական անձնաբանություն²¹: Քանի որ բնորդը իր մտքերի, պատկերացումների եւ հուզական ապրումների, ինքնատիպ վարքի, անհատական տիպաբանական առանձնահատկություններով դրսեւորված անձ է,

¹⁹ Ս. ԶՈՐՅԱՆ, Հուշերի գիրք, Ե., 1991, էջ 7:

²⁰ Վ. ՍԱՐՈՅԱՆ, Հնարի երկեր 4 հատորով, հ. 4, Ե., 1991, էջ 396 :

²¹ Տէմ Ե. НЕРОЗНАК, Лингвистическая персоналогия: к определению статуса Дисциплины // Язык, Поэтика, Перевод, М., 1996, էջ 112–116:

հետեւաբար հոգելեզվաբանության տեսանկյունից անձը թիրախավորվում է ամենատարբեր ընդգրկումներով ու բնորոշումներով: Յուրաքանչյուր անձ ցիալական էակ է, ունի խմբային պատկանելություն եւ միմյանցից տարբեր դերակատարումներ: Նա ժամանակաշրջան է փոխանցում նոր մտածելակերպ՝ տրամաբանության, խոսքի մշակույթի գեղարվեստական հանդերձավորման առումով:

Մտապահման եւ վերարտադրման գործընթացում հիշողության մեջ ամրագրված նյութը հեղինակը սովորաբար որոշակի որակական փոփոխությունների է ենթարկում՝ աներկբա ներառելով իր հեղինակային եսի քարտեզը: Ժամանակակից մարդու համար անցյալը, ներկան եւ ապագան կապող գլխավոր օղակը սեփական եսն է: Հատկանշական է հայ գրող Ս. Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» երկից մեջբերումը. «Թող ների ինձ ընթերցողը, եթե գրքում հաճախ հանդիպի անձնական դերանվան առաջին դեմքի հոլովումներին՝ ես, ինձ, ինձնից, ինձնով եւ այլն: Գիտեմ, որ ինչքան էլ ջանամ խուսափել դրանցից ու եղածի աննշան մասը նկարագրեմ, դարձյալ պատմելիքիս այս կամ այն կտորը կստանա ինքնագովության շեշտեր... Այսպես կլինի, որովհետեւ հանգամանքների բերումով դեպքերն ու հանդիպումները զարգացել են իմ հայրենիքից եկած հրավիրյալիս շուրջը»²²:

Հուշերի, ուղեգրական նոթերի, օրագրերի գրառումը կամ լեզվակառուցումը իրապես կապված է մտածական բարդ գործընթացների հետ: Անհրաժեշտ է պահպանել վերարտադրվող իրադարձությունների բովանդակությունը, դրանց հաջորդայնությունը, պատճառահետեւանքային աղերսները: Հուշային գրառումները պետք է լինեն ոչ միայն անկեղծ, այլեւ խիստ համոզիչ: Դրանք պետք է դառնան գիտելիք եւ անհատին ուղղորդող գրույթներ:

Իրական կյանքում կան հուշեր, երբ հեղինակներն անմիջապես չեն մասնակցել իրողություններին, այլ ուրիշների պատմածով փորձում են շատ թե քիչ նույնականացնել առկա դեպքերն ու իրողությունները՝ եղածին ավելացնելով նոր բացահայտումներ:

Տարբեր են նաեւ հիշողության տիպերը: Մարդու կյանքի պահանջմունքները, մասնագիտական գործունեության ձևերը պայմանավորում են հիշողության այս կամ այն տիպի ավել կամ պակաս չափով արտահայտ-

²² Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ, Քարավանները դեռ քայլում են, Ե., 1973, էջ 12:

ված առանձնահատկություններ: Հիշողության ակնառու-պատկերավոր տիպը ավելի հաճախ հանդիպում է նկարիչների հուշերում եւ նամակներում (Փ. Թերլեմեզյանի «Կյանքիս հուշերը» գիրքը, Ե., 2017, Արշիլ Գորկի, Նամակներ, Ե., 2005) բառային-վերացական տիպը՝ տեսաբան գիտնականների մոտ (Վ. Հարությունյանի «Աշխարհի ճամփաներով» երկմաս հուշագրությունը, Ե., 2000, Ա. Սարգսյանի «Հազար ու մեկ օր եւս...» հուշապատումը, Ե., 2010) եւ այլն:

Հարկ է ընդգծել, որ գեղարվեստական վավերագրության նյութի իրացման գործընթացում առավել կարեւորություն է տրվում լեզվի նկարագրական տարրերին: Դեռ անցյալում (VIII դ.) արդեն եվրոպական ճարտասանության մեջ զատորոշվում էին նկարագրական տեքստերի տարաբնույթ կաղապարներ՝ ամբողջական նկարագրության, ամբողջի մի մասի նկարագրության, տեղանքի եւ արտաքին հատկանիշների նկարագրության (նյութը, ձևը), ներքին միջուկի նկարագրության եւ այլն:

Գեղարվեստական-վավերագրական խոսքի վարպետները բնագրային նկարագրության մեջ ելնում են տարբեր հանգամանքներից: Նախ՝ կարեւոր է նկարագրվող օբյեկտը. դիմանկար է, թե՛ բնանկար, շնչավոր առարկա է, թե՛ որեւէ իրադարձություն եւ այլն: Երկրորդ՝ դեպքերն ընդհատումով են ներկայացվում, թե՛ ամբողջական (շարունակական հուշափաստերով): Եվ վերջապես կարեւոր են նաեւ նկարագրության նպատակը եւ դրանցում տեքստի հեղինակի մասնակցության աստիճանը: Որպես կարգ՝ մեմոարներում ունենում ենք փաստագրական եւ ստեղծագործական միաձուլված նկարագրություն՝ գեղարվեստական, գեղագիտական եւ զգացմունքային տարրերով:

Կառուցվածքային հնար է նամակի կամ երկտողի՝ որպես երկխոսության յուրահատուկ տեսակների գործածությունը գեղարվեստական վավերագրության բնագրում (նամակը օրագրության մեջ, երկտողը հուշագրության մեջ): Նամակը եւ երկտողը լրացնում, ամբողջացնում են խոսքաշարը, ի հայտ են բերում հեղինակի լեզվամտածողությունը, ցուցադրում խոսքի կառուցվածքը: Պրոֆ. Յու. Ավետիսյանը նշում է, որ պատկերավորման ու արտահայտչական միջոցները, որոնք ինքնաբերաբար եւ անկեղծ մղումով հայտնվում են նամակներում, լեզուն դարձնում են տպավորիչ ու բանաստեղծական²³:

²³ Յու. Ավետիսյան, Արեւմտահայ բանաստեղծության լեզուն, Ե., 2002, էջ 211:

Նամակաները, գործածվելով գեղարվեստական վավերագրության լեզվական տիրույթում, դառնում են այդ ժանրի կառուցվածքային տարրեր: Վ. Տերյանին նվիրված հուշերում հաճախ են մեջբերվում նամակից հատվածներ, օրինակ՝ «Նաիրիի ցավով էր այրվում ու նրա գալիքով մտահոգվում: «Դուք երեւակայել չեք կարող, թե ինչպես է անցնում իմ կյանքը, ոչ թե անցնում է, այլ այրվում մի ներքին դառը կրակով, եւ ես անզոր եմ այդ կրակի դեմ եւ անօգնական»: (էսպես էր գրում 1916 թվի նամակներից մեկում)»²⁴:

Բնագրային այս դրսեւորումները տեքստի ոճաբանության մեջ անվանում են տեխաւր տեխաում, որի դեպքում գործ ենք ունենում միջտեխաւր առնչությունների հետ²⁵: Տվյալ դեպքում նամակը գեղարվեստական վավերագրության մեջ ունի գեղարվեստական ամբողջական համակարգի նշանակություն եւ որպես լեզվական որակ՝ ընկալվում է բնագրի լեզվաոճական հատկանիշներով:

Ժանրի բնութագրական ցուցիչներից է հասկացույթների գործածությունը: Ժամանակակից ճանաչողական լեզվաբանության հիմնահարցերից մեկը տիպաբանական հասկացույթների իրացումն է: Հասկացույթը մտքի կառուցվածքային միավոր է, որ ամրագրված է ուսումնասիրվող հուշագրության լեզվատիրույթում: Հասկացույթի կարեւոր բաղադրիչներից մեկը բառի իմացական հիշողությունն է, լեզվական այդ նշանի իմաստային բնութագրությունը, որը կապվում է բառի բառային նշանակության եւ լեզուն կրողների հոգեւոր արժեհամակարգի հետ: Այս առումով հուշերում ուշագրավ է հուշ, հիշողություն, հանդիպում, ծանոթություն հասկացույթների գործածությունը: Բնագրերում առանձնանում են բառափնջեր, որոնք բնութագրում են առկա իրավիճակն ու բնորոշներին: Դ. Ալիշանին նվիրված հուշերից բառային մերձիմաստ շղթաներ ենք զատել: Այստեղ շատ են կրոնական ըմբռնումները: Գաղտնիք չէ, որ բառապաշարի կրոնակեղեցական բառաշերտը մյուսների համեմատությամբ ավանդապահ է եւ կայուն: Մեծապես գործածվում են ծիսական եւ կրոնական գրքերի անվանումներ՝ Ս. Գիրք, Ավետարան, Մաշտոց, Սաղմոսարան, Մեկնութիւնք, Ճաշոց եւ այլն: Կիրառվել են նաեւ այլ արտահայտություններ՝ Աս-

²⁴ Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1964, էջ 68:

²⁵ Տե՛ս А. Горшков, Русская стилистика. Стилистика текста и функциональная стилистика, М., 2006, էջ 8:

տուժո տաճար, Աստվածամայր, Բրիտանոսախմոր, կրոնակից, ժամասացություն, հաշվելության պատկեր, Համբարձումն ներկայացնող նկար, սրբության սրբոց «Ինքն էր սրբությունն սրբոցի առաջին երկրպագուն» եւ այլն: Օգտագործված են «Մերութիւն յոյժ ապականէ զմարդ» առաքյալի խոսքերը եւ «Բարութիւնն արէք ձեզ ատողներին» Քրիստոսի պատվիրանը²⁶:

Ըստ վերլուծական հոգեբանության հիմնադիր Կ. Յունզի՝ հուշագրությունը շարադրելիս դուրս են լողում մոր եւ հոր մասին մտավոր պատկերացումներ, որոնք մարդկային հոգեկերտվածքի եւ փոխհարաբերություններին բնորոշ արքետիպեր են: Վերջիններս հիշողություններ են, որոնք ինչ-որ ժամանակ ձեւավորվել են, բայց հետագայում ճնշվել են կամ մոռացվել²⁷:

Այսպիսով՝ քննելով գեղարվեստական վավերագրության լեզվակառուցվածքային դաշտը՝ նկատում ենք տիպաբանական հետեւյալ նշանների առկայություն՝

ա. բովանդակային՝

1. անցյալի իրականության պատկերում,
2. հասարակական-պատմական-գրական կյանքի պատկերում,
3. փաստագրական եւ գեղարվեստական տարրերի ընդգրկում,
4. հեղինակի կենսապատում (ինքնակենսագրական տարրեր, կյանքի մանրամասներ):

բ. ձեւակառուցվածքային՝

1. արձանագրային կառուցման սկզբունք,
2. տեղեկատու բնույթ, օրվա, ամսվա, տարեթվի նշում,
3. դիմանկարի եւ բնանկարի կերտում,
4. պատմողական եւ նկարագրական խոսքի դրսեւորում,
5. արքետիպների եւ հասկացությունների գործածություն:

Հուշագրության մի հատկությունն էւս, որը հետաքրքրական նշանակություն ունի: Մասնագետները նշում են, որ հուշեր գրելը այսպես կոչված «թերապեւտիկ» ազդեցություն կարող է ունենալ: Վ. Ալազանը հիվանդության ծանր շրջանում հոգենյարդաբան պրոֆ. Գրոյի խորհրդով զբաղվել է հուշագրությամբ, որը թուլացրել է պրկված նյարդերը, առողջությունն պարգեւել նրան²⁸:

²⁶ Տէս Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1974:

²⁷ Տէս Կ. Юнг, Архетипы и коллективное бессознательное, философия, М., 2019, էջ 55:

²⁸ Սա արտամղման երեւույթ է, որն ըստ Զ. Ֆրոյդի՝ եսի (էգոյի) պաշտպանական մեխանիզմներից է, որի շնորհիվ գիտակցության ոլորտից ենթագիտակցության ոլորտ են մղվում

Կարծում ենք՝ շատ ուսանելի բան կա հուշագրողի՝ մարդուն ճանաչելու եւ ուսումնասիրելու մեթոդի մեջ: Գեղարվեստական վավերագրության հեղինակների հուշագրական հոսքերում նկատելի են եւ՛ բնորդի համառոտ կենսապատումի, եւ՛ անձնական կյանքի փաստերի, տարբեր հանդիպումների դրվագների մանրամասներ: Օրինակ՝ հուշագրական բնագրերում ստեղծված «Ամենայն հայոց բանաստեղծ» եւ «Հայոց որբերի հայրիկ» պատվանունները այն եզակի անվանումներից են, որոնք ձեւավորման օրվանից սկսած մինչ մեր ժամանակները եղել եւ մնում են ամենասիրելիներից, եւ գրեթե չկա որեւէ հայ մարդ, ում ծանոթ չլինեն այս շրջաստվածներն ու այն կրող բանաստեղծը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Գեղարվեստական վավերագրություն, հուշագրություն, օրագրություն, ուղեգրություն, հիշատակարան, լեզվակառուցվածք, դիմանկար, քրոնոտոպ, արքեսիպ, հոգեկեզվարանություն, միջտեքստայնություն:

РЕЗЮМЕ


Статья посвящена лингвистическим и структурным особенностям жанра художественной документалистики в армянской литературе. Прослеживается историческая эволюция жанра – от средневековых памятных записей (хишата-каранов) до мемуаров и дневников XIX–XX веков. Рассматривается синтез документальных и художественных элементов, в котором автор выступает не только свидетелем, но и интерпретатором исторических событий. Анализируются теоретические категории хронотопа, архетипа и психолингвистических основ автобиографической прозы. Особое внимание уделяется структурной роли эпистолярия и методам построения литературного портрета на основе субъективного авторского восприятия. Делается вывод о том, что художественная доку-

հագեցած բովանդակություններ, հիշողություններ եւ այլն: Ֆրոյդը համարում է, որ արտամղված մտքերը չեն կորցնում իրենց ակտիվությունը անգիտակցականում, եւ դրանց պոռթկման կանխարգելման համար պահանջվում է հոգեկան էներգիայի մշտական ծախս:

менталистика служит связующим звеном между прошлым и настоящим, способствуя сохранению культурного наследия.

SUMMARY

The article examines the linguistic and structural characteristics of the genre of artistic documentation in Armenian literature. The author traces the historical development of the genre from medieval colophons and travelogues to the 19th–20th century memoirs and diaries. The study highlights the synthesis of factual and aesthetic elements, where the author acts not only as a witness but also as an interpreter of reality. Key theoretical concepts such as chronotope, archetypes, and psycholinguistic foundations of autobiographical prose are analyzed. Special attention is given to the structural role of letters and the artistic techniques used in creating literary portraits based on subjective perception. The author concludes that artistic documentation serves as a vital link between the past and the present, ensuring the preservation of cultural values.



ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Արխիվի եւ թանգարանների տնօրեն

**ՎՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՅԵՏՈ
ՄԱՅՐ ԱԹՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԵՒ ՎԱՏԻԿԱՆԻ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1945–1954 ԹԹ.)**

Սկիզբը՝ թիվ ԺԲ. 2025 թ., Ա., Բ. 2026 թ.

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբան Տ. Դերենիկ եպիսկոպոսը, հավատարիմ Տ. Տ. Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Տ. Տ. Գարեգին Ա. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի խոհական ու ազգաշահ առաքելության միաբան ու համերաշխ գործակցությանը, իր «Թուղթ հերքման» գրքուկով լիովին արտահայտում ու իրագործում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գիծը՝ Վատիկանի եւ վատիկանյան քաղաքականության միջոցով առաջնորդվող կարգինալ Աղաջանյանի վերաբերմամբ: Զմտնելով կրոնական «ընդունայն» վեճերի մեջ՝ Տ. Դերենիկ եպիսկոպոսը, «յանուն ճշմարտության եւ ի լուսաբանության մտքերու», շարադրում է իր պատասխանը, քանի որ կարգինալ Աղաջանյանի հովվական թուղթը ներկայանում էր որպես «պատմական խեղաթիւրումներով, Հայց. Ս. Եկեղեցին ու կղերը անուանարկող, պապությունը ջատագովելու համար կեղծիքն ու սխալը թմբկահարող ու այդպիսով հայ հաւատացեալ ժողովուրդին մէջ շփոթութիւն եւ խռովութիւն սերմանող եւ ապսպրանքով գրուած թուղթ մը»¹: Ավելին, Տ. Դերենիկ եպիսկոպոսը նշում է նաեւ, որ այդուհանդերձ լավագույնը պիտի համարեր լուելն ու շանդրադառնալն այդ «Հովուական թուղթ»-ին, մանավանդ որ «Հասկ» ու «Սիոն» պաշտոնաթերթերն արձագանքել էին՝ պատշաճ պատասխաններով, սակայն երբ «Զերիններէն ոմանք փոխանակ զգաստանալու, ճշմարտութիւնը տեսնելու եւ Զեր թուղթին սխալներն ու խեղաթիւրումները դատապարտելու, վերստին կը ջատագովեն ու կը փառաբանեն զայն ու ԱԻԵՏԻՔԻ

¹ «Թուղթ հերքման», էջ 4:

մէջ կամ այլ ուրեք կ'աղմկեն հրապարակը»² հարկադրված ինքն էլ իր կարգին է պատասխանում:

Տ. Դերենիկ եպիսկոպոսն իր գրքույկով անդրադառնում է «Հովուական թուղթ»-ի հիշատակած տիտղոսին, կոչումին ու անվանումին, մի շարք մտքերի ու ձեւակերպումների՝ դրանք վերլուծելով եւ աստվածաբանորեն ու պատմագիտորեն հերքելով: Եւ դիմելով կարդինալ Աղաջանյանին՝ գրում է. «Դուք Ձեր գրութեամբ փոխանակ լուսաւորութիւն մը» բերելու, աւելի կը պղտորէք խաղաղ մտքերը եւ պատճառ կը հանդիսանաք անսիրելութեան եւ անհասկացողութեան Ձեր «աղիտաբեր նախապաշարումներով: Աւելի լաւ պիտի չըլլար եթէ ասոնց տեղ սիրոյ, հաւատքի եւ ճշմարտութեան պատգամները տայիք Ձեր ժողովուրդին»³:

Տ. Դերենիկ եպիսկոպոսը խոսելով Վատիկանի եւ Հռոմեակաթոլիկ Եկեղեցու պառակտիչ ընթացքի եւ «մի հօտ եւ մի հովիւ» Տերունի պատգամի մասին՝ ի մասնավորի նշում է, որ Հռոմեակաթոլիկ Եկեղեցին, իր պատմութեան ընթացքում, ոչ մի ժամանակ չի ձգտել բուն միութեան, քանզի ««մի հօտ եւ մի հովիւ» ըսելով հասկցած է պապական գերիշխանութիւնը բոլոր եկեղեցիներու վրայ»: Իսկ երբ չի կարողացել իր այդ «մենատիրական եւ փառամոլ ձգտումները» կյանքի կոչել՝ Հռոմեակաթոլիկ Եկեղեցին, Վատիկանի առաջնորդութեամբ, դիմել է «բռնութեան, հարստահարութեան, ստորերկրեայ ամէն տեսակ գործունէութեան»: Եւ այժմ, երբ քրիստոնեական Եկեղեցիները տարբեր ճանապարհներով ու համաժողովներով ձգտում են առավել մերձենալ՝ նպատակ ունենալով «Միութիւն, Սէր եւ Եղբայրական յարաբերութիւն ստեղծել քրիստոնեայ Եկեղեցիներու եւ ժողովուրդներու միջեւ, առանց դաւանական եւ ցեղային խտրութեան»⁴, Հռոմեակաթոլիկ Եկեղեցին է, որ մերժում է մասնակցել այդ ամենին: Ուստի, արդարորեն եզրակացնում է Տ. Դերենիկ եպիսկոպոսը, «ամենէն կարեւոր հերձուածը, զոր Մի, ... Առաքելական եւ Կաթոլիկէ Եկեղեցին ունի, Հռովմի Պապական Եկեղեցւոյ հերձուածն է: Աշխարհի քրիստոնեաները այսօր կը հաւատան թէ շատ հեռու չէ այն օրը, երբ բոլոր քրիստոնեայ Եկեղեցիներ միութիւն մը կրնան կազմել ու այսպիսով վերջ կը գտնեն բաժանումներն ու հերձուածները: Մեծագոյն հեր-

² Նույն տեղում, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 23–24:

⁴ Նույն տեղում, էջ 31:

ձուածը, որ պիտի մնայ սակայն, Հռովմէական Եկեղեցին է. ոչ մէկ քրիստոնեայ, որ լատին չէ, պիտի պնդէ ասոր հակառակը»⁵:

Անդրադառնալով կարգինալի թղթի «Կաթողիկէութենէ բաժանումէն եկած վնասները» հատվածին՝ Տ. Դերենիկ եպիսկոպոսը շեշտում է, որ հայ ժողովուրդը չի բաժանվել Քրիստոսի Ընդհանրական Սուրբ Եկեղեցուց, ընդհակառակը, «անոր մէջ են եւ անոր մէջ ալ կը մնան»: Իսկ իրականում բաժանվողները հենց հայ կաթողիկներն են. «Դուք՝ Հռովմէականներդ, բաժնուեցաք հայ ամբողջութենէն, հայ հաւատքէն, Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցիէն, ինչպէս նաեւ Կաթողիկէ Ընդհանուր Եկեղեցիէն»⁶: Եւ այդ բաժանմամբ ու Հռոմի պապին ենթարկվելով՝ հայ կաթողիկները կատարեցին պապի հրամաններն ու այդպիսով բաժանում՝ հերձված առաջ բերեցին հայ ժողովրդի ծոցում՝ իր բազում ու ծանր վնասներով: Մինչդեռ, ինչպես փաստում է Տ. Դերենիկ եպիսկոպոսը, Հայոց Եկեղեցու «հարակեղրոն կազմակերպութիւնը շատ օգտակար եղաւ Հայութեան, որովհետեւ այդ կերպով ան հաւատարիմ մնաց առաջին դարերու համաքրիստոնէական ուղղափառ դաւանութեան եւ ստեղծեց ինքնուրոյն եկեղեցական մշակոյթ եւ ծէս, ինչ որ պատճառ եղաւ որ ան խորապէս առինքն է հայ ժողովուրդի հոգին եւ ինքն իսկ զգենու ազգային ինքնատիպ դրոշմ»⁷: Իսկ ի պատասխան կարգինալի այն պնդմանը՝ «յարո՞ւմով եւ հպատակութեամբ Պետրոս Առաքելապետի Աթոռին ... այսօր մեր Ազգին վիճակը, նաեւ քաղաքականապէս որչա՞փ տարբեր պիտի ըլլար ի լաւագոյնս», Տ. Դերենիկ եպիսկոպոսը վճռական կերպով գրում է, որ միշտ էլ Արեւմուտքի խոստումները «քաղաքականապէս» մեծ, ծանր, երբեմն նաեւ կործանարար վնաս են բերել հայ ժողովրդին. «Այս է պատմական իրողութիւնը. մինչ Զեր Սրբազնութիւնը հակառակը կը պատգամէ իր Հովուական թուղթով»⁸: Արդարեւ, երբ մերօրյա իրականության ոչ հեռավոր ներկայից հայացք ենք գցում այդ պատմական անցյալին՝ պատմական դասը նույնն է. հակառակ, որ այսօր նույն Արեւմուտքի հետ առկա են թե՛ միջպետական, թե՛ եկեղեցական ջերմ ու սերտ հարաբերություններ, հայ ժողովուրդն իր պետութեամբ եւ Եկեղեցով նույն Արեւմուտքից շարունակում է կրել մեծ ու ծանր վնասներ...

⁵ Նույն տեղում, էջ 31:

⁶ Նույն տեղում, էջ 37:

⁷ Նույն տեղում, էջ 40:

⁸ Նույն տեղում, էջ 43:

Եւ իր ընդարձակ պատասխանին որպէս վերջաբան՝ Տ. Դերենիկ եպիսկոպոսը գրում է, որ կարդինալ Աղաջանյանի թուղթը Հայոց Եկեղեցու դեմ մասնավոր դիտավորութեամբ է գրվել՝ ըստ սովորութեան Լատին Եկեղեցու պապերի: Կարդինալի թուղթը ոչ թե սիրո ու միութեան հրավեր է, այլ առավել ատելութուն, երկպառակութուն սերմանող շրջաբերական. «Կը ցաւինք յիշելու որ Ձեր Կարդինալի աստիճան ստացումէն ետք Ձեր ԱԻՆ-ՏԻՔը իր Մատեան գունդը հանած է Հայոց Եկեղեցուց եւ անոր բարեպաշտ հաւատացեալներուն դէմ: Հայոց Եկեղեցին դարերու մշուշին եւ անստուգութեանց մէջ դիմակայել է բիւրաւոր Մատեան գունդերու – կրօնական եւ քաղաքական, – չէ յաղթահարուեր եւ չէ դաւաճաներ իր աստուածային սկզբունքներուն, սրբազան հաւատքին, իւրայատուկ դաւանութեան եւ ծէսին, այլ անյողդող շարունակեր է իր գոյութիւնը, որովհետեւ Աստուծոյ զօրութիւնը կը բնակի Հայուն արիւնով ներկուած այդ սրբազնասուրբ հաստատութեան մէջ»⁹: Եւ, վերջապէս, Տ. Դերենիկ եպիսկոպոսը կոչով դիմում է կարդինալ Աղաջանյանին՝ ասելով. «Եթէ կ'ուզէք Հայ-Հռովմէականներու պատմութեան մէջ անուն եւ յիշատակ թողուլ, վերադարձէք ճշմարիտ հաւատքին, Կաթողիկէ եւ Առաքելական Եկեղեցուց դաւանութեան, հայ Մայրենի Եկեղեցուց ծոցը, ինչպէս ըրին Խորէն Նարպէյ, Գաբրիէլ Այվազեան, Մաղաքիա Օրմանեան եւ ուրիշ նախկին կաթողիկէ եկեղեցականներ»¹⁰:

Տեղին է այստեղ հիշել Տ. Զավեն ավագ քահանա Արզումանյանի «Ազգապատում»-ի հետեւյալ վկայութիւնը. «Յաճախ յանդուգն, Դերենիկ եպիսկոպոս, որպէս նախանձախնդիր ջատագովը Հայաստանեայց Մայր Եկեղեցուց, փաստացի տուեալներով ի կարգ հրաւիրած է Հայ Կաթողիկէ Եկեղեցուց ղեկավարները, իրենց հասկցնելով որ Հայ Եկեղեցին սեփականութիւնն է հայ ժողովուրդին, մինչդեռ իրենք վերջին հաշուով դարձած են մասն եւ բաժինը Հռովմէական Եկեղեցուց»¹¹:

Նշենք, որ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլադյանի «Թուղթ հերքման» աշխատութիւնը նույն տարում՝ 1951 թ., վերահրատարակվում է եւս հինգ անգամ: Աշխատութիւնը թարգմանվում է նաեւ անգլերէն ու ֆրանսէ-

⁹ Նույն տեղում, էջ 51:

¹⁰ Նույն տեղում, էջ 41:

¹¹ ԴՈՎՏ. Տ. ԶԱՒԷՆ ԱՒ. ՔԶՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ, «Ազգապատում», հտ. Դ., գիրք Բ. (1930–1955), նիւ Եորք, 1997, էջ 276:

րեն. անգլերեն թարգմանությունը հրատարակվում է 1953 թ., իսկ ֆրանսերենը՝ 1954 թ.¹²:

«Թուղթ հերքման» գրքույկը մեծ ընդունելության է արժանանում՝ իր բուն նպատակին ծառայելով, որ է՝ կարդինալ Աղաջանյանի «Թուղթին դիմաց ճշմարտությունը դնել»։ Այդ մեծ հաջողությունը, սակայն, հարուցում է կաթոլիկ համայնքի որոշ անձերի ցասումը։ Անձեր, որոնք, ինչպես նշում է Տ. Դերենիկ եպիսկոպոսը, կարդինալի համախոհներն են եւ վերջիններիս «ուղիղ ճամբուն հետեւողները»։ Անձեր, որոնք «պէսպէս միջոցներով պիտի ջանան Հայոց Սուրբ Եկեղեցին կապել պապի գերիշխանութեան, պիտի աղարտեն մեր մատենագիրները, ձեռագիրները, երկպառակութիւն պիտի յառաջացնեն հայ հաւատացեալներու մէջ, ինքնահնար շաղակրատութեամբ եւ Աւետարանի ու մատենագիրներու խօսքերուն ըստ քմաց մեկնաբանութեամբ»¹³:

Ահա եւ այդ անձերից մեկը՝ Պետրոս Պարենտյանը, 1951 թ. հանդես է գալիս ««Թուղթ հերքման» թէ եղծումն ճշմարտութեան» հոդվածով, որը տպագրվում է Բեյրութում լույս տեսնող Հայ կաթողիկէ եկեղեցու «Մասիս» շաբաթաթերթում¹⁴: Խնդրո հոդվածը՝ նույն խորագրով եւ նույն տարում, հրատարակվում է նաեւ որպէս առանձին գիրք¹⁵: Թեեւ ըստ «Բազմալէպ»-ի համոզման՝ Պ. Պարենտյանի աշխատությունը «ջախջախիչ պատասխան» է՝ տրված Տ. Դերենիկ եպիսկոպոսի «Թուղթ հերքման»-ը¹⁶, սակայն այդ գործն իրականում այն է, ինչ վերը հավաստյալ բնութագրում է Տ. Դերենիկ եպիսկոպոսը։ Այդ գրքից մի քանի քաղվածքն իսկ բավարար է այդ տեսակետը փաստելու համար՝

«Չենք զարմանար եթէ Տէղլինկէր եւ Միշոյ, Գաբրիէլ Վ. Այվազեան, Խորէն Վ. Նարպէյ եւ Հակահաստունեան հերձուածողներ գրեր են ընդդէմ Հռոմի Քահանայապետին եւ Կաթողիկէ Եկեղեցոյ, քանի որ անոնք հետեալներ ու ապստամբներ էին. բնականաբար պիտի ջանային իրենց հաւատուրացութիւնը արդարացնելու ճիգեր կատարել։ Զարմանալին այն է

¹² Տէս ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ, «Թուղթ միութեան. Յովհաննէս ԻԳ. Պապի առաջադրած տիեզերական ժողովը եւ եկեղեցիներու միութեան հարցը», Պէյրութ, 1960, էջ 92:

¹³ «Թուղթ հերքման», էջ 50:

¹⁴ Տէս «Մասիս» շաբաթաթերթ, 1951, թիւ 23–25, թիւ 27–36:

¹⁵ Տէս Պ. ՊԱՐԵՆՏԵԱՆ, ««Թուղթ հերքման» թէ եղծումն ճշմարտութեան», Հայ Կաթողիկէ տպարան, Պէյրութ, 1951:

¹⁶ Տէս «Բազմալէպ», 1843–1953, նոյեմբեր–դեկտեմբեր, թիւ 11–12, էջ 233:

որ Դուք, Գերշ. Դերենիկ Եպիսկոպոս, կը շրջէք ճշմարտութիւնը, եւ իբրեւ կաթողիկէ կը ներկայացնէք այդ հակակաթողիկէ անձերը. չենք գիտեր թէ ինչո՞ւ Օրմանեանն ալ չէք յիշած անոնց կարգին»¹⁷, «Յաճախապատում» եւ «Հերքման թուղթ». անդունդ մը կայ երկուքին միջեւ: Այսուհանդերձ ո՛չ ոք կը գնէ առաջինը, հակառակ անոր մեծապէս շինարար բովանդակութեան. վեց հազար անձեր կը գնեն – կամ կը ստանան ձրի՝ – երկրորդը, – Ձեր թուղթը, – հակառակ անոր անշէն բովանդակութեան»¹⁸, «Հայոց պատերազմը, Գերշ. Դերենիկ Եպիսկոպոս, բարոյական կարգի մէջ, չէ՛ վերջացած տակաւին:

Ապրիլեան Եղեռնը ամբողջովին չէ՛ նկարագրուած:

Կիլիկիոյ աղէտը ուսումնասիրութեան կը կարօտի:

Իզմիրի դէպքը եւ գրեթէ ամբողջ արեւմտահայութեան Փոքր Ասիայէն ելքը չունեցաւ իր պատմիչը:

Երկաթէ վարագոյրէն ասդին եւ անդին ո՛րքան դէպքեր, ո՛րքան դէմքեր նկարագրութեան արժանի, փառաւորելի. «վասն հաւատոյ եւ հայրենեաց» մարտնչողներ եւ զոհեր:

Ինչո՞ւ զանոնք չէք ծանօթացներ, Դուք Գերշ. Դերենիկ Եպիսկոպոս, պաշտօնեայդ Սուրբ Աւետարանի: Ինչո՞ւ»¹⁹:

«Ո՞վ էք դուք, որ կը ժպրհիք հրապարակել «Հերքման թուղթ» մը, Անոր «Հովուական թուղթ»ին դէմ: Հիքութիւնը երբեք այսքան ծիծաղելիօրէն գլուխ չէր ցցած վեհութեան դէմ:

Հոգեւոր Տիրոջ անցքը միայն օտար ոեւէ երկրէ մը, հայութեան վրայ լոյս կը հեղու, հապա խօսքը...:

Դուք ալ կ'անցնիք օտար երկիրներէ. Ձեր ո՞ր շարժումը, Ձեր ո՞ր խօսքը լոյս կը հեղու հայութեան վրայ: Լոյս հոգեւոր եւ հայրենի»²⁰,

«Ձեք անդրադառնար՝ թէ Դուք, երբ, դէմ կը խօսիք Ն. Վ. Տ. Գրիգոր-Պետրոս ԺԵ.ի, դէմ խօսած կ'ըլլաք նաեւ Շնորհալիի, եւ բոլոր նախընթացաբար յիշուած մեծերուն. անհեթեթ, արտառոց, ծիծաղաշարժ դիրքի մը մէջ դնելով դուք զՁեզ»²¹,

¹⁷ Տէս «Մասիս» շաբաթաթերթ, 1951, թիւ 34, էջ 3:

¹⁸ Տէս «Մասիս» շաբաթաթերթ, 1951, թիւ 36, էջ 2:

¹⁹ Նույն տեղում, էջ 2:

²⁰ Նույն տեղում, էջ 3:


²¹ Նույն տեղում, էջ 3:

«Ահաւասիկ, դուք Ձեր «երգ»ը կը հնչեցնէք հայ ժողովուրդին հայրենասիրական լարին վրայ, անտեսելով կամ ընկլուզելով անոր մէջ կրօնասիրական լարը, որ անճարակ ձեռքերու տակ, սկսած է այնքան խռպոտ ձայներ հանել»²²։

Եթե Տ. Դերենիկ եպիսկոպոսն իր աշխատութեամբ ջանում էր ճշմարտութեամբ լուսավորել իր ազգակիցներին՝ հաստատուն պահելով ազգային ինքնագիտակցութիւնն ու հոգեւոր հավատարմութիւնը, նվիրումն ու սերն առ Մայր Հայրենիքը, ազգային միասնութիւնը, ապա կաթողիկ շրջանակներից հնչող հայազն խոսքերի մեջ բարձր արձագանքում էին Վատիկանի համոզմունքները, որոնք, ինչպէս արդեն քանիցս նշել ենք, այդ աշխարհաքաղաքական իրավիճակի դիվանագիտական ու միջազգային մակարդակում չէին ծառայում Հայոց ազգային-հոգեւոր բարձրագույն շահերին։ Կրկին ու կրկին վերլուծելով խնդրո շրջանի միջազգային վիճակն ու ազգային իրականութիւնը՝ միանշանակ է, որ թե՛ անցյալի, թե՛ ներկայի, թե՛ գալիք բոլոր ժամանակների համար հայ ժողովրդի եւ Հայաստանի հարատեւութեան ու հաղթանակների առհավատչեան միասնութիւնն ու միասնականութիւնն է՝ հիմնված մայրենի լեզվի, ազգային կրթութեան, գիտութեան, հայկական մշակույթի վեմին՝ պատասպարված ու պաշտպանված միակ Ազգային Սուրբ Եկեղեցով։

Շարունակութիւնը՝ հաջորդիվ

²² Նույն տեղում, էջ 3։



ՆՈՐԱՏԵՂԾ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԵՒ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՈՈՒՅՑ՝

Նայ իրականության մեջ մշտապես գիտակցվել է, թե որոնք են ազգապահպանության հիմնասյուները, դրվատվել է դրանց դերն ու կարեւորությունը: Դեռեւս դյուցազնավեպը պարզորոշ ցույց է տալիս, թե ինչպես օտարության մեջ Սանասարն ու Բաղդասարը պահպանեցին իրենց ազգային դիմագիծը. մայրը հոգացել էր, որ հերոսների կրթության ու դաստիարակության գործը հավուր պատշաճի կազմակերպվի: Նա պատվիրել էր, որ հայրենիքից իրենց միանա հայ հոգեւորականը, որպեսզի քաջագուններին սովորեցնի մայրենի լեզուն եւ սերմանի պապենական հավատքը: Հայոց հարատեւման խորհուրդը բացահայտելով՝ օտարները մշտապես պայքարել են ամենայն ազգայինի դեմ՝ ձգտելով թուլացնել հայեցի դաստիարակության ու կրթության հիմքերը, չխորշելով ոչնչից՝ ծիսական արարողություններն արգելելուց մինչեւ խորթ դավանափոխության պարտադրում: Շատ ավելի ուշ նվաճող կայսրությունների իշխող վերնախավերը իմաստնանալով հասկացան, որ նվաճված տարածքներում բնակվող ժողովուրդների հոգեւոր-կրոնական միասնությունն ու ամրությունը նաեւ իրենց տերությունների կայունության գրավականն է: Հենց այդ տեսակետից պետք է քննարկվեն այն հազվագյուտ դեպքերը, երբ օտարներն աջակցել են Հայոց ազգային կառույցներին, ոչ թե պայքարել դրանց դեմ: Ասվածի լավ վկայություն կարող են ծառայել Օսմանյան կայսրությունում ծավալված դեպքերը, երբ պետությունը պայքարում էր դրսից ներթափանցող կրոնական կազմակերպությունների դեմ, ըստ կարելիության աջակցելով բնիկ ժողովուրդների՝ հայոց, հունաց եւ ասորվոց ավանդական կրոնական կառույցներին. «Հետագայում նաեւ կայսերական հրովարտակով սահմանվում էր, որ Թուրքիայում ամեն պատրիարք պետք է ուշագիր [հետեւի] իր ժողովուրդին, հսկի [ու զերծ պահի]

* Ստացվել է՝ 23.02.2026, գրախոսվել է՝ 20.03.2026: էլ. հասցե՝ Arshak.Madoyan@ysu.am:

օտար ազդեցությունից եւ կրոնական անհավատարմությունից: Միով բանիմով՝ [երկրում] սկսեց թագավորել արաբեկչությունը, եւ ոչ ավանդական կրոնական կազմակերպություններն արմատախիլ անելու համար իշխանությունները դիմում էին ցանկացած միջոցի»²: Այսինքն՝ օտար եւ դրսից կառավարվող կրոնական կազմակերպությունները կայսրության համար վտանգավոր էին նկատվում, եւ պետությունն ամեն ձեւով աջակցում եւ խրախուսում էր, որ ավանդական հոգեւոր կառույցները պայքարեն դրսից ներթափանցած միավորների դեմ, ամենեւին չմիտվելով ավանդականների հզորացմանը, այլ մշտապես ձգտելով, որ դրանք լինեն թույլ եւ իշխանություններից կախյալ վիճակում:

21-րդ դարում, երբ համաշխարհայնացման միտված որոշակի ուժերի գերակա նպատակն է դարձել ազգային եւ պետական սահմանների ոչնչացումը, ազգային կառույցներն առավել վտանգված են. դրանց դեմ արդեն պայքարում են ոչ միայն պետությունները կամ պետությունների դաշինքները, այլ նաեւ վերպետական՝ միջազգային եւ հատկապես ապազգային միավորումները, որ ի թիվս այլ միջոցների եւ եղանակների կիրառում են նաեւ արհեստականորեն՝ առավելաբար դրամական ներդրումներով ձեւավորվող կրոնական համայնքների գործոնը՝ նախընտրելով փափուկ ուժի կիրառումը:

Ուստի ներկայիս աշխարհաքաղաքական պայմաններում կրոնական համայնք, կրոնական կազմակերպություն, հոգեւոր կառույց եւ պետություն փոխհարաբերությունները դիտարկելիս պետք է ի նկատ ունենալ հետեւյալ հանգամանքները.

Ա. Աշխարհիկացումն (*Secularization*) ընդդեմ հետաշխարհիկության (*Post-secularism*)³. հայեցակարգային հակադրություն, երբ աշխարհիկացման արդյունքում կրոնի ազդեցությունը հասարակական կյանքում, քաղաքականության մեջ եւ մշակույթում նվազում է, իսկ հետաշխարհիկության փաստարկով ընդունվում է, որ, հակառակ սպասումներին ու ենթադրություններին, կրոնը չի անհետացել հանրային կյանքից եւ նորից է հաստատվում քաղաքական ու հասարակական քննարկումների ծիրում՝ արդեն արդիականացված ձեւով:

² Հմմտ. «Էջմիածին», 2018, է., էջ 35:

³ Մանրամասն տես С. TAYLOR, *A Secular Age*, Harvard University Press, 2007, J. HABERMAS, *Notes on Post-Secular Society*. *New Perspectives Quarterly*, 2008, 25(4), 17–29:

Բ. Կրոնն անվտանգային համապատկերում (*Securitization of religion*)⁴. գործընթաց, որի պարագայում պետությունը կամ քաղաքական ուժերը կրոնական հարցերը (կամ կրոնական որոշակի խմբերին) սկսում են դիտարկել ոչ թե պարզապես մշակութային կամ հոգեւոր տեսանկյունից, այլ իբրեւ ազգային անվտանգության խնդիր կամ սպառնալիք (օրինակ՝ ծայրահեղականության համապատկերում):

Գ. Փափուկ ուժի (*Soft power*) նախընտրում⁵. երբ պետություններն իրենց ծրագրերը կյանքի են կոչում ոչ թե զենքի կամ տնտեսական ճնշման՝ բիրտ ուժի, այլ սեփական կացութաեւթեւերի գրավչության, մշակույթի, քաղաքական-համամարդկային արժեքների, արտաքին քաղաքականության, ինչպես նաեւ կրոնի եւ կրոնական կազմակերպությունների հնարավորությունների միջոցով:

Դ. Կրոնական կառավարում (*Religious governance*)⁶. ներկայացնում է այն ձեւերն ու եղանակները, որոնցով կարգավորվում են հոգեւոր կյանքը, կրոնական կազմակերպությունները եւ պետություն-եկեղեցի հարաբերությունները տվյալ հասարակության մեջ:

Ե. Կրոնի նկատմամբ պետական վերահսկողություն (*State control of religion*)⁷. երեւույթ, երբ պետությունն իրականացնում է ուղղակի կամ անուղղակի վերահսկողություն կրոնական կազմակերպությունների, դրանց գործունեության, գույքի կամ գաղափարախոսության նկատմամբ (օրինակ՝ կրոնական կառույցների պարտադիր գրանցումը, քարոզխոսության համակարգումը կամ սահմանափակումները եւ այլն):

Կրոնական նոր շարժումների եւ ավանդական եկեղեցիների փոխհարաբերությունը ժամանակակից կրոնագիտության առանցքային խնդիրներից է, որն իր մեջ հոգեւորից առավել ներառում է ինչպես տեսական, այնպես եւ հասարակական-մշակութային լուրջ քննարկում-

⁴ Մանրամասն տե՛ս B. BUZAN, O. WÆVER, AND J. DE WILDE, *Security: A New Framework for Analysis* (Boulder, CO: Lynne Rienner Publishers, 1998), J. CESARI, *Why the West Fears Islam: An Exploration of Muslims in Liberal Democracies* (New York: Palgrave Macmillan, 2013):

⁵ Մանրամասն տե՛ս J. HAYNES, *Religious Transnational Actors and Soft Power*, Farnham, UK: Ashgate, 2012, J. S. Nye, *Soft Power: The Means to Success in World Politics*, New York: PublicAffairs, 2004:

⁶ Մանրամասն տե՛ս V. BADER, *Secularism or Democracy? Associational Governance of Religious Diversity*, Amsterdam: Amsterdam University Press, 2007:

⁷ Մանրամասն տե՛ս J. FOX, *Political Secularism, Religion, and the State: A Time Series Analysis of Worldwide Data*, Cambridge University Press, 2015, F. YANG, *Religion in China: Survival and Revival under Communist Rule*, Oxford University Press, 2011:

ներ: Ընդունված է, որ հաճախ կրոնական բազմազանության եւ կամքի ազատության քողի ներքո փորձ է արվում վերաիմաստավորել-արժեզրկել «եկեղեցի», «ավանդույթ» եւ «հավատք» հասկացությունների սահմանները՝ խարխուլելով դրանց դասական տարբերակման հիմքերը⁸: Այս շարակարգում ԿնՇ-ները հանդես են գալիս իբրեւ այլընտրանքային հոգեւոր ինքնության ձեւավորման միջավայր եւ յուրօրինակ քննադատական արձագանք ու հակադրություն՝ հնամենի դավանաբանական եւ կառուցվածքային ձեւերին⁹: Այստեղ արդեն հազարամյակների ճանապարհ անցած եկեղեցիները, ձգտելով պահպանել իրենց դիրքերը, ստիպված են առերեսվել նոր իրողություններին եւ վերասահմանել իրենց ուրույն դիրքորոշումը նոր ձեւավորվող միջավայրում: Այս խրթին փոխազդեցության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս բացահայտելու ժամանակակից կրոնական կյանքի ներքին լարվածությունը, հակադրություններն ու երկխոսության հնարավոր հեռանկարները¹⁰: Կրոնական կյանքի այս բարդ զարգացումները եւ ավանդական կառույցների դիրքերի նպատակային թուլացումը ստեղծում են մի իրավիճակ, որտեղ հոգեւոր որոնումները կարող են վերածվել քաղաքական կամ հասարակական ազդեցության գործոնների: Ներկայացված իրավիճակում լիովին բնական է, որ կրոնական-հոգեւոր միավորումներից բացի, կամ հիշյալներից ավելի շատ, աշխուժանում են հատուկ ծառայությունները՝ ազգային կամ պետական անվտանգության, հակահետախուզական, ներքին կամ արտաքին հետախուզության մարմինները՝ առանձնակի հետաքրքրություն դրսևորելով «հավատքով համախմբվածների նկատմամբ»: Ասվածի կապակցությամբ հիշատակելի է երեք հիմնական նպատակ, որ հետապնդում են հատուկ ծառայությունները՝ հանրային վերահսկողություն, քաղաքական ազդեցություն եւ տեղեկատվական ներթափանցում: Այս համապատկերում նորաստեղծ կրոնական կազմակերպություն-հատուկ ծառայություն կապն արդեն ոչ թե դավադրապաշտական-զգայացունց (sensation) ենթադրություն է, այլ

⁸ Հմմտ. P. BERGER, The Desecularization of the World: Resurgent Religion and World Politics (Grand Rapids, MI: W.B. Eerdmans Pub. Co., 1999), 9–13:

⁹ Տե՛ս E. BARKER, New Religious Movements: A Practical Introduction (London: Her Majesty's Stationery Office, 1989), 23–28:

¹⁰ Տե՛ս B. WILSON, Religion in Sociological Perspective (Oxford: Oxford University Press, 1982), 89–94:

շահերի, նկրտումների եւ նպատակահարմարության արձանագրում հիշյալների գործելաոճում:

Տարբեր վերլուծական կենտրոնների եզրահանգմամբ կրոնական նոր շարժումներն առաջին հերթին եւ ավելի հաճախ գրավում են ազգաբնակչության՝ անորոշության մեջ հայտնված շերտերին՝ երիտասարդների, մտավորականների կամ բողոքող-ընդվզող խմբերի, որոնց հոգեւոր կամ գաղափարական վիճակը հանգեցրել է խարխափող որոնումների, հուսահատության կամ «կյանքի ունայնության» վիճակի¹¹: Այդ պատճառով պետությունները շատ դեպքերում այդ խավերն ընկալել են որպես հնարավոր ապակայունացման օղակներ:

Սառն պատերազմի տարիներին հատկապես ԱՄՆ-ում եւ Եւրոպայում անվտանգության մարմինները հետեւում էին տարբեր նոր կրոնական շարժումներին՝ կասկածելով արտաքին ազդեցության, նյութատնտեսական թափանցիկության պակասի կամ հասարակական լարվածություն ստեղծելու մեջ: Կրոնական ազատության եւ պետական վերահսկողության միջեւ այս հակասությունը դարձավ ժամանակաշրջանի հատկանշական երեւույթ¹²՝ ստիպելով, որ լուրջ գումարներ ներդրվեն գործակալական ցանցերի ստեղծման եւ կանխարգելիչ միջոցառումների նախապատրաստման ու իրագործման համար: Սրան հակառակ, կամ հենց դրա արդյունքում, կրոնական որոշ կազմակերպություններ, եթե անգամ նախապես չունեին իրենց համապատասխան օղակները, սկսեցին ստեղծել տվյալների կուտակման-համակարգման միավորներ կամ անմիջականորեն հետախուզական համակարգեր: Այս առթիվ ամենահայտնին Սայենթոլոգիական եկեղեցու օրինակն է: Սրա պատմության մեջ փաստված են ներքին վերահսկման, գաղտնիության շղարշի, փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռքբերման, ազդեցության գործակալների հավաքագրման եւ հակառակորդների վերաբերյալ արատավորող-վարկաբեկիչ տեղեկությունների կուտակման դեպքերը, որոնց առիթով գիտական գրականության մեջ նշվում է, որ կազմակերպության անվտանգության եւ վերահսկման համակարգերը հաճախ ձեւավորվել են պետանվտան-

¹¹ Հմմտ. E. BARKER, *New Religious Movements: A Practical Introduction* (London: Her Majesty's Stationery Office, 1989), 11–15,

¹² Հմմտ. J. RICHARDSON, *Regulating Religion: Case Studies from Around the Globe* (New York: Kluwer Academic/Plenum Publishers, 2004), 15–22:

գուլթյան հաստատություններում ընդունված կառուցվածքային եւ աշխատանքային սկզբունքների կրկնօրինակմամբ¹³:

Հատուկ ծառայություններն անհրաժեշտության դեպքում հոգեւոր համայնքները դիտարկել են որպես տեղեկատվություն ձեռք բերելու աղբյուր կամ ներթափանցման միջավայր՝ համոզված լինելով, որ փակ կառուցվածք ունեցող կազմակերպություններում ներգրավված անդամները դրանց դրամական հոսքերի, միջազգային կապերի, ընդունված աստիճանակարգի կամ անդամների տրամադրվածության մասին արժեքավոր տեղեկությունների են տիրապետում, հետեւաբար, նման խմբերը կարող են եւ պետք է դառնան գործակալական աշխատանքի թիրախ: Սակայն կարեւոր է ընդգծել, որ սա համընդհանուր օրինաչափություն չէ. երբեմն խոսքը վերահսկման եւ վերլուծության մասին է, ոչ թե անմիջական կառավարման:

Հնարավոր, իսկ որոշ դեպքերում առկա է նաեւ հակառակ գործընթացը, երբ կրոնական կազմակերպություններն են փորձում ներգործել պետական համակարգի վրա՝ շահերի առաջխաղացման, իրավական պայքարի, հանրային կարծիքի ձեւավորման կամ պետական ծառայողների հետ կապերի հաստատման միջոցով: Եւ հաճախ շատ բարդ է սահմանագծի տարրորոշումը՝ որտեղ է ավարտվում օրինական ազդեցությունը, եւ որտեղ սկսվում քողարկված ճնշումը¹⁴:

ԽՍՀՄ մայրամուտի եւ հետխորհրդային ձեւափոխումների տարիներին կրոնական նոր շարժումները հաճախ օգտագործում էին պետական համակարգի թուլությունը՝ բարձրագույն ղեկավարության հետ կապեր հաստատելու եւ իրենց շահերի առաջխաղացման համար: Սրա վառ օրինակներից են ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովի եւ Միավորման եկեղեցու առաջնորդ Մունի հանդիպումը (1990, Մոսկվա), Սերգեյ Կիրիենկոյի առնչությունները սայենթոլոգիայի հայր Լ. Ռոն Հաբարդի

¹³ Տե՛ս R. WALLIS, *The Road to Total Freedom: A Sociological Analysis of Scientology* (New York: Columbia University Press, 1977), 127–135; H. URBAN, *The Church of Scientology: A History of a New Religion* (Princeton University Press, 2011), 154–156; J. REITMAN, *Inside Scientology: The Story of America's Most Secretive Religion* (Houghton Mifflin Harcourt, 2011), 114–118:

¹⁴ Այս կապակցությամբ տե՛ս A. HERTZKE, *Representing God in Washington: The Role of Religious Lobbies in the American Polity* (Knoxville: University of Tennessee Press, 1988). *հեղինակը վերլուծում է քաղաքական որոշումների վրա ազդելու կրոնական խմբերի կիրառած միջոցները: Հմմտ. F. JONATHAN, A World Survey of Religion and the State* (Cambridge: Cambridge University Press, 2008), 34–41:

հետնորդների հետ, Առում Սինրինկոյի սրընթաց վերելքը Ռուսաստանի Դաշնությունում եւ այլ աղմկահարույց դեպքերը, որոնք վկայում են, որ կրոնական կազմակերպությունները ոչ թե պարզապես փորձել են, այլեւ լուրջ հաջողություններ են գրանցել ԽՍՀՄ-ում, իսկ հետո նաեւ Ռուսաստանի Դաշնության տարածքում կառավարման լծակների ձգտելիս¹⁵: Եւ եթե քայքայվող կայսրության կենտրոնն այս վիճակում էր, բնական է, որ ծայրագավառներն ավելի վատ վիճակում պիտի հայտնվեին: Հիշյալ պատմական շրջափուլում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված վիճակը չնչին դրվագներով է բացահայտվել՝ հիմնականում չարժանանալով պատշաճ ուշադրության: Եւ ցավով պետք է նկատել, որ ներկայիս ընթացքով անգամ մոտակա տասնամյակներում չի ստեղծվի կիսակրոնական-կիսաաղանդավորական, կիսաբարեգործական-կիսահետախուզական միավորների՝ դեպի նորանկախ Հայաստան ներհոսքի ամբողջական պատկերը, որի վերլուծությունը պարտադիր է ապագայի համար դասեր քաղելիս:

Զգուշանալով հանդերձ կտրուկ ձեւակերպումներից՝ այնուամենայնիվ կարող ենք արձանագրել, որ Հայաստանում ներխուժման ծավալներն աղետալի են եղել¹⁶: Ու չնայած շատերը առավելաբար հակված են դրանում հոգեւոր դասի մեղքը նկատելուն, մեր կարծիքով՝ խնդիրն առաջնային լու-

¹⁵ Տե՛ս <https://www.tparents.org/Library/Unification/Books/Messiah2/Messiah2-19f.htm>, M INTROVIGNE, The Unification Church (Studies in Contemporary Religion) (Salt Lake City: Signature Books, 2000), 22–25. մանրամասնվում է Մ. Գորբաչովի եւ Սան Մյուն Մունի «պատմական» հանդիպումը Կրեմլում, հմմտ. А. ДВОРКИН, Сектоведение: Тоталитарные секты. Опыт систематического исследования (Нижний Новгород: Изд-во Братства во имя св. князя Александра Невского, 2002), 234–240: Հեղինակը վերլուծում է Սայենթոլոգիական եկեղեցու ներթափանցումը Ռուսաստանի քաղաքական եւ կառավարական շրջանակներ, այդ թվում՝ Սերգեյ Կիրիենկոյի առնչությունները Հաբարդի համակարգի հետ: Տե՛ս նաեւ Hugh B. Urban, The Church of Scientology: A History of a New Religion (Princeton: Princeton University Press, 2011), 158–162, որն անդրադարձ է կազմակերպության՝ պետական համակարգում ազդեցության գործակալներ ձեռք բերելու եւ բարձրաստիճան պաշտոնյաների միջոցով հաստատվելու ռազմավարությանը: Ուշագրավ է <https://orthodox-newspaper.ru/numbers/at25746-ի> հրապարակումը, ըստ որի՝ 1995-ին Ն. Նովգորոդի «Գարանտիա» բանկի նախագահ եղած ժամանակ Կիրիենկոն վերապատրաստման դասընթաց է անցել Հաբարդ-Քոլեջում, դրանից հետո իր տասնհինգ աշխատակիցներին եւս ուղարկելով վերապատրաստման: Ավելի ուշ, երբ Կիրիենկոն առաջադրվեց ՌԴ վարչապետի պաշտոնին «Սայենթոլոգներն աշխույժ աջակցում էին Կիրիենկոյի թեկնածության առաջխաղացմանը» «Сегодня»՝ 02. 04. 98»:

¹⁶ Տե՛ս, օրինակ, Զենոբ ՔՀՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ, Եհովայի վկաներ, «Սիոն», 1991, սեպտ.–դեկտ., 181–184, Ռ. ԱՂԱՍԵԱՆ, Եհովայի վկաներ, «Սիոն», 1994, ապրիլ–յունիս, էջ 160–162, «Եհովայի վկաներ», թէ՛ ստույգ եւ վկաներ, «Էջմիածին», 2000, է., էջ 44–48:

ծում պիտի ստանար պետական՝ ի մասնավորի ազգային անվտանգության համակարգում՝ բացառելով քայքայիչ, ապակայունացնող եւ այլասերող միավորների լայնածավալ եւ բացարձակ անարգել ներթափանցումը:

Անշուշտ, ամեն նոր կրոնական կազմակերպություն հատուկ ծառայությունների նախագիծ չէ, ինչպես նաեւ նոր միավորումների հանդեպ պետական ցանկացած հետաքրքրվածություն չէ, որ հալածանք է: Երբեմն շարժումներն իրապես հասարակական պահանջի արդյունք են՝ հոգեւոր եւ գաղափարական դատարկության, մշակութային ճգնաժամի կամ ինքնության որոնման պայմաններում: Արտերկրի հանրային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նոր կրոնական շարժումների որոշ մասը զարգանում է սովորական կազմակերպական տրամաբանությամբ՝ առաջնորդություն, անդամագրում, գաղափարախոսություն, դրամական ներհոսք: Ուստի, օտար հետազոտողների տեսանկյունից, ի դեմս դրանց, լուրջ վտանգներ կանխատեսելու կարիք չկա¹⁷: Սակայն հայ իրականության մեջ, երբ հաշվի ենք առնում ազգաբնակչության բնական աճի միտումներն ու ժողովրդագրական տվյալները, իսկ մյուս կողմից՝ ՀՀ-ում գրանցված կրոնական կազմակերպությունների քանակը¹⁸, բացահայտ է, որ յուրաքանչյուր անհատի կրոնական եւ գաղափարական առողջության համար պետք է մղվի համառ պայքար, որի միջոցներն ու եղանակներն այժմ հիմնովին տարբեր են մեր Եկեղեցու ունեցած հազարամյա փորձից: Այլեւս աղանդների հերքումն ու դրանց դեմ պայքարը միայն բանիբուն վարդապետների եւ մեծ իմաստասերների խնդիրը չէ, այլ ամբողջ Եկեղեցու՝ ժողովրդի, հոգեւոր ու աշխարհիկ իշխանների եւ հատկաբար պետության՝ ազգային պետության: Ազգային պետություն ունեցող անգամ ամենաժողովրդավարական կազմավորումներն օրենսդրական, տնտեսական եւ անվտանգային նախաձեռնություններով վաղուց լուծել են օտար եւ խորթ՝ կրոնական, բարեգործական կամ ցանկացած այլ կերպ հորջորջվող քայքայիչ-այլասերող կազմակերպությունների հարցը՝ քաջ գիտակցելով ավանդականի կարեւորությունը ազգային անցյալի, ազգային ներկայի ու ազգային ապագայի միասնության համար:

¹⁷ Տե՛ս E. BARKER, *New Religious Movements: A Practical Introduction* (London: HMSO, 1989), էջ 11–15:

¹⁸ Տե՛ս https://www.gov.am/u_files/file/kron/Tsutsak2-%20herakhos%20gov.pdf:

Թերեւս միջազգային փորձից մի քանի օրինակ դիտարկենք, տեսնելու համար ասենք «Եհովայի վկաների» հանդեպ տարբեր ժողովրդավարական երկրների քաղաքականության պատմական զարգացումը:

Բ. աշխարհամարտի տարիներին որոշ ժողովրդավարական երկրներում Եհովականների կազմակերպությունն ուղղակիորեն արգելվել է ռազմական դրուստյան բերումով: 1941 թվականի հունվարին Ավստրալիայի կառավարությունը «Եհովայի վկաներին» հայտարարեց անօրինական կազմակերպություն, փակեց նրանց ռադիոկայանները եւ բռնագրավեց գույքը: Պատճառն այն էր, որ պատերազմի ժամանակ նրանց բացարձակ չեզոքությունը եւ բանակային ծառայությունից հրաժարումը դիտարկվում էին որպես «սպառնալիք ազգային անվտանգությանը»: Սակայն 1943 թվականին Ավստրալիայի Գերագույն դատարանը հակասահմանադրական ճանաչեց այդ արգելքը¹⁹:

Պատերազմական պայմաններում երկրին չաջակցելու, պետական դրոշը պատվի չառնելու պատճառով Եհովական կազմակերպությունը 1940–1943 թվականներին արգելվեց Կանադայում: Սակայն 1960 թվականին ընդունվեց «Իրավունքների Կանադական հռչակագիրը»²⁰ նախագեպ հանդիսանալով 1982-ի «Իրավունքների եւ ազատությունների պայմանագրության»²¹ համար²²:

Գալով մեր օրերին նկատենք, որ Ֆրանսիան հայտնի է իր ընդգծված աշխարհիկ քաղաքականությամբ: Այդուհանդերձ, 1990-ից 2000-ականներին երկրի խորհրդարանական զեկուլցներում «Եհովայի վկաները» դասվել են հավանական վտանգավոր աղանդների շարքը, եւ պետությունը զգալի հարկեր էր սահմանել նրանց ստացած նվիրատվությունների վրա: Բայց երբ կազմակերպությունը դիմեց Մարդու իրավունքների եւրոպա-

¹⁹ *Adelaide Company of Jehovah's Witnesses Inc v Commonwealth, (1943) 67 CLR 116* (High Court of Australia, 14 June 1943); Penton, M. James. *Apocalypse Delayed: The Story of Jehovah's Witnesses*. Toronto: University of Toronto Press, 1997, pp. 136–141; Barker, Michael. “Section 116 of the Constitution and the Jehovah's Witnesses Case.” *Australian Law Journal*, vol. 55, no. 4, 1981, pp. 220–228; Hogan, Michael. “The Separation of Church and State: Section 116 of the Australian Constitution.” *Journal of Religious History*, vol. 25, no. 2, 2001, pp. 163–181:

²⁰ Canadian Bill of Rights.

²¹ Charter of Rights and Freedoms.

²² Order in Council P.C. 2943 (Ottawa: Government of Canada, July 4, 1940); Order in Council P.C. 7814 (Ottawa: Government of Canada, October 14, 1943); Canadian Bill of Rights, S.C. 1960, c. 44; Canadian Charter of Rights and Freedoms, Part I of the Constitution Act, 1982, Schedule B to the Canada Act 1982 (UK), 1982, c. 11.

կան դատարան (ՄԻԵԴ) եւ 2011–2012 թվականներին շահեց դատը՝ Ֆրանսիայի Հանրապետությանը պարտադրելով վերադարձնել բռնագանձված գումարները, հարաբերությունները կարգավորվեցին միջազգայնորեն ընդունված համաձայնագրերի համապատասխանություններով, եւ նրանք Ֆրանսիայում գործում են բացառապես օրինական դաշտում, թեեւ պետական համապատասխան մարմինները (ի մասնավորի՝ Աղանդավորական շեղումների դեմ պայքարի եւ հսկողության միջգերատեսչական առաքելությունը՝ MIVILUDES) շարունակում են վկաներին դիտարկել աշխարհիկության եւ մարդու իրավունքների ետնախորքին²³:

Քիչ է տարբերվում նաեւ հաջորդող օրինակը. հայտարարելով, թե կազմակերպության ներսում կիրառվող «մեկուսացման քաղաքականությունը» (երբ համայնքից հեռացված կամ դուրս եկած անդամների, այդ թվում՝ անչափահասների հետ կապերը լիովին խզվում են) խախտում է մարդու իրավունքներն ու երեխաների պաշտպանության մասին օրենքները՝ 2022–2023 թվականներին Նորվեգիայի պետական մարմինները «Եհովայի վկաներին» զրկեցին պետական գրանցումից եւ տարեկան դրամային օժանդակությունից (մոտ 1.3 միլիոն եւրո)՝ կասեցնելով նաեւ օրինական ամուսնություններ գրանցելու նրանց իրավունքը: Սակայն կազմակերպությունը դիմեց դատարան: Երկարատեւ դատական քաջքշուկից հետո, 2026 թվականի ապրիլին Նորվեգիայի Գերագույն դատարանը բեկանեց նախորդ ատյանների որոշումները եւ սահմանափակումները ճանաչեց անօրինական՝ նշելով, որ «մեկուսացման» գործընթացը չի խախտում մարդու իրավունքներն այն աստիճանի, որ հիմք հանդիսանա պետական գրանցումից զրկելու համար: Իբրեւ նախադեպ դիտարկելով Ֆրանսիայի եւ Նորվեգիայի օրինակները՝ թերեւս դժվար չէ ենթադրել ժողովրդավարությունների կրոնական հանդուրժողության հեռանկարները: Եւ չեն տարբերվում անգամ այն երկրները, որ փաստացի կամ սառեցված պատերազմական վիճակում են, եւ որոնց համար զինվորական ծառայություն-

²³ *See* Association Les Témoins de Jéhovah v. France, *с.* 8916/05, Judgment of June 30, 2011, European Court of Human Rights; Association Cultuelle des Témoins de Jéhovah de France v. France, no. 515/07, Decision of June 30, 2011, European Court of Human Rights (վճիռը վերջնական է դարձել 2011 թ. նոյեմբերի 28-ին): Ֆրանսիական պետական վերահսկողության եւ աղանդավորական շեղումների կանխարգելման քաղաքականության վերաբերյալ տե՛ս նաեւ Mission interministérielle de vigilance et de lutte contre les dérives sectaires (MIVILUDES), *Rapport d'activité 2011–2012*, Paris: Secrétariat général du Ministère de l'Intérieur, 2012, pp. 65–70:

նից հրաժարվողները համապետական աղետի կարող են վերածվել: Կորեայի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության հետ տեւական հակամարտության մեջ ներքաշված Կորեայի Հանրապետությունը (Հարավային Կորեա) իբրեւ առաջադեմ ժողովրդավարական երկիր, տասնամյակներ շարունակ փորձում էր լուծումներ գտնել զինվորական ծառայությունից հրաժարվող քաղաքացիների համար, որ պարշտպանության բանակի փոխարեն համալրել էին եհովականների շարքերը: Վերջին տարիներին (ՄԱԿ-ի եւ միջազգային կառույցների ճնշման ներքո) Հարավային Կորեան ներդրեց այլընտրանքային աշխատանքային ծառայության համակարգ, ինչը վերջ դրեց զանգվածային կալանավորումներին արձանագրելով եհովականների հաղթանակը²⁴:

* * *

Ցանկացած երեւոյթ ամբողջովին ընկալելու եւ գնահատելու համար պետք է այն դիտարկենք համեմատության մեջ: Մեր պարագային ճիշտ կլինի տեսնելը, թե ինչ քաղաքականություն են վարում մեր հարեւանները կրոնական համայնքներ եւ կազմակերպությունների հանդեպ:

Ի տարբերություն Հայաստանի՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը վարում է կրոնական կառավարման՝ դարերով ձեւավորված, սկզբունքային եւ կայուն քաղաքականություն, որի հիմքում երկոտասանական շիա իսլամն է՝ որպես պետության պաշտոնական կրոն²⁵: Իրանի կրոնական քաղաքականությունը մի շարք արեւմտյան հետազոտողներ եւ իրավապաշտպան կազմակերպություններ բնութագրում են որպես խիստ վերահսկողական՝ հատկապես չճանաչված կամ միսիոներական ուղղությունների նկատմամբ²⁶: Պետությունը տարանջատում է երկրում առկա՝ պատմական ավանդույթով ընդունված եւ պատմական արմատներ չունե-

²⁴ Հարավային Կորեայում տասնամյակներ տեւած դատական հետապնդումների եւ սահմանադրական բեկման մանրամասների համար տե՛ս Կորեայի Սահմանադրական դատարանի շրջադարձային վճիռը՝ Constitutional Court of Korea, June 28, 2018 (2011Hun-Ba379), եւ դրան հաջորդած օրենսդրական կարգավորումները՝ Act on the Transfer and Service of Alternative Service (2019, ուժի մեջ՝ 2020): Պատմական վիճակագրության եւ միջազգային արձագանքի համար տե՛ս նաեւ Amnesty International-ի պաշտոնական հայտարարությունը՝ South Korea: Plans to introduce alternative service for conscientious objectors must be realized (Index: ASA 25/8394/2018, May 15, 2018):

²⁵ Տե՛ս 12-րդ հոդվածը:

²⁶ Տե՛ս https://www.ihr.org/ihr/article/violence-en_discrimination-against-religious-and-ethnic-minorities-in-the-islamic-republic-constitution/:

ցող կրոնական համայնքները: ԻՒՀ սահմանադրությամբ կրոնական փոքրամասնություն են ճանաչվում՝ զրադաշտականները, հրեաները եւ քրիստոնյաները²⁷, որ օրենքի սահմաններում իրավասու են կատարելու իրենց կրոնական ծեսերն ու արարողությունները եւ անձնական գործերի ու կրոնական կրթության հարցերում արտոնված են գործելու իրենց ուրույն կանոնի համաձայն: Նույն արեւմտականների պնդմամբ Իրանում այլ վերաբերմունք է դրսևորվում ավետարանական-բողոքական համայնքների հանդեպ, որոնց չի տրամադրվում պաշտոնական կարգավիճակ²⁸:

Սրա հետ մեկտեղ դիտելի է, որ «Իսլամական խորհրդակցական ժողովում (Մեջլիս) ընդգրկվում է երկու հարյուր յոթանասուն պատգամավոր: Հաշվի առնելով ժողովրդագրական, քաղաքական, աշխարհագրական եւ նմանատիպ այլ գործոններ՝ պատգամավորների թիվը կարող է ավելացվել յուրաքանչյուր տասնամյակում առավելագույնը քսանով՝ սկսած իսլամական արեւային օրացույցի 1368 թվականի համաժողովրդական հանրաքվեի օրվանից (1989 թ. հուլիսի 28): Զրադաշտականներն ու հրեաներն ընտրում են մեկական ներկայացուցիչ, ասորի եւ քաղղեացի քրիստոնյաները համատեղ ընտրում են մեկ ներկայացուցիչ, իսկ երկրի հյուսիսի եւ հարավի հայ քրիստոնյաները՝ մեկական ներկայացուցիչ: Ընտրատարածքների սահմանները եւ պատգամավորների թիվը սահմանվում է օրենքով»²⁹:

Կրոնական գործունեությունը մշտապես Իսլամական մշակույթի ու ուղղորդման (կողմնորոշման), ինչպես եւ հետախուզության նախարարությունների ուշադրության կենտրոնում է եղել, եւ մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանների կարծիքով՝ որոշակի խմբերի վրա ճնշումներ են գործադրվել, տարբեր պահանջներ ներկայացվել³⁰: Սակայն վերջին մեկ տարվա զարգացումների լույսի ներքո թերեւս կարելի է նկատել, որ ԻՒՀ ձեռնարկած անվտանգային միջոցառումները, գոնե այս պահի դրությամբ, դրական ազդեցություն են ունեցել ներքաղաքական կայուն վիճակի պահպանման հարցում: Ուստի ոչ ավանդական համայնքների հանդեպ կիրառվող սահմանափակումները ոչ թե անհիմն-տարերային նախաձեռնություններ են եղել, այլ պետականությանն սպառնացող վտանգները չեզոքացնող քաղաքականության կարեւոր բաղադրիչ, որի շրջանակներում պատմական

²⁷ Տե՛ս The Constitution of the Islamic Republic of Iran, art. 13:

²⁸ Տե՛ս <https://www.state.gov/reports/2023-report-on-international-religious-freedom/iran/>:

²⁹ Տե՛ս ԻՒՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը:

³⁰ Տե՛ս <https://www.uscirf.gov/countries/iran>:

արմատներից զուրկ միավորումները դիտվել են պետական անվտանգության սպառնալիք³¹ եւ որակվել «սիրոնիստական աղանդ», «շեղված պաշտամունք», «սատանայական հերձված» ու նման բնութագրով³²: Միջազգային իրավապաշտպանների պնդմամբ ԻԻՀ պետական մարմինները հաճախ լրտեսական ծրագրեր են կիրառել եւ դրանք ներդնելով հեռահաղորդակցության միջոցներում՝ հետեւել են կրոնական փոքրամասնությունների կարկառուն անդամների տեղաշարժին եւ գործունեությանը³³: Սակայն, ի սեր արդարության, վստահաբար կարելի է արձանագրել, որ հետախուզական եւ թշնամական ներթափանցման նպատակով թվային միջոցների կիրառումն ավելի շատ «մարդու իրավունքների եւ անձնական տարածքի եւ տվյալների անձեռնմխելիության ջատագովների» նախասիրեցյալ եղանակն է, որ վերջին տասնամյակներում բազում աղմկոտ հրապարակումների առիթ դարձավ³⁴:

* * *

Ադրբեջանը պաշտոնապես հռչակում է կրոնական հանդուրժողականություն, սակայն գործնականում վարում է խիստ վերահսկողության քաղաքականություն՝ հատկապես «ոչ ավանդական» կամ «օտար» ծագմամբ կրոնական կազմակերպությունների նկատմամբ: Երկրի տարածքում գործունեություն ծավալելու հավակնող կրոնական համայնքները բախվում են պետական գրանցման համար ներկայացվող բարդ պահանջների, կրոնական բովանդակության տպագիր նյութերի ներմուծման ու տարածման արգելքների, որ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի առանցքային գործիքներն են Ադրբեջանում: Միջազգային հեղինակություն, կապեր կամ հետեւորդների հոծ բազմություն ունեցող կրոնական ղեկավարները հաճախ հետապնդվում են, ձերբակալվում, բանտարկվում կամ արտաքսվում³⁵:

³¹ Տե՛ս <https://iranhumanrights.org/2025/04/imprisonment-of-christians-jumps-six-fold-in-iran-as-persecution-intensifies/>:

³² Տե՛ս <https://www.opendoorsus.org/en-US/getinvolved/resources/tipoftheicebergiran2025>:

³³ Տե՛ս <https://www.csi-int.org/news/irans-dramatic-surge-in-anti-christian-persecution/>:

³⁴ Տե՛ս, օրինակ, Անգելա Մերկելի եւ Գերհարդ Շրյոդերի հեռախոսների գաղտնալսման փաստերը՝ NSA Targeted Gerhard Schröder's Mobile Phone https://www.spiegel.de/thema/nsa_spying_scandal_en/p4/, կամ Ֆրանսիայի նախագահ Էմմանուել Մակրոնի ու ալլեալ պետությունների եւս 600 պաշտոնյաների բջջայինների գաղտնալսման փորձերի արձագանքները: <https://www.amnesty.org/en/latest/news/2021/07/world-leaders-potential-targets-of-nso-group-pegasus-spyware-2/>:

³⁵ Տե՛ս Freedom House, “Azerbaijan: Freedom in the World 2024 Country Report”, 2024, <https://freedomhouse.org/country/azerbaijan/freedom-world/2024>:

Ադրբեջանի իշխանությունները համեմատաբար մեղմ վերաբերմունք են ցուցաբերում «ավանդական» համարվող որոշ կրոնական համայնքների (մասնավորապես հրեական, ռուս ուղղափառ եւ կաթոլիկ) նկատմամբ, մինչդեռ Մկրտականները, Եհովայի վկաները եւ արեւմտյան միսիոներական ծագում ունեցող այլ խմբեր հաճախ ենթարկվում են խիստ վերահսկողության եւ վարչական սահմանափակումների: Միջազգային իրավապաշտպան զեկուլցներում նշվում է, որ վերջիններս պետական շրջանակներում երբեմն ընկալվում են որպես արտաքին ազդեցություն հնարավոր կրողներ, որ կարող են սպառնալ հասարակական եւ քաղաքական կայունությունը³⁶:

Պետական խիստ վերահսկողության մասին են վկայում նաեւ կրոնական հրատարակությունների գրաքննության ծավալները: Միայն 2024 թվականին պետական մարմինները փորձաքննության են ենթարկել շուրջ 4000 անուն ներմուծվող կրոնական հրատարակություններ: Արդյունքում՝ «կրոնական անհանդուրժողականության, ատելության եւ խտրականության քարոզի» հիմնավորմամբ արգելվել է 139 անուն գրքի շրջանառություն, ինչպես նաեւ կանխվել է 26 կրոնական նյութի հրատարակումը երկրի տարածքում³⁷:

Առանձնակի հիշատակելի է շիա հոսանքների նկատմամբ արտառոց ուշադրության հանգամանքը: Իբրեւ հիշյալների հանդեպ Ադրբեջանի վարած քաղաքականության վառ օրինակ կարելի է հիշել «Մուսուլմանական միասնության» հետ կապված դեպքերը: Շարժման առաջնորդ Թալեհ Բադիրզադեն եւ նրա բազմաթիվ համախոհներ տարբեր տարիների ձերբակալվել են, իսկ միջազգային իրավապաշտպան ու լրատվական ազդյունները բազմիցս արձանագրել են բռնաճնշումների, խոշտանգումների եւ քաղաքական կողմնակալ եւ ուղղորդված մեղադրանքների առաջադրումը³⁸: Նարդարանի՝ 2015 թ. իրադարձություններից ի վեր շարժման անդամները ենթարկվել են զանգվածային ձերբակալությունների, խոշ-

³⁶ Տե՛ս U. S. Department of State. “2023 Report on International Religious Freedom: Azerbaijan”, Office of International Religious Freedom, 2023. <https://www.state.gov/reports/2023-report-on-international-religious-freedom/azerbaijan/>: Հմմտ. <https://www.jw.org/en/news/region/azerbaijan/jehovah-witness-facts/>:

³⁷ Տե՛ս U. S. Commission on International Religious Freedom. “2025 Azerbaijan Country Update”. August 2025. <https://www.uscirf.gov/sites/default/files/2025-08/2025%20Azerbaijan%20Country%20Update.pdf>:

³⁸ Տե՛ս <https://oc-media.org/shiite-muslims-arrested-in-azerbaijan-as-authorities-reportedly-crack-down-on-hijabs-in-schools/?utm=>

տանգումների եւ երկարատեւ բանտարկության³⁹: Հատկանշական է, որ 2023 թվականին ձերբակալված հարյուրավոր հավատացյալ շիաներին պաշտոնական եւ կառավարամետ լրատվամիջոցները ներկայացրել են որպես Իրանի հատուկ ծառայությունների գործակալներ՝ այդպիսով կրոնական հետապնդումները քողարկելով ազգային անվտանգության ապահովման հրամայականով⁴⁰:

Ադրբեջանի վերահսկողության գործիքակազմը, ի թիվս այլոց, ներառում է նաեւ հոգեւոր սպասավորների նկատմամբ իրականացվող ուղղակի գտման քաղաքականությունը: Ըստ պաշտոնական տվյալների՝ Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտեն 2022–2023 թվականների ընթացքում ազատ է կացուցանել 181 մուսուլման հոգեւորականի, իսկ պետական քարոզչությունը այս հեռացումները ներկայացրել է իբրեւ «իրանական ներթափանցման» դեմ պայքարի միջոց⁴¹:

* * *

Ի տարբերություն Ադրբեջանի եւ Իրանի, Վրաստանն ունի համեմատաբար բաց եւ ազատական օրենսդրական դաշտ: Պետություն-եկեղեցի հարաբերությունները կարգավորվում են յուրահատուկ Սահմանադրական համաձայնագրով (Կոնկորդատ): Վրաստանի Սահմանադրությունը հռչակում է դավանանքի լիակատար ազատություն, բայց միաժամանակ ճանաչում է Վրաց Ուղղափառ Եկեղեցու (ՎՈՒԵ) բացառիկ դերը Վրաստանի պատմության մեջ⁴²: Սրանից բխում է մի իրավիճակ, որտեղ ՎՈՒԵ-ն օժտված է այնպիսի արտոնություններով (հարկային արտոնություններ, դրամական ուղղակի հոսքեր պետական գանձարանից, սեփականության իրավունք), որոնցից զրկված են երկրի կրոնական մյուս համայնքները:

Վրաստանի կրոնական փոքրամասնությունները՝ մահմեդական, Կաթոլիկ, Բողոքական եւ հատկապես Հայ Առաքելական, հաճախ բախվում են

³⁹ *Տե՛ս* https://www.presstv.co.uk/Detail/2015/12/01/439_939/Azerbaijan-Nardaran-Shia-crackdown?utm=

⁴⁰ *Տե՛ս* Freedom House. “Azerbaijan: Freedom in the World 2024 Country Report”, 2024. <https://freedomhouse.org/country/azerbaijan/freedom-world/2024>:

⁴¹ *Տե՛ս* U. S. Department of State. “2023 Report on International Religious Freedom: Azerbaijan”. Office of International Religious Freedom, 2023. <https://www.state.gov/reports/2023-report-on-international-religious-freedom/azerbaijan/>:

⁴² *Տե՛ս* Constitution of Georgia, art. 8. See also: “Constitutional Agreement between the State of Georgia and the Apostolic Autocephalous Orthodox Church of Georgia” (2002):

գույքային եւ իրավական անհավասարուծության տարբեր դրսեւորումների՝ զրկվելով իրենց պատմական-դարավոր գույքից: Հայ Առաքելական Եկեղեցու Գերագույն հոգեւոր խորհրդի՝ 2012 թ. հունվար 11-ի հայտարարութիւնը զուսպ է, խիստ պաշտոնական, բայց եւ խոստուն. «Յավով տեղեկացանք, որ հունվարի 9-ին փլուզվել է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում գտնվող Ս. Նշան հայկական եկեղեցու հյուսիսարեւելյան հատվածը: Մեծապես անհանգստացած սույն փաստով եւ նկատի ունենալով Շամխորեցոց Կարմիր Ավետարան եւ Մուղնեցոց Սուրբ Գեորգ հայկական եկեղեցիների փլուզման նախադեպերը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդն արտահայտում է իր խոր մտահոգութիւնը»:

Դեռեւս 2011 թ. հունիս ամսին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Վրաստան կատարած հովվապետական այցի ընթացքում Վրաստանի Հանրապետութեան նախագահ Միխայիլ Սահակաշվիլի եւ Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլյա Բ.-ի հետ տեղի ունեցած հանդիպմանը հայկական կողմին հավաստիացնում էին, որ փլուզված եւ փլուզման վտանգի ենթակա հայկական եկեղեցիների նկատմամբ պատշաճ խնամք եւ հոգատարութիւն կդրսեւորվի: Հակառակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Վիրահայոց թեմի հնչեցրած ահազանգերի վրացական կողմի անուշադրութիւնը եւ հապաղումը հրատապ խնդիրների լուծման հարցում, ցավոք, այսօր կանգնեցրել է մեզ տխուր այս իրավիճակի առջեւ: Գերագույն հոգեւոր խորհուրդը կոչ է ուղղում Վրաստանի իշխանութիւններին անհապաղ քայլեր ձեռնարկել փրկելու կործանումից Ս. Նշան հայկական եկեղեցին, հետամուտ լինել Վրաստանի մշակութային ժառանգութեան մաս կազմող հայկական սրբավայրերի պահպանութեանն ու խնամքին եւ ընդառաջ Վիրահայոց թեմի խնդրանքին վիրահայութեանը վերադարձնել պահանջված հայկական եկեղեցիները»⁴³:

Արա հետ մեկտեղ՝ դիվանագիտական սահմանափակումների կապանքներից ազատ հայաստանյան թերթերը ժամանակին արձանագրել են, որ,

⁴³ «Էջմիածին» 2012, Ա., 148–149, հմմտ. Պ. ՄՈՒՐԱԳՅԱՆ, Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009: Մեր հարեւանները ոչ միայն Կովկասյան տարածաշրջանում են գույքային պահանջներ ներկայացնում, այլ նաեւ Տնօրինական վայրերում. Երուսաղեմի սուրբ Հարութեան տաճարի հայկական տարածքների վերաբերյալ նկրտումների առիթով մի անդրադարձ տես Իերոմոնաх Имануил Атаджанян, Г. Мадоян, Прогулка по святым местам с отцом Луарсабом, «Голос Армении», 23 սեպտեմբեր, 2004-ում:

ասենք, Թբիլիսիի հայկական՝ Մուղնեցոց Սուրբ Գեորգ եկեղեցու փլուզումը «Վրաստանի իշխանությունների հովանավորած քայլն է»⁴⁴:

Ոչ ավանդական կրոնական խմբերին (օրինակ՝ Եհովայի վկաներ) Վրաստանում հաճախ թիրախավորում են հասարակության արմատական խմբերը, ինչին պետությունն արձագանքում է հույժ կրավորական՝ այդպես մատնելով երեւույթի ինքնաբուխ շլինելու կամ ուղղորդվածության հանգամանքը⁴⁵:

Հատկանշական է, որ 2014 թվականի փետրվարին՝ կրոնական քաղաքականության ռազմավարության նախագծի հրապարակմամբ, Վրաստանում սկսեց աշխույժ գործունեություն ծավալել Կրոնի հարցերով պետական գործակալությունը: Մի շարք վերլուծաբանների կարծիքով՝ այս կառույցը հաճախ ծառայում է որպես վերահսկողության գործիք, որի նպատակն է «կառավարել» կրոնական դաշտը եւ անվտանգային նկատառումներից ելնելով՝ սահմանափակել օտարերկրյա ազդեցությունները հատկապես մոսկովյան համայնքում⁴⁶: Իսկ Freedom House-ի պնդմամբ Վրաստանի Պետական անվտանգության ծառայությունը (SSG) 2021 թ. անթաքույց հսկողություն էր հաստատել հոգեւորականների, լրագրողների, հասարակական աշխույժ գործունեություն ծավալողների եւ քաղաքական գործիչների նկատմամբ⁴⁷:

Վերջին տարիներին Վրաստանում նկատվում է կրոնական գործոնի քաղաքականացման միտում: Ինչպես Ադրբեջանում, այստեղ եւս պետությունը փորձում է կանխել «արտաքին գործակալների» ազդեցությունը, բայց եթե Ադրբեջանում դա իրականացվում է ճնշումների եւ հատկապես ձերբակալությունների միջոցով, Վրաստանում իբրեւ գործիք կիրառվում է «Արտաքին ազդեցությունների թափանցիկության մասին» օրենքը, որ տարածվում է նաեւ կրոնական կազմակերպությունների վրա, ի տարբերություն ամերիկյան (FARA) եւ ռուսական համանման օրենքների, որոնք կրոնական կազմակերպությունները դիտում են իբրեւ բացառություն⁴⁸:

⁴⁴ Տե՛ս <https://news.am/hy/news/14372>:

⁴⁵ Տե՛ս U. S. Department of State, “2023 Report on International Religious Freedom: Georgia”, Office of International Religious Freedom, 2023, <https://www.state.gov/reports/2023-report-on-international-religious-freedom/georgia/>:

⁴⁶ Տե՛ս Freedom House. “Freedom in the World 2024: Georgia”: <https://freedomhouse.org/country/georgia/freedom-world/2024>:

⁴⁷ Տե՛ս <https://freedomhouse.org/country/georgia/freedom-world/2024>:

⁴⁸ Տե՛ս <https://civil.ge/archives/591175/amp>:

* * *

Հոգեւոր ասպարեզում Թուրքիայի վարած քաղաքականութիւնը կարելի է բնորոշել «Աշխարհիկութեան» քողի տակ իրականացվող պետական խիստ վերահսկողութիւն ձեւակերպմամբ⁴⁹:

Թուրքիան սահմանադրորեն հռչակված է որպէս աշխարհիկ պետութիւն: Սակայն Թուրքական աշխարհիկութիւնը դասական արեւմտյան կաղապարով կրոնի եւ պետութեան լիարժեք տարանջատում չի ենթարկուում, այլ՝ կրոնական կյանքի պետական վերահսկողութիւն: Այս գործառույթն իրականացնող համակարգի հիմնական օղակը «Կրոնական գործերի նախագահութիւնն» է, որը պետական սահմանադրական մարմին է՝ օժտված դրամական լուրջ հոսքերով եւ կառավարման լծակներով: Այն վերահսկում է Թուրքիայի շուրջ 90 000 մզկիթների գործունեութիւնը, զբաղվում իմամների նշանակումներով եւ կենտրոնացված համակարգմամբ պատրաստում ամենաբազմաթիւ քարոզները: Ու թեեւ սուննի իսլամը Թուրքիայում պաշտոնական կրոնի կարգավիճակ չունի, այն փաստացի առանձնահատուկ պետական եւ համակարգային աջակցութիւն է վայելում՝ լինելով ազգային ինքնութեան եւ պետական միասնութեան կարեւոր բաղադրիչներից մեկը⁵⁰:

Ներկայիս Թուրքիան պարտավորված է առաջնորդվել 1923 թ. Լոզանի պայմանագրով, որով ճանաչվում եւ պաշտպանվում են ոչ մուսուլման փոքրամասնութիւնների (հիմնականում՝ հայեր, հույներ եւ հրեաներ) իրավունքները⁵¹:

Ի տարբերութիւն Իրանի Մեջլիսի, որտեղ կրոնական փոքրամասնութիւններն ունեն օրենքով երաշխավորված տեղեր, Թուրքիայի Ազգային մեծ ժողովում (Մեջլիս) նման տեղեր նախասահմանված չեն: Փոքրամասնութիւնների ներկայութիւնն այնտեղ կարող է ապահովվել բացառապէս ընդհանուր հիմունքներով՝ քաղաքական պայքարի եւ ընտրողների կամարտահայտութեան արդյունքում⁵²:

⁴⁹ Տե՛ս <https://www.state.gov/wp-content/uploads/2024/05/547499-Tu%CC%88rkiye-2023-International-Religious-Freedom-Report.pdf>; U.S. Department of State. 2023 Report on International Religious Freedom: Türkiye, May 2024. հմմտ. <https://www.state.gov/reports/2023-report-on-international-religious-freedom/turkiye/>:

⁵⁰ Տե՛ս <https://www.mdpi.com/2077-1444/13/10/876>:

⁵¹ Տե՛ս Յ-րդ բաժինը՝ փոքրամասնութիւնների պաշտպանութիւնը՝ https://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne:

⁵² Տե՛ս <https://data.ipu.org/parliament/TR/TR-LC01/>:

Պատմական համայնքները (հատկապես Հայոց Պատրիարքարանը եւ Հունաց Տիեզերական Պատրիարքարանը) չունեն իրավաբանական անձի կարգավիճակ, ինչը հանգեցնում է լուրջ խնդիրների սեփականութեան իրավունքի եւ հոգեւոր կրթութեան ոլորտներում (հիշենք, օրինակ, Հեյբելիադայի հունական հոգեւոր ճեմարանի փակ մնալը տասնամյակներ շարունակ)⁵³:

Եւ եթե Ադրբեջանում «ոչ ավանդական» խմբերը հետապնդվում են որպես «իրանական գործակալներ», ապա Թուրքիայում ցանկացած կրոնական շարժում, որը դուրս է պետական վերահսկողությունից, դիտվում է որպես սպառնալիք ազգային անվտանգությանը⁵⁴:

Թուրքիայի ալավիները, չնայած իրենց զգալի թվաքանակին եւ պատմական ներկայությունը, շարունակում են բախվել պետական ճանաչման խնդիրների. նրանց ջեմեւիները պետական մակարդակով երկար ժամանակ չեն ճանաչվել որպես պաշտոնական աղոթատեղիներ⁵⁵: Ու թեեւ Թուրքական մարդահամարներում այս կրոնական ուղղվածությունը պաշտոնապես չի գրանցվում, այդուամենայնիվ տարբեր աղբյուրների պնդմամբ ներկայիս Թուրքիայի տարածքում բնակվում է 10-ից 20, այլոց կարծիքով՝ 5–25 միլիոն ալավի⁵⁶: Ավելորդ չէ նկատել, որ մարդահամարների կեղծումը Թուրքական բոլոր կառավարությունների ամենասիրած գործն էր եւ է⁵⁷:

2016 թ. հեղաշրջման փորձից հետո Թուրքիայի իշխանություններն առավել խստացրին վերահսկողությունը կրոնական եւ հասարակական ոլորտների նկատմամբ՝ հատկապես թիրախավորելով կրոնակրթական ուղղվածություն ունեցող Գյուլենական շարժումը: Այն պաշտոնապես ճանաչվեց որպես «ահաբեկչական կազմակերպություն», ինչին հաջորդեցին

⁵³ Տե՛ս <https://minorityrights.org/communities/rum-orthodox-christians/>, <https://www.mfa.gr/en/foreign-policy/foreign-policy-issues/issues-of-greek-turkish-relations/the-halki-heybeliada-seminary/>:

⁵⁴ Տե՛ս <https://www.uscirf.gov/countries/turkey/>:

⁵⁵ Տե՛ս M. DRESSLER, *Writing Religion: The Making of Turkish Alevi Islam*. Oxford: Oxford University Press, 2013:

⁵⁶ Տե՛ս <https://www.britannica.com/story/who-are-the-alevis-in-turkey>, հմմտ. <https://www.ceftus.org/ceftus-research-project-identification-and-politicisation-processes-in-turkeys-alevis/>:

⁵⁷ Արեւմտյան Հայաստանի ազգաբնակչության մասին Օսմանյան Թուրքիայի շինծու տվյալների մերկացումը տե՛ս ՍԷՅԼԱՆ (ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ), Տաճկա-Հայաստանի ազգաբնակչությունները, «Մշակ», 1895, հ. 7, էջ 948–961, հմմտ. A. HAROUTYNYAN, S. PRTOYAN, *Seylan's Interpretations of the Ethnographic Structure of Western Armenia*, «Էջմիածին», 2025, Յաւելուած, էջ 56–72:

վերջինիս անդամների եւ դրա հետ առնչություն ունեցած անձանց նկատմամբ լայնածավալ հետապնդումներն ու ճնշումները⁵⁸:

* * *

Եզրափակելով կարելի է նկատել, որ մեր տարածաշրջանում բոլոր պետությունները հստակ քաղաքական գծեր են ձեւավորել ազգային՝ պատմական-ավանդական եւ այս սահմանումից դուրս մնացող բոլոր կառույցների հանդեպ: Եւ մինչ տարբեր կրոնական համայնքների կապակցությամբ մենք կիրառում ենք աղանդ, հերձված կամ նմանատիպ եզրույթներ, մեր հարեւանների ձեւակերպումներն ավելի պարզ են եւ ընկալելի, որ գուցե նաեւ պետք է օրինակ ծառայեն մեզ՝ բաժանումը կատարելով ոչ թե ճշմարիտ եւ խոտորյալ հավատքի, այլ պետականամետ եւ պետության անվտանգության սպառնացող գործելաոճի հանգամանքով:

Ինչ վերաբերում է «Փափուկ ուժ» (Soft power) եզրույթին, այն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել ամերիկացի քաղաքագետ Զոգեֆ Նայը 1990-ին՝ Սաոն պատերազմի եզրափակիչ շրջափուլում: Իր երկու հիմնարար աշխատություններում նա վերանայում էր միջազգային հարաբերություններում ազդեցության միջոցներն ու սկզբունքները:

Հասկացությունն իր նախնական ձեւակերպումն է ստացել նրա մենագրության, ինչպես նաեւ հոդվածի էջերում, որտեղ հեղինակը հստակեցնում է, որ պետության հզորությունը, բացի ռազմական կամ տնտեսական հարկադրանքից (բիրտ ուժ), էպպես կախված է դրա մշակույթի, քաղաքական արժեքների եւ արտաքին քաղաքականության գրավչության միջոցով այլ դերակատարների նախապատվություններն ու օրակարգը ձեւավորելու կարողությունից⁵⁹:

Եւ մեր հպանցիկ անդրադարձերից, եւ վերջին տարիների համաշխարհային պատմական փորձից կարելի է տեսնել, որ «փափուկ ուժը» կարող է շատ ծանր եւ շատ կոշտ ազդեցություն գործել, բեկումնային հանդիսանալ պետությունների պատմության համար: Ուստի մշտապես առանձնակի ուշադրություն է պետք դարձնել դրա բոլոր դրսևորումներին՝ ի մտի պահելով, որ երբեմն այն կարելի է բնորոշել «փափուկ բարձ

⁵⁸ Տե՛ս <https://www.turkishminute.com/2023/06/23/pace-express-concern-over-turkey-pursuit-anyone-related-to-gulen-movement-condemns-transnational-repression/>:

⁵⁹ NYE, JOSEPH S. (1990). *Bound to Lead: The Changing Nature of American Power*. Basic Books; Nye, Joseph S. "Soft Power." *Foreign Policy*, no. 80, 1990, pp. 153–171.

դնելու» դարձվածաբանությունը՝ ընդգծելով դրա պատմաքաղաքական վտանգները:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

«Փափուկ ուժ», նորաստեղծ կրոնական շարժումներ, ավանդական եկեղեցիներ, ազգային անվտանգություն, պետական քաղաքականություն, կրոնական ոլորտի կարգավորում, մշակութային ինքնություն, Հայաստան, Հարավային Կովկաս, Մերձավոր Արեւելք:

РЕЗЮМЕ

В статье рассматриваются многоаспектные взаимоотношения новых религиозных движений и традиционных духовных институтов в контексте национальной безопасности, государственной политики и культурной идентичности. На основе сравнительного анализа материалов по Армении и соседним государствам – Ирану, Азербайджану Грузии и Турции – исследуются системные механизмы регулирования, контроля, ограничения и инструментализации религиозных сообществ со стороны властных структур. Особое внимание уделяется специфике взаимодействия новообразованных религиозных организаций с органами государственной безопасности, а также восприятию подобных движений как потенциальных каналов внешнего деструктивного влияния, идеологического проникновения и общественно-политической дестабилизации. В статье доказывается, что, несмотря на существенные различия политических систем и правовых моделей, государства региона выработали собственные прагматичные подходы, направленные на институциональную поддержку традиционных религиозных институтов при одновременном жестком ограничении или усиленном мониторинге деятельности нетрадиционных религиозных групп. Отдельно анализируются постсоветская трансформация религиозной сферы, геополитическое влияние глобализационных процессов и вызовы, стоящие перед историческими национальными церквями в современном мире. Особое место занимает армянский контекст, в рамках которого масштабная деятельность новых религиозных движений рассматривается не только с точки зрения свободы

вероисповедания, но и в прямой связи с вопросами сохранения национальной идентичности, демографической безопасности и культурной преемственности. Сочетая подходы религиоведения, политологии и исторического анализа, статья направлена на углубление современных научных дискуссий о соотношении религии, безопасности и сохранения традиционных духовных структур в странах Южного Кавказа и Ближнего Востока.

SUMMARY

This article examines the complex relationship between newly established religious movements and traditional spiritual institutions within the broader context of national security, state policy, and cultural identity. Drawing upon comparative material from Armenia and its neighboring states – Iran, Azerbaijan, Georgia, and Turkey – the study systematically analyzes the mechanisms through which regional governments regulate, supervise, restrict, or instrumentalize religious communities. Particular attention is paid to the interaction between non-traditional religious organizations and state security structures, evaluating the perception of such movements as potential vectors for foreign intelligence infiltration, ideological penetration, or sociopolitical destabilization. The article argues that, despite divergent political systems and constitutional frameworks, all states in the region have developed distinct, pragmatic approaches aimed at safeguarding traditional religious institutions while simultaneously neutralizing threats posed by non-traditional groups. The study addresses the post-Soviet transformation of the religious landscape, the geopolitical implications of globalization, and the acute institutional challenges faced by historic national churches. Special emphasis is put on the Armenian context, where the rapid influx of new religious movements is considered not merely through the prism of religious freedom, but in direct connection with preservation of national identity, demographic stability, and cultural continuity.





**ՄԱՐՄԱՆԵՆ ԵՒ ՎԱՅՐԱՄԱԲԵՐԳ.
ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՇՓՈԹԻ ԵՒ ՄԻՋՅԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ԲԱՆԱՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՃ՝**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շիրակի բարեբեր ձորահովտում՝ Ախուրյան գետի ափին գտնվող Մարմաշեն եւ Վահրամաբերդ գյուղերը Հայաստանի հնագույն եւ պատմամշակութային հարուստ ժառանգություն ունեցող բնակավայրերից են: Հնագիտական պեղումները փաստում են, որ այս տարածքը բնակեցված է եղել դեռևս Ք. ա. Յ-րդ հազարամյակից, սակայն բնակավայրերի արդի անվանադրման եւ ինքնության խնդիրներն սկիզբ են առնում միջնադարից ու վերջնականապես բյուրեղանում ԺԹ.-Ի. դարերի պատմաքաղաքական իրադարձությունների համապատկերում:

Սույն հոդվածի ուսումնասիրության առարկան Մարմաշեն եւ Վահրամաբերդ համայնքների անվանափոխությունների խնդիրն է, որը հաճախ հանգեցրել է տեղանվանական շփոթի: Հատկանշական է, որ ներկայիս Վահրամաբերդը պատմականորեն կոչվել է Մարմաշեն, իսկ այսօրվա Մարմաշենը՝ Տիրաշեն: 1946 թ. անվանափոխությունների հետեւանքով տեղի ունեցած «տեղաշարժը» ոչ միայն փոխեց քարտեզագրական պատկերը, այլեւ հիմք դարձավ երկարամյա միջհամայնքային վեճերի, որոնք դրսևորվում են ինչպես հողային ու ջրային ռեսուրսների բաշխման, այնպես էլ մշակութային ժառանգության՝ մասնավորապես Մարմաշեն վանական համալիրի «սեփականություն» շուրջ:

* Ստացվել է՝ 12.02.2026, գրախոսվել է՝ 8.05.2026: էլ. հասցե՝ hasmikgalstyan1979@gmail.com:

Հողվածում քննվում է նաև այս հակասությունների արտացոլումը ժողովրդական բանահյուսության մեջ: Հարեան գյուղերի միջեւ ձևավորված զավեշտալի որակումները, պիտակավորումներն ու «ասելուկները» դիտարկվում են որպես բանահյուսական առանձնահատուկ ենթաժանր, որոնք լավագույնս արտահայտում են համայնքների սոցիալական հոգեբանությունը եւ կենցաղային հակադրությունները: Աշխատանքի նպատակն է պատմական փաստերի, վիճակագրական տվյալների եւ բանահյուսական նյութի համադրմամբ վեր հանել անվանադրման խնդրի էությունը եւ դրա ազդեցությունը ժամանակակից միջհամայնքային հարաբերությունների վրա:

ՄԱՐՄԱՇԵՆ ԵՒ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԳՅՈՒՂԵՐԻ ԱՆՎԱՆԱԳՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Ախուրյան գետի ձորահովտում գտնվող Վահրամաբերդ եւ Մարմաշեն գյուղերը Շիրակի նշանավոր բնակավայրերից են: Տարածքում հայտնաբերված հնագիտական նյութերը վկայում են, որ մարդն այստեղ ապրել ու արարել է վաղնջական ժամանակներից՝ բնական նպաստավոր պայմանների շնորհիվ: Պեղումներով պարզվել է, որ դեռևս Ք. ա. Յ-րդ հազարամյակում այստեղ բավական խիտ բնակչություն է եղել²: Ըստ Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցու ընդարձակ արձանագրության՝ ներկայիս Վահրամաբերդ գյուղը հիմնադրվել է ԺԲ. դարի առաջին կեսին՝ վանքի շուրջը, եւ կոչվել է վանքի անունով՝ Մարմաշեն³: 1970-ական թթ. սկզբից՝ հնագետ Սերգեյ Հարությունյանի գլխավորությամբ իրականացված հնագիտական աշխատանքների շնորհիվ հուշարձանների եւ պարսպապատերի միջեւ բացվել է բնակելի, արտադրական, հասարակական շինությունների մնացորդներով Մարմաշեն բնակավայրը⁴ (նկ.1):

1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ավերված ու լքված վանքի շրջակայքում բնակություն են հաստատել Կարսի Ինջալար գյուղից գաղթած հայերը՝ իրենց նոր բնակավայրն անվանելով Ներքին Ղանլիշա: 1946 թ. հայաստանյան բնակավայրերի անվանումների հայկակա-

² Տես Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մարմաշենի պեղումները, Հայկական ՍՍՀ-ում 1975–1976 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1977, էջ 40:

³ Տես Դիվան հայ վիմագրության, պրակ 10, Շիրակի մարզ, կազմեց՝ Ս. ԲԱՐՆՈՒԳԱՐՅԱՆ, Երեւան, 2017, էջ 93–94, № 136:

⁴ Տես Ս. ՍԱՂՈՒՄՅԱՆ, Մարմաշենի վանքը, Վաղարշապատ, 1998, էջ 14:

նացման ծրագրի շնորհիվ Մարմաշեն – Ներքին Ղանլիջա գյուղը Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցու բակում ամփոփված սպարապետ Վահրամ Պահլավունի իշխանի պատվին ստացել է Վահրամաբերդ անվանումը: Սպարապետի անունն էր կրում նաեւ մոտակա ամրոցը՝ Վահրամաբերդը:

Հնագիտական հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ ներկայիս Մարմաշեն գյուղը հաստատվել է 1225 թ.⁵ Մարմաշեն վանքի կալվածքների մեջ մտնող Տիրաշեն եւ Ազատ⁶ գյուղերի տարածքում: Այստեղ էր գտնվում Ս. Ստեփաննոսի վանքը, որն արձանագրություններում կոչվում է Ազատ կամ Վերին վանք, որովհետեւ արձանագրությունից երեւում է, որ այդ Ս. Ստեփաննոս վանքն ունեցել է ինքնագլուխ առաջնորդ եւ միաբաններ միանգամայն ազատ: «Յետոյ այդ միաբանութիւնը միացրել են Մարմաշինու վանքի միաբանութեան հետ»⁶: Կարելի է ենթադրել, որ վերոնշյալ վանքի ազատ միաբաններով եւ այլ մարդկանցով բնակեցված տարածքը վերածվել է Ազատ կոչվող գյուղի, որը, հավանաբար, երկար չի գոյատևել: Չնայած այն փաստին, որ Ախուրյանի շրջանի Մարմաշեն գյուղի մոտակայքում գոյություն է ունեցել Ազատ, Ազատգեղ կամ Նոր գյուղ անունով բնակավայրը⁷, որը 1940-ականների վերջերին համայնքների խոշորացման պատճառով լքվել է, տեղացիներից ոչ ոք չի հիշում եւ չի լսել այս գյուղի գոյության մասին:

ԺԹ. դարի 30-ական թթ. արդեն անվանափոխված Վերին Ղանլիջա գյուղում բնակություն են հաստատել Կարսից, Դերջանից ու Մուշից եկած գաղթականները: Այստեղ է գտնվում Ուրարտուի Արգիշտի I արքայի նշանավոր սեպագիր արձանագրությունը, որի մոտ փաստագրվել են նաեւ նախաուրարտական, ուրարտական եւ միջնադարյան շերտեր⁸ (նկ. 2): 1946 թ. Տիրաշեն – Վերին Ղանլիջա գյուղը վերանվանվում է Մարմաշեն: Վերոնշյալ երկու գյուղերը զուտ հայաբնակ են: Հստ տեղական մի ավանդագրույցի՝ թուրքերը փորձել են «էն գեշեն անցնել», այսինքն՝ անցնել Ախուրյանի այս ափը: Կովի ժամանակ արյան լճեր են գոյացել, թուրքե-

⁵ Տե՛ս անդ:

⁶ Տե՛ս Մ. ՔԶ. ԳԷՈՐԳԵԱՆՑ ՇԻՐԱԿԱՅԻՈՅ Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ եւ մայրաքաղաքին Անտոյ, Աղէքսանդրապոլ, 1903, էջ 139:

⁷ Տե՛ս Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, կազմեցին՝ Թ. ՀԱՎՈՐՅԱՆ եւ այլք, Երևան, 1998, էջ 26:

⁸ Տե՛ս Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վահրամաբերդ-Մարմաշեն-Տիրաշենի պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», 2008, № 3, էջ 110:

րեն՝ ղանլիջա (արյան լիճ)⁹, որից էլ, ըստ ժողովրդական ստուգաբանության, առաջացել են բնակավայրերի անվանումները¹⁰:

ԺԳ. դարի արաբ պատմիչ Իբն ալ Ասիրն իր «Լիակատար պատմություն» մեջ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում է.—ԺԳ. դդ. Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Մանրամասնորեն ներկայացնում է Մարմաշենի նվաճումը, որը նրա գործում անվանված է Մարիամ-Նիշին¹¹, այսինքն՝ Մարիամի¹² աթոռանիստ, «Գանլիճայում գտնվող Մարմաշեն վանքն է»¹³: Այսպիսով՝ հիշատակված Մարիամ-Նիշին բերդ-քաղաքն այժմյան Մարմաշեն եկեղեցական համալիրի տարածքն է, որը հետագայում օտարների կողմից ստացել է Ղանլիջա, Գյալինջա, Գանլիճա¹⁴ անվանումները:

ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հարեւան բնակավայրերը հաճախ անհաշտ են լինում, եւ համայնքների միջեւ ծագած վեճերի հիմնական պատճառներից մեկը «հողի սակաուլթիւնը եւ անհաւասարութիւնը»¹⁵, հողային տարածքների բաշխման ոչ ճիշտ քաղաքականությունն է¹⁶: «Արարատ» ամսագրի թղթակի-

⁹ «Ղանլիջա» բառը թրք. kanlı բառից է, որ նշանակում է «արյունոտ», տե՛ս Մ. ԴԵՐՄԵՆՋՅԱՆ, Հայերեն-թուրքերեն բառարան, Երեւան, 2013, էջ 62:

¹⁰ Տե՛ս Հ. Գալստյան, դաշտային նյութեր, Շիրակ, 2023:

¹¹ Իբն ալ-Ասիրի վկայությամբ՝ «Մարիամ-Նիշի-ն-ը եղել է հոյակապ մի քաղաք, ունեցել է ամրապատ պարիսպներ եւ պաշտպանված է եղել մի մեծ գետով: Թուրքերը մոտեցել են պարիսպներին նավակների օգնությամբ եւ համառ կռիվներից հետո կարողացել են գրավել քաղաքը», տե՛ս Հ. ՄԱՆԱՆԳՅԱՆ, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեւտինգերյան քարտեզի, Յերեվան, 1936, էջ 126: Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, Արաբական աղբյուրներ, հտ. Բ., Իբն Ալ-Ասիր, թարգմ.՝ Ա. ՏԵՐ-ՂԵՐՈՆԳՅԱՆԻ, Երեւան, 1981, էջ 218:

¹² Մարմաշեն վանքի հիմնադրմանը մասնակցել է Աբխազաց եւ Հայոց Մարիամ թագուհին, որը Արծրունյաց Սենքերիմ թագավորի դուստրն էր, Բագրատունյաց Գագիկ Ա. թագավորի թոռը եւ Վրաց ու Աբխազաց Բագրատ Գ. թագավորի (1027–1072 թթ.) մայրը, տե՛ս Հ. ՄԱՆԱՆԳՅԱՆ, Երկեր, հ. Գ., Երեւան, 1977, էջ 58:

¹³ Տե՛ս Հ. ՄԱՆԱՆԳՅԱՆ, նշ. աշխ., էջ 58:

¹⁴ Տե՛ս Հ. ՄԱՆԱՆԳՅԱՆ, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեւտինգերյան քարտեզի, էջ 126:

¹⁵ Տե՛ս Ն. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ, Շիրակի գիւական կեանքից, «Արարատ», 1904, № 7–8, էջ 693:

¹⁶ Մինչեւ 1904 թ. «Վառավարութիւնը Վերին Ղանլիճային յատկացրել է 1052 դեսեատին հողային տարածութիւն, որից մշակելի է միայն 600 դեսեատինը եւ տանում է 3440 կոտ սերմացու, իւրաքանչիւր անձին ընկնում է 3/2 կոտատեղ: Ներքին Ղանլիճան ունի 856 դեսեատին հող, որից մշակելի է 416 դեսեատինը: Այդ հողը տանում է 1664 կոտ սերմացու, որ դարձեալ իւրաքանչիւր անձին հասնում է 3/2 կոտատեղ, տե՛ս Ն. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ, Շիրակի գիւղական կեանքից, էջ 693:

ցը գրել է. «Հողը բաւական չէ, հասկանալի է նաեւ գոյութեան անողոք կռիւր: Ահա քսան տարի կլինի, որ նրանք կուռւմ են անհաւասար հողաբաժանութեան պատճառով: Զրկուածները մեծ փող են ծախսում, հաւատարմատարներ են վարձում, որ իրանց խնդիրը, բողոքը տեղ հասցնեն, որ մի հնարքով հողը հաւասարացվի, միայն սովորաբար զորեղ կողմը միշտ յաղթում է»¹⁷:

Ըստ վիճակագրական տվյալների՝ գյուղերի հիմնադրման նախնական շրջանում Ներքին Ղանլիջան երկու անգամ ավելի բնակչութիւն է ունեցել: Սկսած 1873 թվականից՝ պատկերը կտրուկ փոխվում է, եւ մինչ օրս Մարմաշենի բնակչութիւնը կրկնակի ավելի է: Այս երեւույթը պայմանավորված է երկու գյուղերին հատկացված արոտավայրերի եւ տնամերձ հողամասերի՝ ոչ ճիշտ ու անհավասար բաշխված լինելու հանգամանքով, ինչն էլ նպաստել է երկու համայնքների միջեւ առկա խնդիրներին:

Վահրամաբերդ (Ներքին Ղանլիջա)

տարի	1831	1873	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2021
բնակիչ	247	389	466	272	538	602	747	752	919	1155	1455

Մարմաշեն (Վերին Ղանլիջա)

տարի	1831	1873	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2021
բնակիչ	109	644	896	743	1066	1334	1404	1341	1727	1876	2023

Միջհամայնքային վեճերի պատճառներից էր նաեւ բնակիչների՝ գանազան տեղերից եկվորներ լինելու հանգամանքը: Վերջիններս պիտակավորվում էին որպէս թուրքահայեր կամ տաճկահայեր, իսկ Առաջին աշխարհամարտից հետո խտրականութիւն էր դրվում գաղթականների եւ եռլականների (տեղացիների) միջեւ, որոնք զգալիորեն տարբերվում էին իրենց սովորույթներով, կենցաղով ու նիստուկացով: Շիրակի մարզի Մարմաշեն եւ Վահրամաբերդ գյուղերում այս երեւույթն առկա է մինչ օրս՝ խնդիրների որոշակի որակական փոփոխութիւններով հանդերձ, չնայած այն հանգամանքին, որ երկու գյուղերի բազմաթիւ ընտանիքներ կապված են ազգակցական-բարեկամական սերտ կապերով: Մի

¹⁷ Տէս անդ:

հետաքրքիր հանգամանք նշենք, երբ վեճեր էին ծագում գյումրեցիների եւ այս երկու գյուղերի բնակիչների միջեւ, գյուղացիները միավորվում էին ընդդեմ քաղաքացիների՝ անտեսելով իրար մեջ ունեցած խնդիրներն ու տարաձայնությունները:

Վերոնշյալ երկու համայնքների բնակիչների վիճաբանության երրորդ կարեւոր եւ հիմնական պատճառն այն էր, որ նրանք չեն կարողանում իրենց մեջ «կիսել» հայկական մշակութային ժառանգության այնպիսի մի արժեք, ինչպիսին է Վահրամաբերդ գյուղի վարչական տարածքում գտնվող Փ. դարում կառուցված Մարմաշեն վանական համալիրը (նկ. 3), եւ յուրաքանչյուր կողմն այն դիտում է որպես իր «սեփականություն»: Ներկայիս Վահրամաբերդն ի սկզբանե կոչվել է Մարմաշեն, իսկ ներկայիս Մարմաշենը՝ Տիրաշեն: 1946 թ. Հայաստանի բնակավայրերի անվանումների փոփոխությամբ կամ հայկականացմամբ Տիրաշեն անվանումը դուրս է մնում՝ հավանաբար անվան մեջ «տեր»¹⁸ բաղադրիչն ունենալու պատճառով, եւ թյուրիմացաբար կամ շփոթության հետեւանքով գյուղը վերանվանվում է Մարմաշեն, իսկ բուն Մարմաշեն գյուղի համար հորինվում է Վահրամաբերդ անվանումը: Պատմությանը տեղյակ չլինելու պատճառով խնդրի շուրջ ծավալվող վիճաբանությունն ամենօրյա բնույթ է կրում:

Եթե խնդրին նայենք առասպելաբանության տեսանկյունից, ապա վիճաբանության առիթ ընդհանրապես չկա: Վանքը, որպես ճարտարապետական կառույց, հոգեւոր ու մշակութային կենտրոն՝ գտնվում է Վահրամաբերդ գյուղի վարչական տարածքում, սակայն անունը, որը նույնքան կարեւոր է, որքան շինությունն իր ֆիզիկական առումով, պատկանում է մյուս գյուղին՝ Մարմաշենին: Գաղտնիք չէ, որ առասպելաբանության մեջ անունն ու էությունը հավասարազոր ընկնալումներ են: Կարելի է ասել, որ եկեղեցին իրար մեջ «կիսելու» խնդիրը անիմաստ է դառնում, քանի որ այն հավասարապես «պատկանում է» երկու համայնքներին եւ ողջ հայ ժողովրդին:

ԶԱՎԵՇՏԱԼԻ ՈՐԱԿՈՒՄՆԵՐ, ԱՍԵԼՈՒԿՆԵՐ, ՊԻՏԱԿՈՒՄ

Հարեւան համայնքների անհաշտ կենցաղավարումն իր դրսեւորումն ունի հայ բանահյուսության մեջ: Հայաստանի պատմաազգագրական տարբեր շրջաններում առկա են միմյանց պիտակավորման չափածո նմուշներ,

¹⁸ Խորհրդային տարիներին անընդունելի էր հատուկ անունների մեջ «տեր» բառի առկայությունը:

որոնք զավեշտ պարունակող քառյակներ կամ երկտողեր են (որոշ դեպքերում զավեշտը վերափոխվում է վիրավորանքի): Երբեմն զավեշտալի որակումներն ունեն իրական հիմքեր եւ որոշակի դեպքեր ու երեւույթներ վերագրվում են որոշակի համայնքների:

Հայաստանի գրեթե բոլոր գյուղերը հարեւանների կողմից զավեշտալի որակումներ են ունեցել: Շիրակում դեռեւս չեն մոռացվել հետեւյալները.

Մառաղ փախցնող ղալթախչեցիք,
Կոխվ էնող ազատանցիք,
Մածուն ծախող թափաղուկցիք,
Ղոնախ խեղդող ղոնախուանցիք,
Ջեջիմ գործող իլխաբեցիք,
Անուն դնող ղափլեցիք,
Տլոտ վանքի ղանլիչեցիք¹⁹:

Բանահյուսույթյան հիմնական ժանրերի կամ տեսակների մեջ ընդգրկված չեն պիտակումները կամ զավեշտալի որակումները: Մեր հետազոտողներն առանձնակի ուշադրություն չեն դարձրել ժանրի հստակեցման խնդրին: Բանահյուսական այսօրինակ տեքստերը գրառվել եւ ժողովածուներում ընդգրկվել են ամենատարբեր բաժիններում՝ դիտարկվելով անգամ որպես երգային բանահյուսույթյան նմուշներ:

ԺԹ. դարի կեսերից սկսած՝ հայ հետազոտողները խնդրո առարկա հանդիսացող բանահյուսական տեքստերը համարել են զավեշտալի երգեր: Գ. Տեր-Աղեքսանդրյանցն այս տեքստերը զետեղել է «Ձանազան երկրացոց մասին ածականներ եւ աւելի եւ հին անուններ եւ ազգեր» խորագրի ներքո²⁰: Ե. Լալայանը դրանք համարելով քնարական բանահյուսույթյան նմուշներ՝ ընդգրկել է «Երգիծական եւ ծաղրաշարժ երգեր»²¹ եւ «Երգիծական երգեր»²² բաժիններում: Հարցին ավելի հիմնավոր մոտեցում է ցուցաբերել Սարգիս Հայկունին: Նա «Ձավեշտական երգերի» շարքում ներկայացնում է Արագած լեռան փեշերի բնակավայրերի (Ապարան, Շի-

¹⁹ Տէս Հ. ԳԱԼՍՅԱՆ, Վահրամաբերդ, Դաշտային բանահյուսական եւ ազգագրական նյութեր, Շիրակ, 2008, տետր 1, թերթ 18:

²⁰ Տէս Գ. ՏԵՐ-ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ, Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, մասն Ա., Թիֆլիս, 1885, էջ 225–226:

²¹ Տէս Ե. ԼԱԼԱՅԱՆ, Ձաւախքի բուրմունք, Թիֆլիս, 1892, էջ 38:

²² Տէս Ե. ԼԱԼԱՅԱՆ, Բորշալուի գաւառ. երգիծական երգեր, «Ազգագրական հանդէս», գ. XI, Թիֆլիս, 1904, էջ 77–78:

րակ) մասին տեքստեր՝ հետեւյալ ծանոթագրութեամբ. «Ձաւեշտական երգերն բազմաթիւ են: Ընդհանրապէս գութան վարելու միջոցին կերգեն, շատ անգամ եւս պարի հանդէսներու մէջ: Սոյն երգերը, որ ամեն գաւառ ունի իրեն յատուկ զաւեշտական երգերը, նաեւ օր յօրի կաւելանան ու կը կոկուին: Շատ տեղեր կարծես հայ ժողովրդեան բնական սովորութիւն դարձած է իրար պարսուել: Նա շատ անգամ միակողմանի կը տեսնէ. հանդէպինի աւելի վատ կողմերը կը տեսնէ, առաւելութիւնները առ ոտն կը կոխէ: Բաւական է ամենափոքր թերութիւն մի տեսաւ, մանաւանդ եթէ ցեղական ատելութիւնն եւս ունեցաւ, հետեւեալ օր զաւեշտական ոտանաւոր մի կը հնարէ ու կերգէ: Առ այս անհաշիւ են ծաղրի երգերն, շատ անգամ՝ անբարոյական նախադասութիւններով յերիւրուած, որ գրի առնել ամօթ կը բերէ: Սակայն կարծես թէ այդ տեսակ երգերն աւելի հնութեան կնիք կը կրեն: Գիւղացին մի ուրիշ գիւղացու վրայ, գաւառացին մի գաւառացու վրայ կը յերիւրէ: Եթե մին գտնուած է մի ուրիշ գիւղ կամ գաւառ, այդ տեղ մի անձէ յարգ չէ գտած. ամբողջ գիւղը կամ գաւառը կը պարսուէ»²³:

Ս. Հայկունին «Ասելուկներ» բաժնում ընդգրկել է ժողովրդական չափածո, հանգավոր ստեղծագործութիւններ՝ ամենատարբեր բնույթի ու բովանդակութեան (Հեքիաթ, հեքիաթ պապս, նախշուն քուռակ տակս..., Այբ, բեն, գիմ, Ել, Հովակիմ... եւ այլն): Կարծում ենք, որ պիտակումներ կամ զավեշտալի որակումներ պարունակող տեքստերը կարելի է մեկտեղել եւ զետեղել «Ասելուկներ» խորագրի տակ՝ բովանդակային ու գործառութեան առումներով նմանեցնելով «հանելուկ», «շուտասելուկ», «սուտասելուկ» եզրույթներին:

Շիրակում այս երեսույթը կոչվում է «տըռըսխա էնել» (ծաղրել), իսկ բնութագրական տեքստերը՝ «տըռըսխեք» (ծաղրանքներ), որոնք ուղղված են անձերին կամ անհատներին, ընտանիքներին, տոհմերին, համայքներին ու գավառներին:

Փորձել ենք Շիրակի որոշ գյուղերի մասին մեր գրառած ասելուկները դասակարգել ըստ կառուցվածքի եւ ստացել ենք հետեւյալ պատկերը.

1. Հանելուկային կառույց

Տոպրակըմ արու աղամ՝

²³ Տե՛ս Ս. ՀԱՅԿՈՒՆԻ, Ժողովրդական երգ, առած, հանելուկ եւ այլն այլեւ այլ բարբառներով, էմինեան ազգագրական ժողովածու, հ. 6, Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 153:

Սաղ օրը վերվերի կխաղան (Կապսի մասին է):

2. *Բնութագրական կառույց*
Դանլիջեցիք տասնհինգ տուն են,
Տներն պուր, ձավար շունին,
Ճաշ ուտելու թարաղ (ափսե) շունին,
Դեկցության հավաս շունին (Վահրամաբերդի մասին է):

3. *Վիրավորանք արտահայտող*
Օրթընած (որդնած) քիլիսա
Տաֆ-տաֆ հերիսա,
Պաղ-պաղ աներ,
Անոթի շներ (Մայիսյանի մասին է):

4. *Զավեշտ կամ ծաղր պարունակող*
Հաջինազար ձորի բերան,
Էլը մորթին՝ միսը կերան (Կամոյի մասին է):

5. *Միաբաղադրիչ կառույց*
Զամռաշեն - Մարմաշեն
Զամռաշենցի = մարմաշենցի
Տլոտ վանճրցի = վահրամաբերդցի

Այսպիսով՝ հարեւան համայնքների միջեւ առկա «անհաշտ» կենցաղավարումը եւ մրցակցությունը ծնել են բանահյուսական կարճ կառույցներ, որոնք նպաստում են դիմացիներին ծաղրելուն, թերությունները մատնանշելուն, սեփական համայնքի առավելությունը շեշտելուն, տվյալ համայնքի անցյալի դեպքերը, զբաղմունքը կամ բնավորության գծերը վերհանելուն: Չնայած նախկինում դրանք դիտարկվել են որպես «զավեշտական երգեր», առավել նպատակահարմար է դրանք դասակարգել «Ասելուկներ» խորագրի ներքո՝ հաշվի առնելով դրանց կառուցվածքային նմանությունը հանելուկներին ու շուտասելուկներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Մարմաշեն եւ Վահրամաբերդ գյուղերի անվանադրման խնդրի եւ միջհամայնքային հարաբերությունների քննությունը՝ կարող ենք կատարել հետեւյալ եզրահանգումները.

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայիս տեղանվանական խնդիրների հիմնական պատճառը Ի. դարի (1946 թ.) իրականացված վար-

չական անվանափոխություններն են: Պատմական Մարմաշենի (ներկայիս Վահրամաբերդ) եւ Տիրաշենի (ներկայիս Մարմաշեն) անունների «փոխատեղումը» ստեղծել է արհեստական անջրպետ բնակավայրի պատմական ինքնության եւ նրա արդի անվանման միջեւ:

Միջհամայնքային վեճերը, որոնք առաջին հայացքից կարող են թվալ լուրջ անվանական կամ մակերեսային, իրականում ունեն հողային եւ ժողովրդագրական պատճառներ: Հողատարածքների եւ արոտավայրերի անհավասար բաշխումը, որն ի հայտ է եկել դեռեւս ժԹ, դարի վերջին եւ Ի. դարի սկզբին, նպաստել է համայնքների միջեւ մրցակցությունը եւ միմյանց նկատմամբ վերապահումների ձեւավորմանը:

Մարմաշենի վանական համալիրը, լինելով համազգային նշանակության հուշարձան, տեղային մակարդակում դարձել է ինքնության կռվան: Խնդիրը կրում է առասպելաբանական բնույթ. վանքը Ֆիզիկապես գտնվում է Վահրամաբերդի տարածքում, սակայն կրում է հարեւան Մարմաշեն գյուղի անունը, ինչն էլ սնում է երկու համայնքների հավակնությունները:


Հետազոտությունը հաստատում է, որ հարեւանների միջեւ առկա «պիտակումները» եւ «զավեշտալի որակումները» հայ բանահյուսության մեջ պետք է դիտարկվեն որպես առանձնահատուկ ենթաժանր՝ «ասելուկներ» խորագրի ներքո: Դրանք ոչ միայն ծաղրի կամ կատակի արտահայտություն են, այլեւ պատմական հիշողության եւ համայնքային սահմանների պահպանման յուրօրինակ մեխանիզմ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոգվածում քննվում են Շիրակի մարզի Մարմաշեն եւ Վահրամաբերդ գյուղերի անվանադրման պատմական եւ ազգագրական առանձնահատկությունները: Հեղինակը վերլուծում է ժԹ,–Ի. դարերում տեղի ունեցած վարչատարածքային եւ անվանափոխության գործընթացները, որոնք հանգեցրել են ներկայիս տեղանվանական շփոթին եւ միջհամայնքային վեճերին: Հատուկ ուշադրություն է դարձվում հողային ռեսուրսների անհավասար բաշխմանը եւ Մարմաշենի վանական համալիրի «պատկանելության» խնդրին: Հետազոտության մեջ առաջին անգամ փորձ է արվում համակարգել հարեւան համայնքների միջեւ առկա զավեշտալի որակումներն ու պիտակավորումները՝ դրանք դիտարկելով որպես բանահյուսական առանձին ենթաժանր՝ «ասելուկներ»:



Նկ. 1. Մարմաշեն եկեղեցին և համանուն գյուղատեղին ժԹ: դարավերջից Ի. դարասկիզբ: Լուսանկարը տրամադրել է Վահան Թումայանը:



Նկ. 2. Ուրարտուի թագավոր Արգիշտի I սեպագիր արձանագրությունը Մարմաշեն գյուղի տարածքում: Լուսանկարը՝ Հասմիկ Գալստյանի:



Նկ. 3. Մարմաշեն վանական համալիրը, 2023 եւ 2025 թթ. :
Լուսանկարները՝ Հասմիկ Գալստյանի:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Շիրակ, Մարմաշեն, Վահրամաբերդ, տեղանուն, անվանափոխություն, բանախոսություն, ասելուկներ, միջհամայնքային վեճեր:


РЕЗЮМЕ

В статье рассматриваются исторические и этнографические аспекты топонимики сёл Мармашен и Ваграмаберд Ширакской области. Автор анализирует процессы административно-территориальных преобразований и переименований XIX–XX веков, повлёкшие современную топонимическую неразбериху и межобщинные споры. Особое внимание уделяется неравномерному распределению земельных ресурсов и вопросу о «принадлежности» монастырского комплекса Мармашен. В исследовании впервые предпринята попытка систематизировать шуточные характеристики и «ярлыки», бытующие между соседними общинами, рассматривая их как самостоятельный фольклорный поджанр — аселукнер (приговорки).

SUMMARY

The article examines the historical and ethnographic characteristics of the names of the villages of Marmashen and Vahramaberd in the Shirak Region. The author analyzes the administrative-territorial reforms and renamings that took place in the 19th and 20th centuries, which have led to the current toponymic confusion and inter-community disputes. Particular attention is paid to the unequal distribution of land resources and the question of “ownership” of the Marmashen monastery complex. The study represents the first attempt to systematize the humorous characterizations and “labels” exchanged between neighboring communities, treating them as a distinct folklore subgenre—“aselukner” (sayings).





ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԼԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋԱՅՏՈՂ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ¹

(Ավետիս Նարոկոնյան. «Հայ գաղթականությունն Առաջին աշխարհամարտի տարիներին եւ Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցին (1914–1917 թթ.)»)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը լույս է ընծայել անվանի պատմաբան, Երեւանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հայոց պատմության ամբիոնի, Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի վաստակաշատ ու սիրված դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ավետիս Հարությունյանի՝ «Հայ գաղթականությունն առաջին աշխարհամարտի տարիներին եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին (1914–1917 թթ.)»² ուսումնասիրությունը: Մենագրությունը նվիրված է Առաջին աշխարհամարտի տարիներին Արեւելյան Հայաստանում եւ Այսրկովկասում ապաստանած հայ գաղթականության պատմության լուսաբանմանը եւ նրանց փրկության, տեղաբաշխման, խնամքի եւ օգնության կազմակերպման գործում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անմնացորդ ու ազգանվեր առաքելության արժեւորմանը:

Թեեւ աշխարհասփյուռ հայության պատմական ճակատագրի ու պատմության առանձին հարցեր ժԹ. դարից սկսած մշտապես եղել են հայ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, սակայն հայ պատմագրության մեջ գաղթականության պատմության եւ գաղթաշխարհի հիմնահարցերի գիտական հետազոտությունը՝ որպէս հայագիտության առանձին ուղղություն, ձեւավորվել է Ի. դարում: Աշխարհասփյուռ հայության պատմության ուշագրավ հարցերի լուսաբանմամբ զբաղվել են ինչ-

¹* Ստացվել է՝ 24.02.2026, գրախոսվել է՝ 20.03.2026:

էլ. հասցե՝ armanmaloyan1976@gmail.com, nona-7979@mail.ru, gevorgyan.heriqnaz@mail.ru:

² Խմբագիր՝ Լ. Ավագյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2025, 456 էջ:

պես հայ, այնպես եւ օտարազգի գիտնականներ, որոնք հրատարակել են արժեքավոր ուսումնասիրություններ ու մենագրություններ: Հայագիտությունն այս բնագավառի ձեւավորման ու զարգացման գործում անուրանալի է հայ գաղթաշխարհի ու գաղթավայրերի պատմության քաջատեղյակ ու քննախույզ ուսումնասիրող Ա. Ալպոյաճյանի³ ավանդը: Նրա թողած անօրինակ մեծածավալ ժառանգությամբ (հրատարակված ու անտիպ) հիմնադրվեց հայ գաղթականության ու հայ գաղթավայրերի գիտական ուսումնասիրությունը:

Խորհրդային շրջանում հայագիտության աննախադեպ զարգացումը Հայաստանում հանգեցրեց արհեստավարժ պատմաբանների նոր սերնդի ձեւավորմանը, որոնց գիտական պատրաստվածությունը թույլ տվեց որակական նոր մակարդակի բարձրացնելու հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունը: 1960-ական թվականներին Աշոտ եւ Ռաֆիկ Աբրահամյանների հեղինակությամբ լույս տեսած «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» աշխատությունը դարձավ հայ գաղթաշխարհի պատմության ամփոփ ներկայացման առաջին հաջողված փորձը: Այս աշխատության երկու հատորներում համակարգված շարադրվեց միջնադարից մինչեւ նոր ժամանակներն ընկած ժամանակահատվածում ձեւավորված ավելի քան երեսուն հայ գաղթավայրերի պատմությունը: 2002 թ. հրատարակված Հրաչյա Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն» մեծածավալ աշխատությունը նշանավոր գիտնականի բազմամյա հետազոտությունների եւ պրպտումների արդյունքն էր, որը դարձավ ոլորտի կարեւորագույն կոթողային գործերից մեկը:

Հայագիտության կարեւորագույն ձեռքբերումներից է «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռահատորյակի հրատարակումը, որը ներկայացնում է հայ գաղթօջախների դարավոր պատմությունը դրանց սկզբնավորման շրջանից մինչեւ մեր օրերը: Կոթողային այս աշխատանքը հրատարակության է պատրաստել հայ գաղթաշխարհի պատմության երեւելի մաս-

³ Դեռեւս 21 տարեկան հասակում Ալպոյաճյանը գրեց այս շարքի իր առաջին գործը՝ «Հայքի Ռումելի», որը 1905 թ. արժանացավ Իզմիրյանց գրական Ա. մրցանակին: Հետազոտական մեղվաջան ու պրպտող աշխատանքի արդյունք են Ա. Ալպոյաճյանի «Պատմութիւն հայ գաղթականութեան» կոթողային հատորները, որոնցից առաջինը հրատարակվեց 1941 թ. (Կահիրեում), երկրորդը՝ 1955 թ., իսկ երրորդ հատորի Ա. պրակը՝ 1961 թ.: Աշխատության մեջ հմուտ ուսումնասիրողը հանգամանալից ներկայացրել է աշխարհասփյուռ հայ գաղթավայրերի հնարավորինս ամբողջական պատմությունը:

նագետ, պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը: Գրքի հեղինակային կազմը եւս հեղինակավոր է՝ բաղկացած հայ գաղութների պատմության ուսումնասիրման հարցերով գնահատելի վաստակ ունեցող հետազոտող-պատմաբաններից:

Վերոհիշյալ ընդգրկուն աշխատանքներից բացի՝ տարբեր ժամանակներում հրատարակվել են նաեւ առանձին հայկական գաղթավայրերի կամ սփյուռքահայ համայնքների պատմությանը նվիրված մենագրություններ կամ հայ գաղթականության պատմության առանձին հարցեր լուսաբանող հետազոտություններ:

Հայ գաղթականության պատմության ուսումնասիրության գործում նշանակալի ավանդ է Ա. Հարությունյանի «Հայ գաղթականությունն Առաջին աշխարհամարտի տարիներին եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին (1914–1917 թթ.)» աշխատությունը:

Մենագրությունն ունի կուռ կառուցվածք եւ տրամաբանական բաժանում: Այն բաղկացած է առաջաբանից, հինգ գլուխներից, վերջաբանից (եզրակացություններ) եւ օգտագործված սկզբնաղբյուրների եւ գրականության ցանկից: Մենագրության ժամանակագրական շրջանները 1914 թ. աշնանից մինչեւ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունն ընկած ժամանակահատվածն են: Հետազոտության աղբյուրագիտական հենքը Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ), Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (Մատենադարան), Ե. Զարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում (ԳԱԹ), Հայաստանի պատմության թանգարանում (ՀՊԹ), Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում (ՀՅԹԻ), Հովհաննես Թումանյանի թանգարանում, Վրաստանի ազգային արխիվում (ԴԱԳ), Ռուսաստանի Դաշնության ռազմապատմական պետական կենտրոնական արխիվում (ЦГВИА РФ), Մոսկվա քաղաքի պատմության պետական կենտրոնական արխիվում (ЦГИАМ), Ռուսաստանի Դաշնության գրականության եւ արվեստի պետական կենտրոնական արխիվում (ЦГАЛИ), Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվում (АВПРИ РФ), Ռուսաստանի պետական կենտրոնական արխիվում (ЦГИА в Санкт-Петербурге), Ռուսաստանի Դաշնության պետական արխիվում (ГАРФ РФ), Մեծ Բրիտանիայի ազգային արխիվում (Public Record Office of England (The National Archives [UK]) պահպանված փաստաթղթերն են եւ ժամանակի պարբերական մամուլից քաղված մեծաքանակ նյութերը, որոնք հեղինակը գի-

տական շրջանառության է դրել առաջին անգամ: Օգտագործվել են նաև հիշյալ արխիվների համապատասխան ֆոնդերից հայտնաբերված վավերագրեր, ակնատեսների նոթագրություններ, զեկուցագրեր, հիշողություններ, նամակներ եւ արժեքավոր այլ տեղեկություններ Առաջին աշխարհամարտի տարիներին Այսրկովկասում ապաստանած հայ գաղթականության տարաբնույթ հարցերի վերաբերյալ:

Գրքի առաջաբանում հեղինակը նախ սահմանում է գաղթականություն հասկացությունը, ապա հանգամանալից ներկայացնում է զանգվածային արտագաղթեր երեւույթը՝ որպես հայ ժողովրդի բազմադարյան պատմության ողբերգական ու շարաղետ ժամանակաշրջաններին բնորոշ ու դրանց անբաժան ուղեկից: Մենագրության հեղինակն իրավացիորեն նշում է, որ Հայոց բնօրրանից՝ Հայկական լեռնաշխարհից պարբերաբար կազմակերպվող զանգվածային արտագաղթերն ու բռնագաղթերը, որոնց հետեւանքով մոտ ու հեռավոր երկրներում հիմնվում էին գաղթօջախներ, ու ձեւավորվում էր գաղթաշխարհը, պայմանավորված էին Հայաստանի ընկերային-տնտեսական եւ ռազմաքաղաքական հանգամանքներով: Հայաստանի աշխարհագրական դիրքը եւ տնտեսական նշանակությունը դարեր շարունակ այն դարձրել են նվաճողների ասպատակությունների ու ավարառությունների թիրախ, ինչն առաջացրել է բնակչության պարբերական արտահոսք, զանգվածային տեղահանություններ ու բռնագաղթեր: Անվանի պատմաբանը կարծում է, որ հայերի առաջին խոշոր բռնագաղթը կազմակերպել է Սասանյան Պարսկաստանի հիմնադիր Արտաշիր Ա.-ն, երբ 228 թ. Հայաստան կատարած արշավանքից հետո շուրջ 30–40 հազար հայի տեղահանել ու բնակեցրել է իր տերության հեռավոր շրջաններում: Դրանից մոտ երկու տասնամյակ անց՝ 368–369 թթ., երբ երկիրը Արշակ Բ.-ի գերեվարությունից ու Անհուշ բերդում արգելափակվելուց հետո ճգնաժամային իրավիճակում էր, Հայաստան է արշավում Սասանյան Շապուհ Բ. Երկարակյաց արքան, որը շուրջ 161 հազար հայի տեղահանում եւ վերաբնակեցնում է Սասանյան Պարսկաստանի Խուզեսթան (Խուժիստան) եւ Ասորեստան երկրամասերում:

Այնուհետև հեղինակը ներկայացնում է Բյուզանդիայի որդեգրած՝ «Հայաստանն առանց հայերի» քաղաքականությունը, Բյուզանդիայի Մորիկ կայսեր (գահակալել է 582–602 թթ.) սկիզբ դրած հայկական տարրի համակարգված տեղահանումը եւ դեպի Թրակիա ու Բալկաններ արտագաղթը՝ նպատակ ունենալով ջնջել երկրի ռազմական ուժը: Ըստ պատ-

միջ Սեբեոսի՝ սա կայսրության վարած երկերեսանի ու խարդախ քաղաքականության արդյունքն էր:

Ապա անդրադառնում է սելջուկյան եւ մոնղոլական տիրապետության (ԺԱ.–ԺԵ. դդ.) ժամանակաշրջաններում կատարված զանգվածային արտագաղթերին, որոնց հետեւանքով հայկական գաղթավայրեր ձեւավորվեցին ավելի քան 25 երկրներում, այդ թվում՝ Վրաստանում, Հյուսիսային Կովկասում, Մերձվոլգյան տարածքներում, Ղրիմում, Ուկրաինայում, Մոլդավիայում, Լեհաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Փոքր Ասիայի ծովամերձ շրջաններում եւ Կիլիկիայում: Հայոց պատմության մեջ աննախագեպ ու ժողովրդագրական աղետալի հետեւանքներով նշանավորվեց 1604 թ. Պարսկաստանի շահ Աբբաս Ա.-ի իրականացրած շուրջ 360 000 հայի բռնագաղթը, որը ոչ միայն ամայացրեց կենտրոնական նահանգները, այլեւ հիմնովին փոխեց Հայաստանի ժողովրդագրական կազմը՝ հօգուտ եկվոր մահմեդականների:

ԺԹ. դարի առաջին կեսին՝ Թուրքմենշայի (1828 թ.) եւ Ադրիանապոլսի (1829 թ.) պայմանագրերով, առաջին անգամ հնարավոր դարձավ հայության մասնակի վերաբնակեցումը Արեւելյան Հայաստանում (ավելի քան 145 000 գաղթական), ինչը վերականգնեց հայ ժողովրդի հավաքական գոյությունը:

ԺԹ. դարի երկրորդ կեսից Հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա, ինչին զուգահեռ վերելք ապրեց հայ ազգային-ազատագրական շարժումը: Այս գործընթացներին վերջ տալու նպատակով Օսմանյան Թուրքիայի աբդուլհամիդյան վարչակարգը կիրառեց արեւմտահայության զանգվածային կոտորածների քաղաքականություն, որի հետեւանքով զոհվեց շուրջ 300 000 մարդ: Նույնքան բնակչություն ստիպված եղավ գաղթել հայրենիքից, որից մոտ 100 000-ը տեղափոխվեց Ռուսաստան, իսկ 150 000–200 000-ը՝ Եւրոպայի, Աֆրիկայի ու Ամերիկայի տարբեր երկրներ: Արեւմտահայության մի հատվածն էլ փրկության նպատակով հարկադրված ընդունեց մահմեդականություն:

1915–1916 թվականներին երիտթուրքական կառավարությունն իրականացրեց արեւմտահայերի կանխամտածված բնաջնջման ծրագիրը, որն իր դաժանությամբ եւ ընդգրկմամբ նախագեպը չունեւ: Թուրքական իշխանությունները դեպի Միջագետքի եւ Սիրիայի անապատներ բռնագաղթեցրին մոտ 600 000 հայի, որոնց մի մասը սպանվեց ճանապարհին, իսկ ողջ մնացածները բնակություն հաստատեցին Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում,

Իրանում, Իրաքում, ինչպես նաև Արեւմուտքի երկրներում: Միաժամանակ Առաջին աշխարհամարտի Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի նահանջների պատճառով ավելի քան 370 000 մարդ գաղթեց Կովկաս: Դարավոր բռնությունների եւ տեղահանությունների արդյունքում Հայաստանը պարբերաբար հայաթափվեց՝ զրկվելով իր բնիկ ազգաբնակչությունից:

Ի. դարի սկզբի ողբերգական իրադարձությունների, մասնավորապես՝ մարդկության պատմության առաջին՝ Հայոց ցեղասպանության եւ Առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ռազմաճակատում մղված ռազմական գործողությունների անկողմնակալ ուսումնասիրությունը շարունակում է մնալ պատմագիտության առանցքային խնդիրներից մեկը: Պատերազմի տարիներից ի վեր ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային գիտական շրջանակներում՝ Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում եւ Շվեյցարիայում, ձեւավորվել է հարուստ գրականություն, որն ընդգրկում է գիտական հոդվածներ, մենագրություններ եւ հուշագրություններ:

Այդուհանդերձ, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում Այսրկովկաս տեղափոխված հայ գաղթականության պատմության համապարփակ հետազոտությունը երկար ժամանակ դուրս է մնացել հայ պատմագրության ուշադրությունից եւ չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Այս հիմնախնդրի բազմակողմանի քննությունն ունի թե՛ պատմագիտական լուրջ նշանակություն եւ թե՛ քաղաքական այժմեականություն: Այն անհրաժեշտ է ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի պատմության լիարժեք ու անաչառ լուսաբանման, այլեւ գաղթի քաղաքական պատճառները բացահայտելու, դրա հեռահար նպատակները հասկանալու եւ իրականացված ծրագրերի էությունը պարզելու համար: Հայ գաղթականության պատմության գիտական հետազոտությունն անհրաժեշտ է նաև այն պատճառով, որ երիտթուրք պետական գործիչները, բազմաթիվ թուրք պատմաբաններ եւ թուրքամետ շրջանակներ, անդրադառնալով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Այսրկովկասում տեղի ունեցած իրադարձություններին, նպատակաուղղված քողարկում են 1915 թվականի ցեղասպանության փաստը: Նրանք փորձում են խեղաթյուրել պատմական ճշմարտությունը՝ արեւմտահայության տեղահանության եւ գաղթի պատմությունը ներկայացնելով կողմնակալ ու նենգափոխված:

Այնուհետեւ հեղինակը ներկայացնում է մենագրության նպատակը, այն է՝ լուսաբանել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

(1914–1917 թթ.) հայ գաղթականության ձեւավորման եւ Այսրկովկասում նրանց հաստատման պատմությունը՝ հետազոտության առանցքում պահելով երիտթուրքական կառավարության իրագործած զանգվածային տեղահանություններն ու կոտորածները, ինչպես նաեւ ցարական Ռուսաստանի որդեգրած հակահայկական եւ գաղութային քաղաքականության հետեւանքները: Այս ընդհանուր համատեքստում հեղինակն առանձնակի արժեւորում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարումը: Ա. Հարությունյանը, հիմնվելով իր բազմամյա հետազոտությունների վրա (որոնք ամփոփվել են դեռեւս 1989 թ. պաշտպանված թեկնածուական ատենախոսության մեջ եւ շուրջ 50 գիտական հոդվածներում), նպատակ ունի աղբյուրների համակողմանի վերլուծությամբ լուսաբանելու Հայոց ցեղասպանության եւ գաղթականության փոխկապակցվածությունը, քննադատաբար ներկայացնելու գաղթի փուլերը, 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերյան, 1915 թ. հուլիսյան, 1916 թ. հուլիս–օգոստոսյան եւ նույն տարվա նոյեմբերյան գաղթերի ժամանակագրությունն ու ընթացքը, ցարիզմի երկդիմի քաղաքականության բացահայտումը, ցարական Ռուսաստանի գաղութային նպատակների վերհանումը, որոնք հանգեցրին գաղթերի, հատկապես՝ 1915 թ. հուլիսյան աղետալի տեղահանության միտումնավոր կազմակերպմանը, ցույց տալու հայ գաղթականներին ցուցաբերվող պետական օգնության կազմակերպման եւ իրականացման եղանակները, հանգամանալից ներկայացնելու գաղթականական կոմիտեների եւ բարեգործական հիմնարկների ծավալած աշխատանքը, գաղթականների ծանր վիճակը, տեղաբաշխումը եւ օգնության կազմակերպումն Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստանի տարբեր շրջաններում, արժեւորելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անմնացորդ նվիրումը հայ գաղթականների փրկության գործին, պարզաբանելու տարբեր երկրներում հայ գաղթականների օգնության կազմակերպման հայանպաստ շարժման օգտավետությունը:

Մենագրության առաջին գլխում, որն ունի «Հայ գաղթականության սկզբնավորումը (1914 թ. վերջերին – 1915 թ. սկզբներին) եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը» վերնագիրը, հեղինակը հանգամանորեն ներկայացրել է արեւմտահայերի եւ պարսկահայերի առաջին գաղթն Արեւելյան Հայաստան եւ Այսրկովկաս (1914 թ. նոյեմբեր–դեկտեմբեր), Ս. Էջմիածնի 1915 թ. գաղթականական համագումարը եւ նրա պատմական նշանակությունը, Ս. Էջմիածնի կաթողիկոսարանը եւ հայ գաղթականների հոգեւոր-

մշակութային արժեքների փրկության ու կրոնական պահանջմունքների բավարարման խնդիրը, արեւմտահայ գաղթականության վիճակը եւ օգնության կազմակերպումը 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերյան գաղթից հետո, պարսկահայ գաղթականության վիճակը եւ օգնության կազմակերպումը Նախիջեւանի, Շարուր-Դարալագյազի գավառներում եւ Պարսկաստանի հայաշատ շրջաններում, Ներսես արք. Մելիք-Թանգյանի գործունեությունը 1914–1915 թթ., հայ գաղթականության 1915 թ. հունվարի 30-ի մեկօրյա վիճակագրությունը եւ հարակից այլ հարցերի լուսաբանումը: Փաստագրելով, որ «ռուս-թուրքական պատերազմները եւ արեւմտահայ գաղթականությունը միշտ եղել են երկու անքակտելի օղակներ, մեկը՝ պատճառ, մյուսը՝ հետեւանք»⁴, Ա. Հարությունյանը գրում է, որ առաջին գաղթն իր բացասական ազդեցությունն ունեցավ ժողովրդի հոգեբանության վրա՝ առաջ բերելով ընդհանուր սրտաբեկում: «Նահանջ» բառը սարսափի ու գլխակորույս փախուստի իր իմաստով անջնջելի հետք թողեց հայ ժողովրդի մտայնության մեջ: Էջմիածնի համագումարը հեղինակը համարում է պատմական վճռորոշ նշանակություն ունեցած իրադարձություն հայ գաղթականության կյանքում, քանի որ այն առաջին համագումարն էր, որը քննարկեց գաղթականների օգնության, նրանց պահպանման, տեղավորման եւ հայրենիք վերադառնալու հարցերը: Համագումարը տեղի ունեցավ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ ավարտվել էր 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերյան գաղթը, եւ դեռ չէր սկսվել Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան աղետալի գաղթը: 1915 թ. գարնանը մեծ թվով գաղթականներ վերադարձան իրենց բնակության նախկին վայրերը եւ ձեռնամուխ եղան Արեւմտյան Հայաստանի վերաշինության գործին: Այդ առումով մեծ նշանակություն ունեցան հատկապես էջմիածնի համագումարի պատմական որոշումները: Համագումարում առաջին անգամ փորձ արվեց կենտրոնացնելու հայ գաղթականության հարցով զբաղվող հասարակական եւ բարեգործական բոլոր հաստատությունների ուժերը: Մինչ այդ, բացակայում էին գործունեության մեկ ընդհանուր ղեկավարումը, համագործակցության միաբան եւ համերաշխ համակարգը, դրամական եւ նյութեղեն նպաստների բաշխման միասնությունը: Նաեւ զանազան քաղաքներում բազմաթիվ հաստատու-

⁴ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ գաղթականությունն Առաջին աշխարհամարտի տարիներին եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին (1914–1917 թթ.), էջ 19:

թյուններ, ընկերություններ, հանձնաժողովներ, կոմիտեաներ գործում էին իրարից անկախ եւ ազատ՝ առանց որեւէ համաձայնություն: Միավորման պահանջն էլ ավելի հրամայական դարձավ գաղթականներին հայրենիք վերադարձնելու եւ նրանց քայքայված տնտեսությունը վերականգնելու հարցի քննարկման ժամանակ: Միեւնույն ժամանակ, էջմիածնի համագումարը մեծ փորձ կուտակեց հետագայում Պետրոգրադի գաղթականական եւ արեւմտահայերի առաջին եւ երկրորդ համագումարների հրավիրման համար⁵: Անուրանալի իրողություն է, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին էջմիածնի կաթողիկոսարանի ղեկավարությունը եւ անմիջական մասնակցությամբ իրականացվեցին մի շարք անհետաձգելի միջոցառումներ, որոնք վճռորոշ նշանակություն ունեցան արեւմտահայ գաղթականության եւ մշակութային ժառանգության փրկության գործում:

Առաջին գլխի վերջում Ա. Հարությունյանը, ամփոփելով 1915 թ. հունվարի 30-ին անցկացված մեկօրյա մարդահամարի տվյալները, եզրակացնում է, որ բացակայել էր գիտական հիմունքներով կատարված վիճակագրությունը, կապված սովի եւ համաճարակների, ինչպես նաեւ Կովկասյան ռազմաճակատում տիրող իրավիճակի եւ Այսրկովկասի քաղաքական կացության վայրիվերումների հետ՝ գաղթականությունը բավականին հոսուն էր եղել եւ չէր ունեցել իր մնայուն տեղավայրերը, վիճակագրությունն անմիջականորեն իրականացրած որոշ մասնագետներ ընդհանրապես չհիթել էին «հայ գաղթականություն» հասկացությունն «արեւմտահայ գաղթականություն» հասկացության հետ, գաղթականների համար ամենածանր օրերին հայ գյուղացիությունը ցուցաբերել էր գովելի վերաբերմունք եւ աջակցություն, որը ոչ միայն վեր էր ամեն տեսակի գնահատանքից, այլեւ մարդասիրական մեծ առաքելություն էր, ավելի քան մեկ ամիս ստանձնելով մեծ թվով գաղթականների պարենային հոգածությունը՝ գյուղական հայ ազգաբնակչությունն իր հերթին պարենային ճգնաժամի վտանգի առջեւ էր, որի պատճառով էլ ժողովուրդը շատ տեղերում փաստորեն դադարեցրել էր գաղթականների խնամատարությունը, գաղթականներին օժանդակելու գործում ջերմ աջակցություն էին ցույց տալիս տեղական երիտասարդ ուժերը եւ մասնավորապես՝ ուսուցիչները: Սակայն նրանց օգնությունն ավելի մեծ եւ գնահատելի կլիներ, եթե գաղթականական մարմինները նպաստների բաշխման գործը հանձնեին հենց

⁵ Տե՛ս անդ, էջ 35:

ներանց եւ ոչ թե շրջիկ անհատներին կամ գործակալներին: Վիճակագրական աղյուսակների համաձայն՝ գաղթականների տեղաբաշխումն իրականացվել էր անհամաչափ, որի պատճառով խիստ ծանրաբեռնվել էին էջմիածնի, Երեւանի ու Նախիջեւանի գավառները: Համընդհանուր բնույթ էր կրում այն, որ նպաստներն առհասարակ հասանելի էին միայն կենտրոնական շրջաններում եղած գաղթականներին, որոնք առատ բաժին էին ստանում, մինչդեռ մյուս վայրերում տեղաբաշխված գաղթականներն ընդհանրապես զրկված էին նպաստից: Նույն վիճակն էր տիրում նաեւ հագուստ ու անկողին բաժանելու պարագայում: Նկատելի էր վարակիչ հիվանդությունների տարածումը հատկապես այն շրջաններում, ուր գաղթականներ շատ կային: Մեծահասակ փախստականների 70%-ը կանաչք էին, իսկ երեխաների 60%-ը, ընդհակառակը, արական սեռի ներկայացուցիչներ էին: Գաղթականների շրջանում կանանց թվաքանակի մեծամասնությունը բացատրվում էր ցեղասպանության իրողությամբ, քանի որ թուրքական բանակի զորակոչի եւ հետագայում հայ զինվորականների կոտորածների պատճառով խիստ նվազել էր տղամարդկանց թվաքանակը: Տղա երեխաների թվի տոկոսային գերակայությունը պայմանավորված էր կոտորածների հանգամանքով: Երիտթուրքերը սեռային խտրականություն չէին դրել տղաների եւ աղջիկների միջեւ, ինչպես մեծահասակների դեպքում, որի պատճառով էլ պահպանվել էր երեխաների արական կազմի թվական գերազանցությունը:

Մենագրության երկրորդ գլխում («Վան-Վասպուրականը 1915–1917 թթ. գաղթերի, ներգաղթերի եւ վերաշինության ժամանակաշրջանում») Ա. Հարությունյանը հանգամանորեն լուսաբանել ու ներկայացրել է ռուսական զորքերի նահանջը եւ Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթի պատճառները, ընթացքը, արդյունքները եւ հետեւանքները, ռուսական բանակի նահանջի եւ 1915 թ. հուլիսյան մեծ գաղթի պատասխանատվության հարցը, Արեւմտյան Հայաստանը ցարիզմի գաղութային քաղաքականության օրակարգում, Առաջին աշխարհամարտի տարիներին Արեւմտյան Հայաստանում ցարիզմի հողային քաղաքականության հարցի շուրջ, վասպուրականցի փախստականների ներգաղթը եւ վերաշինության գործի կազմակերպումը 1915 թ. հուլիսյան գաղթից հետո, Վան-Վասպուրականի ազգաբնակչության երկրորդ՝ 1916 թ. հուլիս-օգոստոսյան գաղթը, ներգաղթի կազմակերպումը եւ վերաշինության գործը Վան-Վասպուրականում 1916 թ. հուլիս-օգոստոսյան գաղթից հետո, Վան-

ողբալի էջ⁸: Ակնհայտ իրողություն է, որ ռուսական բանակի նահանջը սովորական նահանջ չէր: Այն «նենգօրէն եւ քաղաքական ստոր ծրագիրներով պարտադրւած յանկարծակի նահանջ էր»⁹: Այն պարզապէս կեղծիք էր, որի նպատակն էր թուրքական ջարդերից ազատագրված հայերին գաղթեցնել Կովկաս ու Հայաստանը թողնել առանց հայերի, որովհետեւ նրանց ձեռնտու չէր Վան-Վասպուրականի զինված բնակչութիւնը եւ նրա կառավարութիւնը:

1915 թ. հուլիսյան գաղթը հայոց պատմութեան մեջ կմնա իբրեւ զարհուրելի մի իրողութիւն, իբրեւ մի եղեռն: Դա մի ամբողջ ժողովրդի բնաջնջում էր, այն ժողովրդի, որն իր հուշար կապել էր ռուսական բանակի հետ¹⁰:

Ռուսական զորքերի նահանջը անասելի ծանր կացութեան մեջ գցեց հայ ժողովրդին: Ռազմական գործողութիւնները Կովկասյան ռազմաճակատում եւ ռուսական բանակի հաղթարշաւն Արեւմտյան Հայաստանում շեղել էր թուրքերի ուշադրութիւնը, իսկ կոտորածները ժամանակավորապէս հետաձգվել էին: Բայց հենց որ ռուսները թողեցին Լիզը, հայերով բնակեցված բոլոր շրջանները ենթարկվեցին կողոպուտի եւ ավերածութեան: Ռուսական զորքի եւ հայ կամավորների նահանջը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ թուրքերը կոտորում էին Մշո դաշտի գյուղերի ու Մուշ քաղաքի հայերին, իսկ Սասունն էլ օրհասական պայքարի մեջ էր: Ուստի, ինչպէս իրավացիորեն եզրակացնում է Ա. Հարութիւնյանը, ռուսական զորքի եւ հայ կամավորների այդ նահանջը ոչ միայն ճիշտ չէր, այլեւ քաղաքական կոպիտ սխալ էր¹¹:

Այս գլխում Ա. Հարութիւնյանը հանգամանորեն լուսաբանում է նաեւ Արեւմտյան Հայաստանի հարցում ցարիզմի վարած գաղութային քաղաքականութեան էութիւնը: Գրելով, թե Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ինչպէս յուրաքանչյուր ծավալապաշտական տերութեան, այնպէս էլ Ցարական Ռուսաստանի համար կենսական խնդիր էր պատերազմի իրավունքով նվաճած հողերը տիրող ժողովրդով բնակեցնելու հարցը, քանի որ պատերազմը հարմար միջոց էր գաղութային քա-

⁸ Տէս Ա. ԴՕ, Մէծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թուականներին, էջ 470:
⁹ Տէս Ս. ՍԱՐԶԱԳԵԱՆ, Կեանքիս յուշերից, Երեւան, 2007, էջ 178: Հմմտ. Ա. Հարութիւնյան, նշ. աշխ., էջ 111:
¹⁰ Ծ. Ա. ՂԱՅԱՆ, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութիւնից, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1976, էջ 425:
¹¹ Տէս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 112:

ղաքականությունն առաջ մղելու համար, Ա. Հարությունյանը փաստում է՝ պատահական չէր, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եռանդագին մշակվում էր պատերազմի իրավունքով Արեւմտյան Հայաստանի նվաճված վայրերում Ռուսաստանի ներքին նահանգներից բերված գաղթականներին բնակեցնելու ծրագիրը: Արեւմտյան Հայաստանի գաղութացման հարցերը քննարկվում էին Ռուսաստանի Պետական Դումայի ամբիոնից, զինվորական իշխանությունների եւ գաղութային վարչության կողմից, ինչպես նաեւ միապետական թերթերի էջերում: Հավատարիմ մնալով արտաքին քաղաքական ուղղության իր նախորդ ընթացքին՝ ցարիզմը փորձում էր շարունակել եւ իրականացնել ժԹ. դարի վերջին տասնամյակին ձախողված 1895–1896 թթ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ա. Լոբանով-Ռոստովկով «Մենք ուզում ենք Հայաստանն առանց հայերի» հայատյաց քաղաքականության հիմնական սկզբունքները¹²: Վաստակաշատ պատմաբանն իրավամբ կարծում է, որ ցարիզմի՝ «Հայաստանն առանց հայերի» տիրահռչակ քաղաքականության իրականացմանը մեծապես նպաստում էր Թուրքիայի վարած հակահայկական, ցեղասպան քաղաքականությունը, որով Արեւմտյան Հայաստանը զրկվում էր իր հիմնական տարրից՝ հայերից¹³: 1916 թ. երկրորդ կեսից հիմնականում կասեցվեց արեւմտահայերի մուտքն Արեւմտյան Հայաստան, միայն որոշ անձանց էր հաջողվում փոխարքայի կամ գեներալ-նահանգապետի անձնական թույլտվությամբ վերադառնալ հայրենի բնաշխարհ: Սակայն ամբողջովին արգելել գաղթականների վերադարձն իրենց բնակության նախկին շրջանները ցարական իշխանություններին այդպես էլ չհաջողվեց, նախ՝ որովհետեւ գաղթականությունն ավելորդ բեռ էր փոխարքայության ուսերին, նրանց խնամքը պահանջում էր նյութական եւ դրամական հսկայական ծախսեր, երկրորդ՝ Արեւմտյան Հայաստանում զգացվում էր աշխատուժի խիստ պահանջարկ: Ցարիզմի ժամանակավոր այդ զիջումը տեւեց մինչեւ 1916 թ. ամառը, երբ դեռ չէր ստեղծվել զինվորական գեներալ-նահանգապետությունը, եւ դեռ վերջնականապես չէր հաջողվել ցարիզմի գաղութային քաղաքականությունն Արեւմտյան Հայաստանի նկատմամբ¹⁴: Ուշագրավ է այն փաստը, որ գրավված տարածքներ

¹² Տե՛ս անդ:

¹³ Տե՛ս անդ:

¹⁴ Տե՛ս անդ, էջ 123:

րի հողային քաղաքականությունը Առաջին աշխարհամարտի տարիներին Արեւմտյան Հայաստանի նկատմամբ ցարիզմի վարած գաղութային արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասն էր:

Պատերազմի տարիներին՝ մի շարք տեղաշարժերից եւ գաղթերից հետո, արեւմտահայ գաղթական ազգաբնակչությունն ի վերջո կարողացավ վերադառնալ Արեւմտյան Հայաստան եւ բնակվել իրենց նախկին բնակավայրերում: Բայց քանի որ Արեւմտյան Հայաստանի նվաճված տարածքները ռուսական Պարենային հատուկ խորհրդակցության՝ 1916 թ. փետրվարի 10-ի որոշմամբ հայտարարվել էին ցարիզմի պետական սեփականություն, գաղթական հայերին թույլատրվեց իրենց սեփական հողերի վրա բնակություն հաստատել ոչ թե որպես սեփականատերեր, այլ որպես ժամանակավոր վարձակալներ: Դա ցարական իշխանություններին թույլ էր տալիս ցանկացած ժամանակ վերաբնակիչներին դուրս քշել իրենց հողերից:

Այս գլխի վերջին ենթագլուխներում Ա. Հարությունյանը մանրամասնորեն ներկայացնում եւ լուսաբանում է վասպուրականցի փախստականների ներգաղթը եւ վերաշինության գործի կազմակերպումը Վանում 1915 թ. հուլիսյան գաղթից հետո, Վան-Վասպուրականի ազգաբնակչության երկրորդ՝ 1916 թ. հուլիս-օգոստոսյան գաղթը, ներգաղթի կազմակերպումը եւ վերաշինության գործը Վան-Վասպուրականում 1916 թ. հուլիս-օգոստոսյան գաղթից հետո, Վան-Վասպուրականի ազգաբնակչության երրորդ՝ 1916 թ. նոյեմբերյան գաղթը, անվտանգության հաստատումը եւ վերաշինության աշխատանքների ընթացքը: Ամփոփելով շարադրանքը՝ Ա. Հարությունյանը գրում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական կառավարության ձեռնարկած զանգվածային տեղահանությունների եւ կոտորածների, ինչպես նաեւ Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի մի շարք նահանջների հետեւանքով անտուն ու անօգնական մնացած արեւմտահայերից եւ պարսկահայերից շատերը, մազապուրծ փախչելով արհավիրքից, սփռվեցին ինչպես աշխարհի տարբեր երկրներում, այնպես էլ ռուսական կայսրության բազմաթիվ շրջաններում, այդ թվում՝ նաեւ Կովկասում¹⁵:

Մենագրության երրորդ գլխում («Հայ գաղթականների տեղաբաշխումը եւ օգնության գործի կազմակերպումն Արեւելյան եւ Արեւմտյան Հայաստա-

¹⁵ Տե՛ս անդ, էջ 204:

նում, Այսրկովկասի հայաբնակ շրջաններում եւ Պարսկաստանում») Ա. Հարուստյունյանը հանգամանորեն լուսաբանել ու ներկայացրել է հայ գաղթականների դրուստունը էջմիածնում եւ Մայր Աթոռ Ս. էջմիածնի ցուցաբերած օգնությունը աղետալներին, հայ գաղթականության տեղաբաշխումը, գոյավիճակը եւ օգնության գործի կազմակերպումն Արեւելյան Հայաստանի մյուս շրջաններում, Պարսկաստանի հայաշատ շրջաններում, Արեւմտյան Հայաստանում, Թիֆլիսի նահանգում, Գեւորգ Ե. Ամենայն Հայոց կաթողիկոսի ժամանումը Թիֆլիս, Արեւմտահայ գաղթականության գոյավիճակը եւ օգնության գործի կազմակերպումը Բաքվի նահանգում, 1916 թ. հունվարի 14-ի գաղթականական համընդհանուր մարդահամարը եւ դրան առնչվող մի շարք հարցեր: Հեղինակը մասնավորապես հանգամանորեն ներկայացրել է 1914 թ. դեկտեմբերի 28-ի կաթողիկոսական թիվ 1990 կոնդակով էջմիածնում կազմված Եղբայրական օգնության հանձնաժողովի գործունեությունը, որը Եղբայրական օգնության կոմիտեի կենտրոնական մարմինն էր: Այն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ենթակայության ներքո էր եւ բաղկացած էր 14 անդամից: Ավելի ուշ Եղբայրական օգնության հանձնաժողովներ ստեղծվեցին նաեւ Կարսում, Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ), Ն. Ախտայում (այժմ՝ Հրազդան), Ելենովկայում (այժմ՝ Սեւան), Իգդիրում, Քանաքեռում, Նախիջեւանում, Ղամարլուում (այժմ՝ Արտաշատ) եւ Մեծ Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր), որոնք ենթարկվեցին Երեւանի մասնաճյուղին: Հանձնաժողովին հանձնարարվեց խնամել եւ բժշկական օգնություն հասցնել տարաբախտ փախստականներին, մանրամասն տեղեկություններ հավաքել նրանց առողջական վիճակի մասին եւ համագործակցել Արեւելյան Հայաստանի մյուս քաղաքների Եղբայրական օգնության հանձնաժողովների հետ¹⁶: Գաղթականներից շատերը ապաստան գտան Ս. էջմիածնում: Ամենայն Հայոց կաթողիկոսն առաջնահերթություն եւ կարեւորագույն խնդիր համարեց սատարելու, մխիթարելու Մայր Աթոռի տարածքում հանգրվանած բազմահազար հայ տարաբախտ գաղթականներին եւ ապահովելու նրանց պարենով, հագուստով ու աշխատանքով, ինչպես նաեւ հոգալու բժշկական ու կենցաղային այլ կարիքները: Մայր Աթոռ Ս. էջմիածինը, հանձին իր լայնախոհ առաջնորդի եւ ազգանվեր ու բարեջան հոգեւորականների, կարողացավ մեծապես օժանդակել Արեւելյան Հայաստան հասած տարաբախտ հայ գաղթականներին:

¹⁶ Տե՛ս անդ, էջ 206:

Ա. Հարույթունյանը մենագրության շորրորդ գլխում («Հայ գաղթականների պետական օգնության կազմակերպումը, գաղթականական կոմիտեների գործունեությունը եւ Հայ Առաքելական Եկեղեցու դերակատարումը») հանգամանորեն լուսաբանել ու ներկայացրել է հետեւյալ խորագրերով ենթագլուխները. «Ցարիզմը եւ հայ գաղթականների պետական օգնության կազմակերպումը», «Հայ գաղթականական կոմիտեների գործունեությունը», «Պետրոգրադի գաղթականական համագումարը եւ նրա նշանակությունը», «Պետրոգրադի 1917 թվականի հայ գաղթականական ցուցահանդեսը», «Որբատած գործունեության կազմակերպումը», «1917 թ. Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունը եւ հայ գաղթականությունը», «Հայ Առաքելական Եկեղեցու դերը Արեւմտյան Հայաստանի ձեռագրական հարստությունների փրկության գործում»: Գաղթականների անհամար տառապանքները սփոփելու եւ բազմաբնույթ օգնություն կազմակերպելու նպատակով պատերազմի տարիներին ստեղծվեցին բազմաթիվ գաղթականական կոմիտեներ, իսկ որոշ բարեգործական հիմնարկներ էլ վերանայեցին ու վերափոխեցին իրենց գործունեությունը: Գաղթականներին օգնելու գործում մեծ դեր խաղացին հատկապես պատերազմից տուժածներին օգնող Հայկական կենտրոնական Կոմիտեն, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Մոսկվայի հայկական կոմիտեն, Հայ նպաստամատուց («Վերաշինություն» կոմիտեի հետ միասին) եւ «Մեղու» ընկերությունները, Հայ տիկնանց եւ Հայ ուսուցչական կոմիտեները, Հայրենակցական միությունների միությունը, Թիֆլիսի պարսկահայերի հանձնաժողովը, Երեւանի, Էջմիածնի, Զուղայի, Ալեքսանդրապոլի, Կարսի եւ այլ վայրերի եղբայրական օգնության կոմիտեները, Պետրոգրադի ազատ տնտեսական եւ Բաքվի մարդասիրական ու կուլտուրական ընկերություններին առընթեր կազմակերպված փախստականներին օգնող մարմինները, Մոսկվայի, Պետրոգրադի, Նոր Նախիջեւանի համամասն մարմինները, Հայ գյուղատնտեսական ընկերությունը եւ այլ կազմակերպություններ¹⁷:

Ինչպես իրավացիորեն նկատել է հետազոտողը, Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունն ըստ էության շարունակեց ռուսական ցարիզմի ներքին եւ գաղութատիրական արտաքին քաղաքականությունը, որի հետեւանքով չլուծվեցին ժողովրդական զանգվածների համար կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ հարցեր: Ժամանակավոր կառավարությունը հիմնականում հավատարիմ մնաց նաեւ ցարիզմի քաղա-

¹⁷ Տե՛ս անդ, էջ 331:

քականությունը՝ գաղթականության եւ հատկապես հայ գաղթականության հարցում: Վերջինս, սակայն, հարկադրված էր որոշ չափով հաշվի առնել հայկական շրջանների բացահայտ դժգոհությունը եւ իրականացնել կիսատ-պռատ մի շարք միջոցառումներ: Գաղթականության հարցի լուծման՝ արտաքուստ ժողովրդավարական սկզբունքների հետեւում, իրականում կային ազգային նեղ որոշակի սահմանափակումներ, որոնք պայմանավորված էին Անդրկովկասյան հատուկ կոմիտեում վրաց մենշեւիկների եւ ադրբեջանցի մուսավաթականների տեսակարար կշռով: Խորհուրդը կազմված էր իբր «դեմոկրատական» սկզբունքներով, եւ նրա մեջ ընդգրկված էին ազգային եւ հասարակական կազմակերպություններից հավասար թվով ներկայացուցիչներ, ինքնին վկայում էր, որ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ զգացվում էին ազգայնական դրսեւորումները: 1916 թ. հոկտեմբերի 1-ին Կովկասում ապաստանած փախստականների թիվը կազմում էր 366 992 մարդ, որոնց բացարձակ մեծամասնությունը հայ էր: 1917 թ. հուլիսին միայն Թուրքիայից նվաճված շրջաններում կար 33 087 հայ եւ ոչ մի վրացի կամ ադրբեջանցի գաղթական: Մինչդեռ, բացի հայ գաղթականներից, նվաճված շրջաններում կային նաեւ քուրդ, եզդի, լազ եւ հույն գաղթականներ, որոնք ընդհանրապես իրենց ներկայացուցիչները չունեին Խորհրդում: Ա. Հարությունյանը իրավացիորեն կարծում է, որ այսպիսի իրավիճակում Խորհուրդը ներկայացնող ազգային եւ հասարակական տարբեր կազմակերպությունները չպետք է առաջադրեին հավասար թվով ներկայացուցիչներ¹⁸:

Անդրադառնալով հայ մատենագիր ժառանգության փրկության գործին՝ Ա. Հարությունյանը շեշտում է, որ Վասպուրականի ձեռագիր հուշարձանների փրկության նախաձեռնությունը Գեւորգ Ե. Կաթողիկոսինն էր՝ Լիմ անապատի վերջին վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանի մասնակցությամբ: Ըստ նրա՝ հայ ձեռագրական կենտրոններից ամենից բախտավորը Վասպուրականն էր, քանի որ հայերի ինքնապաշտպանական կռիվների, ռուսական զորքերի ու հայ կամավորների ջանքերով, կաթողիկոսի արտոնությամբ եւ Վանի երկրապահ գնդի հրամանատար Արմենակ Եկարյանի օժանդակությամբ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ձեռագիր հնությունների փրկությանը, եւ հայ ազգաբնակչության հետ անխուսափելի կորստից եւ ոչնչացումից փրկվում են նաեւ կա-

¹⁸ Տես անդ, էջ 364–365, 368–369:

րեւոր ձեռագրեր, որոնց մի զգալի մասը հնարավոր է լինում փոխադրել էջմիածին¹⁹: Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենյանցը հանձնարարում է նաեւ Սմբատ Տեր-Ավետիսյանին Վանում պատմական-մշակութային հիշատակարանների վիճակը ստուգել, դրանց պահպանման համար միջոցներ ձեռնարկել, հավաքել եւ այդ ամենը հատուկ արկղերով էջմիածին տեղափոխել: 1915 թ նոյեմբերի 15-ից մինչեւ 1916 թ. հունվարի վերջ նա հավաքում է շուրջ 1000 հայերեն եւ մի քանի տասնյակ արաբերեն ու թուրքերեն ձեռագիր: Որոնողական աշխատանքների շնորհիվ՝ Ն. Մառի ղեկավարութեամբ ինչպես Բիթլիսի, Մուշի, Բասենի, էրզրումի, այնպես էլ Վանի շրջաններից փրկվեց շուրջ 4000 ձեռագիր, որ հետագայում հանձնվեցին էջմիածնի մատենադարանին, Պետերբուրգի Ասիական եւ Թիֆլիսի Կովկասյան թանգարաններին²⁰: Աղթամար վանքից ձեռագրերի տեղափոխման գործում մեծ դեր են խաղում Սիրական Տիգրանյանը, Ա. Դօն եւ Ա. Ա. Ֆլորենսկին: 1915 թ. հուլիսին Վասպուրականի մեծ գաղթի ժամանակ մի շարք եկեղեցական ու թանգարանային արժեքների հետ միասին էջմիածին է տեղափոխվում 284 (ըստ Գարեգին Ա. Հովսեփյանց կաթողիկոսի՝ 1500) ձեռագիր, այդ թվում Աղթամարից՝ 201, Վանից եւ նրա շրջակայքից՝ 61, Լիմից՝ 22: Մնացած ձեռագրերը խնամքով թաքցվում են առանձին թաքստոցներում: Այսպես՝ Գեորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսը գործի է դնում բոլոր միջոցները Վասպուրականում մնացած մշակութային մյուս նշխարները փրկելու ուղղությամբ: 1915 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1689 կարգադրությամբ կաթողիկոսը հանձնարարում է Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանին Կտուց անապատի վանահայր Ստեփան վարդապետի հետ «վերադառնալ հայրենիք եւ ժողովելով անապատների բոլոր ձեռագրերը եւ թանկարժեք հնույթյունները, կանոնավորապես ցուցակագրել եւ ապահով ճանապարհով բերել Ս. էջմիածին՝ այնտեղ անկորուստ պահպանելու համար»: Մինչեւ 1915 թ. դեկտեմբեր՝ երկու ամսվա ընթացքում, Հովհաննես վրդ. Հյուսյանին հաջողվում է հավաքել 1410 կտոր գրչագիր մատյան. 400-ը՝ Լիմ անապատից, 360-ը՝ Վարազա վանքից, 300-ը՝ (320 նույն հոդվ. էջ. 114) Կտուց անապատից, 350-ը՝ Վանի եւ Այգեստանի Ս. Նշան, Ս. Ծիրանավոր, Ս. Սահակ, Ս. Վարդան, Ս. Պողոս, Ս. Աստվածածին, Հայկավանքի, Հանկույանների եւ Նորաշե-

¹⁹ Տե՛ս անդ, էջ 377:

²⁰ Տե՛ս անդ, էջ 378, 384:

նի եկեղեցիներից²¹; Այսպես՝ Վասպուրականից էջմիածին տեղափոխված ձեռագրերի ընդհանուր թիվը հասնում է 2070-ի²²; 1921 թ. Մատենադարանում պահվում էր 1730 ձեռագիր, որոնցից 1545-ը միայն 1915 թ. Վասպուրականից՝ Վանից, Կտուցից, Աղթամարից եւ այլ վայրերից բերված²³:

Մենագրության հինգերորդ գլխում Ա. Հարությունյանը («Հայ գաղթականության օգնության հայանպաստ շարժումն աշխարհի տարբեր երկրներում») հանգամանորեն լուսաբանել ու ներկայացրել է հետեւյալ խորագրերով ենթագլուխները. «Հայ գաղթականների հանգանակության գործի կազմակերպումը Ռուսական կայսրության քաղաքներում», «Անգլիան եւ հայ գաղթականությունը», «Հայ գաղթականության օգնության կազմակերպումն աշխարհի տարբեր երկրներում», «Կաթոլիկական եւ բողոքական քարոզչությունը եւ հայ գաղթականությունը»: Մանրամասն լուսաբանելով հայ գաղթականության օգնության հայանպաստ շարժումն աշխարհի տարբեր երկրներում՝ Ա. Հարությունյանը ճշմարտացիորեն եզրակացնում է, որ, հակառակ ցարիզմի որոշ շրջանների որդեգրած հակահայկական քաղաքականությունը, ռուսական կայսրության ժողովրդական ամենալայն խավերը նյութական ու բարոյական վիթխարի օգնություն ցույց տվեցին արեւմտահայերին՝ նպաստելով վերջիններիս գոյատեւմանը: Այս առումով հետազոտողը մեջբերում է ռուս մեծանուն քաղաքական գործիչ, պատմաբան եւ հրապարակախոս Պ. Ն. Միլյուկովի հետեւյալ դիպուկ խոսքերը. «Օգնելով հայ գաղթականներին՝ մենք ոչ միայն փրկում ենք առանձին անձանց կյանքը, մենք նպաստում ենք մի ազգության պահպանմանը, որի գոյությունից է կախված թուրքական շրջաններում մշակութային առաքելության հաջողությունը...»²⁴:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայ գաղթականությանն օգնելու նպատակով աշխարհի շատ նշանավոր գրողներ, քաղաքական ու հասարակական գործիչներ հանդես եկան իրենց ժողովուրդներին ուղղված կոչերով, որոնցում ներկայացնում էին հայ գաղթականության ողբալի վիճակը եւ առաջարկում անհապաղ օգնության հասնել եղեռնազարկ ու հալածական ժողովրդի դժբախտ խլակներին: Այս կոչերի եւ իրազեկման արշավների շնորհիվ հայ գաղթականությանն օգնելու ալիքը մեծ տարածում եւ

²¹ Տես անդ, էջ 382:

²² Տես անդ, էջ 389:

²³ Տես անդ, էջ 392:

²⁴ Տես անդ, էջ 402:

լայն արձագանգ գտավ ինչպես եւրոպական, այնպես էլ ասիական, ամերիկյան եւ աֆրիկյան մի շարք երկրներում: Ստեղծվեցին բազմաթիվ բարեգործական կազմակերպություններ, որոնք էլ անմիջականորեն կազմակերպեցին աղետյալ հայ ժողովրդին օգնելու գործը: Ահռելի մեծ գործ կատարեցին հատկապես միսիոներական կազմակերպությունները:

Վերջում Ա. Հարությունյանը, առանձին եզրակացությունների ձեւով, հանրագումարի է բերել եւ ամբողջացրել իր կատարած աշխատանքի հիմնական արդյունքները եւ իրավացիորեն ու մեծ լավատեսությամբ արձանագրել հետեւյալը. «Յանկացած ոտնձգություն կյանքի նկատմամբ հայ ժողովրդի հիշողության մեջ արթնացնում է նրա պատմության ամենաողբերգական էջը: Միաժամանակ, ժողովրդի պատմական հիշողությունը նպաստեց հայերի ազգային համախմբման գործընթացին եւ վերածնության հասնելու նրանց ձգտմանը: Այդուհանդերձ, Մեծ եղեռնի եւ դրան հաջորդած մղձավանջային տարիներին ծայրահեղ կարիքի եւ զրկանքի դժոխային պայմաններում հայ գաղթականությունը ցուցաբերեց հոգեկան եւ բարոյական բացառիկ արիություն եւ դիմացկունություն, մնաց անսասան եւ չկորցրեց իր հույսն ապագայի նկատմամբ»²⁵:

Գրախոսվող աշխատության արժանիքներից են թեմային առնչվող աղբյուրների ու մասնագիտական գրականության տվյալներին քննողաբար մոտենալը, օգտագործված սկզբնաղբյուրների եւ մասնագիտական գրականության հարուստ մատենագիտական ցանկը: Աշխատությունը կշահեր, եթե ունենար նաեւ օժանդակ ցուցիչների (անձնանունների եւ տեղանունների բառարաններ) ցանկեր, թեմատիկ քարտեզներ, գծակարգեր ու աղյուսակներ: Այս դիտարկումները, սակայն, ամենեւին չեն ստվերում կատարված աշխատանքի գիտական նշանակությունն ու արժանիքները:

Ամփոփելով՝ նշենք, որ գրախոսվող մենագրության նյութն արդիական է, ունի գիտաճանաչողական եւ հայագիտական կարեւոր նշանակություն: Աշխատանքը գրված է պատմականության եւ գիտականության դիրքերից: Այն լուրջ ներդրում է հայ գաղթականության եւ հայ ժողովրդի պատմությունն ամբողջացնելու ուղղությամբ: Բարձր գնահատելով մենագրության գիտական արժեքը՝ հավելենք, որ այն գնահատելի, գիտական արժեքավոր ներդրում է Հայոց պատմության՝ քննարկվող ժամանակաշրջանի ամբողջական ուսումնասիրության գործում: Մենագրու-

²⁵ Անդ, էջ 435:

Թյան ամբողջ շարադրանքում Ավետիս Հարությունյանը դրսևորել է բարեխիղճ հետազոտողին հարիր քննախույզ, անկողմնակալ եւ նորովի մոտեցում՝ ինչպես առանձին հարցերի, այնպես էլ հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ:

ԱՐՄԱՆ ՄԱՆՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՆՈՆԱ ԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՀԵՐԻՔՆԱԶ ԳԵԻՈՐԳՅԱՆ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայ գաղթականություն, Առաջին համաշխարհային պատերազմ, Կովկասյան ռազմաճակատ, Վանի ինքնապաշտպանություն, Հայոց ցեղասպանություն, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գեղորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Վան-Վասպուրական, բռնագաղթ, ցարիզմ, մշակութային եղեռն, մշակութային ժառանգության փրկություն:

РЕЗЮМЕ

Статья представляет собой подробный научный обзор монографии известного историка, профессора Аветиса Арутюняна, посвящённой одной из наиболее трагических и малоизученных страниц армянской истории – проблеме армянского беженства в годы Первой мировой войны и спасительной миссии Армянской Апостольской Церкви.

В обзоре анализируются структура и обширная источниковедческая база монографии, охватывающая архивные материалы из Армении, Грузии, России и Великобритании, значительная часть которых впервые вводится в научный оборот. Рассматриваются ключевые концептуальные положения книги: историческая ретроспектива принудительных депортаций армянского населения, демографическая катастрофа Геноцида армян 1915–1916 гг., а также разрушительные последствия отступлений русской армии на Кавказском фронте – в частности, июльской депортации из Ван-Васпуракана 1915 года. Анализируется колониальная и двуличная земельная политика царской России под лозунгом «Армения без армян» и её продолжение при Временном правительстве.

В центре исследования – беспрецедентная гуманитарная, духовно-культурная и патриотическая деятельность Эчмиадзинского католикосата под руководством Католикоса Всех Армян Геворка V: спасение, обустройство и обеспечение кровом сотен тысяч беженцев, а также эвакуация бесценного рукописного и духовного наследия Западной Армении. Подчеркивается высокая научно-практическая ценность монографии в контексте противодействия турецким фальсификациям истории.

SUMMARY

This article is a detailed scholarly review of a monograph by the renowned historian Professor Avetis Harutyunyan, which examines one of the most tragic and understudied chapters in the Armenian history: the plight of Armenian refugees during World War I and the salvific mission of the Armenian Apostolic Church.

This review analyzes the structure and extensive source base of the monograph, which draws on archival materials from Armenia, Georgia, Russia, and the United Kingdom, many of which are being introduced into scholarly discourse for the first time. The review examines the book's key conceptual premises: historical retrospective of the forced deportations of the Armenian population, the demographic catastrophe caused by the Armenian Genocide of 1915–1916, as well as the devastating consequences of the Russian army's sudden retreats on the Caucasus Front (in particular, the July 1915 tragic deportation from Van-Vaspurakan). Particular attention is paid to a critical analysis of the colonial and duplicitous land policy of Tsarist Russia under the slogan “Armenia without Armenians,” a course subsequently maintained by the Russian Provisional Government.

The focus of this study is the unprecedented humanitarian, spiritual, cultural, and patriotic activities of the Mother See of Holy Etchmiadzin under the leadership of Catholicos of All Armenians Gevorg V, aimed at rescuing, settling, and providing shelter for hundreds of thousands of refugees, as well as evacuating the priceless manuscript and spiritual heritage of Western Armenia. The author of the review emphasizes the high scientific and practical value of the monograph in the context of countering modern Turkish falsifications of history.



СОДЕРЖАНИЕ

ОФИЦИАЛЬНОЕ

- Доклад **ЕГО ПРЕОСВЯЩЕНСТВА АРХИЕПИСКОПА НАТАНА
ОВАННИСЯНА** о деятельности Первопрестольного Святого Эчмиадзина
в 2025 году, представленный на заседании Верховного духовного совета 5

РЕЛИГИОВЕДЕНИЕ

- АСАТУР САРЬЯН, ВАГРАМ КАГРАМАНЯН** — Святой Полиевкт 19
- МАТТЕОС ВАРДАПЕТ ДЖУГАЕЦИ** — Проповедь на слова «Ибо восстанут
лжехристы и лжепророки и дадут знамения и чудеса, чтобы прельстить,
если возможно, и избранных» 39
- ШАГЕ А. АНАНЯН** — Одна «забытая» юридическая работа
Левона Меликсет-Бека 53

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ


- АШОТ ГАЛСТЯН** — Жанр художественной документалистики:
язык и структура 68
- ИЕРОМОНАХ АСОГИК КАРАПЕТЯН** — Отношения Первопрестольного
Святого Эчмиадзина и Ватикана после Великой Отечественной войны
(1945—1954 гг.) 82
- АРШАК МАДОЯН** — Новообразованные религиозные общины и традиционный
духовный институт 89

СООБЩЕНИЯ

АСМИК ГАЛСТЯН – Мармашен и Ваграмаберд: *отражение топонимической путаницы и межобщинных отношений в фольклоре*. 111

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

АРМАН МАЛОЯН, НОНА ДАВТЯН, ЭРИКНАЗ ГЕВОРГЯН – Ценное издание, восполняющее историю армянских беженцев в годы Первой мировой войны. 122



CONTENTS

OFFICIAL

- HIS EMINENCE ARCHBISHOP NATHAN HOVHANNISYAN’S**, report presented at the meeting of the Supreme Spiritual Council on the activities of the Mother See of Holy Etchmiadzin in 2025 5

RELIGIOUS STUDIES

- ASATUR SARYAN, VAHRAM GHAHRAMANYAN** — Saint Polyeuctus19
- ARCHIMANDRITE MATTHEOS OF JULFA** — Sermon on the verse: “For there shall arise false Christs, and false prophets, and shall shew great signs and wonders; insomuch that, if it were possible, they shall deceive the very elect”39
- SHAHE A. ANANYAN** — A forgotten legal work by Levon Melikset-Bek53

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES


- ASHOT GALSTYAN** — The genre of artistic documentation:
language and structure68
- HIEROMONK ASOGHIK KARAPETYAN** — Relations between the Mother See of Holy Etchmiadzin and the Vatican after the Great Patriotic War (1945–1954)82
- ARSHAK MADOYAN** — Newly formed religious communities and a traditional spiritual structure 89

ESSAYS

HASMIK GALSTYAN – Marmashen and Vahramaberd: Reflection of toponymic confusion and inter-community relations in folklore. 111

LITERARY REVIEW

ARMAN MALOYAN, NONA DAVTYAN, HERIKNAZ GEVORGYAN –
A valuable publication that completes the history of Armenian emigration during World War I. 122



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԳԵՐՇ. Տ. ՆԱԹԱՆ ԱՐՔ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ տեղեկագիրը՝ ներկայացուած
Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողովում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2025 թ.
գործունէութեան մասին 5

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐԵԱՆ, ՎԱՀՐԱՄ ՂԱՀՐԱՄԱՆԵԱՆ – Սուրբ Պօղիկոս19

ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԳԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՅԻ – Քարոզ՝ «Սուտ մարգարէներ պիտի
ելլեն եւ կատարեն [նշաններ ու զարմանալի գործեր մոլորեցնելու համար,
եթէ կարենան նոյնիսկ ընտրեալներն ալ]» 39

ՇԱՀԷ Ա. ԱՆԱՆԵԱՆ – Լեւոն Մելիքսէթ-Բէկի իրաւագիտական
«մոռացուած» մի աշխատութիւն 53

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇՈՏ ԳԱԼՍԵԱՆ – Գեղարուեստական վաւերագրութեան ժանրը.
լեզու եւ կառուցուածք 68

ԱՍՈՂԻԿ ԱՐՂՅ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ – Հայրենական մեծ պատերազմից
յետոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Վատիկանի առնչութիւնները
(1945–1954 թթ.) 82

ԱՐՇԱԿ ՄԱԳՈՅԵԱՆ – Նորաստեղծ կրօնական համայնքներ եւ աւանդական
հոգեւոր կառոյց 89

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՅԱՍՄԻԿ ԳԱԼՍԵԱՆ – Մարմաշէն եւ Վահրամաբերդ.

*տեղանունական շփոթի եւ միջհամայնքային յարաբերությունների
արտացոլումը բանասիրության մէջ 111*

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԵԱՆ, ՆՕՆԱ ԳԱԲԹԵԱՆ, ՀԵՐԻՔՆԱԶ ԳԵԻՈՐԳԵԱՆ –

*Առաջին աշխարհամարտի տարիների հայ գաղթականության պատմությունն
ամբողջացնող արժէքաւոր հրատարակություն 122*



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազգերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՅՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՃ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեանց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոտանյան), հ. 1-9, Միսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՑՀԶ** - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Ազեբեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէմ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՍ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- ԱԳՎ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- ԱՊԱ** - Археологические памятники Армении, Ереван
- ԱՐԱ** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, ИАН РАН, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- САН** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գեորգեան հոգեւոր նեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱԿԱՐՇԱԿԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
«ԷԶՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Հեռ. (+374 10) 517 276

Ստորագրուած է տպագրութեան՝ 8.06.2026 թ.



ԴԼՅԻ ԼԹՈՒ ԽՈՒԲԷ
ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ